Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1698

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

1872

171
Բ-38

2010

2004

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

9057-

171
F-38

ԲԱՐՈՅԱԿԱՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
Տ. Տ. ԳԷՈՐԳԱՅ
ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ
Տ. ԵՍԱՅԵԱՅ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՅ
Տ. ՄԿՐՏՉԻ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՐՈՒՍԱՂԷՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1872

4190
39

ԱՌ

ԱԶՆՈՒԱԶԱՐՄ ՇՆՈՐՀԱՍՈՒՆ

ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՏԻԳՐԱՆ

Յ. ԲԱՍՔԱԼ

ՔԱՋԱՏՈՀՄԻԿ ՊԱՅԱԶԱՏ

ԵՒ

ՆՈՐԱԲՈՂԲՈՋ ՇԱՌԱՒԻՂ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՈՐ

ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

ՆՈՒԻՐԷ

ՈՒԽՏ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՍՐԲՈՑ

ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ազգերու նիւթական ու բարոյական յառաջադիմութիւնը, փառքը, լաւ համբաւը իրենց աղէկ դաստիարակութեան արդիւնքն է. իսկ դաստիարակութիւն կը հասկնանք սրտի, մտքի և մարմնոյ բարւոք մշակութիւնը և զարգացումը, որով մարդը կը կատարելագործի բուն մարդկային պայմանին համեմատ, միտքը կը բեղմնաւորի աստուածային իմաստութեամբ և մարդկային օգտակար գիտութեամբ, սիրտը կը կրթուի գեղեցիկ առաքինութիւններով, կիրքերը կը կանոնաւորուին, հաճոյքները կը չափաւորին և կ'ազնուանան, մարմինը աշխատասիրութեամբ կը զօրանայ, առողջ, կորովի և ամեն աշխատութեանց պիտանացու և յարմար կ'ըլլայ։ Այս կերպով կրթուած ու դաստիարակուած մէկը նախախնամութեան սահմանին համեմատ՝ մարդկութեան օգտակար, իւր անձին երջանկութիւն և իւր ազգին փառքն ու պատիւը կ'ըլլայ. վասնզի զգայարանքներն ու հոգւոյ բոլոր կարողութիւնները զարգացած ու զարդարուած կ'ըլլայ ամեն տեսակ պիտանի ձիրքերով, և իւր Արարչէն ընդունած բարութեանց տարերքը իւր վրայ աճեցուցած և բեղմնաւորած կ'ըլլայ. և ահա այս է բուն մարդը։

Այն ազգի դաստիարակութեան հիմը թէոր այս վախճանին վրայ հիմնուած չէ, թէոր մարդկութեան շէնքը վարուց ու բարուց ուղղութեան և պարտուց ու իրաւանց ծանօթութեան ու գործադրութեան վրայ բարձրացած չէ, կործանումը անհրաժեշտ է. ամեն տեսակ նիւթական ճոխութիւնք, հարստութիւնք, զօրութիւնք, արհեստք և արուեստք, բոլորն ալ ընդունայն կ'ըլլան՝ եթէ անոնց հետ մէկտեղ չ'ունենայ մարդ մտային և հոգեկան անկողոպտելի սուրբ ճոխութիւնը, որ է մարդուս բուն կատարելութիւնը։

Մեր ազգային դաստիարակութեան եղանակը դեռ այս սահմանին մէջ մտած չէ, և անոր համար է, որ աշխատութեանց և ժամանակի երկարութեան համեմատ սպասուած արդիւնքը չենք տեսներ. ցաւալին այն է, որ այս նպատակաւ երկասիրուած գրքերու ալ մեծ կարօտութիւն ունինք, գըր-

քեր, որ թէ դպրոցներու և թէ ընտանեաց մէջ ընթերցանութեան յարմար ու վայելուչ ըլլան։ Իրաւ է, որ շատ մը վիպասանութեանց թարգմանութիւններ ունեցանք, բայց ո՞րչափ աւելի օգտակար ծառայութիւն ըրած պիտի ըլլային անոնց ազնիւ թարգմանիչները, եթէ իրենց այդ քրտնաջան աշխատութիւնը աւելի ընտիր և հաստատուն օգուտ մատակարարող երկասիրութեանց նուիրէին, որք շարունակ կարդացուելու յարմար ըլլային։ Այնպիսի գրքեր պէտք են ուրեմն, որ ամենուն մերձենալի ըլլան, զուարճացնեն և կրթեն։

Ներկայ բարոյական հրահանգիչ գեղեցիկ պատմութեանց գրքոյկը չենք երաշխաւորեր, որ այս ամեն հանգամանքներով կատարեալ է. սակայն կը յուսանք, որ գոնէ խիստ օգտակար կրնայ ըլլալ, եթէ նախակրթական դպրոցաց մէջ մտնայ, և գերդաստաններու մէջ կարդացուելու ընդունելութիւն գտնայ։

Այս գիրքը արդէն 1809ին Իտալերէնէ գրաբարի թարգմանուած և Մատրասի մէջ տպուած էր, իսկ այժմ քաղաքիս Աւստրիոյ—Հունգարիոյ փոխ հիւպատոս Մուրատեան Մեծապատիւ Պ. Յակոբ—Բասքալ բարեսէր ոգւով և ազգօգուտ նպատակաւ ուզեց, որ պարզ աշխարհիկ լեզուաւ թարգմանուելով վերստին 'ի լոյս ընծայի և այս խիստ գովելի առաջարկութիւնը սիրով և հաճութեամբ ընդունեց Ամենապատիւ Տ. Եսայի Պատրիարք Ս. Հայրը։

Արդ՝ սուրբ Աթոռոյս ժառանգաւորաց վարժարանի աշակերտներէն ձեռնհասները՝ արձակուրդի ատեն իրենց մէջ բաժնեցին և իբր զբօսանք աշխատեցան և թարգմանեցին, որոց անունները հետեւեալ ցանկին մէջ կը դնենք։

Կարեւոր սեպեցինք իւրաքանչիւր պատմութեան վերջը՝ համառօտ խրատական խորհրդածութիւն և յորդորակներ աւելցնել, զորս մէկ տող բուն պատմութենէն զատելով դրինք. բայց ԺԲ. և Լ. գլուխներունը նոյն իսկ թարգմանող աշակերտը գրած է. իսկ ԻԶ. գլխուն խորհրդածութեան տակ աւելցուցինք նախապաշարմանց վրայօք յօդուած մը, յուսալով որ օգտակար կըլլայ։

Իսկ գրքին օգտակարութեան վրայ բառ մը անգամ ըսելն աւելորդ կը համարինք, քանի որ գեղեցիկ առաքինութեանց յորդոր և գժոխային մոլութեանց պարսաւ կը պարունակէ. քանի որ կենդանի օրինակներով և պատմական ստոյգ դէպքերով կըներկայացնէ մեզ բարւոյն ու պատշաճին վարձքը և չարին ու մոլին պատիժը։ Ուրեմն ալ ուրիշ բան չըմնար մեզ ըսել բայց միայն յորդորել որ սիրով, հաճութեամբ, հնազանդութեամբ և օգուտ քաղելու մտօք կարդացուի. այնուհետեւ իւր արդիւնքը պիտի ըլլայ իւր փառաւոր գովեստը, և այն ատեն պիտի պսակուի ազնիւ բարերարին ազգօգուտ բաղձանքը, և պիտի քաջալերուին թարգմանող աշակերտք։

ԱՆՈՒԱՆՔ ԱՇԱԿԵՐՏԱՑ	ԳԼՈՒԽՔ
Գէորգ Տ. Յարութիւնեան Խամսելցի.	Ա. ԻԴ. ԻԶ. ԼԳ։
Պօղոս Յակոբեան Զմնադ—Գալեցի.	Ե. ԺԱ. ԻԵ. ԼԲ։
Թադէոս Գրիգորեան Ադրիանուպօլսեցի.	Գ. Ե. Ի։
Կարապետ Թովմասեան Զմնադ—Գալեցի.	Զ. Թ. ԺԸ։
Գէորգ Սարգսեան Արապկերցի.	Ը. ԻԸ։
Գաբրիէլ Պօղոսեան Եգիպտացի.	ԺԲ. Լ. ԼԱ։
Աւետիս Կարապետեան Կ. Պոլսեցի.	Ժ. ԺԶ։
Կարապետ Տ. Յովհաննէսեան Թրակացի.	ԻԲ։
Կարապետ Մկրտչեան Եւդոկացի.	ԻԹ։
Յարութիւն Սահակեան Վանեցի.	ԺԷ։
Միսակ Ալիօնեանց Սեբաստացի.	ԺԹ. ԻԱ։
Սարգիս Ստեփանեան Թալասցի.	ԻԷ։
Յովհաննէս Խաչատուրեան Մալաթիացի.	ԺԳ։
Պետրոս Պետրոսեան Տիգրանակերտցի.	ԺԵ։
Խաչատուր Ստեփանեան Մէլէմէնցի.	ԺԴ։
Յարութիւն Յակոբեան Թալասցի.	Բ. Դ։
Սարգիս Գրիգորեան Կէլիպօլսցի.	ԻԳ։

Մի՛ լինիր իմաստուն յաչս անձին քոյ, այլ երկի՛ր 'ի Տեառնէ, եւ խոտորեա՛ց յամենայն չարութենէ. ապա բժշկութիւն եղիցի մարմնոյ քում, եւ դարման ոսկերաց քոց: Առակ. Գ. 7.

ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

Հիւանդ այրին

Բարերարութիւնը քաղցր է ամէն ժամանակ, բայց աւելի քաղցր կ'ըլլայ թէ որ չյուսացուած ժամանակ գործուի:

Երբ ազնուական մը առաւօտ մը կանուխ անծանօթ կերպարանքով առանձին Վիեննա քաղաքին փողոցներուն մէկէն կ'անցնէր, տասներկու տարեկան տղայ մը տեսաւ, որ իրեն կը մօտենար, և խոնարհ ու արտասուալից դէմքով, ցած և հեծեծանաց ձայնով ողորմութիւն կը խնդրէր: Մանկան դիմաց պայծառութիւնը, համեստ շարժմունքը և պատկառանքը՝ որ մանկան դիմաց ամենագեղեցիկ զարդն էր, աչքէն վազող արցունքները և հեծեծանքէն ընդմիջեալ ձայնը, մեծ ներգործութիւն ըրին այս ազնուականին սրտին, որն որ պատասխանեց անոր ըսելով. «Ես արտաքին կազմութեանդ և ձեւերուդ նայելով չեմ կարծեր որ աղքատ ծնած ըլլաս. ըսէ ինձ ուրեմն,

ի՞նչ պատճառաւ կը ստիպուիս մուրալու»։ «Ճշմարիտ, ասաց մանուկը՝ հառաչելով և արցունքներ թափելով, ես այս խղճալի վիճակին մէջ չեմ ծնած, սակայն հօրս անբաղդութիւնը և մօրս ներկայ վիճակը, զիս կ'ըստիպեն զայս ընելու»։ —«Ո՞վ է քու հայրդ»։ — «Մեծահամբաւ վաճառական մ'էր, և իր բարեբաղդութիւնը պահպանելու կը ջանար, բայց իր հաշուակցին աղքատանալը, զինքն ևս մէկ վայրկենի մէջ վար զարկաւ. և մեր աւելի թշուառութիւնը այս եղաւ, որ նա իր սրտի ցաւոց չկարենալով համբերել, մէկ ամիսէն յետոյ առ Աստուած փոխեցաւ։ Ես, իմ փոքր եղբայրս և մեր մայրը յետին թշուառութեան մէջ մնացինք։ Ես ինձ համար ապաւինելու տեղ գտայ հօրս բարեկամներէն մէկուն քով. մայրս ալ ինչպէս որ ըլլայ, իր ձեռագործութիւններովը կարողացաւ մինչև ցայսօր պահպանել իր անձը և փոքր եղբայրս. բայց այս գիշեր յանկարծ սաստիկ ցաւ մը բռնեց զինքն, որ կասկածել կու տայ ինձ անոր ապրելուն վրայ։ Կարօտ եմ և զուրկ ամեն բանէ, և չգիտեմ անոր օգնելու կերպը։ Ոչ իս ճանչցածներուն քով չեմ համարձակիր մօտենալ մուրալու համար. բայց ո՞վ տէր, քու ինձ սատարական երեւելդ քաջալերեց զիս այսօր յաղթահարել ամօթխածութեանս և մօտենալ քեզ։ Ո՛ն ուրեմն, գթա՛ իմ թշուառ

մօրս վրայ, և շնորհք ըրէ ինձ անոր օգնելու միջոց մը ցուցնել»։

Այս ըսելով՝ սկսաւ լալ մանուկը. և ազնուականին սիրտը շարժեցաւ, ուստի հարցուց. «Շատ հեռո՞ւ է ասկից մայրդ»։ «Այս փողոցին ծայրը, պատասխանեց մանուկը, ձախակողմեան վերջին տան երրորդ դստիկոնին մէջ»։ —«Բժիշկ տեսա՞ծ է զինքը»։ —«Ահա անոր համար կ'երթայի. բայց չգիտեմ ինչո՞վ վարձատրեմ բժիշկը, և անոր պատուիրած դեղերը ինչո՞վ գնեմ»։ Ազնուականը հանելով իր քսակէն երկու երեք ոսկի և տալով մանկան ասաց. «Ուրեմն շտապէ շուտով բժիշկ մը գտնալ և մօրդ օգնութեան հասիր»։ Մանուկը շատ մը գոհութեան խօսքերով շնորհակալ եղաւ և վազելով հեռացաւ անկէց։

Երբ մանուկը անհետացաւ, անծանօթ ազնուականը միտքը դրաւ ինքն անձամբ հիւանդին այցելութեան երթալ։ Սանդուղներէն վեր ելլալով փոքրիկ սենեակ մը մտաւ, ուր ուրիշ բան չտեսաւ, բայց միայն հին և անարգ քանի մը կարասիներ, խարխուլ սեղան մը, հին արկղ մի, անկողին մը, ուր կը ննջէր հիւանդը, և ուրիշ փոքր անկողին մը անոր քով։ Տխրութեան խորը կը տատանէր կինը, և իր փոքր մանկիկը մահճին ծայրը լալէն շնչասպառ կը լինէր։ Կ'աշխատէր մայրը զայն քաջալերելու, բայց նոյն իսկ ինքը կարօտ էր

քաջալերութեան ։ Ազնուականը խղճալով մօտեցաւ անոր, և զայն քաջալերելով սկսաւ բժշկի պէս հարցումներ ընել հիւանդութեանը վրայ ։ Կինը կարճ կերպով անոր պատմելէն զկնի, հառաչելով և արցունքներ թափելով ասաց. «Ո՛վ տէր, իմ ցաւս ուրիշ աւելի մեծ և աղետալի պատճառէ կը ծնի, և բըժիշկներու ճարտարութիւնները չեն կարող զայն բժշկել ։ Մա՛յր եմ ես ամենաթշուառ որդւոց, ապերջանիկ մայր, իմ՝ և իմ որդւոցս աղէտքը սիրտս խիստ ցաւցուցած են ։ Միմիայն մահը կրնայ զիս ազատել ցաւերէս. բայց նոյն մահն իսկ կը սարսափեցնէ զիս, երբ կը յիշեմ որ ստիպուած եմ այն ատեն թողուլ թշուառ որդիներս միայնութեան մէջ»։ Այս ըսած՝ ատեն սկսաւ աչքերէն առուն առուն հոսիլ արտասուաց մարգարտափայլ կաթիլներ. յետոյ պատմեց բոլոր դէպքերն ու անցքերը, զորս ծպտեալ բժիշկը չգիտցողի մը պէս մէկիկ մէկիկ լսեց, և ինքն ևս անոր հետ սկըսաւ արցունք թափել ։ Վերջապէս ըսաւ անոր ազնուականը. «Մի՛ կտրեր յոյսդ բոլորովին այս բաներուն համար, Տէրը ողորմած է, չմոռնար զքեզ ։ Քո աղետիցդ ես ալ ցաւակից եմ, բայց Տիրոջ ողորմութիւնը մեծ է, բոլորովին մի՛ լքանիր ։ Աղէկ խորհէ ներկայ կեանքդ պահպանելու, որ խիստ կարեւոր է զաւակացդ համար ։ Կտոր մի թուղթ ունիս

դեղերը վրան գրելու համար»։ Կինը թուղթ մի պատառեց եօթը տարեկան մանկան կարդալու վարժութիւն ըրած տետրակէն, որ մահճին ծայրը դրուած էր ։ Ազնուականը այս թուղթը գրելէն վերջը ըսաւ. «Այս դեղը կը զօրացնէ զքեզ այժմ, և յետոյ երբ հարկը պահանջէ աւելի լաւը կը պատրաստեմք, և կը յուսամ որ սակաւ ժամանակէն առողջանաս»։ և տոմսակը սեղանին վրայ թողելով գնաց ։

Քանի մը վայրկենէն վերջը մեծ որդին վերադարձաւ. «Սիրելի մայրս՝ ըսաւ նա, քաջալերուիր, Տիրոջ ողորմութիւնը մեզ հետ է. տես, ինչ որ այս առտու ազնուական մը առատապէս տուաւ ինծ, կը բաւէ մեզ ասիկայ քանի մ՚օր ։ Բժշկին քով ալ գնացի, որ հիմայ կուգայ. թուլցուր քո ցաւերդ և մխիթարուիր»։ — «Ո՛վ որդեակս՝ ասաց մայրը, եկ գիրկս. քո անմեղութեանդ համար Տէրը ողորմեցաւ մեզ, որուն համար կը խնդրեմ Աստուծմէ, որ իւր հովանւոյն տակ պաշտպանէ զքեզ երկար ժամանակ ։ Անծանօթ բըժիշկ մը հիմա գնաց ասկից. սեղանին վրայ եղած տոմսակը տես, և գնա բեր ինչ որ պատուիրած է անոր մէջ»։

Մանուկը թուղթը ձեռքը առաւ, և զայն կարդալով ապշեցաւ. նորէն գնաց՝ դարձեալ կարդաց, և վերջը աղաղակեց ասելով. «Ո՛վ

մայրիկս, արդեօք այս ի՞նչ է»։ Մայրը զարհուրած և ապշած թուղթը խլեց նորա ձեռքէն, և մեծ տագնապով կարդալով՝ գոչեց. «. . . ո՜հ . . . կայսրը . . .» այս ըսած ատեն թուղթը ձեռքէն ընկաւ և ինքը մարեցաւ։

Այն տոմսակը օգոստափառ Յովսէփ Բ. կայսեր հրամանն էր, որուն մէջ առանձին իւր գանձէն առատ թոշակ կարգած էր անոր։ Աղէկ ժամանակի մէջ հասաւ բժիշկը զայն ուշագնացութենէն արթնցնելու համար, որուն մէջ յանկարծական դիպուածով ընկած էր։ Բժշկին տուած դեղերով սակաւ ժամանակին մէջ առողջացաւ այն հիւանդութենէն, որ հոգւոյ նեղութենէն յառաջ եկած էր։ Նոյնպէս առատասիրտ և օրհնեալ ինքնակալը ուրախացաւ այրիին առողջութեան պատճառ լինելուն, և բաղդի դիպուածներէն սաստիկ կերպով հալածուող և նեղեալ տունը՝ երջանկացնելուն համար։

Բ.

Հուգարդոս Մէգլէր

ՀՈՒԳԱՐԴՈՍ Մէգլէր Դուբլին քաղաքի հարուստ վաճառականի մը զաւակ էր. իւր անձին գեղեցկութեան և իւր հոգւոյ զուարթութեանը հետ կապուած ունէր նաև քաղցրաբարութիւն և գթութիւն, որով

խիստ գովելի կը հանդիսանէր իւր վրայ գտնուած բնութեան ուրիշ ձիրքերն ալ։ Այս ազնուական անձը վաճառականութեան առթիւ Թունուսի մէջ գտնուելով, օր մը դիմացէն նաւու մը հասնիլը տեսաւ, որուն մէջ երկու օրիորդներ դառնապէս և աղեկտուր կերպով կուլային և կ'ողբային։ Մարդասիրական գթութեամբ սիրտը շարժեցաւ, և գորովանօք մօտեցաւ անոնց իրենց լալուն պատճառը հարցնելու համար, և իմացաւ որ նոր գերի բռնուած և բերուած էին ծախուելու համար։ Կարեկցութեան բնական կիրքէն շարժուած նոյն ժամուն մօտեցաւ զանոնք գնելու, և միանգամայն ագահ աւազակներու իրմէ խնդրած ծանր գումարը վճարելով և քաղցր խօսքերով զանոնք քաջալերելով իր նաւուն մէջ առաւ. նաև յայտնեց անոնց թէ բոլորովին ազատ են, և միանգամայն իրենց տեղը դառնալու համար պէտք եղածը յօժարութեամբ պիտի հոգար։ Այսպիսի անակնկալ առատասրտութեան վրայ հիացմամբ ուրախանալով երկու օրիորդներն ալ նորա ոտքը ինկան, և ցաւալի ողբերուն ձայնը ցնծութեան փոխուելով՝ ուրախութեամբ իրենց շնորհակալութիւնը մատուցին, ոչ հայրենեաց խօսքն ըրին, և ոչ ալ ուրիշ կարօտութիւն մը յայտնեցին։

Այս երկու օրիորդներէն մէկը իւր անձին

փառաւոր ազնուականութեան հետ անհամեմատելի գեղեցկութիւն մ՛ունէր։ Հռիգարդոս սիրահարեցաւ անոր, և տեսնելով անոր վրայ բարերարելոց օգտին համար ըղաբերարներն հաճոյելու յարմար համեստ հաճութիւն ու յօժարութիւն, նորա երախտագիտութեան նշանները, նա մանաւանդ ամենէն մեծ ձիրքերը զորս նկատեց նորա վրայ, զուարթութիւնը, փափկութիւնը, ժրութիւնը, հեզութիւնը, շարժմանց վեհութիւնը և վերջապէս պարկեշտ ազնիւ և խոհական մնդեան յայտնի նշանները. երբ այս ամենը փորձով տեսաւ, երթալով տակաւ առ տակաւ իւր սրտին մէջ եռաբորբոք սէր մը արծարծեցաւ։ Իսկ Կոստանդիան, որ արդէն երախտապարտութեան աւելի քաղցր կապով կապուած էր Հռիգարդոսի հետ, բայց օր ըստ օրէ նորա վրայ աւելի խնամածութիւն և եռանդուն աշխատութիւն տեսնելով, նա մանաւանդ անձին գեղեցկութեան հետ ազնըւական մարդու լաւագոյն ձիրքերը գտնելով՝ Հռիգարդոսի սիրոյն հաւասար սէր ցուցուց։

Հռիգարդոս շատ անգամ՝ աղաչելով և ստիպելով կը հարցնէր նորա անունը, ցեղը և հայրենի երկիրը, բայց անիկա բաւական համարեց յայտնել միմիայն իւր անունը որ Կոստանդա կը կոչուէր և իւր ընկերն ալ Իղալէլա՝, և ուրիշ ինչ և իցէ պարագաներու համար խնդրեց որ հետաքրքիր չըլլալով լռութեան տակ թողու։ “Բաւական համարէ քեզ գիտնալ, կ'ըսէր, որ քու ինձ ըրած խնամքներուդ անարժան չեմ՝ ծնած, որոնք օր մը պիտի վարձատրուին”։

Հռիգարդոս Դուբլին քաղաքը հասնելով իւր հօրը առաջը ներկայացուց այս երկու օրիորդները, և միանգամայն պատմեց՝ թէ ինչպէս ստացաւ զանոնք, նաև յայտնեց Կոստանդային վրայ ունեցած իւր չափազանց սէրը։ Հայրը գովեց իւր որդւոյն առատասրտութիւնը զանոնք գերութենէ ազատելուն համար. բայց առաջին անգամ մէկէն՝ի մէկ չը հաճեցաւ այն ամուսնութեան, որուն կը ցանկար Հռիգարդոս այն օտարական և անծանօթ օրիորդին հետ։ Սակայն շատ չը տեւեց՝ հայրն ալ յաղթուեցաւ Կոստանդայի վեհ՝ շարժուածքներէն և տենչալի յատկութիւններէն, ուստի և դէմ չը դրաւ իւր որդւոյն ըրած յաճախակի թախանձանաց։ Հռիգարդոս թէպէտ յառաջուց իւր սէրը այլ և այլ նշաններով յայտնած էր օրիորդին, բայց չէր համարձակած ամուսնանալու խորհուրդը երևան հանել։

Երբ Հռիգարդոս իւր սէրը Կոստանդային յայտնեց և միանգամայն նորա հետ իր ամուսնանալու բաղձանքը, այս բանիս վրայ Կոստանդա շատ ժամանակ մտածեց և իւր

սէրն ալ Հուիգարդոսի սէրէն պակաս չըր գըտնելով, վերջապէս այն սէրէն յաղթուած հաւանեցաւ նորա հետ . և ճիշտ ժամանակին իրենց երջանիկ ամուսնութեան առաջին պըտուղ արու զաւակ մի ունեցան կայտառ և խիստ գեղեցիկ ։

Անկէց վերջը երկու տարի ևս սիրով և խաղաղութեամբ միասին անցընելով, Հուիգարդոս իւր գործերուն հարկաւորութենէն ստիպուած յանձն առաւ նոր և աւելի երկար ծովային ճանապարհորդութիւն մի ընել։ Իւր Կոստանդա սիրելի ամուսնոյն քովէն հեռանալու ժամանակը շատ արցունքներ թափեց, և չափազանց սիրոյն համար նորա պատկերը իւր մատանիին վրայ նկարել տուաւ ; միշտ իւր աչքին առջևը ունենալու համար ։ Շատ երկիրներ պտըտելէ զկնի վերջապէս եկաւ հասաւ Պալերմօ քաղաքը . ուր օր մը երբ իւր աչքը անկած սիրելւոյն կենդանագրին վրայ կը նայէր , ուրկէ չէր կրնար իւր աչքը հեռացնել, պատահեցաւ՝ որ պալատականներէն մէկը նորա մօտը կայնած լընելով, այն կենդանագիրը ճանչցաւ և անմիջապէս այս բանը Թագաւորին հաղորդեց ։ Թագաւորն իսկոյն ուրիշ պատճառով մը Հուիգարդոսը կանչելով, ուրիշ անոր հետ զանազան իրաց վրայ խօսելու ժամանակը զգուշութեամբ կը նկատէր Հուիգարդոսի ձեռքը

գտնուած մատանին ։ Թագաւորը երբ տեսաւ այս կենդանագիրը՝ վրդովեցաւ և այլայլեցաւ , բայց ինքնիրեն գալով շփոթութիւնը մէկդի թողուց և մեղմաբար հարցուց Հուիգարդոսին . «Որո՞ւն է այդ պատկերը» ։ Հուիգարդոս պատասխանեց, թէ՝ —«Իմ ամուսնոյս կենդանագիրն է» ։ Թագաւորը զարմանալով մը նորէն հարցուց . «Քու ամուսինդ . ո՞ւր է քու ամուսինդ» ։ Պատասխանեց Հուիգարդոս, թէ՝ «Դուբլին քաղաքին մէջ հօրս քովն է» . —«Ի՞նչ է անունը» . —«Կոստանդա» ։ — «Դուբլինի մէջէ՞ն է՝ թէ օտարական ։ —«Տէր իմ, օտար է նա , բայց չեմ գիտեր թէ ո՞ր երկրէն է» ։ Հոս սկսեց Հուիգարդոս պատմել՝ թէ ինչպէս ազատեց զայն աւազակաց ձեռքէն , և ինչպէս Դուբլին բերաւ և ամուսնացաւ նորա հետ ։

Թագաւորը այս ամէնը զգուշութեամբ լսելէն զկնի , առանց անոր ուրիշ բան մ՚ըսելու , հրամայեց զայն պահել ։ Յետոյ հրամայեց Թագաւորը ամբողջ նաւ մը պատրաստել բոլոր պէտք եղած բաներովը, և ղրկեց ՚ի Դուբլին որպէս զի Կոստանդան իւր զաւկովը և Իռալէլան ալ միատեղ անմիջապէս Պալերմօ քաղաքը բերեն ։ Արդարև ով կարող է այս տեղ բնականապէս նկարագրել Թշուառ ու ողորմելի Հուիգարդոսի սրտին ահ ու դողը և տարակուսութեան անհնարին տագնապը, երբ

կը տեսնէր նա այնպիսի վտանգ մը, որուն մէջ ինկած էր ինքը իւր գործքերը անխոհեմ կերպիւ պատմելուն համար։ Ո՜վ կրնայ խօսքով ճառել ապերջանիկ Կոստանդեայի երկիւղն ու զարմանքը, երբ այսպիսի անակնկալ դիպուածով իւր հօրը հրամանաւ ինքը կալ և կապ կը լինէր։ Կամ թէ ո՞վ կարող է լիովին կոծել և ողբալ այն թշուառ ու ողորմելի ծերունւոյն միայնակութիւնը, որով ինքը յանկարծակի կը զրկուէր իւր հարսէն, թոռնէն և զաւկէն։

Կոստանդեան Պալերմոյ հասնելով, թագաւորին առաջք կը ներկայանայ. երբ առաջին անգամ զթագաւորը կը տեսնայ ահէն ու դողէն սարսափած քիչ էր մնացած որ նուաղեալ գետին պիտի իյնար, սակայն քաջալերուելով և հօրը ոտքը իյնալով կ՚ըսէ. «Ո՜վ տէր, հարկ է որ շատ պատճառներով ես Ձեր աչքին յանցաւոր երեւիմ, և ամենայն հնազանդութեամբ Ձեր բարկութեամբ լի հրամանին կըսպասեմ. բայց և այնպէս այս մատաղ մանուկը և նորա փառաբաղդ հայրը անմեղ են, և ես անոնց կենաց ազատութեան համար միայն կ՚աղաչեմ։ Տակաւին ըս եւս կարծուածէն պակաս յանցաւոր պիտի գտնաս և անմեղ պիտի դատես, թէոր քու բարկութենէդ իջնաս և սովորական գթութիւնդ ունենաս։ Այն սարսափելի օրը, որ տանէն որ ես յափըշտակուելով հեռացայ քեզմէն, այն օրը ես Ի-

զապէլային հետ միասին կը շրջէինք ծովու եզերքն եղող արքայական բուրաստաններուն անդիի կողմը. այն ժամանակ այն տեղերը պահուող խումբ մը մարդիկ յանկարծ մեր վրայ հասնելով յափշտակեցին զմեզ։ Մենք մեր այսպիսի զարհուրելի վիճակի մը մէջ գըտնուելնիս տեսնելով, պոռացինք կանչեցինք և բողոքեցինք, սակայն ՚ի զուր։ Որովհետեւ Բերիոյ Դուքսը, որն որ նոյն իսկ ինքն էր այս նենգութեան պատճառը, զմեզ իւր նաւուն մէջ բերել տուաւ որ մեզմէ շատ հեռուն չէր, և բոլոր առագաստները բացուած ու պատրաստած էր, և անմիջապէս ճամբայ ելաւ։ Ձեր ոտից առջեւը խոնարհելով կը խոստովանիմ, ո՜վ Տէր, որ յառաջուց չը կրցայ ես բոլորով սրտիւ հեռանալ Բերիոյ Դուքսին սէրէն. բայց երբէք չը հաւանեցայ ես այնպիսի մէկ փախստեան, և այն ժամէն սկըսեալ ես զայն աշխարհիս ամենէն ատելի մարդը և ամենաչարն համարեցի։ Երբ բաւականին հեռացած էինք, յանկարծակի աւազակաց նաւ մը յարձակեցաւ մեր վրայ. պատերազմը երկար և սաստիկ եղաւ. Դուքսը կատաղաբար պատերազմեցաւ, սակայն վերջապէս չարաչար մեռաւ ՚ի պատիժ իւր ըրած այնքան ոճիրներուն, և զմեզ գերի առին և տարին Թունուսի երկիրը ծախելու համար։ Հոն երիտասարդ մը գտնուեցաւ, որ կարծես թէ եր-

կրնքէն խոկուած էր զմեզ փրկելու համար։
«Մոնկա իւր բարեխոս գթութեամբն ու
ողորմութեամբը խղճալով մեր վրայ՝ մեծ գին
մը տուաւ և զմեզ ազատեց. և ոչ միայն այս-
չափ, այլ և ատնցմէ զատ շատ խնամք ալ
ցըցուց մեզի։ Շատ անգամ հարցուց նա
մեզ մեր հայրենեաց վրայօք, զմեզ մեր հայ-
րենիքը վերադարձնել խոստանալով։ Սակայն
ես փախնալով այն կասկածներէն, որոց մէջ դու
իրաւամբ պիտի իյնայիր՝ կարծելով թէ ես կա-
մակից եմ այս փախստեան, և փախնալով մի-
անգամայն քու բարկութենէն, երբէք չը վս-
տահացայ զիս անոր յայտնել. յետոյ ամեն
խնամք ու մարդասիրութիւն ցուցնելով զիս
իւր հօրքովը բերաւ։ Երկար ժամանակ ինձ
եղած երախտիքներէն զկնի թէ և օտարական
կամ անծանօթ էի անոր և զիս պահելու խոր-
հրդիս վրայ յամառած էի, բայց այսու ամե-
նայնիւ ուրախ սրտիւ ուզեց զիս պահել ու
խնամել։ Վշտացուցի և բարկացուցի զՁեզ
ով Տէր, գուցէ այլ եւս քու դուստրդ կո-
չուելու ալ արժանի չըլլամ, սակայն այս ա-
մենը մէկդի դնելով ինչպէս որ կը մտածէի,
քու բարկութենէդ փախնալով և զՁեզ այլ
եւս տեսնելու յոյս ալ կտրելով, և անոր ինձ
ըրած երախտիքներէն ու միանգամայն Հռի-
գարդոսի գովելի կենցաղավարութեամբը սըր-
տիս մէջ բորբոքուած սէրէն յաղթուելով ու-

զեցի նորա հետ ամուսնանալ։ Պատժէ զիս
հիմա, ով Տէր, պատուհասէ քու դուստրդ,
եթէ իրաւամբ քու բարկութեանդ արժա-
նացած է, և այս բանիս համար չը պիտի տր-
տնջամ. սակայն իմ ապաստանս և մարդա-
սէր բարերարս, որուն ես պարտաւոր եմ իմ
ազատութիւնս և կեանքս, և այս մատաղ
ու անմեղ մանուկը ազատէ այն պատժէն,
որուն պատճառ բոլորովին ես եմ»։
Թագաւորը լսելով այս բաները, և իւր դըս-
տեր արցունքները և նորա խղճալի կերպարանքը
տեսնելով, այն ինչ յառաջագոյն բարկութեան
ահեղ կիրքով վառուած բորբոքած էր, սկսաւ
կամաց կամաց իւր սիրտը ձմլիլ և քաղցրա-
նալ։ Կոստանդեայի յետին աստիճան խոնար-
հութիւնը և գեղանման տարածիկը, նորա
հեկեկումն ու արցունքները, և նորաբոյս ման-
կան ճիչն ու աղաղակը, աւելի կը զօրացընէր
իւր մօրը հեծեծանքը, խիստ մեծ ազդեցու-
թիւն ըրին թագաւորին սրտին։ Անմիջապէս
նա իւր ձեռքը աղջկանը երկնցուց, որ տա-
կաւին ծունկի վրայ եկած իւր ոտից առջեւ
խոնարհած կը մնար, զայն գետնէն վերցնելով
կ'ըսէ անոր. «Վշտացուցիր զիս այդպիսի ան-
հաւասար ամուսնութիւն մը ընելուդ համար,
և աւելի քու փախուստդ քեզմէ չըլլալէն ետ-
քը՝ իմ գթութեանս վրայօք կասկածելովդ սիր-
տըս ցաւցուցիր։ Բայց որովհետեւ կը տես-

նամ որ քու զիս զայրացնելուդ պատճառը նենգութիւն չէ, այլ առաւել տկարութիւնդ է, գիտցիր որ ես քու հայրդ եմ և կը ներեմ քեզի »: այս ըսելով գորովալից սիրով գրկեց զանիկա, և հրամայեց որ Հուխդարդոսը առ-ջեւը բերեն: Կոստանդայի աչքերէն սիրոյ, ցնծութեան և շնորհակալութեան արցունք-ներն աղբիւրի պէս հոսեցան, այն աստիճան որ Թագաւորին սիրտը փղձկելով, սկսաւ իւր աղջկանը հետ միասին լալ:

Իսկ Հուխդարդոս, որ իրեն ինչ ըլալիքը չը գիտնալով և իւր գործոց երեսի վրայ մնա-լուն համար երկար ժամանակ վարանման և մտատանջութեան մէջ մնացեր էր, այսպիսի նոր հրամանէ մը վրդովելով և շուարելով, կեր-պարանափոխ եղած դողալով կուգար: Երբ զԿոստանդեան տեսաւ, անմիջապէս Թմրելով փայտ կտրեցաւ. սակայն նորա սիրտը վա-ռուած, առանց իւր շուրջը գտնուողներէն ակնածելու և ամէն բան մոռնալով՝ անմիջա-պէս գրկեց զԿոստանդեան և իւր որդին գրկա-ցը մէջ սեղմելով, երկար ժամանակ այսպէս գրկախառնեալ մնացին առանց բան մը խօ-սելու: Յետոյ անոնցմէ բաժնուելով Թագա-ւորին ոտքը ինկաւ ըսելով. «Կ'ընդունիմ, ով տէր, սիրով և յօժարութեամբ կ'ընդունիմ քու վճիռդ ինչ որ ալ ըլլայ, որովհետեւ կատա-րեցաւ իմ փափագս, որ կ'ուզէի միանգամ

իմ այս երկու սիրելիներուս տեսութեանը ար-ժանի ըլլալ. այս էր իմ փափագս և նպատակս. ուրիշ բանի մը չ'եմ ցանկար: Միմիայն իմ ա-ղաչանքս այս է որ ասոնք և իմ հայրս . . . »: Թագաւորը նորա խօսքերը ընդմիջելով կըսէ. «Ոչ, սիրելի որդեակ, ոչ, մի վախնար և մի տագնապիր: Աղջիկս և քու պատմածներէդ իմացայ ես քու անմեղութիւնդ. ես քու մար-դասիրութեանդ վրայ խիստ զարմացած եմ, Աստուած քեզ վարձատրել ուզեց, և ես անոր խորին խորհուրդներուն երկրպագութիւն կուտամ: Աստուած ձեր երկուքն ալ երջա-նիկ պահէ, և ձեր որդիքն ալ իմ ծերութեանս կաղզուրիչ և յենարան պիտի ըլլան»: Հոս ա-ռաւել եւս նորոգեցան արցունքները, գրկա-խառնութիւնք և մրմռմունք: Այն օրէն 490 396 Թագաւորը նաւ մը խրկեց 'ի Դուբլին Հուխ-դարդոսի հայրը յարքունիս հրաւիրելով, որ նա ալ ուրախութեամբ իւր պարագաներովը միասին շուտով Պալերմոյ հասաւ: Այսքա ա-մէնքն ալ Աստուծմէ օրհնուած շատ վայե-լուչ և զուարթ օրեր անցուցին, որով աւելի բարերարութիւններ ընելու քաջալերեցաւ Հուխդարդոս, որով ինքը բարձրացած և այս-պիսի մեծ պատուոյ հասած էր:

Ճշմարիտ մեծութիւնն ու իրական պա-տիւը անկեղծ առաքինութեան կը վայլէ. շա-

հու պատճառաւ և փոխարինութիւնն ընդունելու նպատակաւ եղած որ և իցէ գործ՝ առաքինութիւն չէ։ Երանի՜ այն մարդուն, որ իւր կենաց օրերը ճշմարիտ առաքինութեանց շարք մի է։

Գ.

Պատկերը

ՀՌՈՎՄԱՅ կառավարութիւնը գերամեծար Ենէա Սիլուիոս դատաւորին իշխանութեան տակ եղած ժամանակ՝ Պիկոլոմենի անունով համեստաբարոյ պատուաւոր մարդ մը կար։ Սակայն իւր հասակին ծերութեան և անձին տկարութեան պատճառաւ չէր կրնար իւր արհեստը բանիլ, որով մինչեւ այն ժամանակ կը սնուցանէր թէ իւր անձը, և թէ իւր պառաւեալ ամուսինը։ Ուստի ստիպուած՝էր իւր տան մէջ մնացած կահ կարասիները ծախել և ապրիլ։ Այս կարասիներուն մէջ իւր նախնիքներէն յիշատակ մնացած նկարուած փոքրիկ պատկեր մի կը գտնուէր. այս պատկերը հռչակաւոր Ուրբինեցի Ռափայելին ընտիր ու հազուագիւտ ձեռագործն էր. բայց խեղճ ծերը անոր արժէքը չէր ճանչնար, մանաւանդ փոշոտուած և անմաքուր ըլլալուն պատճառաւ ոչինչ բանի մը տեղ դրած էր։ Սակայն անով քիչ մը դրամ ձեռք բերելու

համար ծախեց պատկերահանի մը, որ աւելի վարպետ էր ուրիշներուն գրած պատկերները գնելու և ծախելու մէջ, քան թէ ինքը իւր ձեռքով նկարագրելու մէջ։ Այս պատկերահանը երբ տեսաւ պատկերը, իսկոյն զմայլեցաւ նորա գեղեցկութեանը վրայ. ճանչցաւ նորա մեծ արժէքը, վասնզի խիստ բնական կերպով քաշուած էր. բայց ուզելով խաբել արհեստին անհմուտ աղքատիկ ու կարօտ ծերը, սկսաւ անարգ բանի մը պէս նոյն պատկերը վար զարնել և արհամարհել. յետոյ քիչ մը դրամ տալով՝ այնպէս ցցուց, որ իբր թէ աւելի ողորմութիւն՝ քան թէ պատկերին արժողութիւն կուտայ, և մտքովը ծերոյն տխմարութիւնը ծաղրելով առաւ պատկերը, և ուրախութեամբ հեռացաւ այն տեղէն։ Քանի մը օրէն զկնի ծերոյն նախնի բարեկամներէն մէկը իւր տունը եկաւ, և պատկերը իւր տեղը չը տեսնելով, զոր շատ անգամ տեսած էր. հարցուց անոր ըսելով, «Ի՞նչ ըրիր պատկերը»։ Պատասխան տուաւ ծերը. «Ծախած եմ այս անուամբ պատկերահանի մը այսչափ գնով»։ Հաւատարիմ բարեկամը երբ իմացաւ, որ պարզամիտ ծերը խաբուած և զրկուած է նոյն պատկերը գնողէն, բարկացաւ և սրտմտեցաւ։ Ապա յայտնելով պատկերին բազմագին և քաջարուեստ պատկերահանի գործ ըլլալը, յորդորեց զայն որ դատաւորին բողոքէ, և քա-

ջայերելու համար ինքն եւս ուզեց նորա հետ դատաւորին քով երթալ։

Զգօնամիտ դատաւորը ամեն բան մտիկ ընելէն զկնի՝ պատկերին չափը ուզեց, և խմանալով՝ զանոնք արձակեց։ Բարեբախտաբար դատաւորին վերնայարկին մէջ երկու պատկեր կար, որք նոյն պատկերին մեծութեամբ շինուած էին. դատաւորը հրամայեց որ անոնցմէ մին իր շրջանակէն հանեն, և ապա կանչելով այն նենգամիտ պատկերահանը ըսաւ անոր. «Այս շրջանակին մէջ դնելու համար պատկեր մը կրնա՞ք գտնալ, որպէս զի միւս պատկերին զոյգ ըլլայ»։ «Այո, ունիմ ըսաւ նկարիչը, գեղեցիկ պատկեր մը ունիմ, որ մեծահամբաւ և գերազանց Ռուբինեցի Ռափայելին ձեռագործն է, և կարծեմ թէ յատկապէս այս շրջանակին մէջ դնելու համար շինուած է»։ «Շատ աղէկ, ըսաւ դատաւորը, բեր ուրեմն որ տեսնամ»։ Գնաց նկարիչը, և նոյն ժամուն նկարը բերաւ։ Այս նկարին վրայ սքանչելի վարպետութեամբ նկարուած էր ամենասուրբ տոհմը, այսինքն՝ սուրբ Յովակիմ, Աննա, սուրբ Յովսէփը, Մարիամ սուրբ կոյսը, նաեւ Քրիստոս մանկութեան հասակին մէջ։ Եւ որովհետեւ նորա վրայի փոշիները մաքրուած էին, ներկերուն գոյները պայծառ կը փայլէին. հոն կը նշմարուէր արհեստին ճարտարութիւնը, մարմնոց փափկութիւնը, զգեստուց իրարու հետ

ունեցած գեղեցիկ կապակցութեան և ծալքերու վայելուչ յարմարութիւնը, դիմաց անուշութիւնը, նկարագրին բուն նշանակութիւնը, ահա այս ամենը կը յայտնէին Ռափայէլ նկարչին ճարտարութիւնը։ Դատաւորը նոյն պատկերը շրջանակին մէջ դնելով, տեսաւ որ ճիշդ առաջուան պատկերին մեծութեան չափ էր, և զայն բաւական ժամանակ նկատելէն զկնի, հարցուց անոր գինը։ Պատկերահանը պատասխանեց. «Արդէն երկու հարիւր ոսկի պատրաստ ունիմ, երէկ բարեկամ մը Անգղիացիի մը կողմանէ այսչափ ստակ տուաւ ինծի այս պատկերին համար՝ որուն սաստիկ կը բաղձայ. բայց ես չուզեցի զայն նոյնչափ ստակի վաճառել, այլ դիմացայ և երկու հարիւր յիսուն ոսկի պահանջեցի, որովհետեւ արդէն գործը դիւրաւ այնչափ դրամ կ'արժէ։ Բայց քանի որ Ձեր մեծապատուութիւնը կուզէ զայն գնել, երկու հարիւր ոսկիէն ինչ որ աւելի կուտաք, տուէք, և ես անով կը բաւականանամ»։

Սարսափեցաւ դատաւորը խաբեբային անիրաւութեան վրայ, և սաստիկ զայրացաւ. բայց զսպելով իւր բարկութիւնը հանդարտօրէն ըսաւ անոր. «Քեզ հետ չեմ վիճեր պատկերին գեղեցկութեան և արժանաւորութեան մասին, այլ միայն այսչափ կուզեմ իմանալ, թէ ինչու համար երկու հարիւր ոսկի չը

ծախեցիր»։ Պատկերահանը՝ երբ այս խօսքը լսեց սկսաւ ծանր ծանր երդմամբ հաստատել թէ ըսածը սուտ չէ. և յաւելուց ըսելով. «Եթէ կը կամի Ձեր մեծապատուութիւնը, խօսքերուս հաստատութեանը համար նոյն բարեկամը հոս կը բերեմ»։ Դատաւորը դարձեալ պատասխանեց ըսելով. «Ճշմարիտ կ'ըսես ուրեմն որ նորա համար երկու հարիւր ոսկի մատուցի՞ն»։ — «Այո՛, ո՛ տէր, պատրաստ ունիմ, բայց կ'ուզեմ աւելի ստակով վճարել»։ Ա՛լ կը բաւէ, ըսաւ դատաւորը, և հրամայեց սպասաւորներուն որ դուռը բանան, ուր ծերը պահուած էր. և դուռը բացուելով ծերունին տեսնուեցաւ։ Այս տեղ դիւրին է մակաբերել, թէ ինչպէս ահ ու սարսափ պատեց նկարիչը, երբ յանկարծ ծերը տեսաւ. երեսին գոյնը նետեց, տարակուսանաց մէջ ինկաւ և ամբողջ մարմինը սկսաւ դողալ։ Դատաւորը թող տուաւ որ քիչ մը ժամանակ նոյն սարսափելի երկիւղին ու տագնապներուն մէջ ալէկոծի. և յետոյ ահաւոր ու սոսկալի կերպարանօք և իշխանական ձայնով մը գոչեց և ըսաւ. «Ո՜վ անգութ, այդպէս ուրեմն նենգութեամբ և անիրաւութեամբ վարուեցար այս խեղճ պարզամիտ և տնանկ մարդուն հետ. ով թշուառական, այս տառապեալ անձը անիրաւութեամբ խաբած ատենդ արդեօք բնութեան սարսափը չզգացի՞ր։ Այս անզօր և դողդոջուն ծե-

րոյն ձեռքէն յափշտակած հացդ արդեօք չը կարողացա՞ւ զարթուցանել քո մտացդ խիղճը։ Այս քու ատելի անձիդ՝ ահա՛ հիմա հասկըցար թէ քո յանցանքդ որքան մեծ պատիժներու և չարչարանաց արժանի է։ Ահա դու քու ձեռօքդ զքեզ կը դատապարտես, և քեզ մեծ գթութիւն կ'ըլլար եթէ նոյն դատաստանաւ դատուէիր՝ որով դու քո անձդ դատապարտեցիր։ Բայց այժմ նորէն այս տեսակ անիրաւութիւն գործելէ զգուշեցիր, որ չըլլայ թէ երկուքին պատիժն ալ մեկէն կրես խիստ կերպիւ։ Արդ՝ հիմա այն երկու հարիւր ոսկին զորս դու այդ պատկերին համար ոչինչ բան մը կը սեպէիր, պէտք է հատուցանես այս մարդուն. և եթէ այսուհետեւ այս տեսակ խարդախութեան մէջ գտնուիս մահուան վճիռը պիտի ընդունիս։ Խաբեբան խայտառակուելով հեռացաւ այն տեղէն. իսկ ծերոյն աչքերը ուրախութեան և շնորհակալութեան արտասուքներով լեցուելով, օրհնեց իւր բարերարը. և դատաւորին սիրտն ալ ուրախութեամբ լցուեցաւ տառապեալ աղքատին օգնութիւն մատուցանելուն համար, և դաւաճանը իւր սեպհական թակարդով բռնելուն և դատապարտելուն համար։

Որչափ սոսկալի է խաբէութիւնը, որ աստիճան զզուելի և անպատիւ բան է խարդա-

խուլթիւնն ու նենգութիւնը. մարդկային ըն-կերութեան մէջ ապրելու անարժան է ստախօսը, վասն զի այնպիսին ամէն չարիք գործելու չ'ամաչեր. Թէպէտ միշտ այնպիսեաց վախճանը թշուառութիւն է, միշտ կը խայտառակուին, կ'անարգուին և անպատիւ կ'ըլլան, բայց դարձեալ չեն զգուշանար մարդիկ։ Ցաւալի ճշմարտութիւն մի կ'ստիպուինք խոստովանիլ, որ այս դարուս մէջ ամէն աստիճանի մարդիկ այս մոլութիւնը մանաւոր արհեստ ըրած են, և կեղծ քաղաքականութիւնըն է՝ որ զայն կը քաջալերէ։ Անոնք այն ժողովուրդին, որ արդարասէր և գթոտ դատաւորներու և իշխաններու հայրական խնամքը կը կառավարուի, որով չարերն իրենց պատիժը, և բարիներն իրենց վարձքը կ'ընդունին։

Դ.

Տամոն եւ Պիւթիաս

ՍԻՐԱԿՈՒՍԱՆ կ'ողբար ու կը հեծէր Դիոնէսիոսի բռնաւորութեան տակ։ Այս վայրենի մարդը խարդախութեամբ և բռնազբօսութեամբ այլոց աթոռը և իշխանութիւնը յափշտակելէ զկնի կը ջանար ժողովուրդը սարսափեցնելով և անգթութեամբ հաստատել իւր իշխանութիւնը։ Տարաբաղդ ժողովուրդ,

դը, որոնք թշուառ գերիներու պէս նորա հարստահարութեանց անտանելի ծանրութիւնը կը կրէին, պարտաւորուած էին ձայն չի հանել. մինչև անգամ արդար իրաւունքը ակամայ իրենց սրտին մէջ ծածկելով կը լռէին, որովհետև եթէ անձ մը տժգոհութիւն մը ցուցնել համարձակէր՝ մահուան արժանի յանցանք կը սեպուէր։ Այս ընդհանուր սարսափելի ահ ու դողին ժամանակ՝ Պիւթիաս անունով վայելուչ և աշխոյժ երիտասարդ մը, երբ օր մը բռնաւորին բարբարոսութեան մէկ օրինակը կը տեսնէ, չը կրնալով իւր արդար ցասման կիրքը զսպել, յանդգնեցաւ բարձրաձայն իւր հայրենեաց վշտերը ողբալ. սակայն իւր այս յանդգնութիւնն և անխոհեմութիւնը շատ սուղի նստաւ իւր վրայ։ Որովհետև Դիոնէսիոսի վարձքով բռնած լըրտեսները Պիւթիասի այս գործը ամենայն ճըշդութեամբ լուր տուին իրեն։ Բռնաւորը կատաղի գազանի մը պէս սաստիկ բարկանալով երդում ըրաւ վրէժ առնուլ. և նոյն ժամուն բռնաւորի արբանեակները խեղճ երիտասարդը պաշարելով կապեցին և բանտ կը տանէին։ Բանտ երթալու ճամբուն վրայ՝ Տամոն անունով գերազանց առաքինութեամբ զարդարեալ երիտասարդը ահա անոր կը պատահի, որ զՊիւթիաս իւր անձին պէս կը սիրէր։ Տամոն իւր բարեկամին այսպիսի անարգ և ա-

ղէտալի վիճակը տեսնելով սաստիկ ցաւած , մեծ տագնապով մը և վշտակրութեամբ շուտով անոր մօտենալով հարցուց . «Սիրելիդ իմ Պիւթիաս , ի՞նչ է այս , ի՞նչ ըրած ես արդեօք , գուցէ քու անզգուշութիւնդ և չափազանց եռանդդ . . . » : — «Այո՛ , սիրելի՛դ իմ Տամոն , ինչ որ շատ անգամ կը գուշակէիր ահա կատարեցաւ : Ես չգիտցայ ձեզ նման խոհեմ ու ծանր ըլլալ . չը գիտցայ քու բարի խորհուրդներուդ հետեւիլ . քեզ հնազանդիլ ուզելով երկար ժամանակ ես զիս զսպեցի , և բռնաւորին վայրագ բնութիւնը գաղտնի կերպով ատեցի , բայց վերջապէս իմ բարկութիւնըս սրտիս այս գաղտնիքը երեւան հանեց . այո՛ , ազնիւ բարեկամ , բռնաւորին այնքան անգթութեանց դէմ ունեցած ատելութիւնս ալ չը կարողացայ պահել : Կը տեսնեմ որ պիտի մեռնիմ , սակայն այսպիսի անարգ գերութենէ մը աւելի լաւ է ինձ համար մեռնիլը . միմիայն կը ցաւիմ իմ ծերունի հօրս , սիրելի ամուսնոյս և զաւակներուս վրայ : Ով սիրելի՛դ իմ Տամոն , քեզ կը յանձնեմ զանոնք . իմ տեղս դու մխիթարէ զանոնք և օգնէ անոնց . Ես ալ իմ բաղդիս վրայ ալ չի պիտի տրտընջամ » : Նորէն դահիճները ալ չուզեցին , որ այս երկու ցաւագին սիրելիները այսպէս երկար մէկ մէկու հետ խօսակցին . ուստի սաստիկ քաշելով մէկ մէկէ զատեցին , զՊիւթիաս

քաշկռտելով կապելու տարին , և զՏամոն արգիլեցին անոր ետեւէն երթալու : Տամոն իւր սրտին սաստիկ ցաւէն նեղուած՝ սկսաւ իւր մտաց մէջ շատ տեսակ խորհուրդներ յըղանալ , զայն ազատելու միջոց մը գտնալու համար , բայց 'ի զուր : Երբեմն այս ինչ հընարքը և երբեմն՝ այս ինչ բանը ընտրելով՝ շատ մը խորհրդածելէ ետեւ , անոնց ամէնն ալ անօգուտ և անպատշաճ համարելով մէկդի ձըգեց , և վերջապէս միտքը դրաւ Դիոնէսիոս բռնաւորին առջեւը ներկայանալ :

Բռնաւորը իւր կասկածոտ բնութեան համար վայրկեան մը անգամ զօրաց բազմութիւնը իւր քովէն չէր հեռացներ , և Տամոն այս զօրաց բազմութեան մէջէն անցնելով բռնաւորին ներկայացաւ : Նորա՛ ոտից առջեւ գետնամած տարածուելով ըսաւ անոր . «Ո՛ Տէր , հիմա Ձեր հրամանաւ երիտասարդ մը շըղթայի մատնեցաւ : Ես զայն պաշտպանելու՝ կամ անոր համար թողութիւն խնդրելու եկած չեմ , թէպէտև նորա յանցանքը իւր երիտասարդական մէկ անպատեհ եռանդը միայն եղած է , սակայն բաւական է որ նա քու աչքիդ յանցաւոր երեւցած է : Իմ Ձեզմէ խնդրելու շնորհքս այս է , որ այն երիտասարդին համար վճռելիք դատաստանդ թող մնայ քանի մը օր . որովհետեւ նա այս քաղաքէն քիչ հեռու ծեր հայր մը , կին մը և երկու զա-

ւակներ ունի, որոնք խիստ պէտք ունին նորա ներկայութեանը։ Տէ՛ր իմ, փոխանակ անոր՝ ես զիս 'ի բանտ կը մատնեմ, և այս քիչ օրերս պատիժը ես կը քաշեմ, որպէս զի նա կարող ըլլայ վերջին անգամ մ'ալ իւր ընտանիքը տեսնել. Թող երթայ զանոնք մխիթարէ՝ ու իւր պատուէրները տայ, ընտանեկան կարգադրութիւններ ընէ, և անոնց իւր վերջին և հրաժարական ողջոյնը տայ։ Անտարակոյս նա որոշեալ օրը պիտի վերադառնայ, և թէ որ ուշանայ, թող մեռնիմ ես նորա ուշանալուն համար»։

Զարմացաւ Դիոնէսիոս այս նորաքանչ առաջարկութեան վրայ, և այսպիսի չը տեսնուած բանի մը վերջը տեսնելու հետաքրքիր ըլլալով՝ հրաման տուաւ ըսելով. «Ահա քեզ կը շնորհեմ երկու օր, սակայն պէտք է որ հիմա դու կապուիս նորա տեղ։ Բայց գիտցիր որ եթէ նա երրորդ օրը առաւօտուն հոս Սիրակուսայի մէջ չը գտնուի, դու պիտի լինիս առաջին դատապարտեալ։

Տամոնը այս պատասխանին վրայ ուրախանալով, վազեց և շուտով գնաց իւր բարեկամին բանտը. այն տեղ իւր ձեռքովը քակեց նորա կապանքը, և ջերմ սրտով ինքզինքը նորա տեղը կապելով կըսէ անոր. «Շուտ ըրէ, գնա, և անձամբ մխիթարէ քու գժբաղդ ընտանիքդ։ Երկու ամբողջ օր կը շնորհէ քեզ Դիոնէսիոս, զոր կարող ես դու անկասկած 'ի գործ

դնել, նաւ մի գտնալ և փախչելով զքեզ ազատեցնել, ու այս բանիս համար այս երկու օրն ալ հերիք է. բայց ամէն բանէ աւելի պէտք է որ շուտով գործդ յառաջ տանիս, գնա՛, և 'ի զուր ժամանակ մի՛ վատներ»։ Պիւթիաս այս խօսքերէն ապշած զարմանալով մը կըսէ Տամոնին. «Ես փախչիմ, փոխանակ ինծի ես զքեզ անողորմ բռնաւորին մոլեգնութեանը մատնե՞մ, ուրեմն այսպէ՞ս կը ճանաչէք զիս, Տամո՛ն։ Դարձո՛ւր կ'ըսեմ, շուտով իմ կապանքս ինձ դարձուր. ինչպէս կարելի է, որ ես իմ անձիս վրայ կրեմ այնպիսի մէկ գործ, որնոր անօրէնութիւն է և թուլամորթութեան արդիւնք»։ «Բա՛ւ լըցի, կ'ըսէ Տամոն, քու վեհանձն ու ազնիւ հոգիդ երբէք վատասրտութիւն կամ խարդախութիւն չի կրնար ընդունիլ. և ես ինչպէս կրնամ ատանկ բան մը կարծել քու վրայ, մանաւանդ եթէ ձեր վրայ այդպիսի կասկած մը ունենայի, դուք իմ բարեկամս չէիք կրնար ըլլալ։ Բայց ինչ որ ես ձեզ կը պատուիրեմ, վատութիւն և խարդախութիւն չէ երբէք։ Դու հայր ունիս, կին ունիս, և երկու հատ ալ զաւակ, որոց պէտք է նուիրես քու կեանքդ և զքեզ, վասնզի անոնք առանց ձեզի չեն կարող ապրիլ։ Ես ինձ ազատող կամ ինձ կարօտ երբէք մարդ չ'ունիմ, վասն որոյ պարտքս է իմ անձս քեզի պէս բարեկամի մը վրայ դնել ինձ համար այս բա-

նը ամէն բանէ աւելի քաղցր է »։ Կրկնեց անդէն Պիւթիաս . «Բա՛ւ լացի , արդարեւ դու չպիտի կարողանաս վայելել այդ քաղցրութիւնը . դուն կը փափագիս , որ ես երթամ , այո , պէտք է որ ես երթամ , և բնութեան վերջին օրէնքը կատարեմ . պիտի երթամ իմ վերջին հրաժեշտս տալու հօրս , ամուսնոյս և երկու որդւոյս . սակայն անշուշտ երրորդ օրը առաւօտուն դարձեալ հոս պիտի տեսնես զիս , և դու պիտի ըլլաս իմ տեղս անոնց մխիթարիչն ու օգնականը։ Փոխանակ ինձ զքեզ անոնց տալով իրենց մեծագոյն պարգեւ մը ըրած պիտի ըլլամ, և անտարակոյս եմ որ այս կերպով կարող եմ զանոնք մխիթարել »։ Այս ըսելով գրկեց իւր սիրելի բարեկամը, և երկար գրկախառնութենէ և արտասուքներէ վերջը՝ ճանապարհ ինկաւ Պիւթիաս դէպի իւր երկիրը։ Տուն հասնելով, և այս գուժը տալով այնտեղ եղած սըրտաճմլիկ աղեկտուր տեսարանը նկարագրել հարկ չէ . ամէն մարդ կրնայ մակաբերել այսպիսի վայրկենի մը քստմնելի հետեւանքները։

Երկրորդ օրը անցաւ , և երրորդն ալ լուսացաւ , իսկ Պիւթիաս չերեւեցաւ։ Տամոնը յատուկ միտքը դրած էր, որ նա իւր ամենաթշուառ ընտանեաց արցունքներէ և կականալէր ողբերէն արգիլուելով իրեն համար փըրկութեան ճանապարհ գտած էր , և այս բանիս վրայ խիստ կ՚ուրախանար։ Դիոնէսիոս

բռնաւորն ալ ընդ հակառակը ինքզինք խաբուած կարծելով խիստ բարկացած էր, այս միջոցին հրամայեց որ Պիւթիասի համար որոշուած տանջանքներով Տամոնը անմիջապէս տանջեն։

Այս սոսկալի աղէտին գոյժը բոլոր քաղաքին մէջ կը տարածի . և այս սարսափելի տեսարանն ներկայանալու և տեսնելու համար քաղաքին բազմութիւնը այն հրապարակին մէջ կը ժողովուէին։ Ոմանք կ՚ողբային այն խեղճ նենգեալ բարեկամը՝ որ զուր տեղը պիտի մեռնէր . ոմանք կ՚անիծանէին դաւաճանին անօրէն խարդախութիւնը, կարծելով թէ փախած է . և բոլոր մարդիկ ալ իրենց սրտերուն մէջ բռնաւոր Դիոնէսիոսին անգթութիւնը կը դատապարտէին , որ բիւրաւոր զօրքերով շրջապատուած և բարձրակառոյց գահաւորակի վրայ բազմած , երբեմն իւր զարհուրելի և բարկութեամբ կրակ կտրած աչքերը ասդին անդին կը պտտցնէր, և միշտ անհանգիստ էր իւր վրէժխնդրութեան համար։ Յետոյ Տամոն շղթայներով բեռնաւորեալ իւր դահճին հետ հրապարակ կը մտնայ . իւրաքանչիւր ոք այս ցաւագին տեսիլը տեսնելով կը կծկտի . ամէն մարդու գութը կը շարժի . կսկծալի կարեկցութիւն մը , և միանգամայն սարսափն ու սոսկումը կը յուզէ ամենուն սիրտը . առ հասարակ ամենուն աչ֊

քէն 'ի վար արտասուաց կայլակներու թափուիլը կը տեսնուէր, որ սրտի անզուսպ յուզմունքէն այլ եւս չէին կրնար ծածկուիլ: Այս ընդհանուր եւ աղէտալի ցաւերուն մէջ Տամոնը միայն զուարթ եւ ուրախադէմ կը ներկայանայ. Նա իւր սրտին մէջէն կ'օրհնէ զԱստուած՝ որ 'ի բարին կատարեց իւր փափաքը, վասնզի իւր տենչալի բարեկամը փրկուած էր:

Անդորր եւ խաղաղ մտքով հրապարակը հասնելով, գլխատման տեղին կեցած սոսկալի հարուածին կը սպասէր, եւ դահիճը նորա աչքերը կապելով եւ նորա պարանոցը մերկացընելով, իւր դաշոյնը նորա վերայ շողացուցած ատենը՝ յանկարծակի հեռուէն պոռալու ձայն մը կը լսուի. «Կեցիր, կեցիր անողորմ». եւ շուտ մը երիտասարդ մը կը տեսնուի, որ մեծ տագնապով մը կաճապարէր, շունչը կտրած հեւալով քրտնահոծ եւ փոշոտեալ կը վազէր: Այս աղաղակի վրայ իւրաքանչիւր ալ շուարելով յետ կը դառնան եւ ճանապարհ կը բանան: Յետոյ այն տեղ հասնելով՝ շնչասպառ «Գոհութիւն գոհութիւն Աստուծոյ» կըկանչէր. եւ միանգամայն ուժ կառնէր ինքզինքը ընկերին տեղ մահուան պատրաստելու համար, վասն զի որդիական պարտաւորութիւնը չի կրցաւ արգիլել զինքը բարեկամական պարտքն ու խոստումը կատարելէ. յետոյ վազելով կը փութայ Տամոնին քով, եւ նորա պարանոցը

կ'իյնայ: Հիմա ժողովրդոց մէջ կը ծագի քըրթմնջիւն մը, հանդերձ կարեկցութեամբ, զարմացմամբ եւ ուրախութեամբ. եւ այն աստիճան զարմանքը կը շատնայ, որ մինչեւանգամ չէին հաւատար թէ անիկա Պիւթիասն է, ուստի եւ կ'ըսէին. «Ապաքէն ով կը յուսար՝ որ Պիւթիասը պիտի վերադառնայ, եւ կամ ով կը հաւատար նորա գալստեանը»:

Իսկ Պիւթիաս իւր բարեկամէն զատուելով, համարձակ Դիոնէսիոսի առջեւը կ'ելլայ. բռնաւորը զարմանալով՝ ապշած նորա երեսը կը նայէր, եւ հազիւ թէ կը հաւատար՝ որ նա իսկ Պիւթիասն է: Յետոյ Պիւթիաս կըսէ Դիոնէսիոսին. «Կը տեսնե՞ս քու զոհդ, հիմա կատարեցէք Ձեր իմ վրայ վճիռը, եւ թողէք որ անմեղը ազատի: Մեծ եւ ծանր դէպք մը ստիպեց զիս որ ես այսքան ուշանամ: Իմ հայրս՝ ո՜հ, իմ խեղճ ամենաթշուառ եւ ողորմելի հայրս՝ երբ իմ մահուանս անակնկալ գոյժը լսեց, յանկարծ կայծակէ զարնուածի մը պէս գետինը ինկաւ. եւ զայն սթափեցնելու համար ամէն հնարք 'ի գործ դրի, բայց 'ի զուր, վասն զի իմ այսչափ հնարքներուս՝ ջանիցս եւ աշխատանացս հակառակ՝ այն գիշերը իմ աչքերուս առջեւը սաստիկ խղճութեամբ նորա մեռնիլը տեսայ»: Այս ըսած ատեն՝ խեղճ Պիւթիասի արցունքները փոքր ինչ իւր խօսքերը ընդ միջեցին. յետոյ նորէն խօսքը շարու-

նակեց ըսելով. «Մասամբ դժուարութեամբ և բռնութեամբ զիս իմ ապերջանիկ ամուսնոյս գրկէն և իմ զաւակներէս զատեցի, և աճապարեցի դառնալ և այստեղ հասնիլ։ Սակայն կարճ ճանապարհէ մը գալ ուզելով, գիշերուան այն մութին մէջ ճանապարհս կորուսի, և մոլորելով անտառի մը մէջ ինկայ, ուր մինչեւ առաւօտ մացառախիտ փշոտ ու խորտուբորդ տեղերն պտտելով խիստ հեռացայ ճանապարհէն։ Վերջապէս շիտակ ճանապարհը գտնելով՝ աճապարանօք վազեցի, և ուրախ եմ հիմա, յարմար միջոցին հոս գտնուելուս համար։ Դարձուր ուրեմն, ինձ դարձուր իմ շղթայներս, որպէս զի ազատուի իմ բարեկամս. ասկէց զատ ուրիշ բանի մը չեմ ցանկար»։ Գիւթիաս այս բաները պատմելու ատեն՝ ամէնքն ալ չը կարողացան զսպել իրենց արցունքները. Նոյն իսկ բռնաւորը իւր սրտին մէջ կսկիծ մը զգաց՝ զոր պարապ տեղը պահել կ'աշխատէր, բայց այնու ամենայնիւ իսկոյն հրամայեց որ Տամոնը արձակեն։ Այս միջոցին ահա ուրիշ նոր և սքանչելի բան մը եւս տեսնուեցաւ, որն որ աւելի կրկնապատկեց ներկայ գտնուողներուն լացն ու զարմացումը, վասն զի Տամոնը իւր կապերը Գիւթիասին դարձնել չէր ուզեր. «Արդէն որոշեալ ժամը անցած է, կըսէր, և հիմայ ինձ կ'իյնայ որ ես մեռնիմ, դու քու խեղճ և թշուառ որդւոցդ քովը

գնա»։ Արտասուելով կը պատասխանէ Գիւթիաս. «Քանի՞ որ կենդանի ես, քու անձդ ապրեցնելու ժամանակդ երբէք չը կրնար անցեալ լինել, և ամեն օրէնք և ամեն իրաւունք այս ազատութիւնը կը շնորհեն քեզի»։ Տամոն կ'առարկէր զԳիւթիաս, որպէս զի ուրանայ իւր յանցանքը։ Այս ազնիւ կռիւը երթալով աւելի կը բորբոքէր, երկուքն ալ Դիոնէսիոսէն կը խնդրէին իրարու ազատութիւնը. մէկը իւր մահը և բարեկամին ազատութիւնը կը խնդրէր, իսկ միւսը բարեկամին ազատութիւնը և իւր մահը։ Բռնաւորը թէպէտ երկաթէ սիրտ մ'ունէր, այնու ամենայնիւ այսպիսի քաջասիրտ մաքառման մը դէմ երկար ժամանակ չի կրցաւ դիմանալ, այլ յաղթելով իւր վայրենի կրից, և իւր սիրտը ճըմլած գոչեց. «Երկուքին ալ ազատութիւն և կեանք արժանի է, և ես երկուքին ալ զայն կը շնորհեմ։ Բայց որովհետեւ այսպիսի անհամեմատ բարեկամութիւն մը աւելի մեծամեծ պարգեւներու արժանի է, թագաւորութք միայն կարող եմ վարձատրել զձեզ, և ես ձեր երրորդը պէտք է ըլլամ»։ Այս ըսելով գահէն իջաւ, և աճապարեց զանոնք կաթոգին սիրով գրկելու։

Ինչպէս որ երբեմն Թասրոնական խաղերու մէջ երեւցած անընական սեպացեալ քարաժայրը՝ մէկ ակնթարթի մէջ փայլեցագեղ

պարտիզի մը կը փոխուի, այսպէս ալ մէկ վայրկենի մէջ բոլոր ժողովրդոց դէմքերը փոխուեցան։ Թախծութեան և ողբոց տեղ՝ ցնծութեան և ուրախութեան հանդէսներն յաջորդեցին։ Ամէն մարդ կը փափաքէր այն չնաշխարհիկ բարեկամները մօտէն տեսնել. ամէն կողմէն բերկրալից փառաւորութեան արձագանգներ կը լսուէին՝ որ օդը կը հնչեցնէին. բոլոր ժողովուրդը այն երկու բարեկամները Թագաւորին հետ շրջապատելով, հրճուելով և ցնծալով մեծ յաղթութիւն մը ըրածի պէս՝ անոնց ետեւէն գնացին մինչեւ Թագաւորական պալատը։

Այս դէպքը ինքնին այնքան սրտաշարժ է, որ բառ մի անգամ աւելցնելը աւելորդ կը համարիմք. միայն կը փափաքէինք 'ի բոլոր սրտէ՝ որ ամէն մարդ իրարու հետ Դամոնի և Պիւթիասայ անախտ՝ ճշմարիտ ու անկեղծ սիրովը կապուած ըլլային, այն ատեն միայն կարող էր ամէն մարդ երջանիկ ըլլալ։

Ե.

Ետեշրեդոս

Այս անձը երիտասարդական հասակին մէջ Բրիտանիոյ տէրութեան ինքնակալ Թագաւոր ըլլալով, իւր անձը զեխութեանց և մոլութեանց տուաւ, ուր փութով կը գլո-

րի երիտասարդ անձ մը, որ այն առաջին բորբոքման մէջ ուրիշ բանի մտիկ չըներ, բայց միայն իւր կրից բռնութեանը։

Այս երիտասարդ Թագաւորը օր մը որսի երթալով, հոն գիւղացի Ատելվիգեա անուն օրիորդ մը տեսաւ, որ զուարթ դիմօք երգելով իւր փոքրիկ հօտը կը պահպանէր. և որովհետեւ այն գիւղական աղջիկը իրեն աչաց գեղեցիկ և համեստ երեւեցաւ, նոյն ժամայն զայն սիրեց։ Եւ իւր մտաց մէջ գիտնալով՝ որ մէկը չէ կարող Թագաւորին ընդդիմանալ, այնպէս կարծեց՝ որ մէկ անգամ միայն հրապուրելով պիտի կրնայ յաղթել այն աղջկան։ Բայց Ատելվիգեայ օրիորդին վրայ այնպիսի կորձութիւն մը և հաստատուն արիութիւն մը գըտաւ, որ բնաւ մտքէն անգամ չէր անցներ. վասն զի տեսաւ՝ որ աղջիկը ամէն կերպով ընդդիմացաւ իւր մտաց խորհրդեան, օրիորդին հաստատամտութիւնը խախտելու և խաբելու համար ամէն գործածելի հնարքներ, ամէն տեսակ յոյսեր, մեծամեծ պարգեւներ և առատ խոստմունքներ 'ի գործ դրաւ, բայց բնաւ մէկ հնարքով ու խոստմունքով չը կարողացաւ նորա սիրտը գրաւել. և համեստ ու առաքինի աղջկան ընդդիմութեան համար փոխանակ ամաչելու՝ և իւր լրբութիւնը ճանչնալով ետ կենալու, և փոխանակ իւր սրտին մէջ բորբոքած չար ցանկութեան հուրը մարելու՝ ալ

աւելի բորբոքեցաւ։ Էտելվիգեայի պատկերակերպութիւնը միշտ իւր մտաց մէջ ըլլալով, կարծես շարունակ իւր աչաց առջեւ կը տեսնէր զայն, թէ ցորեկուան և թէ գիշերուան ժամանակ ուրիշ բան չէր տեսնար՝ բայց միայն իւր սիրելին. և ցանկութեան փափաքը այն աստիճան զօրացաւ իւր սրտին մէջ, որ այնպէս կը կարծէր՝ թէ ալ չէ կարող առանց անոր ըլլալ. և իւր սրտին այս բաղձանքը ուրիշ կերպով կարելի չէր 'ի գլուխ հանել, վասն զի չէր կարող այն ազնուամիտ օրիորդին անյաղթելի մտքին հաստատութիւնը ուրիշ բանով յաղթել, բայց եթէ զայն իրեն կին առնելով։ Սակայն ինքն այնպիսի վիճակի մը մէջ կը գտնուէր, որ այդ օրինաւոր ամուսնութեան յոյսն ալ չէր կրնար ունենալ. քանզի ի՞նչպէս կարելի է այն աստիճան ցածանալ, և ի՞նչպէս կարելի է գիւղական աղջիկ մը թագաւորական թագով պսակել։ Այս պատճառաւ նա մեծ մտածութեանց մէջ ընկղմեցաւ։ Վերջ ամենայնի իւր ցնորական կիրքէն յաղթուած՝ առաջարկեց Էտելվիգեային որ իրեն հետ ամուսնանայ. և նա՝ որ ուրիշ ամեն քաջալերութիւնները և խոստմունքները առ ոչինչ համարած էր, այժմեան իրեն մատուցուած յանկարծական մեծութեանց փայլէն շլանալով, այն սնոտի փառքին դէմ չը կրցաւ դնել։

Բայց շատ դժուար է, որ առանց արտաքոյ

կարգի և յանկարծական բարձրանալը իւր մէջ ճշմարիտ երջանկութիւն ունենայ։ Էտելվիգէ սկսաւ զղջալ իւր վիճակէն ուրիշ վիճակի փոխուելուն համար, և վերստին սկսաւ փնտռել զուարճալի դաշտերը, և գեղջկական զուարճութիւնը՝ որուն մէջ ինքը ծնած էր։ Էտելրէդոսի հարսանիքը շատ անհաճոյ եղաւ իւր ամբողջ ազգութեան, վասն որոյ իսկոյն ամեն կողմէն շշուկներ՝ տրտունջներ և անարգութիւններ երեւցան. խեղճ թագուհին ամեն մարդիկներէն անարգուելով և արհամարհուելով՝ տխրուեցաւ արքունեաց մէջ աւելի անարգ ու անպատիւ օրեր անցնել։ Բայց սակայն սակաւ ժամանակէն զկնի՝ իւր խելքովը և քաղցրութեամբը նախարարներուն հըպարտացեալ և դառնացեալ սրտերը քաղցրացուց, և նոցա սիրելի ըլլալով թագուհի հռչակեցաւ, և իբրեւ թագուհի պատուեցաւ։ Բայց այս յաջողութիւնը նորոգեց այն չարիքները՝ որոնք պատրաստուած էին առաջուանէ։ Էտելրէդոս իւր չար կամաց և սրտի անպիտանութեան հետեւելով, սակաւ ժամանակի մէջ մոռցաւ իւր կնոջ վրայ ունեցած սէրը՝ որով նորա հետ կապուած էր, և զայն արհամարհելով ուրիշներուն հետ սկսաւ սիրահարիլ։ Էտելվիգէ իւր նախատանաց ցաւը բաւական ժամանակ լռութեամբ անցուց. բայց երբ տեսաւ՝ որ թագաւորին

սրտին գազանութիւնը որ ըստ օրէ կ՚առա-
ւելու, զանազան մարդկանց միջնորդութեամբ
զայն քաղցրացնելու աշխատեցաւ. և երբ չը
յաջողեցաւ՝ ուզեց անձամբ ևս փորձել, յու-
սալով՝ որ գուցէ իւր աղաչանքները և արտա-
սուքները կարող են նորա սիրտը քաղցրացը-
նել: Թշուառ Թագուհի, երանի՜ թէ այդ-
պէս չընէիր: Խեղճ Թագուհւոյն արտասուք-
ները և թախանձանքները Ետելրէդոսին սըր-
տըն 'ի գութ շարժելու տեղ՝ աւելի խստա-
ցուցին և չարացուցին: Անողորմ Թագաւորը
իւր գազանային կրից սաստկութեան առեն՝
հրամայեց զայն տունէն հանել, և բերդի մը
մէջ մինչեւ 'ի մահ բանտարկել: Այն տեղ,
այն ամայի բերդին մէջ խեղճ Թագուհւոյն
հառաչանքները և արտասուքները միայն իրեն
ընկերակից և մխիթարիչ եղան, մինչեւ այն ա-
տիճան եղաւ՝ որ օրէ օր հալումաշ ըլլալով՝ ալ
չը կարողացաւ իւր սրտի ցաւերուն այս անտա-
նելի աղետից դիմանալ, այսու ամենայնիւ ըզ-
գուշացաւ, և չի համարձակեցաւ Թագաւորը
յանդիմանելու՝ կամ անոր վրայօք տրտնջալու.
և երբ հասկցաւ, որ իւր ցաւով լեցուած կե-
նաց վերջին ժամը հասած է, անուշ և սիրա-
լիր խօսքերով թուղթ մը գրեց, և որով յայտ-
նելով իւր հրաժարման վերջին ողջոյնը՝ քա-
ռասուն տարեկան հասակին մէջ կնքեց իւր
կենաց օրերը:

Թագաւորը խեղճ Թագուհւոյն մահը ա-
ւելի տրտմութեամբ և ցաւօք լսելու տեղ՝
գազանային հաճութեամբ և անգութ ուրա-
խութեամբ մը լսեց, և նորա նամակը առանց
բանալու մէկ կողմ նետեց. յետոյ Նորման-
տիոյ Ռիգարդոս Դքսին Եմմա քրոջ հետ ա-
մուսնանալու հոգ տարաւ, որոյ մէկ պատկե-
րը տեսնալով սիրահարած էր, բայց իւր ա-
ռաջուան բարբարոսութեան և ուխտադրու-
ժութեան պատիժը՝ սակաւ ժամանակէն յետոյ
իւր նորոգ ամուսնին ձեռօք ստացաւ: Եմ-
մայ Թագուհւոյն վայրենի և անսանձ բնու-
թենէն չը կարողացաւ նոյն քաղցրութիւնը
վայելել, ինչ որ կարող էր վայելել Ետելլիգէ-
ին միջոցաւ՝ զոր ինքը յառաջագոյն անա-
նական կիրքէն ստիպեալ կորնչուցած էր:
Ետելրէդոսի անհաստատ փոփոխական սիրտը
զզուեցաւ անոր վարմունքէն, և այս բանը Թա-
գուհւոյն ծանր եկաւ, և երկուքին մէջ խռո-
վութիւն ծագեցաւ, և այս խռովութիւնը
ամեն կողմ տարածուելով՝ ազգը երկու կու-
սակցութիւն եղաւ. ամեն գործ շփոթուե-
ցաւ, և ամեն տեղ խռովութիւն ծագեցաւ:
Ո՛հ, Ետելրէդոս քանի՜ անգամ յիշեց այն թը-
շուառ Ետելլիգէ Թագուհին, արդեօք քանի՜
անգամ արտասուեց այն անողորմութեան վը-
րայ՝ որով անոր հետ վարուած էր: Այո՛ յիշեց,
և սաստիկ զղջաց, բայց շատ ուշ: Օր մը՝ երբ

իւր սենեակին մէջ առանձին պտտելով թուղթ մը կը փնտրէր, յանկարծ Էդելվիգեայի այն վերջին թուղթը ձեռքն անցաւ, զորոնք ինքը առանց բանալու մէկ կողմ նետած էր։ Երբ անոր գիրը և ձեւը տեսաւ՝ իսկոյն ճանչցաւ զայն, և իւր խղճի խայթերէն պաշարուելով իւր դողդոջուն ձեռքը երկնցուց, առաւ և բանալով յետագայ խօսքերը կարդաց. «Ով տէր արքայ, ընդունէ Էդելվիգեայի հրաժարման վերջին ողջոյնը. գոնէ նորա յիշատակը մի՛ արհամարհեր՝ երբ նա աշխարհէն բաժնուի։ Ահ, ո՛վ պիտի կրնայ զքեզ այնպէս սիրել՝ ինչպէս նա սիրեց։ Ով ապերջանկութեանս, նա ուրիշի համար չէր ապրեր, բայց եթէ միայն քեզ համար. նա ուրիշի համար աշխարհ չեկաւ, բայց միայն քեզ համար. նորա ամեն զգացմունքները և գործքերը քեզ համար էին։ Դու զայն կ՚անարգես . . . դու զայն անողորմաբար կը նեղես և կ՚արհամարհես, ո՛վ անգութ . . . ահա կը մեռնի նա»։ Էտելրէդոս երբ այս թուղթը կարդաց, կայծակէ զարնուածի պէս խելքը գլխէն գնաց, և այնպէս կարծեց՝ որ թշուառ թագուհւոյն հոգեւարքի վերջին շընչառութիւնը կը լսէ. կարծեց թէ նորա վերջին աղեկտուր հառաչանաց ողորմուկ հեծեծանքը իւր ականջին կը հասնի. և յետոյ բարձրաձայն ինքզինք նախատելով աղաղակեց. «Ով բարբարոս, դո՛ւն սպանեցիր զայն,

դո՛ւն»։ Եւ այս ըսելով՝ սկսաւ լալ։

Անկէ ետքը հանգստութիւնը կորսնցնելով ալ չի կրցաւ իւր սրտին մխիթարութիւնն ու անդորրութիւնը գտնել։ Իւր մտածմունքներէն ալեկոծուելով՝ սիրտը կտրած վշտահար ասդին անդին կը շրջէր առանց ուր ըլլալը գիտնալու. և ամեն ժամանակ այնպէս կը կարծէր որ Էտելվիգեային ուրուականը կամ անոր ոգին իւր ետեւէն ինկած զինքը կը հալածէր։ Սոսկալի տխուր խորհրդածութեանց խոր անդունդին մէջ ընկղմած ըլլալով՝ իւր առաջուան մոլորութիւններէն հեռացած էր, մինչեւ անգամ թագաւորութեան հոգերը իւր վրայէն ձգելու կ՚աշխատէր, և կ՚արհամարհէր իւր կենաց օրերը։ Օր ըստ օրէ իւր տէրութեան մէջ ամեն խռովութիւն և կըռիւ կը շատնար, ամեն բան տակն ու վրայ և շփոթութեան մէջ էր. արտաքին թշնամիները եւս նորա թագաւորութիւնը կործանելու համար իրենց զօրութիւնը միացուցին ներքին թշնամեաց հետ։ Դանիայի թագաւորը շատ զօրքով նորա դէմ պատերազմի ելաւ. և թէպէտ ինքը դէմ դրաւ՝ բայց և հոն իրեն մեծամեծ վնասներ հանդիպեցաւ, և շատ արիւն թափուելէն վերջը՝ ալ չի կրցաւ դիմանալ և ազատելու համար փախաւ. սակայն իւր խղճի տառապանքներէն նեղուելով՝ և նոյն արժանահաս ծանր վնասներէն ալ տանջուե-

լով և տագնապելով չարաչար մեռաւ, և ուխտադրուժներուն ու անողորմ մարդկանց զարհուրելի օրինակ թողուց։

Ուրեմն թող գիտնան իշխանք, նաև բոլոր մարդիկ, որ խաղաղութիւնը և երջանկութիւնը ուրիշներն երջանկացնելուն մէջ միայն կը գտնուի. սրտի անդորրութիւնը գթութեամբ, հաւատարմութեամբ, մարդասիրութեամբ և անմեղութեամբ կրնայ ձեռք բերուիլ։ Ո՛հ, ո՞րչափ սոսկալի աղէտք և թշուառութիւնք յառաջ եկած են և կուգան կամապաշտութենէ և խաբեբայութենէ, այլ ափսոս, որ մարդիկ դեռ չեն խրատուիր։

Զ.

Թերեզիա Բալդուկի

ՓԼՈՐԵՆՏԻՈՅ մեծ տիրուհին Թերեզիա Բալդուկի՝ երկու տարի յետոյ այրի մնաց իւր երկու զաւկներովը։ Բայց այս տղայք՝ երիտասարդական հասակնուն մէջ, հայրենական ձօխ և հարուստ ժառանգութեան տէր ըլլալով՝ բոլորովին զեղխ և շռայլ վարուց մէջ ինկան. և իրենց չար ընկերաց թելադրութեամբ, և նոցա ծուռ ու մոլար շաւղացը հետևելով, իրենց անձը բոլորովին երիտա-

սարդական պէսպէս անառակութեանց մատնեցին։ Որդեսէր և բարեսիրտ մայրը շատ աշխատեցաւ, երբեմն յորդորելով, երբեմն պաղատելով, շատ անգամ արտասուելով և երբեմն կշտամբելով կը ջանար իրենց չար վարքը ուղղելու և՚ի լաւ անդր փոխելու, բայց զո՛ւր էին այն ամեն թափած ճիգերը, ըստ որում նոքա՝ այլ ևս բնաւ չէին ախորժեր մայրական քաղցր խրատուց մտիկ ընել։ Մեծ որդին Փլորենտիոյ մէջ էր արդէն, իսկ փոքրը հայրենիքը թողած՝ կը թափառէր Իտալիոյ կողմերը։ Սակայն իրենց բռնած այս մոլի ընթացքը սոսկալի աղէտ մը կը գուշակէր, ինչպէս որ եղաւ ալ։

Քանզի իրիկունը մը՝ երբ Բալդուկին տան մէջ միայնակ և անմխիթար նստած՝ իւր որդւոց այս մոլար ընթացքը մտաբերելով՝ անդադար կուլար կը հեծէր, յանկարծ սաստիկ զօրութեամբ դռներուն բացուելը կը տեսնէ, և օտարական մը գոյնը նետած, շունչը հատած, աչքերը կրակ կտրած և դէմքը այլայլած ներս կը մտնէ, և արիւնաշաղախ սուր մ'ալ ձեռքը դէպ իրեն կը վազէ։ Տիկինը այս յանկարծական սոսկալի տեսիլէն խիստ զարհուրած և սարսափած վեր ցատկեց. բայց օտարականը անոր ոտքերը ընկած անդադար գթութիւն կը հայցէր ըսելով. « Տիկի՛ն, ողորմէ՛ ինձ պէս յետին թշուառականի մը. ես

Հռովմայեցի եմ, և գրեթէ մի քանի օր է՝ որ քաղաքս կը գտնուիմ։ Կարեւոր գործերու համար հոս եկած էի, և զանոնք կատարելով պանդուխտ մը գնացի ճանապարհորդութեանս պատրաստութիւնը տեսնելու։ Այլ այս տեղէն քիչ հեռու՝ դժբաղդաբար ինձ անծանօթ մէկու մը հանդիպեցայ, քովէն անցած ատենս անմարդօրէն զիս մէկդի հրեց. և ես՝ իր այս անշնորհ վարմունքին վրայ մէկ քիչ տրտունջ յայտնեցի, որով ինքը զղջալու և ներողութիւն խնդրելու տեղ՝ սկսաւ լրբութեամբ նախատել ու հայհոյել. այսպիսի անպատուութեան վրայ իմ զայրոյթս շարժեցաւ, իսկ նա ալ աւելի դառն և կծու արհամարհանօք սկսաւ զիս անարգել, և մինչեւ անգամ մահ սպառնալ։ Արդ՝ ես ալ չկարենալով այլ եւս համբերել ըրած անտանելի նախատանացն ու լրբութեանը՝ իսկոյն սուրս քաշեցի, ինքն ալ իր սուրը հանեց. և մէկ հարուածով՝ զինքը վիրաւորած կռնակի վրայ գետին փռեցի։ Երկինք և երկիր վկայ են, որ անբիծ ձեռքս ակամայ արեամբ շաղախեցի. այսու ամենայնիւ անհնարին ցաւ կզգամ։ Բայց դու, Տիկին՝ խղճա՛ ինձ նման թշուառականի մը վրայ՝ որուն մահն ու փրկութիւնը այժմ քու ձեռքդ է։ Ըստ որում ես խենթի պէս շփոթած՝ այն ինձ վտանգ սպառնացող երկիւղալի տեղէն հազիւ կրցայ փախչիլ, և ուր երթալս

կամ որու ապաւինելս չը գիտնալով՝ այս տան դռները բարեբաղդաբար բաց գտայ, և վստահութեամբ այս տեղ մտայ։ Արդ կը պաղատիմ, ո՛վ բարեսիրտ Տիկին, օ՛ն բարեհաճէ՛ քանի մը ժամ զիս այս տեղ պահել. մինչեւ որ ազատիմ զիս փնտռողներուն ձեռքէն, և կարողանամ գիշեր ժամանակ հոգիս փրկել»։ Այս ամենը լսելով տիրուհին՝ սարսափած թմրեցաւ, և ձախորդ սոսկալի նախագուշակութիւններով միտքը տակն ու վրայ եղաւ։ Այս տագնապալից վայրկենին մէջ մարդասիրութեան և կարեկցութեան զգացմունքէն շարժեալ՝ ամեն խորհուրդ մէկդի թողուց, և իսկոյն սենեակը մտցուց ողորմելին՝ և դուռը վրան փակեց։ Բայց այս ողորմելի մօր նախատեսութիւնքը սուտ չելան, ըստ որում ինչպէս որ գուշակած էր՝ շատ չանցած նոր դղրդիւն մի լսելով՝ դուռը նետած դէպ՚ ի գաւիթը աճապարեց, և տեսաւ ահա՛ իր որդին՝ որ կուրծքէն կարեվէր խոցուած՝ արիւնը աղբիւրի պէս կը հոսէր։ Թշուառ մայրը՝ իր որդին այս խեղճութեան մէջ տեսնելով՝ բովանդակ մարմինը սարսռաց, մայրական փափուկ սիրտը ճմլեցաւ, և աղեկտուր ճիչ մը արձակեց։ Իսկ որդին՝ արիւնը գրեթէ հատած, մահուան վերջին սոսկալի վայրկենին մօտեցած, վերջին ճիգ մը ընելով բոլոր ոյժը ամփոփեց, և մարմրած աչքերը դէպ՚ ի իւր ողորմելի

մայրը դարձուց և կիսահագագ ձայնիւ՝ «Ո՛հ, մայր իմ, աղաղակեց, գիտցիր, որ ես արդարեւ արժանի էի՛ այսպիսի չարաչար պատժոյ, ահա իմ վրայ կը տեսնես Աստուծոյ արդար դատաստանին մէկ նշանը, ես իմ գործովըս պատժուեցայ: Այլ եղբայրս գոնէ թող խրատուի իմ աղէտալի մահուամբս, իւր ընթացքը թող շտկէ. և եթէ զիս սպանողը բռնուի, դու, մայր իմ, կ'աղաչեմ, զինքը պաշտպանէ ամէն կերպով. նա բնաւ երբէք յանցանք չունի, ես էի յանցաւորը, ես գրգռեցի»: Այս ըսաւ ու փչեց հոգին. ու մայրն ալ խելքը գլխէն գացած կիսամեռ ինկաւ փռուեցաւ իւր որդւոյն արիւնլուայ դիակին վրայ: Այս սրտառուչ տեսարանին հանդիսատես եղողները՝ նախ մէկ կողմ առին թշուառ մայրը՝ որ մեռած կը կարծուէր. երկար ատեն անոր կենդանութեան վրայ տարակուսելէն վերջը՝ շատ դժուարութեամբ հազիւ սթափեցուցին: Թշուառ Բալդուկին իւր մահահանգոյն ուշաթափութենէն արթնալով սկըսաւ դառն արցունք թափել երեսն 'ի վայր: Ամէն վայրկեան իւր որդին կը կանչէր, մայրական գորովանօք լցուած՝ կուզէր որ զայն միշտ իւր աչացը առջեւ ունենայ. ուստի և բռուն զօրութեամբ հազիւ կրցան այն խեղճ մայրը հեռացնել այս սոսկալի տեղէն, ուր իւր որդին արեան մէջ թաթխուած կը կենար:

Այլ արդ՝ կարելի չէ նկարագրել այն անծանօթ երիտասարդին կրած ցաւը, ահը և երկիւղը, որ զինքը գլխովին պաշարած էր. ուստի ընթերցողին կը թողում մակաբերել, թէ ինչպիսի սոսկալի և խռովալի գուշակութիւններով կը զարհուրէր, քանի որ իւր փակուած սենեկէն կը լսէր ամէն դղրդիւն, և կ'զգար բոլոր այն սգաւոր տեսարանին ողորմուկ աղէտն ու սարսափը, որուն պատճառը դժբաղդաբար նոյն ինքն եղած էր: Մէկ կողմէն՝ այնպիսի յարգելի մօր մը ապերջանկութեան առիթ ըլլալուն կսկիծով՝ աւելի լաւ կը համարէր և կը ցանկար, որ ինքը իւր թշնամւոյն տեղ մեռած ըլլար, և միւս կողմէն ալ յայտնուելէ եւ կառավարութեան ձեռքն իյնալէ վախնալով՝ ամէն նոր ձայներէ և շարժմունքներէ կը սարսափէր, և մարմինը ահ ու դողով փուշ փուշ կ'ըլլար:

Ահա այսպիսի տառապանօք անցուց նա գրեթէ գիշերուան մեծ մասը, ուր արդէն լռութիւնը բոլորովին տիրած էր. բայց կէս գիշերը բաւական անցած էր, երբ թշուառ Բալդուկին իւր ցաւերուն կսկիծը քիչ մը մոռանալով՝ խելքը վրան եկաւ, և յիշելով այն օտարականը՝ գնաց անոր փակուած սենեկին դուռը բացաւ՝ ուր տրտում տխուր նստած էր. երբ ներս մտաւ նա՝ խկոյն երիտասարդը ընկաւ նորա ոտքերը, և սկսաւ

դառն արտասուք թափել։ «Տիրուհի, ըսաւ նա, վկայ է երկինք, որ ամենեւին ակամայ . . . ։ Խօսքը կտրեց առաջինի տիկինը՝ և «Ո՛չ, յոտն կաց,» ըսաւ, «դու յետին աստիճան թշուառ մայր մը ըրիր զիս . այլ սակայն քաջ գիտեմ քու անմեղութիւնդ, նոյն ինքն որդիս իւր վերջին ատենի վայրկեանին պատուիրեց յատուկ՝ որ ամենայնիւ քեզ պաշտպան կենամ, և ես պարտաւոր եմ նոյնը կատարելու։ Աւասիկ ահա շատ չ'անցած՝ կառք մը պիտի գայ զքեզ հայրենիքդ վերադարձնելու, ծառայներէս մին ալ ուղեկից պիտի լինի քեզ մինչեւ սահմանագլուխը. իսկ այս դրամները կը շնորհեմ քեզ ճամբու պիտոյից համար։ Հուսկ յետոյ վերին Նախախնամութենէն ամենայն յաջողութիւն կը մաղթեմ քեզ համար, նաեւ խնդրելով՝ որ իմ նախկին անդորրութիւնս և հանգիստս քեզ պարգեւէ՝ ուրկէ որ դու զիս զըրկեցիր»։ Հռոմայեցի երիտասարդին սիրտը՝ գործակիր ցաւով մը ճմլեցաւ տիկնոջ այս աստիճան բարերարութեան ու վեհանձնութեան վրայ, և սրտին կսկծանաց դառնութենէն «Ո՜հ, երբէք, ըսաւ, երբէ՛ք չը պիտի կրնամ ներել ինձ, այսքան բարեսիրտ տիրուհւոյ մը յետին աստիճան թշուառութեան առիթ ըլլալուս համար»։ Ի վերջոյ իւր այնչափ շնորհակալութիւնները նուիրելով՝ և ՚ի նշան խորին երախտագիտութեան բիւր ան-

գամ ակնածանօք նորա բարերար ձեռքերը համբուրելով՝ սկսաւ մեկնիլ դէպի իւր հայրենիքը, բայց միտքը հաստատապէս դրաւ՝ որ պատշաճ ժամանակի մը մէջ՝ իւր ճշմարիտ ցաւոց կսկծանաց և երախտագիտութեան նշանը գործով ցոյց տայ։

Եւ յիրաւի իւր ցանկացած այս առիթը շատ չ'ուշացաւ, դիպուածը շուտով ներկայացուց իրեն այն պատեհութիւնը՝ որով կուզէր բարերար տիկինը դոյզն ինչ ծառայութեամբ սփոփել։ Վխտերփա բռնած տեղը դեռ նոր անցած էր, և ահա պատահեցաւ երիտասարդի մը՝ որ արիւնռուշտ աւազակներէ պաշարուած՝ հազիւ հազ իւր անձը կարող էր պաշտպանել։ Աւասիկ աճապարանօք իջաւ իւր կառքէն՝ և փութաց անոր օգնութեան հասնիլ։ Այս տեսնելով անգութ ճիւաղները՝ փախան մէկէն, բայց արդէն երիտասարդը վիրաւորուած էր։ Աւասիկ անյապաղ իւր կառքին մէջ առնելով՝ ետ դարձաւ և Վխտերփա տարաւ ամենայն խնամօք. և որովհետեւ վէրքը բարեբաղդաբար մահացու և վտանգաւոր չէր՝ շուտով առողջացաւ։

Շատ և շատ շնորհակալ եղաւ այս նոր երիտասարդը իւր ազատիչէն . բայց և ո՞վ կարող է պատմել ազատողին սրտի մխիթարութիւնն ու ցնծութիւնը, երբ լսեց որ իւր ազատած այն երիտասարդը՝ Փլորենտից մէջ Թր-

ւառաբար սպանած երիտասարդին եղբայրն էր ։ Գորովանօք գրկեց նա իւր ազատած երիտասարդը՝ ու ըսաւ. «Քանի՜ և որպիսի՜ գոհութիւններ մատուցանելու կը պարտաւորիմ ես բարձրելոյն Աստուծոյ՝ որ ինձ պարգեւեց այնպիսի եղանակ մը, որով կարողացայ գոնէ քիչ մը փոխարինել քու տօնելի մօրդ ինձ ըրած բարերարութեանը ։ Նորա յիշատակը յաւիտեան անջնջելի և անեղծ պիտի պահեմ սրտիս մէջ, և ինչ մեծ բարիք ալ ընեմ երբէք չը պիտի բաւականանամ, հետեւաբար և միշտ երախտապարտ եմ իրեն ։ Բայց դու աճապարէ՛ շուտով վերադառնալու սիրելի մօրդ քով, ըստ որում նա հիմա քու ներկայութեանդ պէտք ունի. ամեն վայրկեան քո յիշատակաւդ անհնարին ցաւոց մէջ կը տագպի, և քո կարօտովդ կը հալի ու կը մաշի ։ Ըսէ՛ դու իրեն՝ թէ ինչպէս ինձ շնորհած կեանքը շուտով յաջողեցայ քու փրկութեանդ համար ՚ի գործ դնելու, բայց նաեւ թէ կը ցանկամ այսուհետեւ իմ կեանքս բոլորովին նուիրել ձեր երկուքին համար»։

Երբ երիտասարդը հասաւ Փլորենտիա, պատահած անակնկալ դէպքը լսելով՝ իւր սաստիկ ցաւէն փայտի նման արձանացաւ մնաց ։ Արդ՝ որովհետեւ ճանչցաւ թէ իւր ազատարարը՝ միանգամայն և իւր եղբօր աղետալի մահուան պատճառն է, ուստի երկու

տեսակ ներհակ կրից անհնարին վէճ մը կը յուզէր զինքը անդադար. սակայն ՚ի վերջոյ անոր անմեղութիւնը հասկնալով՝ մեղմեց իսկոյն իւր զայրոյթը, որով նա առաջին անգամ անխորհուրդ բորբոքած էր նորա դէմ. և երախտագիտական զգացմամբք լեցուեցաւ իւր սիրտը, մտաբերելով որ իրեն ազատարար հանդիսացաւ նա՝ արիւնըռուշտ աւազակաց ձիրաններէն փրկելով իւր հոգին ։ Ուստի դառն արտասուօք լալով իւր եղբօր մահը, միանգամայն ջանք ըրաւ՝ որ զինքը փրկողը դատաստանէ ազատէ ։

Ի վերջոյ այս երկու զարհուրելի դէպքերը մեծ ներգործութիւն ըրին իւր վրայ ։ Նա ակներեւ տեսաւ՝ թէ սանձարձակ երիտասարդութիւնը՝ ի՛նչ սոսկալի վտանգներու կ'ենթարկէ զմարդ. ուստի բոլորովին աղէկի փոխեց իւր բարքը, և խոհեկան վարուք մխիթարեց իւր մայրը՝ որ երեք որդւոյն մահուամբը խոր թախծութիւն մը կը տիրէր իւր սրտին վրայ մինչեւ այն ատեն ։

Երիտասարդաց կեանքը անփորձ ըլլալով՝ այլ և այլ կերպիւ միշտ վտանգի մէջ է, մանաւանդ անկիրթ և չար ընկերներու հետ յարաբերութիւն ընող թեթեւամիտներու վիճակը՝ կարեկցութեան և ողբոց արժանի է ։ Երանի՜ թէ ամենօրեայ փորձերով խրատուէին,

և առանց մեծ վնասներ կրելու՝ իրենց աղէ-տալի վիճակէն ետ դառնալով ուղղութեան գային : Եւ երանի՜ թէ ծնողք իրենց զաւակաց մեծագումար ճոխութիւններ ժառանգու-թիւն ձգելու տեղ, անոնց բարեկիրթ դաս-տիարակութիւն տալու՝ և պատուաւոր վիճա-կի մէջ մեծցնելու հոգ տանէին, որն որ ամե-նաճոխ հարստութենէն աւելի նախապատիւ է, և որ միայն կարող է երջանիկ կենաց առաջ-նորդել զիրենք : Աստի սոյն պատմութեան հետ մենք եւս յորդոր կը կարդանք մեր հա-սակակից սիրելի եղբարց, որ հեռի կենան ա-նառակ ու անխրատ վարմունքներէ . խորշին ու փախչին չար ընկերներու կենակցութենէն, և անոնց հրապուրանաց ականջ չը կախեն : Բարի խրատներն ու յանդիմանութիւններն որչափ ալ սաստիկ ըլլան, միշտ փրկարար են և քաղցր արդիւնքներ ունին, եթէ յօժարու-թեամբ ու սիրով ընդունուին :

Է.

Երջանկութիւն

ՉԿԱՅ մէկը՝ որ երջանիկ լինելու չը ցան-կայ, և չ՚աշխատի ամէնայն ջանիւք և հնարիւք զայն ստանալու . և գրեթէ մէկն ալ չը կայ՝ որ այնքան փութերով և բաղձանքով փնտռած

երջանկութեան հասնել չը կրնալուն համար՝ չը տրտնջայ : Բայց պատճառն ի՞նչ է արդեօք, որ ամէն ատեն ու մեծ ջանքով երջանկութեան ետեւէ եղող այնքան մարդկանց մէջէն՝ գրե-թէ ոչ մէկը երբէք կը պատահի որ զայն գըտ-նայ : Մի՞ գուցէ մարդիկներէն շատերը մոլար և պատիր առաջնորդաց հետեւելով՝ ուղիղ ճանապարհէն խոտորած են, և այն տեղ մա-նաւանդ փնտռած են՝ ուր որ շատ դժուա-րին է զայն գտնալ : Ես շատ կը տարակուսիմ, բայց հետեւեալ պատմութիւնը գուցէ ներ-կայացնէ մեզ ասոր յարմար ուրուական մը, ուսկից կարողանանք գիտնալ ինչպէս ըլլալը : Այս պատմութիւնը թէպէտ քիչ մը առա-պելով խառնուած է, սակայն շատ անգամ՝ առասպելաց դիմակին տակ՝ մեծամեծ ճշմար-տութիւններ ծածկուած կան :

Այժմէք անուն արաբացի հովիւ մը՝ երբ օր մը դաշտէ 'ի դաշտ իւր հօտը կը պտըտ-ցընէր, լեռան մը ստորոտին քով տերեւնե-րով և մացառներով ծածկուած այր (մաղարա) մը տեսաւ, և զայն զննելու համար ուզեց ներս մտնել : Այրին ներս մտնելու ճանբան մութ և երկիւղալի էր, բայց ներսի կողմը վե-րէն ցոլացած լուսոյ մը նշոյլէն՝ լուսաւորուած կ՚երեւնար : Դէպ 'ի լոյսը յառաջ երթալով՝ փոս անկեան մը մէջ քսակ մը, մատանի մը և

հնոտի թուղթ մը տեսաւ ։ Իսկոյն իւր ձեռքը դէպ 'ի քսակը երկնցուց՝ և առաւ զայն ուրախութեամբ . բայց երբ տեսաւ՝ թէ անոր մէջ բան մը չը կար, «Անիծեալ ըլլաս դու, ըսաւ, որ զիս անօգուտ խաբելէ 'ի զատ բան մը չը կրցար ընել. երանի թէ աւելի ոսկւով լեցուն ըլլար . . . այլ վայրապար ցանկանալէն ինչ օգուտ կ'ելլէ, գնա և դարձեալ մինչեւ հիմայ եղած տեղդ կեցիր». և զայս ըսելով՝ բարկութեամբ գետին զարկաւ քսակը ։ Երբ քսակը գետին զարնուեցաւ, Ալիմէք շաչիւն մը լսեց՝ որ ոսկւոյ ձայնին կը նմանէր ։ Զարմանալով այս բանին վրայ՝ կը վերցնէ զայն վերստին, և ոսկւով լեցուն կը գտնէ ։ Իւր ցնծութենէն ապշած՝ «Մի՞ գուցէ, կըսէ, կախարդուած լինի այս, բայց ինչ և իցէ ես ուրախութեամբ վայելեմ այս ոսկիները»։ Զայս ըսելով՝ նաեւ մատանին և թուղթն ալ կ'առնու, և շուտ մը այրէն կ'ելլէ ։ Դուրս ելածին պէս՝ «Մնաք բարեաւ, կըսէ, լերինք և դաշտք, ես կ'երթամ ուրախ լինելու՝ որքան ժամանակ որ այս գանձը իմ քովս է. երանի թէ Մէքքէի մէջ լինէի . . . »։ Տակաւին իւր խօսքը չը լմնցուցած՝ ինքզինքը իւր ցանկացած տեղը գտաւ ։ Զայս տեսնալով ևս քան զևս ապշած և շուարած՝ դողալով թուղթը կը բանայ, և անոր մէջ այս խօսքերը կը կարդայ. «Երբ որ ուզես՝ քսակդ

ոսկւով պիտի լեցուի, և մատանիովդ ակըն-թարթի մը մէջ կամքիդ ուզած տեղը պիտի ըլլաս»։ Այս ազդմանէն՝ առաջին անգամ Ալիմէքին սիրտը ինկաւ աշխարհաշրջութեան գրգիռը, զոր և նոյն վայրկենի մէջ ուզեց ընել։ Տեղէ տեղ փոխադրուելու դիւրութիւնը ունենալով, սակաւ ժամանակի մէջ աշխարհիս մեծ մասը պտըտեց ։ Ի սկզբան շատ ուրախացաւ՝ երբ նշմարեց աշխարհաց զանազանութիւնը, կլիմաներու տարբերութիւնը, բնութեան բազմատեսակ բերքերը, արուեստներու տեսակ տեսակ հնարքները, զանազան ազգաց բարուց և սովորութեանց տարբերութիւնը, բայց ժամանակէ մը ետքը այս ուրախութիւնը սկսաւ նուազիլ ։ Որքան յառաջ կ'երթար՝ այնքան այն զանազանութիւնները՝ որոնցմով ուրախած էր առաջ՝ պակսած կ'երեւէր, որովհետեւ արհեստները և բնութիւնը գրեթէ ամեն տեղ մի և նոյն առարկաները, կամ անոնց նմանութիւնը կը ներկայացնէին. վասն զի մարդկանց սովորութիւնները և բարքը մի և նոյն բնական զգացմունքէ ծնած ըլլալով, և ոչ մի բանով իրարմէ կը զանազանէին, բայց եթէ փոքր տարբերութեամբ մը ։ Նորատեսութեան գրգիռը դադարելով՝ հետաքրքրութիւնն ալ բոլորովին դադարեցաւ, և իւր այնչափ շրջելովը բաւականանալով՝ հանգստանալ խորհեցաւ ։

Իւր այս նպատակին համար Կոստանդնուպօլիս քաղաքը ընտրեց, ուր աղէկ սեպեց այն հեշտութիւնները ուզածին պէս լաւ մը վայելել՝ զորս իւր ճոխութիւնները դիւրաւ կրնային ճարել իրեն, և մանաւանդ այն տեղ զանազան ազգաց և ժողովրդոց յաճախակի երթեւեկութիւնը կարող էին նորոգել իւր մէջ այն ամեն բաներու յիշատակը, զորս իւր աշխարհաշրջութեան ժամանակը զանազան տեղերու մէջ տեսեր էր։ Ուստի այն տեղ ալ՝ իւր անձը ամեն տեսակ զբօսանաց տուաւ, ինչ որ ուզեց՝ ըրաւ, խաղափափկութեանց և գրգանաց մէջ թաղուեցաւ։ Բայց սակաւ ժամանակէն յետոյ՝ ասոնցմէ ալ ձանձրացաւ. յաճախակի սովորութեամբ՝ ամենաախորժելի հեշտութիւններն անգամ զզուելի եղան, որքան կը ջանար հեշտութիւնները փոփոխել՝ այնքան ալ անոնց ամենուն մէջ անախորժութիւն կը գտնար, և պարապորդութեան պատճառաւ՝ անտանելի ձանձրութենէ կը տառապէր։ Իւր զեղխութիւններէն պատճառած ախտը՝ 'ի վերջոյ զինքը սթափեցուց, և հասկցուց՝ թէ երջանկութիւնը փափկակեցութեան և կանացի պարապորդութեան և շուայտութեան մէջ չը կայանար, ուստի միտքը դրաւ՝ որ զայն աշխատութեանց և պաշտօններու մէջ փնտրէ։

Իւր հարստութեանց ճոխութիւնները՝ ի-

րէն համար դիւրութեամբ պաշտպաններ և բարեկամներ շահեցան, և ճանապարհորդութեան մէջ ստացած՝ ծանօթութիւնները զինքը ամեն ծանրակշիռ իրողութեանց խիստ յարմար հանդիսացուցին։ Սակաւ ժամանակի մէջ՝ աստիճանէ յաստիճան բարձր պաշտօններու վերացաւ, մինչև եպարքոսութեան պատուոյն ալ հասաւ։ Այս պաշտօնին մէջ մեծամեծ իրողութիւններ սկսան ամեն կողմէն զինքը նեղել. երբեմն իշխանին հրամանները, և երբեմն ժողովրդեան բողոքները՝ երբեք ժամ մ'ալ անդորրութիւն և հանդիստ չէին տար անոր։ Նաև թող ինքնակալին ցնորքները և անոր հարճերուն նեղութիւնները, նախանձաւորաց և չարակամաց դաւերն ու նենգութիւնները նորա միտքը կ'ալէկոծէին և կը փախցնէին։ Յետոյ փորձով հասկցաւ՝ որ աստիճանները և պատիւները ուրիշ պտուղ մը չեն ընծայեր, բայց եթէ շքեղազարդ գերութիւն մը։ Ասոնցմէ ևս ձանձրանալով՝ այն ինչ կ'ուզէր մեկնի քաշուիլ, Կոստանդնուպօլսոյ մէջ լսուեցաւ՝ որ Պարսից թագաւորը կը պատրաստէր Տաճկաց դէմ պատերազմ տալու։ Երբ անոր յանձնուեցաւ այս մեծ հոգատարութիւնը, որպէս զի անձապարանօք երթայ և նուաճէ խըրոխտ թշնամին, նորա սրտին մէջ փառաց ցանկութիւն մը ծագեցաւ, և իսկոյն ելաւ գնաց։

Առաջին երկու ճակատամարտները մեծ յաջողութեամբ վճարեց, մինչեւ թշնամեաց սաստիկ հարուածներ տալով, պարտաւորեց զանոնք Տաճկաստանը թողուլ՝ զոր արդէն առած էին: Ուստի և շատ գովեստներ և պատիւներ ընդունեց. վասնզի Ալմէքի անունը գովութեան արձագանգներ կը հընչէր բովանդակ տէրութեան մէջ, և ինքնակալը պատրաստուած էր մեծ հանդէսով և պատուով ընդունել զայն 'ի Կոստանդնուպօլիս: Բայց յոյժ տագնապաւ դէպ 'ի թշնամեաց երկիրը յառաջ երթալու ժամանակ՝ անգիտաբար դարանի մը մէջ ինկաւ, և աւանց իւր զօրաց մեծ կոտորածին անկէ չը կրցաւ խալըսիլ: Շուտ մը գործերը ուրիշ կերպարանք առին, և պատրաստուած յաղթանակին տեղ՝ ոսկեթել պարանի մէջ իւր մահը մօտեցած տեսաւ:

Բարեբաղդաբար՝ մատանին զինքը այն որոգայթէն ազատեց, ուստի աներեւութացաւ. և Հնդկաստանի զանազան կողմերը շրջելէն յետոյ՝ միշտ տաղտկութիւնը և մտայուզութիւնը իւր հետ կրելով, 'ի վերջոյ Գոլկոնդա քաղաքին մէջ դադրեցաւ, որուն մէջ Զելմա անուամբ թագուհի մը կ'իշխէր, այնքան գեղեցիկ՝ մինչեւ զարմանալիք* Սիրոյ կը համարուէր: Երբ տեսաւ զայն Ալմէք՝ խակոյն զմայլեցաւ, և զանազան հնարքներ կը

փնտռէր արքունեաց մէջ մնալու համար: Հռչակուած մեծ փառքը և պատիւը՝ իւր գեղեցկութիւնն՝ ազնիւ և նազելի քաղաքավարութիւնը՝ իւր վսեմ՝ ազդու եւ քաջիմաստ խօսքերը՝ զանազան աշխարհաց վրայօք առուած տեղեկութիւնները՝ (յորս ինքն անձամբ պտըտած էր,) Զելմայի միտքը յափշտակեցին, և Ալմէքի ընկերակցութիւնը անոր հաճելի ըրին: Թագուհին հրաւիրեց զԱլմէք Գոլկոնդայի մէջ մնալու, և Ալմէք յօժար սրտով յանձն առաւ թագուհւոյն այս հրաւէրը: Ի պատիւ անոր հանդէսներ՝ որսորդութիւններ և զանազան խաղեր կարգուեցան թագուհւոյն կողմանէ: Եւ Ալմէք ժամանակ ժամանակ վայելչազարդ զգեստներով՝ պատուական գոհարներով և շքեղ զարդարանքներով՝ աւելի եւս յայտնի կ'ընէր իւր փարթամութիւնը և ազնուութիւնը: Զելմայ սակաւ առ սակաւ բարեկամացաւ անոր հետ, և սիրահարելով եւս՝ նորա հետ ամուսնանալու յօժարութիւն ցցուց: Ալմէք ուրախութեամբ լցուած՝ այն ինչ այնպէս կը համարէր որ հասած է այն երջանկութեան՝ զոր շատոնց կը փնտռէր. պալատականք՝ որոց համար օտարականի մը սպասաւորելը դժպատեհ կը թուէր, նախանձելով՝ ծանր զրպարտութիւն մը հնարեցին, և անով այնպէս համոզեցին թագուհին՝ իբր ստոյգ և ճշմարիտ,

մինչև իսկոյն մահուան վճիռը տուաւ . որով ստիպուեցաւ նա վերստին մատանւոյն զօրութեանը դիմել՝ փրկուելու համար ։

Ելաւ անկից ցաւօք և զղջանալով, իւր ակնկալութեանց վայրկենի մը մէջ փճանալուն և այն երջանկութեան ոչնչանալուն համար՝ զոր ՚ի վերջոյ գտած կ՚երազէր . և Ասիոյ ուրիշ զանազան կողմերը շրջելով՝ առանց գիտնալու թէ արդեօք ո՞ւր պիտի դադարէր, միշտ միտքը շփոթած և իւր անձէն ձանձրացած՝ վերջապէս իւր միտքը դրաւ Ախէացւոց աշխարհը երթալ ։ Օր մը այն տեղ՝ երբ ինքնիրեն իւր տրտմալի խորհուրդներէն տակն ու վրայ եղած՝ անշէն դաշտերու մէջ կը շրջէր, հեռուանց նուագարաններու և երգոց ձայներ լսեց, և ինչ ըլլալը գիտնալ փափագելով՝ դէպ ՚ի սոյն ձայնը եկած կողմը դիմեց ։ Հիւղի մը քովերը հասնելով՝ շինական արանց և կանանց խումբ մի տեսաւ, որք երգելով և նուագելով կը պարէին միմեանց հետ, և ուրախութեամբ կը հրճուէին ։ Նոյա անկեղծ և պարզ ցնծութեանը վրայ զարմանալով՝ սպիտակ մօրուքով՝ յարգելի ծերունւոյ մը քով մօտեցաւ, որուն դէմքը այնքան զուարթ էր՝ որ յայտնի կ՚երեւար թէ տարիներու շատութիւնը առանց զինքն ընկճելու՝ դեռ եւս մարմնոյն և հոգւոյն զուարճութիւնը և զօրութիւնը անխախտ կը մնար, որով և ուրա-

խութեամբ նստած էր Նոյա հանդէսը զննելու համար . և հարցուց անոր այս կարգէ կանոնէ դուրս ուրախութեան պատճառը ։ «Մեզ համար կարգէ դուրս չէ, ըսաւ ծերը, որովհետեւ մեր աշխատանքներէն հանգստացած օրերուն մէջ, մեր անդաստաններուն պաշտպանն եղող չաստուծոյն՝ մեր պաշտօնը կատարելէ զկնի, մնացած ժամերը այսպիսի ուրախութիւններով՝ անցնաս կ՚անցընենք»։ «Ուրեմն դուք քաղցրագոյն կերպով կըսէ Ալմէք, ձեր միւս օրերուն մէջ ըրելիք աշխատանաց ծանրութիւնը կը թեթեւցընէք, և ձեր ապագային մէջ վարելիք թշուառ կենաց վիշտերը կ՚սփոփէք»։ Ծերունին Նոյա խօսքերուն վրայ ժպտելով մը կ՚ըսէ . «Եօթանասուն տարիէն աւելի է՝ որ այս տեղ սոյն կեանքը կը վարեմ, և օր մ՚ալ զիս ապերջանիկ չը գտայ ։ Գիտեմ որ ձեզ մեծատանց խիստ անհնարին կը թուի՝ երջանկութիւնը գտնել այնպիսի տեղ մը՝ ուր ոսկին և արծաթն համբաւուած չեն, և ուր որ պատուական գոհարները ճառագայթ արձակելով չեն փայլիլեր . բայց մենք գեղջկականքս՝ երբ ձեր քաղաքներուն մէջ մտնանք՝ աղմուկներ և խռովութիւններ թագաւորած կը տեսնեմք, ձեր փարթամութիւնները շատ անգամ ցաւակցութեան առիթ կը լինին՝ քան թէ նախանձու ։ Անդորրամտութիւնը ձեր մէջ տե-

դի չ'ունի, վասնզի ազատութիւնը և ամբարհաւաճութիւնը՝ զայն կը հեռացնէ ձեզմէ ամէն ժամանակ. և անդորրամտութիւն չեղած տեղն ալ՝ երջանկութիւն չը կայ։ Մենք խիստ սխալ հարուստ ենք ձեզմէ, և մենք ոսկին ու արծաթն հաղիւ թէ կը ճանչնամք. բայց դուք անոնցմով ինչ որ ալ գնէք, զայն բաւականապէս կընծայեն մեզ՝ մեր խաշինքը և անդաստանները, և մեք անոնցմով գոհ ըլլալով երջանիկ ենք»։

Հիացաւ Ալիմէք ծերունւոյն խօսքերուն վրայ, և միանգամայն ուզելով գիտնալ թէ՝ ինչպէս կարելի էր կարօտութեան և աշխատանաց մէջ վայելել այն երջանկութիւնը, զոր ինքը նոյն իսկ փափկութեան և ճոխութեան մէջ տակաւին չէր կրցած գտնալ, ուստի խորհեցաւ որ քիչ մը անոր հետ խօսակցի. «Անհընարին բան մը կ'երեւի ինձ, կըսէ. որ ամէն օրերը աշխատութեան և տքնութեան մէջ անցնելու սովորող ձեզ նման մարդիկը՝ երջանիկ կարողանան կոչուիլ»։ «Աշխատանքը՝ պատասխանեց ալեւորը, միշտ պարապորդութեան ապրելու վարժուած մարդու մը՝ կարելի է որ շատ ծանր թուի, բայց մեզ համար ուրիշ բան չէ՝ եթէ ոչ զբօսանք մը։ Տըխուր և դառն է ինձ այն ժամը, յորում երբեմն կը ստիպուիմ դադարիլ իմ սովորական գործերէս՝ և անգործ նստիլ։ Այն ատեն ինձ

կերեւի՝ թէ ժամանակը իւր ընթացից մէջ թուլցած է, և իւրաքանչիւր րոպէները մէյմէկ դարեր կ'երեւին։ Մինչդեռ եթէ աշխատանացս՝ զբաղիմ, գրեթէ առանց զգալու երեկոյ եղած կը գտնեմ, և երբէք զզուելի պարապորդութեան ծանրաբեռնութիւնը չեմ զգար»։ «Բայց կը մնայ քեզ աշխատանաց ծանրութիւնը կրել՝ կըսէ Ալիմէք, որ աւելի եւս տաժանելի և անտանելի է»։ «Աշխատանաց ծանրութիւնը՝ կրկնեց ծերը, դժուարակիր է գերւոյ մը՝ որ հարկաւ ստիպուած է զայն կրելու, անկարող լինելով ուզած ատեն հանգչիլ։ Այլ մենք գերիներու նման չեմք, անոնց պէս ուրիշին համար աշխատելու բռնադատուած չենք. երբ կ'աշխատիմ ու կը յոգնիմ՝ հարկը պահանջած ժամանակ կը հանգչիմ, վերստին աւելի ուժով գործելու համար, և ուրիշներուն ալ երբէք չեմ թողուր իրենց կարողութենէն և չափէն աւելի աշխատիլ։ Այսպէս աշխատանքը ոչ միայն ծանրաբեռնութիւն չէ, այլ նաեւ կրթութիւն մը։ Աշխատանքը կ'զբաղեցնէ զմեզ, և ամէն տխրական ու վնասակար խորհուրդներէն ազատ կը պահէ. մարմինը քաջառողջ և ուժեղ կընէ, հեռու այն ախտերէն, որոնցմէ դատարկակեացք շատ անգամ կը նեղուին և կը տագնապին։ Աշխատանքը քաղցր և ախորժելի կընէ կերակուրը, և հանգիստ քուն կը պարգեւէ,

և մեր այն աշխատանաց արդիւնքներուն ակն-
կալութիւնը՝ յարատեւ քաղցր բերկրութիւն
մ՚է մեզ համար, զոր դուք ծոյլք և մեծա-
տունք չէք ճանաչեր: Իւրաքանչիւր ակօս
զոր կը պատռեմ անդաստանիս մէջ, հնձոց
ուրախարար օրը կը յիշեցնէ ինձ, և այս մր-
տածմունքը կատարեալ ու անպատում գոհու-
թիւն կ՚ընծայէ ինձ»: «Բայց այն արդիւնքը՝
զոր դուք ձեր բազմօրեայ աշխատանքներէն
կը ժողովէք, կըսէ Ալիմէք, հարուստներուն
առանց աշխատանաց և տքնութեանց վայե-
լածին հետ բաղդատելով՝ չնչին բան մ՚է»:
«Երբոր ես լիապէս իմ ծարաւս զովացնեմ, պա-
տասխանեց ծերունին, այս տեղէն վազող այս
փոքրիկ առուակէն, ինձ ի՞նչ փոյթ է թէ
ուրիշները ամբողջ Եփրատը կը խմեն: Երբ
անդաստանքս և խաշինքս իմ ամեն կարեւոր
պիտոյքներս կը լեցնեն, ալ աւելի ի՞նչ կ՚ու-
զեմ: Երջանկութիւնը ընչից հաւաքման մէջ
չէ կայանար. այլ աշխատանաց կամ բաղ-
դին ընծայածը անդորրամտութեամբ վա-
յելել գիտնալու՝ եւ անով բաւականանալ
կարենալու մէջ: Դուք՝ որ առատութեան
մէջ կը լողաք, անշուշտ ինձմէ շատ կարօտա-
գոյն էք, վասնզի ձեր բաղձանքները հեռա-
ւոր և անհնարին բաներու կը տարածուին:
Ի բնէ սակաւ պիտոյից ենթարկուած ենք,
որոնք եւս դիւրաւ կը լեցուին. ուրիշ ան-

թիւ կարեւորութիւններ՝ զորս ես չեմ ճա-
նաչեր կամ չեմ հոգար, ձեր բաղձանքները
ձեզ համար կըստեղծեն և կը հնարեն. և երբ
ձեր այն աւելորդ բաղձանքները չի կրնաք ձեռք
ձգել, հանապազ անհանգիստ և դառնացեալ
կը լինիք: Երջանկութեան համար երեք բան
պէտք է, և ոչ աւելի. և դու անկեղծ կը-
նաս ինձ հաւատ ընծայել՝ որ շատոնց փորձը
առած եմ, և բազմամեայ հասակիս ընթաց-
քին մէջ շատ անգամ տեսած եմ, ոչ միայն
քաղաքին խռովութիւնը և շուքը, այլ և
գիւղօրէից անդորրութիւնը և լռութիւնը.
և ասոնց երեքն ալ անշուշտ կարեւոր են, և
ասոնք են. անդորրամտութիւնը, աշխատա-
սիրութիւնը և գոհունակութիւնը: Սիրտդ
խաղաղ և հանդարտ պահել գիտցիր, աւե-
լութենէ և հակառակութենէ խորշելով, կրից
սաստկութիւնը սանձահարելով, ուրիշաբար
չարեաց յաղթելով կամ համբերելով՝ որք հար-
կաւ կուգան և կը հասնին մարդկային սեռին
վրայ. զզուելի պարապորդութենէն փախչիլ
գիտցիր, և գործի մը զբաղէ. խոհեմութեամբ
վայելել գիտցիր այն ամեն բարիք թէ շատ
թէ սակաւ՝ զորս կը պարգեւէ քեզ Աստո-
ւած, և անոնցմով բաւականացիր, և ահա
անոնցմով դու երջանիկ կը լինիս»:

Զարմացաւ Ալիմէք գեղջկականի մը մէջ
այնքան հանճար ու խոհեմ խորհրդածութիւն

գտնալով, և նորա վերջին խօսքերը իւր սըր-
տին մէջ աւելի տպաւորուեցան ։ Ընկէց հը-
րաժարելով, գնաց առանձնակի իւր այն ը-
սածներուն վրայ մտածելու . և որքան կը խոր-
հէր՝ այնքան ալ ծերունւոյն ըսածները ճշմա-
րիտ կը գտնէր . «Ուրեմն՝ կըսէր իւր մտքովը,
արդէն այն երջանկութիւնը՝ զոր ես մին-
չեւ ցարդ այնքան տքնութեամբ և ջանքով
'ի զուր փնտռեցի, նոյն իսկ այն շէնքերուն
մէջ կը բնակի՝ ուր ես իսկ ծնած եմ, ուստի
ես թողլով զանոնք ուրիշ բան չեմ ըրած՝
բայց եթէ աւելի եւս անկէց հեռացած եմ ։
Ուրեմն քանի որ այսպէս է, պէտք է եղուկ
կարդալ այրին մէջէն իմ գտած այն կախար-
դական բանին համար՝ որով ինքզինքս եր-
ջանկութեան հասած կը համարէի ։ Եւ ար-
դարեւ եթէ աղէկ մը նկատելու ըլլամ՝ ի՞նչ
կրնամ ըսել, ընդ հակառակն աւելի թշուա-
ռացած կը գտնեմ ինքզինքս . մինչեւ ցարդ ան-
կէ ի՞նչ օգուտ շահեցայ, եթէ ոչ ասդին ան-
դին շրջելէն յոգնած և ձանձրացած, մարդ-
կային ազգի չարութեանց վրայ տխուր ծանօ-
թութիւն մը ունենալէ զատ՝ բան մը չը շա-
հեցայ, և այս չարիք ամեն տեղ մի և նոյն
են, և մարդկանց զանազան յիմար մոլորու-
թիւններէն զատ ուրիշ բան չի սորվեցայ ։ Ա-
նամօքելի հեշտութիւններէն զզուած՝ որք
մէկ ժամ մը անգամ ճշմարիտ և կատարեալ

ուրախութիւն չ'ընծայեցին ինծի, այլ ընդ-
հակառակն դժոխքին դռները հասուցին զիս ։
Անոտի փառասիրութեան մը համար նեղսր-
տութեան՝ անհանգստութեան եւ տառա-
պանաց խուռն բազմութենէն նեղուեցայ,
որոց փոխարէնը՝ 'ի վերջոյ սաստիկ վնասուե-
ցաւ անձս, և քիչ մնաց որ պիտի կորսուէի ։
Անմտաբար խաբուեցայ անօրէն կնիկէ մը՝
որ զիս սիրել կը կեղծէր, և որ զիս այնքան կը
հաւատացընէր . բայց այժմ կը զղջիմ երե-
րեալ և տատանեալ՝ և նոյն իսկ անձէս նե-
ղեալ ։ Ո՜հ, որքան լաւ էր ինծի՝ եթէ ծնած
տեղւոյս և առաջին պարզմտութեանս մէջ մը-
նացած ըլլէի ։ Կերակուրը՝ զոր այնտեղ կ'ու-
տէի, պարզ էր . բայց ախորժակը՝ որ երբէք
չէր պակսեր, որքան կը համեղացնէր զայն ։
Զանդերձներս թէպէտ հասարակ և հին էին,
սակայն որքան աւելի կը պաշտպանէին զիս ե-
ղանակներու անբարեխառնութենէն, քանթէ
անոնք՝ զորս վերջերս պարտաւորեցայ տեղ
տեղ հագնիլ, նորութեան (Մօտա) փոփոխա-
կանութենէն ստիպուած ։ Աղքատիկ էր հիւ-
ղս, բայց որքան քաղցրութեամբ՝ անդոր-
րութեամբ և հանգիստ կը ննջէի անդ ։
Զօտին պահպանութիւնը՝ կամ անդաստա-
նիս մշակութիւնը՝ բոլոր օրը կը զբաղեցնէին
զիս . բայց որքան նախադասելի էր այն տեսակ
պարապմունք մը, այն զզուելի դատարկեցու-

թենէն՝ որմէ շատ անգամ տառապեցայ: Արդարեւ յարգելի ծերոյն խօսքերը իրաւ են, եւ Բարձրեալը ներկայացուց ինձ զայն՝ զիս լուսաւորելու համար: Այն մարդասէր Աստուծոյ ձայնն է, որ զիս յուղղութիւն կը հրաւիրէ՝ ուրկից խոտորեցայ, եւ պարտ է անսալ նոյն ձայնին»:

Ամբողջ գիշերը այն մտածութիւններով անցնելով, առաւօտեան լոյսը ծագելուն պէս՝ խեղճ ծերունւոյն քովը դարձաւ, եւ կը խնդրէր անկէ՝ որ հաճի զինքն իրեն կենակից ընդունելու, որպէս զի սկսի վայելել նորա հետ այն երջանկութիւնը՝ զոր մինչեւ այն ժամանակը ամեն տեղեր փնտռելով չէր կրցած գտնալ: Ծերունին երբ լսեց նորա խօսքերը՝ ժպտելով մը ըսաւ անոր. «Խիստ ուրախ եմ՝ որ մեր կենցաղավարութեան պարզութիւնը եւ անմեղութիւնը աւելի երջանիկ կը թուի քեզ, քան զայն՝ զոր երեկ կը համարէիր. բայց այս կենցաղավարութիւնը այժմ քեզ չը յարմարիր, եւ երջանկութիւնն ալ միայն գիւղերու մէջ չի բնակիր: Որովհետեւ քաղաքի եւ փարթամութեանց մէջ եւս կրնաս զայն գտնալ՝ երբոր կամենաս. բաւական է որ գիտնաս անդորրամտութիւնդ հաստատուն պահել, ունեցած բարիքներովդ բաւականանալ, խորշելով անկարգ եւ չափէ դուրս բաղձանքներէ՝ որոնք բնականաբար չեն յագենար

եւ վերջ չունին, եւ դատարկութենէ հեռանալ՝ օգտակար եւ համեստ գործի մը պարապելով. ասկէ զատ՝ բան պէտք չէ քեզ»:

«Բոլոր ըսածներդ կարելի է ինձ ընել, ըսաւ Ալիմէք, բայց խիստ կը յոգնեցնէր զիս՝ անձամբ երջանկութեան ճանապարհը խնդրելովս, զոր դու սիրով եւ դիւրութեամբ ինձ կը ներկայացնես: Ասկէ 'ի զատ՝ գեղջկական կեանքը ինձ համար նոր չէ, զոր պիտի կրնամ յաջողապէս վարել»: Եւ այն ատեն պատմեց անոր իւր ազգատոհմը եւ հայրենիքը, ա-րին մէջ այն աղէտալի քաղաքը եւ մատանին ինչպէս գտնալը, եւ իրարու ետեւէ իւր գլխէն անցած բոլոր ուրիշ անցքերը: Յետոյ երկուքըն եւս ծերունւոյն տալով ըսաւ. «Ասոնք քեզ կը նուիրեմ, միայն թէ բարեհաճիս այսուհետեւ զիս քու քովդ առնելու»: Զայս լսելով հանճարեղ ծերունին՝ «Ո՛չ, ըսաւ, որովհետեւ քեզ հաճելի է, կ'ընդունիմ քու նուէրդ. սակայն ոչ թէ 'ի գործ դնելու համար՝ քու լիցի, այլ միայն պահելու համար. որպէս զի եթէ որ եւ իցէ ժամանակի մէջ ձանձրանաս մեր կենաց այս կանոնէն, զանոնք վերստին քեզ պիտի տամ: Որքան որ ըրած խորհուրդդ խոհական է, այսու ամենայնիւ սակաւ ինչ անզգոյշ եւ անխոհեմ կը թուի ինձ, որ եւ կարելի է՝ օր մը զքեզ զղջումի բերէ: Մեզ հետ կ'աշխատիս այս տեղ՝ որքան որ

հաճելի լինի քեզ. եթէ ախորժիս՝ կը կենաս, իսկ եթէ ոչ՝ բոլորովին ազատ ես, կ'առնուս դարձեալ տուածդ և կ'երթաս»:

Խիստ ուրախանալով Ալիմէք ծերունւոյն գովելի ընդունելութեան եւ հանճարեղ խորհրդոյն վրայ, և նաեւ անոր մտածութիւնները բոլորովին հեռացնելով՝ որք դեռ կը նեղէին զայն շատ եղանակներով, անկէ ետքը խաղաղութեան, չափաւորութեան և զբաղման մէջ սկսաւ վայելել մաքուր հեշտութիւնը, և սրտի այն լիակատար ուրախութիւնը՝ զոր առաջուց չէր ճանաչեր: Ժամանակէ մը յետոյ փոխանակ զղջալու իւր ձեռնամուխ եղած կենաց եղանակէն, օր ըստ օրէ աւելի եւս ախորժելով՝ խորհեցաւ իւր երջանկութիւնը բոլորովին պսակել, և այնպիսի հիման վրայ հաստատել՝ զոր անհնար լինի կործանել: Ծերունին օրիորդ մի ունէր, որուն վարուց մաքրութիւնը՝ գեղեցկութեանը կը հաւասարէր: Ալիմէք երբ տեսաւ՝ թէ արդէն իւր անձին բարի վկայութիւնը տուած էր, և այս պատճառաւ կը յուսար՝ որ ծերունին չը պիտի ժխտէր իւր դուստրը իրեն կնութեան տալու, մեծ թախանձանօք խնդրեց անկէ: Բայց բազմաժամանակեայ փորձառութեամբ քաջ ճանաչելով ծերունին մարդկային սրտի անհաստատութիւնը, և յոյժ եւս կասկածելով Ալիմէքի դիմացկունութեան վրայ, ուզեց ժամանակ մի եւս փորձել: Ի վերջոյ տեսնալով անոր այն նորադոյն վիճակին մէջ ունեցած հաստատութիւնը և պնդութիւնը, և հաստատելով նաեւ՝ որ բոլորովին հեռի է նա վերստին այն տեղէն զատուելէ, ուզեց նորա բաղձանքը կատարել: Վերջապէս Ալիմէք հասնելով այն կատարեալ երջանկութեան՝ զորն որ հարստութիւնները՝ հեշտութիւնները և պատիւները չէին կարողացած ընծայել անոր, ուզեց գետնի տակ թաղել քսակը և մատանին, որպէս զի չըլլայ որ մէկը գտնալով փորձութեան մէջ իյնայ, անոնցմով երջանկութիւնը փնտռելով այն տեղ՝ ուր որ անհնար է գտնալ:

Խիստ ցաւալի է արդարեւ մարդկան ազգի վիճակը, քանզի այս աշխարհիս մէջ անմտաբար երջանկութիւն կը փնտռեն այնպիսի տեղեր՝ ուր գտնալը անհնար է. հարստութեան՝ իշխանութեան և սնոտի փառաց մէջ երջանկութիւն փնտռելը անմտութիւն է, քանի որ ամենօրեայ փորձերով կը տեսնանք՝ որ մարդիկ քանի բարձրանան, այնքան հոգ՝ նեղութիւն՝ մտածմունք և երկիւղ կը շատնան, և ուր որ երկիւղ ու վիշտ կայ, հոն երջանկութիւն չը կայ: Ուրեմն յայտնի կ'երեւի, որ այս աշխարհիս մէջ բուն երջանկութիւն ըսուածը՝ որ հոգւոյ մէկ հատիկ բաղձանքն է,

սրտի հանդարտութեան ու քիչ բանով գոհ ըլլալուն մէջն է, հանդերձ անմեղութեամբ ու արդարութեամբ որ կ'առաջնորդէ մարդուն դէպ 'ի յաւիտենական երանութիւնը։ Ցաւալի է արդարեւ, որ մարդիկ անմահ հոգւոյն այս բանական բաղձանքը չարաչար գործածելով՝ կը հեռանան իրենց բուն վախճանական նպատակէն. մեր մարմինը քիչ բանով գոհ կըլլայ, և երբեք արգիլուած չէ մեզ մեր բուն պիտոյքը արդարութեամբ և չափաւորապէս գործածելը. այլ մենք զգալի բաներուն սաստիկ յարելով, և մեր անօգուտ կարօտութիւնները շատցնելով՝ ամեն օր նորանոր բաղձանքներ կ'ստեղծենք և անոնց չի հասնելով կը տանջուինք, և կը կարծենք թէ երջանկութեան կը դիմենք, բայց ընդհակառակն այս կերպով միշտ երջանկութենէ կը հեռանանք։

Նայեցէ՛ք անգամ մը սակաւապէտ ընտանիքի մը վրայ, որ իւր ամենօրեայ աշխատանօք ապրուստը ճարելով իւր վիճակէն գոհ է, միանգամայն և իւր աստուածային ու մարդկային պարտքերը ջերմեռանդութեամբ և բարեպաշտութեամբ կատարելով՝ անմեղ կեանք մը կը վարէ պարկեշտութեամբ։ Տեսէ՛ք, ո՛րչափ ուրախ է, ո՛րչափ հանգիստ է. իւր զաւակները ի՛նչպէս առողջ են և կայտառ, որոց վրայ ոչ թէ միայն մեծատունները՝ այլ և թագաւորներն անգամ կը նախանձին։ Ուրեմն մարդիկ եթէ իրօք երջանիկ ըլլալ կուզեն, բնաւ հեռու երթալ պէտք չէ, անմահ հոգւոյն անմահական բաղձանաց համեմատ թող աշխատին բարեսիրտ, չափաւոր, աշխատասէր, արդար, գթած և վերջապէս առաքինի կեանք ունենալ, և՛ահա պիտի տեսնան՝ որ երջանկութիւնը իրենց մէջն է։

Ը.

Սիտնէի Բիտուլփ

Սիտնէի Բիտուլփ մեծին Բրիտանիոյ ազնուական և հարուստ տոհմէ մի ծնած է։ Այս օրիորդը իւր մօրը հնազանդելու համար, Փալքլանդ ճոխ ու երեւելի սեպուհը թողուց՝ զորն որ շատ կը սիրէր, հետեւաբար ինքն ալ անկէ հաւատարապէս կը սիրուէր, և Արնոլտ անուամբ մարդու մը հետ ամուսնացաւ։ Այս Արնոլտը իւր ամուսնոյն հետ սաստիկ խստութեամբ և չարաչար վարուելէն, և իւր բոլոր ունեցած ինչքը զեղխութեանց և վէճերու կամ հակառակութեանց մէջ վատնելէն զկնի՝ իւր կեանքը թշուառաբար մահուան մատնեց, թողլով իւր խեղճ կինը երկու զաւակօք այրի։ Սակաւ ժամանակէն յետոյ մայրն ալ մեռաւ՝ որ իւր միայնակ օգնական և յենարանն էր, իւր եղօրմէն

ալ օգնութիւն չը գտնալով և երեսի վրայ ձը-
գուելով՝ բոլորովին անտէր՝ որբ և այրի մնաց։
Մ՚անաւանդ եղբօրը ամբարտաւան և ագահ
կնոջէն 'ի դուր և յանիրաւի արհամարհուե-
լով՝ ստիպուեցաւ անշուք տան մը վերջին դը-
տիկանի հովանոյն ներքեւ ամփոփիլ, ուր իւր
կենաց օրերը նուաստութեամբ և չքաւորու-
թեամբ կ՚անցնէր։ Իւր բոլոր թշուառու-
թեանց ամենէն մեծը իւր երկու ամենասի-
րելի նորատի աղջկունքն եղան, որոնք ժան-
տատեսակ պիսակոտութեան (Բորոտութեան)
բռնուելով իրենց թշուառ մայրը անհնարին
ցաւոց մէջ ընկղմեցին երկար ատեն, և թէ-
պէտ բաւական ժամանակէն յետոյ առողջա-
նալով այդ թախծութիւնը փարատեցաւ,
սակայն խեղճ որդեսէր մայրը նոցա բժշկու-
թեան համար պարտաւորեցաւ իսպառ վատ-
նել մնացած ապրուստը։ Իրաւ է որ իւր եղ-
բօր անգթութեամբը զրկանք կրելով իւր օ-
ժիտէն ամենափոքրիկ մաս մը միայն մնացած
էր իւր ապրուստին համար, բայց զայն ալ
ձեռք ձգելու համար ամիսէ մը աւելի պէտք
էր սպասել։ Իւր զաւակները սկսած էին ար-
դէն իւրեանց առողջութիւնը գտնել, բայց
այնչափ հիւանդութեան մէջ բաւական տը-
կարացած ըլլալով՝ վերստին զօրութիւն ստա-
նալու համար պէտք էր լաւագոյն սնունդ ճա-
րել, զոր խեղճ կինը որ և իցէ կերպիւ չէր

կարող ձեռք բերել. այս յետին կարօտու-
թեան մէջ թշուառ Սիմոնէի ուրիշ բան չէր
մնար ընել, բայց եթէ դեռ եւս ունեցած իւր
սակաւ զարդերէն իսպառ մերկանալ՝ և վա-
ճառել զանոնք։

Սիմոնէի մէկհատիկ սիրելի և հաւատա-
րիմ Պատոի անուն աղախին մ՚ունէր, որ
իւր ամենաճոխ և ամենալաւ միջոցին ամե-
նայն հաւատարմութեամբ ծառայած էր. և
նոյն իսկ այս յետին թշուառութեան և չքա-
ւորութեան մէջ ինկած ատենն ալ՝ դարձեալ
սիրով և իւր յօժար կամօքը կը ծառայէր։ Երբ՝
Սիմոնէի այս զարդերը անոր յանձնեց, որպէս
զի տանի վաճառէ, որ իւր և իւր զաւակաց
կենաց կարեւոր պիտոյքը կարողանայ լեցնել։
Պատոի կարեկից ու սիրալիր զգացմամբ և
արտասուալից աչօք դարձաւ դէպ 'ի տիկնոջ՝
ու ըսաւ. "Տիկին, տակաւին դու այդ կէտին
հասած չես՝ որ ստիպուիս այս ընելու"։ "Ո՛հ,
ա՛լ Պատոի, ի՞նչ կըսես արդէն իսկ հասած եմ
այդ վիճակին, ըսաւ տիկինը, որովհետեւ ինչ
որ ունէի՝ այն ամէնը այժմ սպառած է, բայց
յայսմանէ՝ այսուհետեւ այս սնոտի և ու-
նայն զարդերը ինձ պէտք չեն, և թէ կարող
չեմ ես համբերել և տեսնել թշուառ և ա-
պերջանիկ զաւակացս կատարեալ առողջու-
թեան համար անպատճառ պէտք եղած կա-
րօտութիւնը"։ Պատասխանեց Պատոի. "Ինչու

բան մը չպակսիր անոնց համար, տիկին, միայն թէ նորա հոգը դուն իմ վրաս ձգէ»։ «Ո՜հ, բաւ գիտեմ ու կը ճանաչեմ, սիրելի՛դ իմ Պատտի, քու այդ սրտիդ ազնուութիւնը, և անոնց վրայ ունեցած գութ ու խնամքդ, բայց ի՞նչպէս պիտի կարենաս դուն նոցա պիտոյքը լեցնել»։ «Գիտես տիկին, ըսաւ Պատտի, բաւական ժամանակ կայ՝ որ ես ձեռագործներու պատրաստելով կանացի աշխատութեանց մէջ բաւ հմտութիւն ստացած եմ. և այս սենեակը մեզ փորձու տուող կինը՝ շարունակ այնպիսի գործերով կ՚զբաղի՝ որուն ես ալ երբեմն օգնական ու ձեռնտու եղած եմ. անցեալ օր իմ մէկ կատարած գործիս համար երեսուն դահեկան վարձք ընդունեցի իրմէն»։ «Ինչպէս կարելի է, ըսաւ տիկինը, քու այս կնոջ գործակից ըլլալդ, մինչդեռ ես գրեթէ տեսած չեմ՝ որ դուն ուրիշ գործով զբաղիս, այլ շարունակ ինծի հետ իմ հիւանդ զաւակացս սպասաւորութիւն կ՚ընես»։ — «Ցորեկին գործել չի կրցածս՝ գիշերը կը կատարէի, և շարունակ այդ կնոջ քով յաճախելով՝ սկիզբէն ունեցած յոյսէս, շատ աւելի յաջողակ եղայ գործիս մէջ։ Արդ՝ տիկին, եթէ հաճոյ կը թուի քեզ շարունակեմ նոյն գործը. և ինչպէս որ կը յուսամ, առանց զքեզ այդ ունեցած քիչ մը դրամներէդ զրկելու՝ իմ վաստակս կը բաւականանայ մեզ համար։

Սիրունի՛ 'ի սիրոյ և յերախտագիտութենէ շարժեալ սկսաւ լալ ու ըսել, «Ո՜հ, իմ սիրելի Պատտիս, ահա իմ այս առատ արտասուքս յայտնապէս ցոյց կուտան քեզ, թէ ո՞րչափ գոհ եմ քու բարի սրտիդ ազնիւ զգացմունքէն, բայց Աստուած չընէ որ ես ինծի սեփհականեմ և գրաւեմ այդ քու աշխատանացդ և ճակտիդ քրտանց արդար արդիւնքը, ինչ որ ունիս՝ և ինչ որ կարող ես շահիլ՝ այն քուկդ է. ամենևին չեմ ուզեր՝ և չեմ ընդունիր, որ իմ պիտոյքս համար դուն զանոնք վատնես։

Խեղճ Պատտի սիրով ու կարեկցութեամբ լեցուած տարակուսական ձայնով մը՝ ըսաւ. «Կ՚աղաչեմ, տիկին, ներէ՛ ինծի. կարելի է որ չափազանց համարձակութեամբ վարուեցայ քեզի հետ, բայց արդէն շահած դրամէս այդ պիտոյից համար մաս մը ծախս ըրած եմ. որովհետև ինծի այնպէս թուեցաւ՝ թէ այս նոր առողջութիւն գտած. բայց դեռ տկար խեղճ զաւկներդ քիչ մը զօրանալու՝ և իրենց առաջին վիճակին վերադառնալու համար օրինաւոր սնունդ կուզեն։ Նոյն իսկ դուն ալ, տիկին, այնպէս կը կարծեմ՝ որ զօրութիւն ըստանալու համար օրինաւոր սննդեան կը կարօտիս. վասնզի զաւակներուդ հիւանդութեան համար այնչափ հոգնելով և մինչև վերջը անհանգիստ ըլլալով՝ գրեթէ իսպառ զօրու-

թենէ և կարողութենէ ընկած ես, ահա այս պատճառաւ քիչ մը բան գնած եմ, և կը խնդրեմ՝ որ առանց դժկամակելու ընդունիք զանոնք »:

Տիկինը աչքերէն արտասուքը գետի պէս հոսելով, խանդաղատանօք աղախնոյն ձեռքը սեղմելով՝ պատասխանեց. «Ո՜հ, իմ Պատտիս, իմ սիրելի և գթած Պատտիս, ես չեմ կրնար դժկամակիլ. նա մանաւանդ բոլորով սրտիւ գոհ եմ քեզմէ: Կ'ընդունիմ քու այդ փափուկ ու զգայուն սրտիդ արդիւնքը. կ'ընդունիմ այդ ազնիւ նուէրդ, բայց կ'աղաչեմ և կը խնդրեմ՝ որ այդ ըրածիդ վրայ ուրիշ բան չաւելցնես, վասնզի 'ի խոր կը վիրաւորես զիս: Ահաւասիկ զաւակներս ալ քիչ մը հանգիստ կուտան ինձ, ես ինքս այսուհետեւ գործի կը պարապիմ, և որովհետեւ դու իմ ինչքերս ծախելն անյարմար կը սեպես, ուստի առանց բան մը ծախելու կը լեցնեմ իմ և անոնց պիտոյքը:

Բայց անողորմ բաղդը տակաւին չէր բաւականացած Թշուառ և ապերջանիկ Սիմոնէին տանջելէն. հազիւ իւր սիրելի աղջիկները սակաւ ինչ առողջութիւն ստացած էին՝ ինքն Սիմոնէի իւր դառներաց հիւանդութեան տեղն կրած անչափ վշտաց և նեղութեանց պատճառաւ սաստիկ հիւանդացաւ: Ախտը օր ըստ օրէ ծանրանալով՝ մահուան վտանգի

մէջ ձգեց Թշուառ մայրը. և այսպէս երկար ժամանակ մահուան անկողնոյն մէջ հալեցաւ ու մ չեցաւ: Այս միջոցին ստիպուեցաւ Սիմոնէի կամաց կամաց իւր սիրելի և հաւատարիմ Պատտիայ աղախնոյն աշխատութեան արդիւնքը վայելել. և Պատտի շատ կ'ուրախանար՝ որ տիկինը հաճութեամբ կ'ընդունէր, և ինքը կարող կըլլար զայն խնամելու: Սակէ վերջը հիւանդութիւնը սկսաւ կամաց կամաց թեթեւնալ. և այս միջոցներուս իւր սակաւագոյն հասոյթներէն երեք ամսչէք մը ընդունեց. որուն մէկ մասը անմիջապէս աղախնոյն տուաւ՝ որն որ իրեն և աղջկանց պիտոյից համար ծախս ըրած էր, իսկ մնացածն ալ օրական պիտոյքը հոգալու համար պահեց:

Սիմոնէի դեռ եւս կատարելապէս առողջացած չէր, երբ օր մը մէկ ծերունի մը աղքատի կերպարանքով եկաւ նորա դրան առջեւ՝ և կուզէր իրեն հետ խօսիլ: Հրամայեց Սիմոնէի՝ որ ներս բերեն ծերունին, զոր վայելուչ կերպիւ ներս ընդունելէն յետոյ՝ անոր հոն գալուն պատճառը հարցուց: Ծերը իւր աչքը դէպ 'ի Սիմոնէին երեսը յառած սրտէն հառաչեց, ու յետոյ ակնածութեամբ և խոնարհութեամբ մը ըսաւ անոր. «Տիկին, կը յիշես արդեօք Վարնէր անուամբ մէկը՝ որ քեզ ազգական ըլլայ, և որ գրեթէ երեսուն տա-

րի է՝ Արեւելեան Հնդկաստան գնացած է»։

«Այո՛ կը յիշեմ», պատասխանեց Միննէի քաղցրութեամբ մը։ «Ա՛հ, անոր հիմա այն թըշ-ուառը որ նոյն ինքն ես եմ, կրնեց ծերը, իմ ձե-ռացս աշխատութեամբը բաւական արդիւնք ունեցած և շահած էի, բայց իմ սիրելի և քաղցր հայրենիքս վերստին տեսնելու բաղձանքն ու փափագը ստիպեց զիս, որ իմ այն ունեցածս նաւ մը լեցնեմ և Անգղիա երթամ։ Երբ Իրլանդիոյ սահմանը հասանք, մէկ Գաղղի-ացի ծովամարտիկ նաւակ մը մեզ հանդիպե-լով՝ նաւս մեր վրայ յարձակիլ ու պատերազմի-ռուն հետ երկար ժամանակ պատերազմելէն վերջը՝ իւր զօրութիւնը մեզմէ աւելի ըլլա-լուն պատճառաւ մենք յաղթուեցանք. զմեզ բռնելով բոլորովին կողոպտեց և առաւ մեր բո-լոր ունեցածը։ Երբ զմեզ Պրեստ նաւահան-գիստը տանելով ցամաք հանեցին, ես հոգիս բերանս հասած շատ մը տաժանմունքէ վերջը հասայ Լոնտոն։ Երէկ չէ միւս օր այս տեղ հասնելուս պէս՝ մէկէն 'ի մէկ քու ազնիւ Ռանտոլփի հօրդ և իմ քեռայս վրայով տեղե-կութիւն խնդրեցի, որն որ ինչպէս դու ալ լաւ գիտես մօրս եղբայրն է։ Երբ իմացայ՝ որ կենդանի չէ նա, ուզեցի եղբօրդ քով երթալ, բայց նա զիս սաստիկ արհամարհելով՝ ունայն և անմխիթար արձակեց։ Ու հիմա եկայ քեզի աղաչելու՝ որպէս զի գոնէ դու իմ վրայ գը-

թալով օգնութեան հասնիս թշուառիս. սա-կայն քու ալ այս ներկայ հանգամանքներէն քաջ կը մակաբերեմ, որ կարողութիւն չու-նիս ինձ օգնելու. ուստի պէտք է որ ես այս աղէտին դիմանալով՝ համբերեմ և անօգնա-կան մեռնիմ»։

Միննէի շատ անգամ Վարնէրի վրայով խօսելն լսած էր, ուստի զգուշութեամբ մը անոր երեսը նայելով՝ անոր դէմքին նմանու-թիւնը յառաջագոյն տեսած ըլլալը յիշեց ու ճանչցաւ։ Անոր պատահած այս աղէտալի դէպքերն ու փորձանքները լսելու ատեն՝ շատ ցաւեցաւ և ըսաւ. «Իմ տենչալի հօրաքեռ-որդի, Տէրը գիտէ, թէ որչափ կը ցաւիմ և կը վշտանամ ուզածիս պէս քեզ չը կրնալ օգ-նելուս համար, բայց կը յօժարիմ գոնէ իմ կարողութեանս համեմատ զքեզ մխիթարե-լու։ Մեր աղքատիկ սեղանին մասնակից ես. և մեր այս տնակը վարձու սենեակ մը ևս ունի զոր պիտի առնեմ անկէ, և դու անոր մէջ պիտի բնակիս։ Իսկ հիմա այս տեղ հաս-նելուդ ըրած ծախքերդ վճարելու համար թէ որ այս դրամները կը բաւականանան՝ ընդունէ զայն, իսկ եթէ ոչ՝ իմացուր ինձ։ Գթած է Տէ-րը, որ և իւր եղանակաւ իւր առատ ողորմու-թիւնը կը շնորհէ ու կը պարգևէ. նա իւր ո-ղորմութիւնը բնաւ մէկէ մը չը զլանար»։ Այս ըսելով հինգ դահեկան տուաւ անոր։

Ուերունին Վարնէր այս դրամը առնե-
լու համար ձեռքն երկնցուցած ատեն՝ իւր
սրտին մորմոքէն ու ցաւէն սկսաւ լալ, և գո-
չեց ըսելով. «Աստուած պիտի վարձատրէ
անշուշտ այսչափ առաքինութիւնը, որ ար-
դարեւ վարձատրութեան արժանի է. շատ
երջանիկ եմ ես ալ՝ որ ինձմով կամեցաւ Աս-
տուած այս բարութիւնն ընելու: Նազելի
քոյր իմ, կ'ընդունիմ քու այս նուէրդ, և իբր
քու առատասրտութեանդ յաւիտենական
յիշատակ միշտ պիտի պահեմ զայն. բայց
անոր փոխարէն դուն ալ ինձմէ այս Թուղթը
ընդունէ». այս ըսելով՝ տուաւ անոր արժէ-
Թուղթ մը՝ որ երկու հազար լիր սթերլին
ոսկի արժէք ունէր: Երբոր Աննէի Թուղ-
Թը տեսաւ՝ ապշեցաւ, և գրեթէ երազ կը
համարէր. ինքնիրմէ ելած ուր ըլլալը չէր գի-
տէր, եւ շփոթելով ինչ խօսելիքը մոռցաւ:
Վարնէր Աննէին ձեռքը սիրով սեղմելով՝
ըսաւ. «Ամենասիրելի քոյր իմ, կ'աղաչեմ, նե-
րէ՛ իմ այս պատրուակեալ հնարքներուս՝ ո-
րով կամեցայ քեզ հետ վարուիլ: Ես այս հին
ու ցնցոտի հանդերձներուս տակ ձեւացածիս
պէս ոչ իրօք աղքատ և ոչ ալ սնանկ եմ. այս
գծուծ կերպարանքիս ներքեւ Անգլիոյ մէջ
գտնուած ամենամեծ հարուստներէն աւելի
ճոխ և աւելի հարուստ պիտի տեսնես դու
զիս: Որովհետեւ հօրս ամբողջ ժառանգու-

թեամբը Հնդկաստան երթալով՝ այն տեղ
վաճառականութեան ձեռք զարկի, և այն-
չափ յաջողեց Տէրը իմ գործերս՝ որ խիստ
շատ շահեցայ և չափազանց գանձուց տէր
եղայ: Արդէն վեց տարի է որ կինս մեռաւ.
և ես ալ իմ մէկհատիկ զաւակիս այրի մնա-
ցած էի. վերջը որդիս ալ կնքեց իւր մահկա-
նացուն. ահա այս պատճառաւ ես ալ միտքս
դրի իմ հայրենիքս վերադառնալ՝ և իմ ինչքս
քու և եղբօրդ մէջ բաժնել ուզեցի: Բայց
նախ և առաջ իմ ժառանգորդացս ինչ սրտի
և ինչ վարուց տէր ըլլալնին իմանալ ուզեցի,
ուստի ահա ինչպէս որ կը տեսնես այժմ, ծըպ-
տեալ կերպարանքով և իբր անծանօթ անձ մը
ներկայացայ առաջին անգամ պարոն Բխտուէ-
լին: Այլ ես չեմ վստահիր զայն քու եղբայրդ
կոչելու. վասնզի այսուհետեւ արժանի չէ նա՝
այս անունով կանչուելու: Անգութ և
անողորմ, ինչպէս բարբարոսութեամբ և հը-
պարտութեամբ դուրս հանեց ու վռնտեց
զիս: Ես առաջուց գուշակեցի, որ եթէ ըս-
կիզբէն այս հանդերձին տակ ինքզինքս յայտ-
նէի՝ ներս չը պիտի կրնայի մտնել. ուստի մի-
այն լուր խրկեցի իրեն ըսելով՝ թէ Հնդկաս-
տանէն մէկը եկած է և կ'ուզէ 'ի դիմաց Վար-
ներին իրեն հետ խօսիլ: Ահա այսպիսի հնար-
քով թող տուաւ ամբարտաւանը՝ որ ներս
մտայ: Նա գոռոզաբար երկնցած փռուած

էր բաղմոցի մը վերայ , իւր քովն էր նաեւ իւր Միլեդի կինը՝ որ պարապորդութեանը համար սկնդկին (պիքէ ըրեն) հետ կը խաղայր։ Երբ ես իրենց քով մտայ՝ երկուքն ալ աչքերնին վրաս դարձնելով սկսան ոտքէս մինչեւ գլուխս դիտել և գլխս վերէն 'ի վար չափել, և իրարու հետ ժպտեցան ։ Իսկ ես վերջին աստիճան խոնարհած ամենայն ակնածութեամբ ողջունեցի զիրենք՝ և ըսի պարոնին . «Արդեօք կը ճանչնամս քու առջեւդ կեցող Թշուառ ողորմելին ». «Արդարեւ ոչ, պատասխանեց ծաղրելով ու հեգնելով, բնաւ չեմ յիշեր որ զքեզ տեսած ըլլամ ». Կրկնեցի ես. «Ուրեմն բոլորովին մոռցած ես քու ողորմելի Հօրաքեռ որդին Եդուարդ Վարները ». Այս անունը լսածին պէս արհամարհանօք և զարմացմամբ Միլեդին ակնարկեց՝ ու դարձեալ աչքը յառեց դէպի ինծ , վերստին քննեց զիս և վերջը պատասխանեց . Թէ՝ «Գիտեմ այդ անուամբ ազգական մի ունեցած պիտի ըլլամ, բայց շատ ժամանակ է՝ որ նա անկէ գնացած է, և կարելի չէ որ ես զայն ճանաչեմ ». Դարձեալ կրկնեցի և ըսի . «Ես զքեզ լաւ կը ճանաչեմ, երբ որ ես այս տեղէն մեկնեցայ՝ դու այն ատեն տասներկու տարեկան էիր . և քանի՜ քանի անգամ գիրկս առած եմ զքեզ ։ Այն ատենէն 'ի վեր 'ի հարկէ շատ փոխուած պիտի ըլլամ, աշխատանքը՝ կլիմային տար-

բերութիւնը և հասակս անտարակոյս այլակերպած են դէմքս , բայց տակաւին նշանակ մը գոնէ պէտք է գտնուի իմ վրաս . ձայնս . . . ». «Ո՛հ, ալ բաւական է այդքանը , ըսաւ բարկութեամբ մը, անօգուտ է անձիդ վրայով այդչափ երկար ճոխաբանելը . Ի՞նչ ունիս ըսելիք , ի՞նչ կը հրամայես ինծ ». «Մի՛ ողորմելոյս և Թշուառացելոյս , պատասխան տուի իրեն , աղքատը չը հրամայեր , այլ կը հնազանդի ». ու յետոյ սկսայ անոր պատմել այն աղէտալի և չինծու անցքերս . դրեթէ նոյն իսկ քիչ մը յառաջ քեզ պատմած խօսքերովս ։ Միլեդի երբեմն երբեմն խեթիւ վրաս նայելով՝ անդադար իւր շանը հետ կը խաղար . իսկ այրն ալ անհանգստութեան մէջ կը տագնապէր ։ Երբ խօսքս այն տեղ հասաւ՝ ուր Գաղղիացի աւազակաց զմեզ կողոպտելնին պիտի պատմէի , ալ մնացածը լսելու չը համբերեց, բարկութեամբ և զայրութով տեղէն ցաթկեց , որպէս թէ կուզէր սենեակէն դուրս ելլել, դէպ 'ի իմ կողմս դարձաւ՝ ու բարկութեամբ մը ըսաւ . «Թշուառականը ազգականիս մեկուն կողմէն ինձի լուրեր տալու սնոտի պատճառներով առնս մտաւ, և վերջը նոյն իսկ այն ազգականս ինքն ըլլալը կը յայտնուի՝ որ կուգայ ինծմէ ողորմութիւն խնդրելու ։ Արդարեւ այս աղէկ հնարք է ». Ներէ՛ ինծ, ըսի իրեն, կ'աղաչեմ քեզի, ներէ՝ որ իմ ինչ

եւ ով ըլլալս մէկէն ՚ի մէկ չը յայտնեցի, վասն զի այս յետին ծայր թշուառութեան մէջ ըլլալուս համար լաւ համարեցի՝ որ քու սպասաւորներդ զիս չը ճանչնան»։ Դժգոհութեամբ եւ բարկութեամբ կրկնեց վերստին. «Ոն ուրեմն, ինչպէս ալ ըլլայ՝ ես ոչ մէկ բանով չեմ կրնար օգնել քեզ, ինձմէն քեզի օգուտ մը չի կայ. ի՞նչ կըսպասես եւ ի՞նչ կ՚ուզես ինձմէ»։ «Ես չեմ ուզեր քեզի բեռ ըլլալ, ըսի անոր, ես առուտուրի մէջ քաջափորձ եմ, պատուական ձեռագիր ունիմ, վաճառքի պէտք եղած բաներու մէջ շատ փորձառու եմ, կը ցանկամ վաճառականի մը քով ծառայութեան մտնելու՝ եւ կը յուսամ որ կ՚ընդունի զիս։ Բայց հիմա անօթութենէս պիտի մեռնիմ, կ՚աղաչեմ քիչ մը ողորմութիւն տուր, որպէս զի կարենամ քանի մը օր եւս ապրիլ. հիմակուան քեզմէ խնդրածս այս է»։ Պարոնը ձեռքը գրպանը տարաւ, որպէս զի քանի մը դրամ հանէ, Մ՝խլեդի այս տեսնելով՝ ըսաւ. «Այդպիսի աղտոտ ու պատռտած լաթերով բոլոր թշուառականներուն հոգը քեզի՞ են տուեր, քո՞ւ ինչուդ պէտք. թէ որ մէկուն տաս՝ հարիւրաւորներ կուգան, որով միշտ մեր դռները ատանկ խեղճերէն պիտի պաշարուի։ Ըսէ ասոր, թող դարձեալ Հնդկաստան դառնայ. կամ թող երթայ ուրիշ տեղ շահի իր ապրուստը»։ Կարող ես մակաբերել հիմա, տենչալի քոյր իմ, թէ ինչպէս եւ որչափ վիրաւորեցին զիս եւ սիրտս կտորեցին այս ծանր եւ անողորմ խօսքերը։ Այսու ամենայնիւ ես համբերեցի եւ լռեցի։ Կը յուսայի որ եղբայրդ զիս շատ աղէկ ճանչնալուն համար իր անխիղճ կնոջմէն աւելի քիչ անգութ կ՚ըլլայ, եւ կըսպասէի տեսնել իր տալիք ողորմութիւնը, բայց նա եւս ինձ ողորմութիւն մը տալու համար իր լրած պատրաստութեան վրայ զղջալով՝ ըսաւ ինձ. «Յիրաւի քիչ մնաց որ անվայել գթութենէ մը պիտի յաղթուէի, հեռացիր այս տեղէն՝ որովհետեւ դու այս տեղ գործ չունիս»։ Այսպէս ըսելով՝ անգթաբար կռնակը դարձուց, եւ ստիպեց զիս այն տեղէն հեռանալ։ Իսկ ես թէպէտ չափազանց սրտմտութենէս կրակ կը կտրէի, բայց զիս զսպելով զանց ըրի, յարմար ժամանակի մը թողլ՝ որ երկուքին ալ սիրտը խըղխղցնեմ։ Ասկէ ետքը անմիջապէս քու վրայով հարց փորձ ըրի, եւ հոս մնած ատենս կը խոստովանիմ՝ որ իմ բարկութիւնս ալ աւելի սաստկացաւ։ Վասն զի ինչպէս կարելի է, որ պերճ՝ շքեղ եւ հոյակապ ապարաններու մէջ բնակող իշխան մը ձգէ իր քոյրը բանտի նման անարգ բնակարանի մը մէջ՝ ուր նստելով հալի ու մաշի։ Չը՞ պատկառիր արդեօք նա իր ունեցած փառաւոր վիճակէն։

«Եղբայրս՝ պատասխանեց Սիմնէի, կու-

զէր որ զիս իրեն բարեկամներուն մէկուն հետ ամուսնացնէ, որուն խօսք ալ տուած էր. բայց մայրս հակառակեցաւ ասոր, իսկ ես աւելի լաւ համարեցի մօրս հնազանդիլ. այս պատճառաւ եղբայրս սկսաւ իւր առ իս ունեցած սէրը օր ըստ օրէ նուազեցնել: Մօրս խորհրդով ընտրած փեսայէս նա չէր ախորժեր. և իւր աստիճանին յարմար արժանաւոր չը սեպեց զայն: Ասոր համար աւելի դժարը գալով՝ բնաւ երեսս տեսնել չուզեց: Շատ տարաբաղդ գտնուեցաւ այրս ալ, իւր բոլոր ունեցածը անարդար վճռով մը կորսնցուց՝ և սակաւ ժամանակէն յետոյ մեռաւ: Բայց ո՜հ, իմ ամուսնոյս մահն ալ չը կրցաւ հաշտեցնել եղբայրս ինձ հետ, որովհետեւ՝ կըսէր, դու քու ձեռքովդ այս թշուառութիւնը գլխուդ բերիր, և որովհետեւ դու քու կամքդ խնդրեցիր զայն՝ ուստի պէտք է որ համբերես ու դիմանաս: Այսպէս իւր խստասրտութեամբ յամառած բոլորովին զիս երեսէ ձգեց»:

«Ամօ՛թ իրեն փառութեանը, գոչեց Վարներ, այսուհետեւ անոր անարդաբար զիս՝ իւր ազգականը մերժելուն վրայ չեմ զարմանար, քանի որ նա քեզ նման նազելի ու պատուելի իւր քոյրը կ'ուրանայ. բայց նա իւր խստասրտութեան և անողորմութեան պատիժը պիտի կրէ, կուզեմ՝ որ նա իւր վայրենի և անգութ վարմունքովը կորուսածին արժէքը

աղէկ ճանչնայ, և կը կամիմ՝ որ նախանձով ու կատաղութեամբ հալի ու մաշի: Ահա այս ժամէն սկսեալ՝ իմ բոլոր հարստութիւնս ու ճոխութիւնս քուկդ են. սակայն այս պայմանաւ՝ որ եղբօրդ ստակ մ'անգամ չը պիտի խնայ: Միանէի՝ որուն հետ թէեւ իւր եղբայրը խստիւ և չարաչար վարուած էր, սակայն և այնպէս նա բնաւ չէր նուազեցուցած եղբօր վրայ ունեցած իւր անկեղծ սէրը, ուստի նա իւր առաքինութեամբ և քաղցրասրտութեամբը կը ջանար իրեն ծերունի հօրաքեռորդին այս առաջադրութենէն դարձընել՝ և այդ մտքէն փոխել, բայց կարելի չեղաւ: «Դու մանաւանդ, ըսաւ նա, աւելի մեծ բան մը ընել կուզեմ. թէ որ պատիժին բոլոր ծանրութիւնը մէկէն չ'զգայ՝ ներգործութիւն չընէր: Հաւասիկ ես կ'երթամ այս տեղ գտնուած փառաւոր պալատներէն քեզ համար հոյակապ բնակարան մը պատրաստելու՝ և կարելի եղածին չափ պիտի աշխատիմ որ անոր տանը մօտ ըլլայ, որով աւելի ուրախ պիտի ըլլամ. կը կամիմ՝ որ զանազան տեսակ պատուականագոյն կահ կարասեօք զարդարուի պալատդ. կուզեմ՝ որ բազմաթիւ սպասաւորներու խումբ մը քեզ ծառայելու սահմանուի. կուզեմ որ շքեղ հանդերձներով՝ պատուական մարգարիտներով և ականակուռ զարդերով՝ փառաւոր

կառքերով և ուրիշ ամէն շքեղազարդ Թանկագին բաներով պերճանաս, այնպէս որ Լոնտոնի կիներէն բնաւ մէկը քեզ չի կրնայ հաւասարիլ։ Այն ժամանակ Թող տեսնէ չարագործը քու բարձրացած աստիճանիդ փառաւորութիւնը՝ զոր քեզի հետ պիտի բաժնէր, և որուն ինքն ալ մասնակից պիտի լինէր, բայց անարժան գտնուեցաւ։ Նորա գոռոզ և ամբարտաւան կինը Թող տեսնէ, որ իւր չի հաւնած այն հին լաթերով իր վանուած մարդը՝ զքեզ ի՛նչ փառքի և մեծութեան կրցաւ հասցընել, և այն ամէն շքեղազարդ ու մեծավայելուչ դիպքը տեսնելով՝ նախանձէն իրենց ակռաները պիտի կրճտեն, ես ալ իրենց կատաղութիւնն ու ամօթահար ըլլալը տեսնելով պիտի ծիծաղիմ անոնց վրայ։ Այս ամէն բաները անթերի կատարեց Վարնէր. քիչ ժամանակէն յետոյ պարոն Ռիտուլֆին տանը մօտ այն խոստացեալ շքեղ և հոյակապ պալատը գտնալով՝ մեծագին կահ կարասեօք զարդարեց խիստ վայելուչ կերպիւ. այս ամէն պատրաստութիւնները մեծ ծախքով կատարելէն վերջը՝ փառաւոր յաղթական հանդիսիւ պալատը բերել տուաւ զՍխանէլին։ Արդ՝ այս տեղ կարելի չէ գրի առնել և նկարագրել, Թէ ի՛նչպէս ամօթահար պապանձեցաւ և ապշեցաւ մնաց պարոն Ռիտուլփ, եւս առաւել այն խրոխտ փքացած

իւր ամբարտաւան Միլեդի կինը. տեսնելու բան էր այս միջոցին Թէ իրենք իրենց մէջ ո՜րչափ կը քամահրէին, կը մեղադրէին, կը դատապարտէին իրենց այն ամբարտաւանութիւնն ու խստասրտութիւնը, բայց ի՞նչ օգուտ ալ ժամանակն անցած էր։

Այսպէս ահա Սխանէլ իւր կրած անչափ և անհնարին վշտերէն ու ձախորդութիւններէն ետքը, վերջապէս իւր անզուգական բարեմասնութեամբը արժանացաւ ուրախ և երջանիկ կեանք վարելու. այնուհետեւ ամէնուն ալ սիրելի և մեծարելի եղաւ. յանձնեց նա իւր աղջիկունքը ուսուցիչներու հրահանգուելու և դաստիարակելու համար, որն որ իրեն ախորժելի և ամենամեծ հոգն էր. վարձատրեց նաեւս իւր սիրելի ու հաւատարիմ Պատտի աղախինը իրեն արժանեացը համեմատ. որն որ քանի մը տարի ալ քովը մնալէն ոչ Թէ իբրեւ աղախին՝ այլ իբրեւ ընկեր, շատ մը ճոխ և առատ օժիտով իւր կամօքն ընտրած մէկ գեղեցիկ և առաքինութեամբ ճոխացած ու զարգացած երիտասարդի մը հետ ամուսնացաւ, որով Պատտի եւս երջանկացուց իւր կենաց օրերը։

Ազնիւ ընթերցող, ի՛նչ կարող եմ ըսել այս պատմութեան վրայ, ի՛նչ յորդոր կարդամ քեզ, չէ՞ որ առաքինութիւնը ահա ինքնին

պայծառ կը փայլի, և իւր բոլոր գեղեցկութեամբը կերևի այս պատմութեան մէջ. կաղաչեմ, ուշադրութեամբ կարդա, և մինչ այն ատեն դու ինքնին չե՞ս զարմանար Աննէի անկեղծ ուղղեսիրութեան, համբերութեան, ողջախոհութեան և բարեսրտութեան վրայ: Չե՞ս զմայլիր Պատտի աղախնոյն հաւատարմութեան, անկրասիրութեան և գորովալիր սրտին քաղցր ու կարեկից զգացման վրայ: Ճանձական ուրախութիւն մը չե՞ս զգար պարոն Վարնէրի ըրած մեծանձնութեան և առատասրտութեան վրայ: Ո՛հ, և մինչ չե՞ս սոսկար անգութ և մարդատեաց ագահ Բիդուլֆին վայրենի գործքերէն. բնական արհամարհանք մը չե՞ս ունենար անոր ամբարտաւան և չարասիրտ կնոջ Միլեդիի վրայ: Գիտեմ, որ եթէ խորհրդածութեամբ կարդաս՝ կ'զգածուիս և կ'զգաս այս ամէնը, և հուսկ ապա կը հիանաս Աստուծոյ մարդասիրութեան և նախախնամական գթութեան վրայ, որ արդարութեամբ կը վարձատրէ բարին՝ և կը պատժէ չարը: Ուրեմն ազնիւ ընթերցող, աշխատէ բնութիւնդ կարգաւորել, մոլութենէ փախիր, և բարի սիրտ ունեցիր. վասնզի առաքինութիւնը անվարձ չի մնար, և մոլութիւնն ալ միշտ իւր պատիժը իր հետն ունի:

Թ.

Ֆրետերիկոս Լանուկի

ԵՐԲԵՄՆ անմեղութիւնը 'ի զուր կը բռնաբարուի և կը հալածուի, սակայն շատ չանցնիր՝ ևահա չարասիրտն անիրաւութեամբ լարած որոգայթը յերեւան գալով կը խայտառակուի. և 'ի նախատինս իւր չարութեան՝ ճշմարտութիւնն ու արդարութիւնը բարձրացած կը տեսնէ ակներեւ, որով չարախօսն ու ամբաստանը չարաչար յաղթահարուելով սեւերես կը մնան աշխարհի առջեւ:

Ահաւասիկ օրինակ մը:

Մ՚ինչդեռ Պիզա եւ Փլորենտիա երկու տարբեր հասարակապետութիւններ կը կազմէին, և երկուքն ալ Գուելֆաց ու Գիբելինաց քաղաքական ներքին շփոթմանց պատճառաւ անդադար յուզմունքէ և վրդովմունքէ ազատ չէին, և ահա Փլորենտիայի մէջ հետեւեալ դէպքը տեղի ունեցաւ:

Գուելֆաց կուսակից և ջատագով Անտոնիոս Բանդինելը՝ առանձին ատելութեամբ Գիբելինաց կողմնակից Ֆրետերիկոս Լանուկին դէմ ոխերիմ թշնամութիւն ունեցաւ: Օր մը քաղաքէն դուրս անոր հանդիպելով, որ միայնակ Արնոս գետին եզերքը ժուռ կուգար, սկսաւ հեռուէն երգիծական ու թըշ-

նամական խօսքերով գրգռել զանի իր դէմ, և Նախանձու կիզքով վառուած սուրը պատեննէն հանելով՝ յարձակեցաւ վրան. Մանուկն իր անձը պաշտպանելու համար կեցած տեղը արձանացաւ մնաց, եւ սկսաւ Թշնամւոյն դէմ դնել։ Երկար մենամարտութենէ ետքը՝ երբ Անտոնիօս ետ քաշուելու ատեն գլորելով գետինը ինկաւ, խոյն հասաւ Ֆրետերիկոս՝ և իր սուրը անոր պարանոցին վրայ դնելով ըսաւ. «Այժմ չարժիս՝ կամ ընդդիմութեան ցոյցեր ընես, չարաչար կըսպաննեմ զքեզ։ Արդէն դու կը տեսնես ակներեւ, որ կեանքդ բոլորովին ձեռքս է. այսու ամենայնիւ դարձեալ բոլորով սրտիւ կը շնորհեմ քեզ քու կեանքդ, սա պայմանաւ՝ որ այսուհետեւ ինձ դէմ ունեցած ամեն անձնական ատելութիւններդ մէկդի Թողով մոռնաս ամեն բան։ Անտոնիօս Բանդինել այս նեղ վիճակին մէջ ամեն կերպ խոստմունք ըրաւ, բայց վեհանձն և մեծասիրտ Մանուկին քիչ մը հեռացածին պէս՝ յանկարծ վեր ցատկելով խենԹի պէս ու ժգնակի սուրը վրան նետեց, որ մարմնոյն մէջ Թափանցելով մեռցնէ. իսկ Մանուկին հազիւ մէկդի քաշուելով կարողացաւ պարապ հանել անոր այդ վատ նպատակը. յետոյ ցասմամբ վառուած բորբոքած՝ «Սրբին՝ սիրտ դու, վատ և նենգաւոր, ինչպէս որ ալ ըլլայ՝ մահդ կուզես, և

եւ ահա հիմա կը շնորհեմ քեզ զայն, սատկէ՛ր»։ ըսաւ՝ ու սուրը չէշտակի կուրծքը մըխելով, կռնկի վրայ գետինը փռեց։

Յետոյ՝ Ֆրետերիկոս Մանուկին Պիզայի մէջ բարեկամի մը քով ապաւինելով, իր անձը բամբասանաց չ'ենԹարկելու համար՝ հարկ եղածը անյապաղ գրեց ու Փլորենտիա ղրկեց։ Բայց դժբաղդաբար նենգաւոր Բանդինելը՝ զոր Մանուկին վաղուց մեռած կը կարծէր, տակաւին կենդանի էր։ Սաս որում մի քանի գիւղացիք տեսնելով զինքը այդ Թշուառութեան մէջ՝ իրենց հետ Փլորենտիա տարած եւ շուտով դարմանած էին, վասնզի Թէպէտ կարեւէր խոցուած էր, սակայն վէրքը մահաբեր չէր։ Արդ՝ այս անօրէնը նախկին ատելութեամբն ու վերջին ամօԹահար պարտութեան քէնովը սրտմտած և կատաղի շուն մը դարձած՝ սկսաւ խել մը սայօդ զրպարտութիւններ իրարու վրայ բարդել, և վկայներու պակասութենէն յարմար աւիԹ գտնալով, խիղճը բոլորովին քնացուցած՝ կ'ըսէր աներկիւղ. «Մանուկին դաւաճանութեամբ վրաս յարձակեցաւ, և նենգուԹեամբ զիս զարկաւ»։ Այս կերպով կըցաւ բոլոր Գուելֆեանները խռովել՝ ու անոր դէմ զինել, և ողորմելին Ֆրետերիկոս Թէեւ անմեղ՝ այլ աւաղ, մահու պարտական դատուեցաւ, և բոլոր ունեցածը անխրաւու-

թեամբ յարքունիս գրաւեցաւ: Այս դառն աղէտից մէջ իւր միակ սփոփանքն ու մխիթարութիւնը՝ Պելֆիոր բարեկամն էր, որ նորա պաշտպանութեան համար ամէն ջանք և հնար 'ի գործ դնելէն յետոյ՝ Պիզա քաղաքին մէջ իւր ունեցած տունը մշտնջենաւոր ապաստանարան որոշեց անոր ապահովութեան համար. թէեւ քաջ գիտէր, թէ ինչ տոկալի վտանգներ կը սպառնար իրեն՝ իւր այն վտանգաբեր բայց առաքինական գործը: Եւ յիրաւի սոյն այս տունը քիչ ժամանակէն իրեն համար արեան և սգոյ տուն պիտի ըլլար, և եղաւ ալ:

Այն օթեւանը՝ ուր Մանուէլին կը ննջէր, իւր Պելֆիոր բարեկամին սենեկէն բաժնուած էր ուրիշ սենեկով մը՝ որ երկուքին մէջ տեղն էր, և իւր մուտքը երկուքին ալ կը հաղորդէր: Գիշեր մը երբ կը ննջէր Ֆրետերիկոս՝ յանկարծ կըսթափի քունէն դղրդիւն մը լսելով, որ կարծէր թէ միջին սենեկէն կուգար. ուստի իւր վերմակին ներքեւէն կը հանէ գըլուխը՝ և մտադրութեամբ ականջ կը դնէ, բայց ալ չէր լսուեր այն դղրդիւնը, ուստի կարծելով՝ թէ առաջօք երեւակայական ցնորք մ'էր այն, դարձեալ մտաւ անկողինը. բայց քանի մի վայրկեան յետոյ՝ լալու ակար և խեղդուկ ձայն մը լսեց, որ կը թուէր թէ բարեկամին սենեկէն կուգար: Ասոր վրայ

իսկոյն անկողինէն վեր ցատկեց, և մտադրութեամբ ականջ դնելով՝ վերստին ողբալու մեղմ ձայն մը լսեց: Այն ատեն խռոված՝ սիրտը տակն ու վրայ եղած իւր բարեկամին սենեակը վազեց, և մի քանի անգամ ձայն տուաւ, բայց պատասխան չառաւ: Անկողնոյն մերձեցաւ՝ և սկսաւ խթել, բայց Պելֆիոր երբեք չարթնցաւ: Իսկ Մանուէլին կերպ կերպ զարհուրանօք յուզուած և շփոթած՝ դարձաւ կրկին իւր սենեակը, և իսկոյն ճրագ վառելով՝ դարձեալ բարեկամին սենեակը գնաց. արտասնօք: Այլ աւա՜ղ, ինչ զարմանք և ինչ սարսափելի երկիւղ պաշարեց զինքը, երբ տեսաւ իւր ամենահաւատարիմ բարեկամը սրով խողխողուած՝ արեան գետի մէջ կը լողար ու վերջին շունչը կուտար: Նա երբ ականատես եղաւ այս աղիողորմ և սարսափելի տեսարանիս, ահագին ճիչ մը բարձրացնելով՝ ճրագը ձեռքէն ինկաւ, և ինքն եւս Պելֆիորի վրայ երկնցած՝ մարեցաւ մնաց. ինչ սրտառուչ, և միանգամայն զարհուրելի տեսարան:

Այս միջոցին ահա սպասաւորները կ'արթըննան՝ և մեկէն դէպի հոն կը վազեն. կը մտնան սենեակը, կը տեսնեն այս զարհուրելի տեսիլը, ուր կը գտնեն իրենց տէրը ըսպաննուած, Մանուէլին արեամբ շաղախուած՝ և Պելֆիորին վրայ ինկած գունատեալ և չընչապառ, իսկ ճրագը ոտքերուն քով մարած

ձգուած՝ որուն պատրոյգը տակաւին կը ծը-
խար։ Այս սոսկալի տեսարանին վրայ՝ առ հա-
սարակ ուժգնակի ճիչ կը բարձրացնեն, որոց
ձայնէն Մանուկին զգաստանալով՝ շուարած
կ'ելայ. և ահագին ձայնով կը գոչէ. "Ո՞ւր է այն
եղեռնաւորը, ո՞ւր այն նենգաւոր արիւնա-
հեղը, ցուցէք ինձ, կուզեմ այս սուրը իւր
սիրտը մխել։ Աւա՜ղ, բարեկամ, եղո՜ւկ, Պել-
ֆիօր, ո՜հ, ինչպէս աղիողորմ և սրտաճմլիկ
ողբերով աւաղեմ, լամ և ողբամ զքեզ, ո՜վ
մտերիմդ իմ," ըսելով՝ անդադար աղի արտա-
սուաց կայլակներ կը հոսէր իւր աչքերէն։
Իսկ սպասաւորները զարհուրած՝ ահ 'ի բե-
րան արձանացած մնացին, և բնաւ մէկը կա-
րող չէր բան մը խօսիլ կամ խորհիլ երբէք.
Նոքա ամէնքն ալ իրենց աչքերը երբեմն Պել-
ֆիօրին և երբեմն Մանուկին վրայ կը յառէ-
ին, և կ'անգիտանային թէ ինչ ըսեն կամ ինչ
չըսեն. այսպէս ապշած շուարած գրեթէ մին-
չեւ առաւօտ լռութեամբ անցուցին բոլոր
գիշերը։

Հետեւեալ առաւօտ՝ այս աղէտալի պա-
տահման գոյժը իսկոյն քաղաքին ամէն կողմը
տարածեցաւ. և անյապաղ բռնեցին սպանեալ
Պելֆիօրի տան մէջ գտնուողներուն ամէնն ալ,
որոց հետ էր նաեւ խեղճ Մանուկին։ Ո՞վ կա-
րող է պատմել արդեօք իւր դառն ու չափա-
զանց վիշտը, երբ ինքզինքը կը տեսնէր այն ան-

ձանց կարգը՝ որոց վրայ միայն կարելի էր կաս-
կածել այն սոսկալի ոճիրը։ Բայց սակայն դըժ-
բաղդաբար նոյն սարսափելի եղեռնագործու-
թեան ամենակերպ նշանները՝ իւր վրայ պար-
զապէս կ'երեւային. իւր գտնուած տեղը՝ իւր
վրայի արիւնը՝ երեսին գունատութիւնն ու
այլայլութիւնը՝ նոր մարած ճրագը՝ որ տախ-
ցըքով էր, Փլորենտիայի մէջ լսած նենգու-
թեան սուտ ու չար համբաւը՝ այս ամէնը
յայտնի ապացոյցներ էին, որովք այն սոսկա-
լի սպանութեան հեղինակ ինքն ըլլալուն վրայ
ալ ամենեւին կասկածանաց տեղի չէր մնար։
Մանուկին քաջ իմանալով՝ որ դատաւորները
իւր վրայ միայն կը կասկածին, ալ կրակ դար-
ձաւ և սիրտը բորբոքած՝ "Այո՛, կըսէր նա, ես
եմ այդ ամենահաւատարիմ և անձնանուէր
բարեկամիս մահուան պատճառը՝ որ միակ
ապաւէնս էր աշխարհի վրայ, և բուն իսկ ի-
րեն համար պարտական էի բոլորովին զոհել
տառապեալ կենացս մնացորդը, որ վաղուց
ատելի է ինձ արդէն։ Ո՛հ, ես սպաննեմ զայն
որ հոգւոյս հատորն էր, որ իմ անձէս աւելի
սիրելի էր ինձ, և որոյ համար ամենայնիւ
պատրաստ էի թափել բոլոր արեանս մինչեւ
յետին կաթիլը։ Ես բարբարոսաբար սպան-
նեցի զայն. ես ինքնին գազանաբար յարձա-
կելով վրան՝ խողխողեցի զինքը սրով. և ինչ
պէս, ինչ եղանակաւ, գիշեր ժամանակ՝ ուր

մթութիւնը կոխած է, թանձր քնոյ մէջ թաղուած ատեն. ասկէ զատ ի՞նչպէս կարելի է որ իւր բարեկամութեան՝ հիւրընկալութեան և պաշտպանութեան ներքեւ եղած ատենս այդ անգթութիւնը գործեմ: Ո՛հ, կարելի՞ է երբէք այս կերպ անլուր վայրագութիւն մը, այս ատրիճան ծայրայեղ վատութիւն մը, կատաղութիւն մը, կամ լաւ եւս է՝ բարբարոսութիւն մը, տարօրինակ բան: Հնա՞ր է արդեօք կասկածել իմ վերայ այս ճիւղական գործը, եղեռնը. աւա՜ղ, աւա՜ղ երիցս թշուառականիս: Միթէ այս ատրիճա՞ն ինկայ ես ուրեմն նուաստութեան մէջ, ամարդութեան այդ անհնարին խորութիւնը չափեցի՞ ես իմ ձեռօք. ափսո՜ս, բիւրիցս ափսո՜ս ինձ, ո՜ թշուառական: Այլ դու՝ Աստուած իմ արդար, Աստուած ահաւոր, դու ուրեմն՝ բաւական փորձած չե՞ս զիս տակաւին»: Այս բաւ ու խորին թախծութեան մէջ ընկղմեցաւ:

Այլ սակայն անհնար էր ամենեւին փարատել իւր վրայ եղած կասկածները, 'ի զո՜ւր էին այս ամեն արտասուց ողբերն ու աղաղակները, ըստ որում նշանները երբէք չէին փճանար, այլ ընդհակառակն ալ աւելի կը զօրանային՝ և կարծես զինքը մատնանիշ կը ցուցընէին, իբր բուն իսկ հեղինակ՝ կատարուած եղեռնագործութեան: Այսու ամենայնիւ թէ-

պէտ դատաւորաց մէջ գտնուեցաւ անհատ մը, որ 'ի գործոյ առիթեալ՝ մանաւանդ թէ անոր խօսքերէն շարժեալ՝ համարձակեցաւ ամենուն առջեւ ընդ երկար ջատագովել զինքը և պաշտպանել. բայց մեծաւ մասամբ՝ իւր ամեն ողբերն ու հեծեծանքները ամենեւին բանի տեղ չը դրին, այդ ամենը կեղծաւորութիւն և խղճի խայթէն յառաջ եկած կը սեպէին: Նոքա կըսէին. «Ահա յայտ յանդիման՝ աչօք բացօք իւր վրայ կը տեսնենք գործուած ոճրագործութեան յայտնի ապացոյցները, մանաւանդ Փլորենտիայի մէջ կատարուած ոճիրը՝ ալ աւելի կը հաստատէ մեր կարծիքը. նա արժանի է արդարեւ օրինաց խստութեանը և անօրինած պատժոյն, որպէս զի համայն աշխարհ իմանայ թէ ոճրագործը անպատիժ չը մնար. և որովհետեւ բոլոր ժողովուրդը ասոր կ'անիծանէ, ուստի օրէնք չէ ամենեւին դանդաղիլ՝ երբէք վայրկեան մ' անգամ»: Այսպէս թշուառ Լանուկին 'ի մահ դատապարտուեցաւ՝ գրեթէ բոլոր ատեանին համահաճութեամբ:

Մինչդեռ այս խեղճ ողորմելին բանտին խորերը շղթայներու ծանրութենէն՝ դառն արցունք թափելով կուլար կ'ողբար, և անձամբ անձին կ'աւաղէր գոչելով. «Ուրեմն ես ամբաստանուեցայ իբր հեղինակ նոյն ոճրագործութեան, ես եղայ այն նենգաւոր դա-

ւաճանը. և դու Աստուած իմ ամենագէտ և ամենարդար, կ'ընդունիս այս անիրաւ դատաստանը. „ այսպէս դառն հեկեկանօք 'ի խորոց սրտէ հառաչած ատեն՝ ահա ներկայացան մի քանի անձինք իւր դատապարտութեան սակալը լուրը իրեն հաղորդելու : Երբոր նա իւր մահուան դատավճիռը կարդաց՝ յիմարեցաւ, խելքը միտքը կորսնցուց և կիսամեռ անշունչ մնաց մի քանի րոպէ. սակաւիկ մի յետոյ սթափեցաւ խոր թմրութենէն, այլ կրկին անշնչացաւ : Այսպիսի դառն ցաւոց և անհնարին վշտաց մէջ անցուց ամբողջ գիշերը : Իւր շուրջը կեցողները անդադար կուլային ու կ'ափսոսային զինքը, և 'ի զուր կը ջանային սփոփել զանի կերպ կերպ մխիթարական խօսքերով : Բայց ոչ թէ իւր մահուան դառն յիշատակն էր՝ որով կը զարհուրէր նա, այլ միմիայն կատարուած սարսափելի ոճրագործութեան իբր բուն հեղինակ համարուելուն սակալը մտածութիւնը. այս էր միայն՝ որ դըժբաղդ Լանուկին սիրտը կը տոչորէր սաստկապէս : Ըստ որում՝ նա արդէն իւր մտերիմ բարեկամը կորուսանելէն յետոյ՝ կենդանի մեռեալ կը սեպէր ինքզինքը, և գիտէր որ ալ անկէ ետքը՝ մահն է միայն իւր մխիթարութիւնը :

Սակայն վերջապէս իւր լքեալ և բեկեալ սիրտը զօրացնելու և մխիթարելու համար՝

բարեպաշտական զգացմանց տեղի տուաւ : Երբ իւր վրդովեալ հոգին զարհուրելի ալեկոծութիւններէն հանդարտեցաւ, քաղցրնայուած մը ձգեց Յիսուսի խաչելութեանը վրայ՝ զոր իւր առջեւը բերին դրին : Բաւական ժամանակ՝ սուրբ նշանին վրայ խորհըրդածելով անշարժ մնաց, և քանի որ խորունկ մտածութեանց մէջ ընկղմած էր, յանկարծ այնպէս կարծեց՝ որ առաջիկայ քառաթեւ սուրբ խաչին վրայ բեւեռեալ Յիսուս փըրկիչը քաղցր և սիրով ու կարեկից ձայնով մը այսպէս կըսէր իւր հոգւոյն. "Ես՝ քեզմէ աւելի անմեղ և արդար էի, սակայն տե՛ս թէ ի՛նչ հասուցին գլխս. մտածէ՛ միանգամ, որ ես՝ արարիչս այդ խաչափայտին վրայ իբր չարագործ բեւեռեցայ, սուրբ և անբիծ արիւնըս երկրի վրայ թափեցի, որպէս զի անմեղութիւնն ու ճշմարտութիւնը զօրանայ. ինձ նայէ՛ և զօրացիր. թուլնալ պէտք չէ „ : Այս երկնաւոր ձայնի ազդմամբ՝ յանկարծ ոտքի վրայ կելնէ, կը գրկէ փրկագործ սուրբ նշանը՝ և կուրծքին վրայ կաթոգին սեղմելով՝ "Աստուած իմ, կը գոչէ, Աստուած իմ, դու յաղթեցիր, արդ՝ ներէ՛, թո՛ղ ինձ իմ յիմարական շարժմունքս. ալ այսուհետեւ չունիմ և պիտի չունենամ երկիւղ՝ ոչ մահուանէ՝ ոչ կախաղանէ և ոչ ուրիշ տանջանքէ, թող յանիրաւի վատ համբաւ ալ ունենամ : Այո՛, Տէր իմ,

կեանցս մէջ քու օրինակդ և նմանութիւնը չը կրեցի իմ վերայ, բայց կը ցնծամ ու կը բերկրիմ, որ գոնէ մահուան ժամուս՝ քեզ հետեւող պիտի ըլլամ։ Իսկ՝ սիրելիդ իմ Պելֆիոր, անիրաւ բաղդը՝ թէեւ չկամեցաւ, որ անգութ և անողորմ սպանողիդ ձեռքէն ըզքեզ փրկէի, այլ ահա բոլորովին սրտիւ կը փափագիմ գէթ աճապարել և գոռալով գըրկել զքեզ՝ սեղմելով կուրծքիս մէջ խանդակաթ սիրով. ահա ցանկալիդ Պելֆիոր, ահա քու մտերիմդ քեզ կը փութայ։ Ո՛ն, մի՛ յապաղէք, փութացուցէք, փութացուցէք ինձ տենչալի մահս, որուն կամօք կը յօժարիմ և կը ցանկամ»։ Այս ըսելու միջոցին՝ արտասուօք լցան իր աչքերը, որով և իր շրջակայից սիրտը այն աստիճան շարժեց՝ որ չկարենալով զըսպել իրենց արցունքը, սկսեցին լալ դառնագին և ողբալ հեկեկանօք, որով սրտառուչ տեսարան մը կը կազմէին։ Այն վայրկենին՝ իւր անմեղութեան վրայ երկմտող բնաւ մէկը չը կար, ամէն ոք իւր ազատութիւնը կը խնդրէր, և ամէն մարդ իրեն երաշխաւոր ըլլալ կը փափաքէր. ամէն կողմէն կը քրթմնջէին և ահագին շշուկներ կը հանէին ըսելով։ «Հարկ անհրաժեշտ է, որ երկարաձգի իւր դատապարտութեան վճռոյն գործադրութիւնը. այդչափ աճապարել չուզէր, նոր ՚ի նորոյ տեղեկութիւններ պէտք է վնտռել՝ և կրկին կր-

կին քննութիւններ ընել. թող ժամանակին երկարութիւնը յայտնէ ոճրագործութեան բուն հեղինակը, յուսալի է՝ որ Լանուկին անմեղ ըլլայ. միով բանիւ ուշացնելու՝ և աւելի նուրբ քննութեան և հետազօտութեան կարօտ է այս բանս»։

Շատերը արդէն հաստատապէս մտքերնին դրած էին՝ բողոք բառնալ խմբովին՝ և իրաւունք հայցել դատաւորներէն. այսպէս ամենքն ալ հասարակ կը ջանային մահուանէ փրկել զԼանուկի։ Նոյն պահուն՝ մինչդեռ այս խռովութիւնները կը կատարուէին, ահա աճապարանօք եկաւ հասաւ սուրհանդակ մը որ Ֆլորենտիայէն խրկուած էր Լանուկին անմեղութեան վրայ հասարակաց կարծիքը հաստատելու, որով ամբողջ Պիզայն խնդութեամբ և ուրախութեամբ լցուեցաւ։

Պելֆիորի արիւնարբուն սրիկայ մ'էր, զոր չարագործ Ռանգինելը խրկած էր զԼանուկի սրով սպանելու չար նպատակաւ։ Անորէնը՝ նոյն ողորմելւոյն վրայ ծանր ծանր զըրպարտութիւններ բարդելով՝ ունեցած ինչքերը յոքունս դրաւելը եւ յաւիտեանս տարագիր ընելը հերիք չը սեպելով՝ ուզեց բոլորովին կեանքէ ալ զրկել։ Այդ Ռանգինելը՝ մեծամեծ խոստմունքներ ընելով կը հրապուրէ արիւնահեղ մը՝ և կը համոզէ իւր դժոխային չար կամքը գլուխ հանելու։ Արև-

կան կուգայ Գիզա, և կը լրտեսէ Պելֆիորի տան ելքը և մուտքը՝ ուր կը գտնուէր նաեւ թշուառ Լանուկին. այս արիւնարբուն գաղտ մտնելով այն տունը՝ մինչեւ կէս գիշեր անկիւն մը կը պահուըտի. և մինչդեռ ամէն մարդ թանձր քնոյ մէջ կը խորդայ, ահա վեր կ'ելլէ յուշիկ յուշիկ, որպէս զի այն քստմնելի ոճիրը 'ի գործ դնէ։ Բայց փոխանակ Լանուկին սպաննելու, գիշերային մթութեան՝ այն սոսկալի պահուն շփոթելով՝ Պելֆիորի սենեակը կը մտնէ և զայն կը սպանէ։

Իր այս զարհուրելի եղեռնական գործը վճարելով՝ շուտ մը գիշերանց կը փախչի Գիզա քաղաքէն. և մինչ Փլորենտիա կը մերձենար, յանկարծ ուրիշ չարագործի մը կը հանդիպի՝ զոր անօրէն Բանդինելը ղրկած էր զինքը սպանելու, որպէս զի չըլլայ թէ վերջը իր նենգաւոր դաւաճանութիւնը յայտնուի։ Սակայն մոլի և գազանաբարոյ ճիւաղին սոյն այս ոճիրը՝ իր կորստեան պատճառ եղաւ, և ընդհակառակն Լանուկին ալ փրկութեանը առիթ։ Ըստ որում նոյն արիւնարբու սրիկայն՝ երկրորդ սրիկային հարուածէն մահաբեր վէրք մ'ընդունելով, յետին շունչը փչելու վայրկենին՝ յայտնեց, թէ՝ Գիզայի մէջ կատարուած սպանութիւնը Անտոնիօ Բանդինելլի հրամանաւ գործած է։ Այս առթիւ՝ այն սուրհանդակը արտորնօք Գիզա

եկաւ, որպէս զի ծանօթութիւն տայ անցած դէպքերուն վրայ։

Բոլոր քաղաքը հրճուեցաւ Ֆրետերիկոս Լանուկի փրկութեան համար. այլ քիչ մնաց որ սուրհանդակին այն բերկրառիթ լուրը՝ փոխանակ զանի առաջիկայ մահուանէն փրկելու՝ ընդհակառակն աւելի շուտ կեանքէ պիտի զրկէր։ Վասնզի երբ յանկարծակի իմացաւ նա իր անմեղութեան յայտնուիլը, չափազանց խնդութենէն ուշը գնաց և կիսամեռ գետին ինկաւ։ Բայց զանազան դեղերով քիչ քիչ զգաստացաւ, և մեծ փառքով բանտէն հանուելով՝ ազատ հրապարակեցաւ։ Իսկ անօրէն Բանդինելլին՝ ոչ թէ միայն խոստովանեցաւ այն սպանութիւնները՝ զորս ինքը հրամայած էր, այլեւ այն ամէն բարուրանքները՝ որովք անմեղ Լանուկին 'ի զուր տառապեցուցած էր. և ըստ արժանւոյն՝ կրեց նա իր ամէն եղեռնագործութեանց պատուհասները։ Իսկ Լանուկի՝ մեծապատիւ հրովարտակաւ Գիզա դարձաւ, և գրեթէ փառաւոր յաղթանակի հանդիսով մը ամենէն ընդունելութիւն գտաւ. նաեւ իր յարքունիս գրաւուած ընչից և ստացուածոց վերստին տէր եղաւ, և ընդ նմին Բանդինելլի սեփական գոյքէն մաս մ'եւս աւելի ստացաւ։ Սակայն երբէք մխիթարութիւն չ'գտաւ Լանուկի իր Պելֆիոր բարեկամին մահուան

համար, որուն մէջ թէեւ ինքը անմեղ էր, բայց դարձեալ ապերջանիկ կը համարէր։

Տիեզերաց վրայ հսկող Նախախնամութիւնը ամէն ժամանակ յայտնած ու խոստովանած է մթութեան մէջ գործուած գաղտնի չարութիւնները. ամէն չարագործ չարունակ իրենց չարեաց պատիժն ընդունած են թէ բարոյապէս և թէ նիւթապէս. թող արտաքին հասարակաց և օրինաց դատաստաններէն կրած անարգանքը՝ հակակրութիւնը՝ դատապարտութիւնն ու պատիժը. նոյն իսկ ինքը իր ներքին անողոք դատաւորէն՝ խղճի սայրասուր խայթերէն չարունակ կը խոցուի։ Հապա ո՞ւր թողունք երկիւղը, տագնապը, վրդովմունքը եւ սրտի անհանգիստ խռովութիւնը, որոնք ամէն վայրկեան չարաչար կը տանջուի, ե՛ւ վերջը կամ ցաւերու մէջ հալումաշ կըլլայ, կամ անձնասպանութեամբ կը կորսուի, և կամ օրինաց արդարութեանը մատնուելով բանտերու մէջ և կախաղաններու վրայ իր չարագործ կեանքը կը վճարէ. իր եռեւէն անարգութիւն և անպատիւ նախատինք ու պարսաւ թողելով՝ անիծիւք կը յիշուի իր չար անունը։ Ուրեմն որչափ զգուշանալ պէտք են ամէն մարդիկ, քանի որ չը յայտնուած ծածուկ բան մը չը կայ, և քանի որ արդարին ու անմեղին սիր-

տը միշտ մխիթարուած է. նոյն իսկ անիրաւ դատապարտութեան մէջ անգամ ներքին զուարթութիւն մը և հոգւոյ անխռով խաղաղութիւն մը կ'զգայ. մանաւանդ այն դատապարտութեան դառն միջոցին մէջ բարեպաշտ զգացումները՝ անմեղին հոգին կը զօրացնեն, իսկ չարագործին համար այս ալ տանջանք մ'է, քանզի կամ բնաւ չ'զգար, և կամ թէ զգայ՝ այն զգացմունքներէն իսկ կը յանդիմանուի։ Արդ՝ աւելի յայտնի է, որ մարդ անմեղութե և արդարութեան համար սահմանուած է։ Վա՜յ անոնց, որ այս սահմանէն դուրս կ'ելլան, նոցա չարաչար պատուհասը պատրաստ է միշտ, թէ այս աշխարհիս և թէ հանդերձեալին մէջ։

Ծ.

Փիլիպպոս եւ Դոմինիկոս

Ասոնք Սալերնօ քաղաքին մօտ միեւնոյն գիւղի մէջ ծնած՝ և իրենց մանկութենէն 'ի վեր միասին մեծցած ըլլալով՝ զիրար շատ կը սիրէին։ Անոնց սիրոյ եռանդը այնչափ շատ էր՝ որ մէկը առանց միւսին չէր կարող մնալ, միշտ մեծ ջանքով զիրար կը փնտռէին, անոնց զբօսանքն ու պարապմունքը մէկ էր, և երկուքնին ալ միակամ և միախորհուրդ էին։ Փի-

լիպոս իւր տասն և մէկ տարեկան հասակին մէջ որբ մնալով՝ հայրը զինքը Դոմինիկոսի հօրը յանձնած էր, որն որ իբրեւ դաստիարակ իւր տունը ընդունած՝ և որդւոյն պէս մեծցուցած էր։ Ասոնք երկուքն ալ մէկ մէկու վրայ ունեցած նոյն սիրով և եռանդով մեծցան մինչեւ իրենց հասակի քսաներորդ տարին, և այս ատեն Փիլիպոսին անակնկալ բարեբաղդութիւն մը վրայ հասնելով՝ այս երկու սիրելիները մէկ մէկէ զատեց։

Ասիկա հօրեղբայր մը ունէր, որն որ երիտասարդական հասակին մէջ իւր տունէն ու երկրէն հեռացած շատ տեղեր պտըտելէն ետքը՝ Կատիկէ քաղաքին մէջ բնակութիւն հաստատած էր. ուր տեղ վաճառականի մը քով ծառայութեան մտնելով՝ իւր իմաստութեամբը անոր հետ այնքան մտերմացած էր, որ անոր միամօր դուստրը իրեն կնութեան առաւ։ Այս օրիորդը իր ծերունի հօր մահուանէն ետքը շատ չապրելով մեռաւ, և միայն որդի մը թողուց՝ որ նմանապէս քիչ ժամանակէն վախճանեցաւ։ Ուստի Փիլիպոսի հօրեղբայրը ասով մեծ հարստութեանց տէր եղաւ, և իր մեռնելէն ետքը բոլոր ժառանգութիւնը Փիլիպոսին մնաց. որովհետեւ միայն այն մնացեր էր վախճանելոյն մերձաւոր։

Երբոր այս լուրը Սալերնօ քաղաքը հասաւ, երկու բարեկամներ ալ հաւասար ու-

րախութեամբ լցուեցան, և Փիլիպոս Կատիկէ երթալ պատրաստուած ըլլալով, Դոմինիկոսէն բաժնուելուն համար շատ տրտմեցաւ։ Ասոր համար աղաչեց զայն՝ որ զինքը չը մոռնայ, և միշտ սիրոյ թուղթ գրելը պակաս չընէ, որպէս զի անով՝ կերպով մը հեռուէն ալ կարողանան կենցաղավարել։ Եւ իր կողմէն ալ խոստացաւ՝ որ ոչ մի սուրհանդակ առանց նամակի պիտի չը թողու, և թէ անոր քաղցր յիշատակը իւր սրտին մէջ անջինջ պիտի պահէ, և իր գործքը լմնցնելով ժառանգութիւնը առնելէն վերջը՝ նորէն Սալերնօ պիտի դառնար իր ինչքը անոր հետ բաժնելու համար։ Յիրաւի անիկա իր խոստումը քիչ մը ժամանակ պահեց, իրեն առ Դոմինիկոս գրած բոլոր թուղթերը սիրալիր խօսքերով լի էին, և երբ ինքը ասոնց պատասխանը ընդունելով Դոմինիկոսի առողջութիւնը կը լսէր՝ չափազանց ուրախութիւն մը կ՚զգար։ Եւ 'ի շնորհս անոր՝ Կատիկէ քաղաքը հասած ատեն իրեն Սալերնօ ունեցած փոքրիկ ժառանգութիւնը անոր թողուց, միտքը դնելով՝ որ ետքը անոր ուրիշ մեծ բաներ ալ պարգեւէ, բայց այս սիրոյ եռանդը չը կրցաւ երկար ատեն պահել։

Իր գործքերը կարգի դնելէն, և հօրեղբօր որդւոյն զանազան տեղեր ցրուած դրամագլուխները ժողվելէն, և բոլոր ժառանգու-

թեան տէր ըլլալէն յառաջ՝ երեք տարիէն աւելի Կատիկէի մէջ մնալ պարտաւորեցաւ ։ Առաջին տարին չը լրացած՝ արդէն նորա սիրոյ ջերմութիւնը ցրտանալ սկսած էր։ Երկրորդ տարին մէկ քանի անգամ միայն գրեց, և այն ալ պաղ կերպով։ Երրորդ տարին ամենեւին պատասխան չը գրեց, և այս կերպով նամակներու երթեւեկութիւններն երկուքին մէջէն ալ բոլորովին վերցուեցան։ Իրեն ընտացած մեծ հարստութիւնը սրտին մէջ շքեղութեան ու փառասիրութեան խորհուրդ ծնած էր, և Դոմինիկոսի բարեկամութիւնը այնուհետեւ իր միտքին վայելուչ չը դատեց ։ "Գեղջկական մտերմութիւն մը, կըսէր, և հանգամանք մը՝ որմէ բարեկամութիւն կը յառաջանայ, այնչափ կը տեւէ՝ որքան որ մանկութիւնը կը տեւէ. տղայութիւնը անցաւ, և գործքերու հանգամանքներն ալ փոխուեցան, ուստի ալ դադարիլ պէտք է"։

Երբ Դոմենիկոս առաջին անգամ իր նամակին պատասխանը չընդունեց, կորսուած կարծելով՝ երկրորդ անգամ գրեց, և տեսնելով՝ որ այն ալ 'ի դերեւ ելաւ, սխաւ քաղցրութեամբ անոր լռութեան համար տրտունջ ընել։

Եւ երբ ասկէ ալ օգուտ մը չ'ստացաւ, բարեկամական համարձակութեամբ՝ բայց գեղեցիկ եղանակաւ մը՝ իրենց մէջ եղած սէ-

րը պաղեցնելուն համար զայն յանդիմանեց։ Փիլիպպոս արդէն իր սնափառութեան հպարտութեամբն ու գոռոզութեամբը մեծցած՝ շատ դժարը ելաւ։ Ուստի բարկանալով ըսաւ. "Արդեմն այն ողորմելին յանդիմանութեան ու յանդգնութեան ձեռք զարկաւ. արդարեւ անոր այսքան համարձակութիւն ունենալ կը վայլէ, իմ սէրս պակսեցնելուս վրայօք տրտունջ ընելու իրաւունք ունի, որովհետեւ ես յիմարաբար իր հօրմէն յուտացած ժառանգութենէ աւելի թողուցի. բաղդէն շնորհակալ թող ըլլայ, որ այդպիսի չնչին առարկաները իմ մտածութեանցս արժանի չեն, ապա թէ ոչ ես անոր յանդըգնութիւնը շատ լաւ պիտի նուաճէի"։ Այնուհետեւ Դոմինիկոսի յիշատակը բոլորովին իր մտքէն ջնջուեցաւ, և նոր ընդունած թուղթերը առանց կարդալու կրակին մէջ կ'այրէր. ամեն տեսակ ցնորք և ամեն պղտիկ մտածութիւն՝ որ կը վերաբերէին Դոմինիկոսին և անոր հետ ունեցած մտերմութեանը, կը հերքէր՝ ու իւր մտքէն իսկոյն դուրս կընէր, վասնզի իւր մեծ փառքին անարգութիւն և նախատինք կը սեպէր։

Իր գործքերը լմնցնելով և հարստութիւնը ժողվելով՝ մեծ հանդիսիւ Նեապօլիս եկաւ։ Այս տեղ իրեն սնափառութեան համեմատ հռչակաւոր տուն մը վայելել պէտք

էր, վասն որոյ զայն գնելու համար շատ գանձ վատնեց, և ահա Փիլիպպոս Սեպուհ Կալանդրոնի կոչուեցաւ ։ Դոմինիկոս երբ անոր Նէապօլիս գալը լսեց, ամենևին կասկած մը չունենալով անոր սրտի փոփոխութեան վրայօք, և անոր այնչափ երկար լռութեանը ուրիշ պատճառ տալով, և փափագելով ևս իրեն անոր վրայ ունեցած անյողդողդ սէրը՝ միանգամայն իւր երախտագիտութիւնը ցուցնել, շուտ մը Նէապօլիս անոր այցելութեան գնաց։ Կալանդրոնի Սեպուհը չուզեց զայն ճանաչել ։ Ինքը Նէապօլսոյ բազմամբոխ փողոցներուն մէջ գոռոզաբար զարդարուն ձիերէ լծուած կառքի մէջ նստած՝ շատ անգամ Դոմինիկոսը ցած տեղ բազմութեան մէջ հետիոտն կը տեսնար՝ և կը ճանչնար զայն, բայց չարութեամբ միշտ իւր աչքը անկէ կը դարձնէր, մարդուս սիրտը խառնող զզուելի բանէ մը աժգալու պէս ։

Իր խելքին ու գանձին վրայ հպարտացած՝ զանոնք յաջ և յահեակ շռայլել սկսաւ, որովհետև առանց աշխատութեան ստացած ընչուն՝ ցրուած ատենը հոգ չէր ըներ ։ Իւր պալատը հաղուագիւտ կահ կարասիներով զարդարուեցաւ. և հրաման եղաւ որ հացկատակ մարդիկ ներս մտնան, որոնք իր պալատը լեցուելէ չը պակսեցան ։ Իւր սպասաւորներուն թիւը այնչափ շատ եղաւ՝ որ հա-

զիւ թէ բարձր իշխանի մը կը յարմարէր. ասոնք իրենց վարձքերը առատութեամբ կ'ընդունէին. և միանգամայն համարձակութիւն ունէին իրենց ձեռքը անցածը անվախ իւրացնելու ։ Անոր առաջին և շատ թանկագին նորաձևութիւնը հանդերձի՝ կառքի և ուրիշ ամեն տեսակ կազմուած զարդերու վրայ կը կայանար. և որովհետև Իտալիայէն մարդոց զարդարանաց համար եկածներուն մէկէն ալ չէր հաւնէր, ուստի մեծ ծախքով Լիոնէն՝ Փարիզէն՝ Լոնտոնէն՝ Ամպուրկէն՝ Ամստերտամէն՝ Պրուքսէլլայէն և մինչև անգամ Կոփէնհակէն և Փեթերպուրկէն իրեն պէտք եղածները բերել կուտար ։ Անոր պալատին մէջ խնճոյքը անպակաս էր, և սեղանն ալ Գաղղիայի խոհարարի մը պատրաստել գիտցածէն աւելի ազնիւ և համադամ խորտիկներով լի էր ։

Միշտ կաքաւներու և թատրներու տեսարաններ կըլլային, և զուարճացուցիչ ըմպելեաց ազնուութիւնն ալ առատութեան կը հաւասարէր ։ Իւր պարտէզները պարապորդ ու պորտաբոյծ մարդկանց տեղ դարձած էր, որոնք անվախ կերթային և կուգային և ուզածնուն չափ կը պտտէին ։ Ասկէ լաւ կը մակաբերուի, թէ այս բանով սպասաւորներու և մարդահաճոյից բազմութիւնը որ աստիճան պիտի շատնային ։ Կալանդրոնի Սեպուհին անուան արձագանքը

ամէն տեղ կը հնչէր . անիկայ միայն անհամեմատ իմաստութեամբ զարդարուած կը համարուէր . նա միայն գիտէր արժանավայել կեանք վարել . նա միայն օրինակ էր , որուն նմանութիւնը ամէն ազնուական պէտք էր իւր վրայ ունենար : Անմիտ Սեպուհը կ'ուրախանար ու կը հրճուէր , և կեղծաւորաց սնոտի ու խաբեբայ գովութեանց յորդ աղբիւրէն ախորժանօք կը խմէր , և ամբարտաւանութեան հողմով հպարտացած՝ ալ իւր անձին մէջ չէր տեղեր :

Բայց այս զուարճալի ուրախութիւնը շատ չը տևեց , անթիւ ու անվայել ծախքերը՝ որք այս սնոտի փառաւորութեանց համար կ'ըլլային , և ուրիշ զինքը կողոպտող եղեռնաւոր մարդիկ՝ որոնց իր անձը վստահցուցած էր, և իր խաղերու մէջ ըրած անթիւ կորուստները քիչ ժամանակի մէջ զինքը սնանկացուցին : Ամէն կողմէ պարտքի տակ մնացած էր, և բազմաթիւ պարտատէրներ բոլորովին զինքը պաշարած էին, որք մէկ վայրկենի մէջ իւր տունը բոլոր կահ կարասեօք գրաւեցին , և բոլոր ունեցածը քովէն առին : Այս յանկարծակի եղած աղէտալի փոփոխութեան վրայ իւր բոլորտիքը շրջող կեղծաւորներն ու հացկատակները ու անոնց նման շատեր՝ ամէնքն ալ անհետ եղան : Աղքատ ու առանձին մնացած տակաւին ինքզինքը կը մխիթարէր , յուսալով՝

որ իր բարեբաղդութեան օրերը իրմէ հարստացած բարեկամներէն կրնայ օգնութիւն ու նպաստ գտնել . ունայն ու սնոտի յոյս : Որովհետև անոնցմէ մէկ քանիները հազիւ զինքը ճանչցան . ուրիշները զինքը տեսնալնուն պէս շուտ մը կը փախչէին . և շատերն ալ մինչև այն աստիճան չարութեան հասան՝ որ զինքը ծաղր կ'ընէին : Նաև իրեն աւելի սիրելի եղողները անոր թշուառութեանը վրայ կարեկից միայն եղան , հաստատելով՝ որ անոր օգնութիւն մը ընել չը կրնալնուն համար շատ կը ցաւէին : Ահ , այս խաբէութիւններէն ըզգուշանալու համար որչափ մեծ խրատ եղաւ իրեն այս բանը : Կարօտութեան վերջին աստիճանը հասած ըլլալով՝ չէր գիտեր թէ ինչ ընէ : Այն ժամանակ Դոմինիկոսը յիշեց , որուն քաղցր ու գովելի բնութեան փորձը առած էր առաջուընէ , և լաւ գիտէր որ անոր քով պատրաստ օգնութիւն կրնար գտնալ . բայց զայն այնչափ յանդգնութեամբ արհամարհելէն վերջը՝ ինչ համարձակութեամբ անոր առջևը պիտի ելլար : Անոր համար՝ թէպէտ պէտքը զինքը կ'ստիպէր , բայց ամօթը զինքը ետ կը կեցնէր . և փոխանակ Սալերնօ քաղաքը դառնալու՝ անծանօթ կերպարանքով դէպ 'ի Հռոմ գնաց . ուր տեղ կը յուսար՝ որ առանց մէկէ մը ճանչցուելու և առանց պատկառելու կրնար այլոց օգնութիւնը խնդրել :

Այս խորհրդով Նէապօլիսէն ելլելով՝ երիկուընը գեղջուկ տան մը դրան առջեւը հասաւ, և խնդրեց՝ որ գիշերը այն տեղ անցնէ։ Տանտիրոջ կինը զայն տունը ընդունելով՝ ըսաւ. “Բարեաւ եկար, հիմա իմ այրս կուգայ, որ իր կարողութեան համեմատ իր տան մէջ ճանապարհորդ ընդունելը և անոնց պաշտօն մատուցանելը մեծ ուրախութիւն կը համարի. ուստի կարող ես դու այս տեղ գիշերը համարձակ անցնել։ Բայց առ այժմ քիչ մը հանգստացիր, մինչեւ որ իմ մնացած քիչ մը գործս լմնցնեմ”։ Ողորմելի Սեպուհը ներս մըտնելով, և այն գեղջուկ տան բարեաց առատութիւնը տեսնելով՝ շատ զարմացաւ։ Եւ մինչդեռ անիկա զարմանալով այն տեղի բընակչաց բարեպաշտութեանը վրայ կը նախանձէր, տանուտէրը տուն հասաւ։ Եւ երբ հեռուէն անոր գալը տեսաւ՝ աղաղակեց ըսելով. “Ո՜հ, ի՜նչ կը տեսնամ արդեօք, անիկայ անտարակոյս Դոմինիկոսն է. աւա՜ղ ողորմելոյս. ես ո՞ւր պահուըտիմ արդեօք, ո՞ր խորխորատին մէջ թաղուիմ”։ Այն պատկառանքէն իսկոյն անոր դէմքը կարմրեցաւ, և բոլոր մարմինը դողալ սկսաւ։

Դոմինիկոս փոքրիկ կառքի մը վրայ նստած՝ արտորնոց կուգար, բայց նորա դէմքը տրտում ու տխուր էր։ Իր կինը շուտ մը անոր առջեւը ելաւ. բայց անիկայ հառաչանք մը հանե-

լով՝ ըսաւ. “Իմ ամէն ջանքս ու խուզարկութիւնս պարապ ելաւ. անիկա յուսահատութեամբ Նէապօլիսէն հեռացած է, և իր գընացած տեղը մէկն ալ չը կրցաւ ինձ ցուցնել։ Ո՞վ գիտէ, թէ անոր ի՞նչ եղաւ, կամ թէ վերջը ի՞նչ պիտի ըլլայ”։ Եւ այր ու կին սկսան լալ։ Վերջը կինը՝ քիչ մը յառաջ ելող օտարականին վրայօք անոր լուր տուաւ, որն որ վերնայարկը իրեն կ'սպասէր։ “Օրհնեալ է Աստուած, ըսաւ Դոմենիկոս, գոնէ մէկու մը բարերարութիւն ընելուս վրայ ուրախ պիտի ըլլամ. հիմայ ես բարեկամիս օգնել չը կրնալուս պատճառաւ զգացած տրտմութիւնս փարատելու համար այսպիսի միխիթարութեան մը կարօտ էի։ Ո՛հ, երանի՛ թէ անոր աղէտալի անցքը ես մէկ օր յառաջ գիտցած ըլլայի...” այս ըսելով՝ շուտ մը վերնայարկը ելաւ։

Փիլիպպոս անկեան մը մէջ կծկտած պահուած էր, իւր դէմքը երկու ձեռքով ծածկած՝ իւր աչքը վեր վերցնել չէր համարձակեր։ Դոմինիկոս այն տեղի անկիւնը երբ կծկտած մարդ մը տեսաւ՝ ապշեցաւ ու շատ զարմացաւ. և մօտեցաւ՝ որ զայն տեսնէ։ Եւ ուշադրութեամբ լաւ մը դիտելէն վերջը՝ ուրախութեամբ աղաղակեց. “Անտարակոյս այն է, իմ ցանկալի բարեկամս է”. Եւ այս ըսելով՝ անոր վիզը փաթթուեցաւ. և իւր զգացած

անչափ ուրախութենէն առանց խօսք մը ըսելու՝ զայն կը համբուրէր․ և արտասուքով կը թրջէր։ Փիլիպպոս թէ ուրախութենէն և թէ ամօթէն պաշարուած՝ իր ինչ ընելիքը և ինչ խօսելիքը չէր գիտեր։ Վերջապէս Դոմինիկոս բերանը բանալով այս լռութիւնը խզեց՝ և ըսաւ․ «Դո՛ւ ես արդեօք իմ ցանկալիս տենչալիս և իմ սիրելիս, նոյն ինքն դո՛ւ ես։ Ո՜հ, օրհնեալ է Տէրը՝ որ զիս անմխիթար չը թողուց․ միշտ և հանապազ նորա փառք և գոհութիւն կուտամ։ Յիրաւի սիրելի բարեկամ, ես քու աղետիցդ յառաջուց անտեղեակ չէի, միայն երեկ իմացայ։ Այս աւուրս վազելով՝ շուտ մը Նէապօլիս գացի զքեզ փնտռելու համար՝ բայց շատ մը ասդին անդին փնտռելէս ետքը՝ երբ քու անկէ հեռանալդ լսեցի առանց որ կողմ երթալդ իմանալու՝ զքեզ գտնելու յոյս իսպառ կորեցաւ, ատոր համար խոր տրտմութեան մէջ ինկայ․ բայց հիմա աշխարհի մէջ ամենէն երջանիկը ես եմ»։

Փիլիպպոս առաւել ևս մորմոքելով և ամչնալով՝ անոր հետ խօսիլ կուզէր, բայց չէր կարող խօսք մը յարմարցնել, ինչու որ խօսելու համար բերանը չէր բացուեր․ ուստի Դոմինիկոս դարձեալ կրկնեց․ «Իրաւ է, որ այսուհետև դու մեծատուն չես, բայց դեռ բաւական մեծութիւն ունիս դու՝ որով կրնաս մխիթարիլ։ Դու ինձ աւանդած ժա-

ւանդութիւնդ տասն հազար դահեկան էր․ և գրեթէ նոյնչափ մ՚ ալ ես իմ հօրմէս ժառանգեցի։ Այս երկու գումարով ահա այս կալուածը գնեցի։ Ասիկայ իմ ծախու առած ատենը բոլորովին անմշակ և խոպան էր․ բայց իմ անձանձրանալի աշխատութեամբս մինչև այն աստիճան հասուցի, որ անկէ ամեն տարի հազար դահեկանէն աւելի շահ կ՚առնամ։ Իմ փոյթս ու ջանքս ալ աւելի շատցնելով՝ կը յուսամ որ ապագային մէջ աւելի օգուտ պիտի քաղեմ։ Հիմա ասիկա մեր երկուքին սեփհական բանի մը պէս մեր մէջ բաժնենք, և կամ եթէ քեզ առաւել հաճոյ է միասին կառավարենք։ Դու անկէ շահելով՝ կրնաս քու պէտքդ բաւականին հոգալ»։

Դոմինիկոսի այս անակնկալ առատաձեռնութեանը վրայ Փիլիպպոս ալ չը կրցաւ համբերել այլ իւր աչքերը արտասուքով լցուած գրկեց բարեկամը ու խանդաղատանօք լալով ըսաւ․ «Աւա՜ղ, ամօ՛թ իմ այս դժոխային անպիտան ամբարտաւանութեանս․ ո՛հ, որպիսի ցանկալի բարեկամ, ի՞նչպէս տօնելի մարդ մը ինձմէ բաժնեց ու հեռացուց։ Հիմա քու առատաձեռնութեանդ ու ազնուութեանդ յարգը ճանչցայ․ ո՛հ, ո՞րքան զանազանութիւն կայ քու և այն վատթար ու անարգ մարդկանց մէջ, որոնք բոլորովին կողոպտելէն ետքը՝ անողորմաբար մէկդի ձգելով երեսի

վրայ Թողին զիս։ Բայց դու այնպէս մի՛ կարծեր, որ ես իմ Թշուառութեանս մէջ քու առատատուրութիւնդ չարաչար պիտի գործածեմ, քա՛ւ լիցի, որովհետեւ այն ատեն վատ մարդ մը եղած պիտի ըլլամ ես։ Այն ժառանգութիւնը՝ որուն վրայօք կըսես Թէ ինձմէ քեզ աւանդուած է, անի ես պարգեւած եմ քեզ, այն՝ ազատական և մշտնջենաւոր ընծայ մի էր. և հիմա որ այն՝ քեզ կը վերաբերի, այսուհետև ինձ չը վայելեր՝ որ անոր մէջ իրաւունք ունենամ։ Իմ անբաղդութիւնս Թէև մեծ է, սակայն իմ ձեռքովս արժանապէս կը կրեմ զայն, և ես այնչափ անարգանօք միայն զքեզ մոռնալուս համար աւելի չար Թշուառութեանց արժանի էի. բայց ես պէտք է որ պատահած չարեաց համբերեմ։ Իմ բաղդս զիս ուր որ ալ առաջնորդէ, հերիք է որ նորէն քու բարեկամութիւնդ շահեցայ, այս ուրախութիւնն ու մխիԹարութիւնը ինձ համար բաւական է”։

“Թէոր դու ինձմէ բաժնուիլ կուզես, ըսաւ Դոմինիկոս, ըսել է որ տակաւին ինձմէ չես ախորժեր և իմ բարեկամութիւնս ամենեւին չես շահած, այն ժամանակ դու ինչ դիտաւորութիւն ալ ունեցած ըլլաս, հոգ չէ. դու ինչ որ ինձ աւանդեցիր այն ատեն՝ հիմա ըստ օրինաց քեզ կը պատկանի, ընդունէ զայն. և քու երկար բարակ խօսելո-

վդ ու պաղ շարժմունքովդ զիս մի՛ տրտմեցըներ։ Այն քու ինձ յանձնածդ ետ տալս կուզես արդարութեան գործ համարէ, կուզես բարեկամութեան, ես ամենեւին հոգ չեմ ըներ, բայց ինչ որ ըլլայ՝ պէտք է ընդունիս։ “Ինձ պէտք չէ. կրկնեց դարձեալ Փիլիպպոս հեծեծախառն արտասուօք. և կարելի ալ չէ զայն ընդունիլ. բայց այնքան ալ ապաշնորհ չը պիտի ըլլամ, որ քու արժանաւայել բարեկամութենէդ հեռանամ։ Միշտ և յաւիտեան քեզի հետ պիտի ըլլամ. և այսուհետեւ իմ ամէն ջանքս ու փոյԹս քու աշխատանքիդ և հոգունակութեանդ օգնելու համար պիտի ըլլայ. իմ անձս շատ երջանիկ պիտի համարիմ, Թէ որ ինձմէ կրած արհամարհանացդ մէկ մասին փոխարինել կարողանամ”։ “Ով մեծահոգի անձն, ով անհամեմատ մարդ, պատասխանեց Դոմինիկոս, դու այս տեղ իմ քովս պիտի մնաս ուրեմն, այդ էր իմ հոգս. այս տեղի եղած բաները իբրեւ քու սեպհականութիւնդ պէտք է վայելես, իմ քեզմէ պահանջածս այս է. իսկ Թէ ի՞նչպէս, ատոր վրայ յետոյ կը խօսինք”։ Ու դէպ՚ի կինը դառնալով՝ որ սիրտը այս սիրալիր տեսարանին վրայ կը մորմոքէր, ըսաւ. “Ահա իմ սիրելի բարեկամս, մեր ամուսնութեան բարեբաղդ օրերէն ետքը՝ մեր կենաց աւելի երջանիկ ու վայելուչ օրը այս է”։

Փիլիպպոս երկար ատեն իր ապշութեան մէջ մնաց, կը կրկնէր ու վերստին կը կրկնէր ինքնիրեն ըսելով. «Ո՜հ, այս ինչ անհամեմատ մեծ մարդ է. աստ ու այն անարժան մարդկանց մէջ որքան մեծ տարբերութիւն կայ, որոնց շահախնդիր ու խարդախ բարեկամութիւնը զիս այնքան հպարտացուցած էր»:

Խիստ ցաւալի և կարեկցութեան արժանի է արդարեւ մեծամեծաց և իշխանաւորաց վիճակը, մանաւանդ երբ անոնք խոնարհ աստիճանէ մէկէն կը բարձրանան: Մարդկանց մէջ իրաւամբ ամենէն ողորմելիները կրնանք սեպել զանոնք. վասն զի բարձր աստիճանի մը հասածնուն պէս՝ կարծես կը մոռնան մարդկային դիւրափոփոխ վիճակին պայմանը, կը մոռնան գութը՝ կարեկցութիւնը եւ մարդավայել հեզահամբոյր խոնարհութիւնը. կը փքանան, կ'ամբարտաւանին, և մինչեւ անգամ մոլեգնաբար կը համարձակին ճշմարիտ բարեկամութեան նուիրական ու սուրբ կապը խզել. իրենց աստիճանին անյարմար կը սեպեն հասարակ մարդկանց հետ տեսնուիլը, չեն գիտեր ողորմելիները, որ առաքինութիւնն ու անկեղծութիւնը անոնց մէջ կը գտնուի. բայց դժբաղդաբար այս ընտրութիւնն ալ ընելու կարող չեն, այլ՝ անոնց մէջէն ալ անպատկառ ցած շո-

ղոքորթները միայն կընտրեն, որպէս զի անոնցմէ պաշտուին, ուստի արժանի է որ կործանումնին ալ անոնցմէ ըլլայ: Այսպիսի մեծամեծներն ու հարուստները ողորմելի և թըշուառ կոյրեր են, որ իրենց առջեւ բացուած կործանման ու կորստեան խորխորատը չեն տեսներ, անմիտ կուրութեամբ ինքզինքնին ամենէն խելացի և ճարտար կը սեպեն. բայց ինչ աղէկ է, որ միշտ խաբուած են և կը խաբուին. շատերն ալ կան, որ յաճախ խաբուելով առոյգ առաքինի և հաւատարիմ անձանց վրայ ալ չեն վստահիր, և առ հասարակ բոլոր մարդիկ խարդախ ու անիրաւ կը համարին: Ո՜հ, այն ատեն՝ ա՜լ թշուառութեան վերջին ծայրն հասած կը լինին:

Իրաւ է, որ անշահասէր ճշմարտախօս և անկեղծ մարդկանց լեզուն քիչ մը խիստ ու համարձակ է, նոքա պատրուակել չեն գիտեր, բայց այն խստութիւնը՝ փրկութիւն կը ծնանի. պէտք է խոհականութեամբ անոր անսալ, զայն սիրել և յաճախ անոր խորհուրդները լսել: Առաքինին չուզեր յաճախել մեծամեծաց դռները, առանց փնտռուելու չերեւիր. բայց փառաց ու ճոխութեան մէջ փքացող ամբարտաւան հարուստք և իշխանք պէտք են պատուական բանի մը պէս փնտռել և գտնալ. ապա թէ ոչ օր մը անշուշտ պիտի ստիպուին այն բարձր ամբարտաւա-

նութեան գահէն խոնարհելով՝ անոր անշուք հիւղին մէջ ապաստանարան փնտռելու, և երանի՜ թէ այսչափ արիութիւն ալ ունենայինք, որ խոնարհութեամբ զիջանէին այս քաղցր դժուարութեան յաղթել։ Այս պատմութիւնը և դեռ ևս շատ պատմութիւններ՝ մանաւանդ ներկայ ակներեւ դէպքեր՝ խիստ մեծ ու պատուական խրատներ են այնպիսեաց համար. և մեծ ու շքեղ փառք են խոնարհ՝ բարեսիրտ՝ անյիշաչար ու անկեղծ առաքինեաց համար. որչափ մեծ փառք է Դոմինիկոսի փառքը՝ Փիլիպպոսի երեւակայական ու սնոտի փառքէն, որ երազի պէս ոչնչացաւ։ Ուրեմն՝ «Արարէք ձեզ բարեկամս յանիրաւ Մամոնայէ». ըսածին համեմատ՝ պէտք է հարստութիւնը այնպիսի հաւատարիմ սըրտերու մէջ զանձել, ուր պէտք եղած ատեն հաւատարմութեամբ պահուած գտնեն։ Անցաւոր նիւթերու վրայ հաստատուն յոյս դնելով՝ ստոյգ բարիքը, այսինքն առաքինութիւնը մերժելը բանական մարդու գործ չէ. ձախորդութեան մէջ անվրդով արիութեամբ համբերել, և յաջողութեան մէջ չափաւորութիւն ու խոհական նախատեսութիւն ունենալ՝ իմաստունի գործ է։

ԺԱ.

Ռուգերոս Դանիացին

Մեծն Կարոլոս կայսեր ժամանակները, Ռուգերոս՝ Տանիմարքայի Գոտիրեդոս թագաւորին որդին՝ ամենէն աւելի քաջ պատերազմող և յաղթող հանդիսացաւ։ Սա՝ Պաւէրիայի Նամոս դուքսին քովը պատերազմի կըրթութեանց վարժուեցաւ, և Մեծն Կարոլոսի հրամանաւ անոր հետ զօրաց մեծ բազմութեամբ Իտալիա գնաց, և Հռովմը ազատելու համար Սարակինոսաց դէմ պատերազմեցաւ։ Ռուգերոս՝ պատերազմին առաջին ճակատամարտին մէջ այնպիսի քաջութիւններ գործեց, զորս հազիւ թէ գերահռչակ և քաջ պատերազմող մը կրնար ընել։ Այլազգեք՝ խաչանկար տօնելի մեծ նշանը քրիստոնէից ձեռքէն յափշտակած էին։ Ռուգերոս արութեան ոգւով և նախանձաւորութեամբ լեցուած՝ արծուի մը պէս կը թռչի, և խաչին թշնամեաց վրայ կը յարձակի, ու վերջապէս կ՚ազատէ նոցա ձեռքէն գերի տարուած մեծ նշանը։ Այս քաջասիրտ երիտասարդը ատով չը բաւականանալով՝ թշնամեաց խումբին վրայ ևս կը յարձակի, և անոնց ձեռքէն իրենց նուիրական դրօշակը կը յափշտակէ։ Այս քաջութեան չնաշխարհիկ գործերուն համար, թէ կայսրէն

և թէ բոլոր զօրքերէն գովութեամբ պատուեցաւ ։

Այն բանակին մէջ կայսրը իրեն համանուն Կարոլոս որդի մը ունէր, որ Ուգերոսին հասակակից և նիզակակից էր. բայց որքան որ բնութեամբ վատասիրտ և թոյլ էր, այնքան ալ նախանձոտ և ժանտ էր։ Ուգերոսին փառքը և բարի համբաւը նորա սրտին մէջ բարի նախանձ ձգելու տեղ՝ ատելութեան սաստիկ հուրը վառեց և բորբոքեց։ Եւ այս ոչ թէ հարեւանցի և առ ժամանակեայ, այլ քանի որ օր ըստ օրէ եւս առաւել կ'աճէր Ուգերոսի քաջութեանց համբաւը, ոչ միայն Գաղղիոյ՝ այլ նաեւ համայն Եւրոպիոյ մէջ կը հռչակուէր, այնքան ալ նորա ատելութիւնը և նախանձը կը զօրանար անոր դէմ։ Անզգամը շատ անգամ ջանացաւ ամեն հնարքներով զայն նուաճել, երբեմն գաղտուկ դարան գործելով, և երբեմն պատերազմի մէջ վտանգաւոր կողմերը ղրկելու ջանալով. սակայն Ուգերոս միշտ ամեն բանի մէջ յաղթող կը հանդիսանար ։

Այս Ուգերոս՝ Բաղդուինոս անուամբ իմաստուն և հանճարեղ որդի մի ունէր, զոր մանկական հասակէն թողած էր Տանիմարքայի արքունեաց մէջ կրթութիւն առնելու համար։ Երբ նա մեծնալով կորովութեան հասակը հասաւ, Փարիզ կոչեց զայն, ինքը անձամբ անոր զինուորական կրթութիւն տալու համար ։

Բայց երիտասարդը քիչ ժամանակուան մէջ զարմանալի յառաջադիմութիւններ գործեց, և քաջութեամբ՝ ուժով՝ հմտութեամբ և աշալրջութեամբ ճիշդ իւր հօրը կը նմանէր։ Իսկ նախանձաբեկ արքայորդին Կարոլոս՝ այն դժոխային ատելութիւնը՝ զոր 'ի վաղուց հետէ իւր սրտին մէջ կը սնուցանէր Ուգերոսին դէմ, նորա որդւոյն վրայ եւս դարձուց. և երկուքին վրայ միանգամայն իւր կատաղի նախանձուն թոյնը ժայթքելու համար, օր մը՝ երբ Բաղդուինոս անկէ ընդունած տարապարտ թշնամանաց փոխահարար պատասխանելու համարձակեցաւ, վայրենաբարոյն անմիջապէս կատաղաբար իւր սուրը հանելով՝ յանկարծ մխեց նորա սիրտը, առանց երբէք ժամանակ տալու՝ որ Բաղդուինոս ալ իւր անձին պաշտպանութիւնը հոգայ ։

Երբ այս աղէտից գոյժը դժբաղդ հօր ականջը հասաւ, այն վայրկենին ապշեցաւ և անշարժ մնաց։ Յետոյ զգաստանալով, իւր որդւոյն արեան վրէժը հանելու համար սաստիկ սրտմտութեամբ վառուած՝ շուտ մը թագաւորական պալատը վազեց արիւնահեղ Կարոլոսը փնտռելու ։ Իսկ այն անզգամը կայսեր ապաւինած էր, զոր Ուգերոս տեսնելով՝ հրացայտ աչօք՝ կատաղի ցասմամբ և սուրը քաշած հոն

կը մնէ ։ Վատասիրտ եղեռնաւորը ահ ու դողով և սարսափով լեցուած՝ իւր հօր ետեւը կը փախչի և կը պահուըտի։ Ուգերոս իւր բարկութեան սաստկութենէն մղուելով՝ առանց բան մը նկատելու, կը յարձակի նորա վրայ աղաղակելով. «Ահաւասիկ հասայ քեզ, ով անօրէն. արդ՝ եթէ կարող ես պաշտպանէ՛ քու անձդ»։ Կայսրը 'ի զուր դէմ կը կենայ. և թէեւ կայսրը շրջապատող նախարարները և թիկնապահները չ'արգելէին զինքը, արդէն անշուշտ սրով պիտի սպաննուէր ։

Նոյն մէջ Նամիս դուքսն ալ կար, զոր Ուգերոս միշտ հօր պէս յարգած էր ։ Այս դուքսը Ուգերոսը վերնայարկէն դուրս հանելով, անոր իմացուց ըրած գործին մեծ յանդգնութիւնն ըլլալը, և ստիպեց՝ որ փախչի ։ Նա ալ՝ թէ ինքը և թէ ուրիշ նախարարներ շատ աղաչանքներով միջնորդ եղան կայսեր, որպէսզի ներէ Ուգերոսին. բայց կայսրը խիստ բարկացած էր, և երբէք չէր ուզեր նոցա աղաչանաց լսել։ Արդէն Ուգերոսին կայսերական վեհափառութեան դէմ ըրած արհամարհութիւնը՝ որ սուսերամերկ նորա որդւոյն վրայ վազեց իր գահոյից մէջ, իր աչաց առջեւ շատ ծանր էր. սակայն անոր որդւոյն անիրաւ սպաննման պարագաները միայն զինքը կրնային արդարացնել, որ իրաւամբ այս աստիճան արտմութեան հասուցած էին ։ Բայց մեծն

Կարոլոս ուրիշ բան մը չէր նկատեր, բայց միայն իւր արհամարհուած մեծութեան իրաւունքը ։ Ասոր համար Ուգերոս թէ՛ արքունեաց մէջէն և թէ՛ Գաղղիայէն աքսորուելով, պարտաւորուեցաւ զանազան կողմեր շրջիլ, և ասդին անդին ուրիշներուն օգտին համար գործածել իւր քաջութիւնները, մինչեւ որ վերջապէս կայսրը ինքնին ստիպուեցաւ ակամայ կամօք ետ կոչել տալ զայն ։

Վանդալ Սարակինոսք՝ Իրուժերոսի առաջնորդութեամբ պատերազմի նորոգած էին, և խումբ մը նաւերով Պրովէնսա գալով՝ յաղթած և մինչեւ 'ի Փարիզ յառաջացած էին ։ Կայսրը պաշարուած՝ քաղաքին մէջ ամրանալով իւր զօրքերը հոն ժողված էր, սակայն քաջագոյն թիկնապահներէ զրկուած ըլլալուն՝ անոնցմով հազիւ թէ թշնամեաց բուռն զօրութեան դէմ կրնար դնել ։ Իրուժերոս իւր ուժին վրայ կատարելապէս վստահանալով, և նաեւ յաղթութիւնը շուտով 'ի գլուխ հանելու փափաքելով, պատերազմի մենամարտութեամբ վճարել առաջարկեց ։ Այն ատեն Ուգերոս Անգղիոյ մէջ կը գտնուէր, և բոլորն ալ քաջ համոզուեցան՝ որ նա միայն կարող էր այն ահագին թշնամւոյն դէմ դնել, և նորա հետ զարնուիլ ։ Արդէն պալատականները և զօրքերը միանգամայն անոր դարձին կը փափաքէին, վերջապէս ամեն կողմանէ կայս-

րը կըստիպէին զայն եւ կոչել տալու համար․ բայց ամենէն մեծն այն էր, որ հարկը ստիպեց զիջանիլ և անոնց խնդիրը մտիկ ընել։ Բայց Ուգերոս հաճեցաւ այս հրաւէրը ընդունիլ, բայց այն պայմանաւ՝ որ եթէ իւր հետ կըռուող թշնամին յաղթէր, իրեն ձեռքը պէտք էին յանձնել իւր որդին սպանող Կարլոսը։ Այս դաշինքին վրայ կայսրը խռովեցաւ, և շատ հակառակեցաւ, և անոր տեղ յանձն առաւ Ուգերոսին ուրիշ ամեն բան շնորհել հաճութեամբ սրտի։ Բայց Ուգերոս իւր խորհրդին վրայ հաստատուն կեցաւ, և կայսրը ուրիշ ճար մը չը գտնալով 'ի վերջոյ ստիպուեցաւ կամայ ակամայ Ուգերոսին դաշինքը ընդունելու։

Երբ այն անյաղթելի ախոյեանը Անգղիայէն դարձաւ, ժամանակ որոշեցին՝ որ երրորդ օրը մենամարտութեան հանդէսը կազմ և պատրաստ ըլլայ։ Որոշուած օրը հանդէսը պատրաստուած էր, երկու քաջ մենամարտները հրապարակ ելան, և երկու կողմանց զօրքերըն ալ դիմացէ դիմաց շարուած՝ գործին վախճանը կըսպասէին։ Բրուժերոս վիթխարի էր․ յաղթանդամ և հսկայազօր․ բայց Ուգերոս զինաշարժութեանց մէջ ունեցած յաջողակութեամբը զայն կը գերազանցէր։ Առաջին ուժգին յարձակմամբ՝ երկուքին ալ նիզակը մէկէն կոտրեցան, բայց երկու ախոյեաններն

եւս անդրդուելի կեցան․ ետքը իրենց սուրը քաշելով՝ սկսան իրարու սաստիկ հարուածներ տալու ջանալ։ Բրուժերոս իւր բազկին զօրութեան վստահացած՝ միմիայն իւր մարտակցին վնասել կը խորհէր․ իսկ Ուգերոս քաջահնար շարժումներով իր հակառակորդին հարուածները 'ի զուր կը հանէր, և զայն վիրաւորելու համար միջոցներ գտնելու կը յաջողէր։ Արդէն Բրուժերոս շատ վէրք ընդունած էր․ իսկ Ուգերոս տակաւին անվնաս էր։ Այս պատճառաւ խրոխտ այլազգին սաստիկ բարկանալով՝ ուժգնութեամբ մը նորա վրայ կը յարձակի, և մեծ դաշոյն մը կ'իջեցնէ Ուգերոսին վրայ, որով քրիստոնէից զօրքը ահ ու դողի մէջ ձգեց։ Այն աշալուրջ և զգաստ ախոյեանը՝ իւր անձը ապրեցուց նոյն հարուածէն, բայց չը կրցաւ միանգամայն ապրեցնել իւր ձին եւս, որ երկու ճեղքուելով գետին ինկաւ։ Յաջողապէս Ուգերոս կանգնած մնաց, և թշնամւոյն երիվարն ալ կողէն զարնելով՝ իրեն հաւասար ըրաւ։ Այն ատեն սկսան ոտքի վրայ եւս աւելի սաստկութեամբ կռուիլ․ երկուքին զրահներն ալ շատ կողմերէն խորտակուեցան ահագին հարուածներով․ և երկուքն ալ իրենց վէրքերէն վազած յորդարեամբը շաղախուած էին․ սակայն այլազգւոյն վէրքերը Ուգերոսինէն շատ էին։ Ափրիկեցի հսկայն կատաղելով և կռիւը վերջացը-

նել ուզելով վահանը կը թողու և բուռն զօրութեամբ մը Ուգերոսի վրայ կը յարձակի, և իւր բոլոր ուժը ամփոփելով երկու ձեռքերով կըսկսի զարնել։ Մեծ արագաշարժութեամբ և ճարպկութեամբ մը պարապի հանեց զայն Ուգերոս, ու ժիր թեթեւաշարժութեամբ մէկ կողմ ցատկեց, և բարեբաղդաբար Բրուժերոսի մնակուշտը բաց տեսնելով սուրը սաստիկ ուժով մը հոն մխեց։ Այն հարուածէն ափրիկեցի անձունի հսկայն գետին կը փռուի. Սարակինոսաց բանակը զարհուրանաց և յուսահատութեան աղաղակ կը վերցնէ. իսկ քրիստոնէից զօրքը ցնծութեան և ուրախութեան ձայներով և միանգամայն յաղթական հանդիսով Ուգերոսը կայսեր վրանը կը բերեն։ Բոլոր զօրքերէն գովասանք և ներբող ընդունելով առանց ժամանակ կորսնցնելու անմիջապէս իւր դաշանց կատարումը խընդրեց կայսրէն։ Մեծն Կարոլոս՝ որ քաջածանօթ էր և շատ կը վախնար Ուգերոսի ցասմանէն և քինախնդրութենէն, քստմնեցաւ և գունատեցաւ այն խնդրոյն վրայ. բայց խոստումը շատ հռչակուած էր, և չէր կրնար զայն դրժել։

Ուգերոսի զաւակն սպանող բարբարոս արիւնահեղը՝ անզէն՝ գոյնը նետած և սրտադողով մէջ տեղ բերուեցաւ, և Ուգերոս խոժոռ դիմօք դէպ 'ի անոր նայելով՝ ըսաւ. «Այժըմ քու դժոխախեռ նենգութեանդ պատուհասին պատիժը կրելու ժամանակն է»։

Զայս ըսելով՝ ձախ ձեռօք նորա մազերէն բռնեց, և աջովն ալ իւր թէ զանիկա մէջ տեղէն կտրելու նկատմամբ՝ համարձակութեամբ մը սուրը վեր վերցուց։ Այս սոսկալի տեսլեան վրայ՝ կայսրը բարձր ձայնով աղաղակեց. տեսնողները սարսափով զարհուրեցան, և այն երկիւղէն՝ արքայորդին մեռելի պէս թօշնած գետին ինկաւ։ Այն ատեն Ուգերոս սուրը կայսեր ոտից առջեւը դնելով, ինքն ալ ծունկ չոքեց նորա առջեւ և ըսաւ. «Ով արքայ, բուն իսկ հիմա պէտք է, դու խելամուտ ըլլաս և հասկնաս, թէ որքան սոսկալի և անտանելի ցաւ է հօր մը համար որով խողխողուած իւր որդւոյն մահը։ Սակայն ես քեզ կը շնորհեմ քու որդիդ. և երանի էր, եթէ այն անողորմն ալ կարող ըլլար իմ որդիս ինձ շնորհել»։

Ուգերոսի այս գործոյն վրայ՝ ամենքն ալ լուռ ու մունջ ապշեցան մնացին։ Արքայորդին մէկ կողմ տարուեցաւ. և կայսեր երկիւղը փարատելով՝ սկսաւ սրտին ցաւէն լալ, և Ուգերոսը գրկելով անոր կը պլլուէր. իսկ բոլոր պալատականները շուրջանակի շարուելով՝ արժանապէս կը գովէին նորա մեծասրտութիւնը և քաջութիւնը։ Սակայն մեծին Կարոլոսի անարժան որդին անպատիժ չը մնաց, վասն զի այս կերպով սաստիկ նախա֊

տակոծ լինելով և ամչնալով՝ իւր սրտին մէջ հանգիստ չը կրցաւ գտնել, ուստի քիչ ժամանակէն չարաչար մահուամբ պակսեցաւ աշխարհէս ։

Չար նախանձու կիրքը այնքան այլանդակ գէշ և անմարդավայել է, որ միշտ վնասակար հետևանքներ ունեցած է, և երբէք անկէ օգուտ մը՝ փոքրիկ լաւութիւն մը չէ տեսնուած։ Նախանձոտը բնականօրէն վատասիրտ եւ վախկոտ կ՚ըլլայ. ցամաք՝ նիհար և դեղնած կ՚ըլլայ անոր դէմքն ու մարմինը. աչքերը փոսը ինկած՝ տխուր ու խոժոռ նայուածքով միշտ զարհուրելի է. ուրիշին աղեկութեան վրայ կը ցաւի, և չար խորհուրդներով ակռաները կը կրճտէ. զայրացկոտ ըլլալով թեթեւ բանէ մը կը գրգռի և հեւալով մռմռալ կըկսի ։ Ահ, և այն ատեն սոսկալի է իւր տեսքը, ամէնատեսակ չարեաց շտեմարան կ՚ըլլայ. ժանտ սրտին մէջէն մահացու թոյն կը ժայթքէ. լեզուն երկսայրի սուրի պէս գաղտուկ միշտ վէրք հասցնելու կ՚աշխատի. զրպարտութիւն չարախօսութիւն, ամբաստանութիւն, նենգաւոր թակարդներ լարել, դարանակալ ըլլալ. վերջապէս ամէն տեսակ սոսկալի չարիք իւր սիրելի զբաղմունքները կ՚ըլլան. իւր դիւական սիրտն ու դէմքը մարդկանց դժբաղդութեան վրայ միայն կը խնդայ և կը զուար-

ճանայ. այլոց յաջողութիւնը և բարեբաղդութիւնը իրեն սոսկալի հոգ ու մտմտուք կը պատճառեն, որով քունն ալ կը հատնի և միշտ անհանգիստ է. ուրիշները խածնել ցաւցնել և այրել կ՚ուզէ, բայց շարունակ նախ ինքն իրեն կը վնասէ, միշտ իւր անձին տանջանքն ինքն է։ Ահա այս է նախանձոտին պատկերը. այս է անոր զարհուրելի կերպարանքը որ մարդս կը սարսափեցնէ. և այսպիսի մոլեգին յիմարութեամբ պաշարուած մէկը՝ երբ որ պատեհութիւն գտնայ, ի՞նչ տեսակ սոսկալի և ահաւոր ոճիրներ, յանցանքներ ու չարութիւններ չը գործեր. ուրեմն որչափ զգուշանալի է այս վատ կիրքը սնուցանելը։

Որդ՝ առաքինասէր ընթերցող, եթէ այս վնասակար դժոխածին կիրքը մէկուն վրայ տեսնաս, կատաղի գազանէ մը փախչելու պէս անկէ հեռացիր. թէոր այլեւայլ խոհական կերպերով կրցար այդ վատասրտութենէն փոխել, աղէկ. իսկ եթէ ոչ՝ փախիր, երեսը չի տեսնալդ ալ օգուտ է։ Իսկ դու ջանա, աշխատէ, որ ամենուն յաջողութիւնն ալ քու անձիդ համարելով՝ միշտ ուրախանաս. բարեսրտութեամբ ամենուն օգտին համար ձեռքէդ եկածին չափ աշխատէ. ասով թէ դու միշտ ուրախ կ՚ըլլաս, և թէ ուրիշները կ՚ուրախացնես, որ մարդուս բուն բերկրութեան առիթ է ։

Ինչպէս ամէն մոլութիւն, նոյնպէս այս ալ մանկութեան առեննէն կըսկսի, և կամաց կամաց աճելով՝ մինչեւ վերջին սահմանը կը հասնի, և այն ատեն թողելը անհնարին կըլլայ։ Ուրեմն ծնողք և դաստիարակք թող զգուշանան, նոյն իսկ երեւցած կէտէն խլել անոնց սրտէն այս և ուրիշ վնասակար կրից առաջին բողբոջը. իսկ չափահաս պատանիք և երիտասարդք՝ իմ հասակակից քոյրերս ու եղբայրներս՝ թող հիմակուանէ մեծ ջանքով աշխատին ամէն մոլութեանց հետ նաեւ այս չար ախտը իրենց սրտէն հանել, և տեղը վեհանձնութիւն, ներողամտութիւն, անյիշաչարութիւն, գթասիրութիւն և ուրիշ բարեսէր կիրքեր սերմանել. և երբ անոնք արմատանան ու պտղաբերին, ուրախ սրտով պիտի զուարթանան, և այն ատեն ես ալ բարեբաղդ պիտի համարուիմ։

ԺԲ.

Անտօնիոս Լեւօնեցցի

ՇԱՏ անգամ կարօտութեան կամ աղքատութեան պատճառաւ կըստիպուին մարդիկ հակառակ սրտուց և համեստութեան օրինաց, շատ ապօրինաւոր բաներու ձեռք զարնել, և տկարամիտ խորհրդով մը անվայել

գործերը իրենց համար պատշաճ կը սեպեն։ Բայց շատեր ալ կան, որ մինչեւ ցմահ արիութեամբ ձախորդութեան դէմ դնելով՝ բնաւ չեն յաղթահարիր, և անպատիւ հնարքներու չեն դիմեր, որոնցմէ մէկն է Անտօնիոս անուն կորովախոհ խելացի երիտասարդը, որ իւր համեստութիւնը պահպանեց իւր յետին կարօտութեան մէջ անգամ, յորմէ կը տառապէր անհնարին, և իւր այս անստգիւտ եւ գովելի համեստութեամբը կատարելապէս մխիթարեցաւ։

Աս շատ տարիներ ճոխագոյն մեծ հարստութեան գրգանաց մէջ ապրելէ ետքը, մէկ անակնկալ փոփոխութեամբ մը յանկարծ այն մեծ հարստութեան և առատութեան բարձրութենէն՝ բոլորովին կարօտութեան յատակները գլորեցաւ, և վերջին աստիճան աղքատութեան մէջ ինկաւ։

Սորա հայրը յառաջուց հարուստ վաճառական մի էր, բայց ամէն բան անձամբ կառավարելու և ամէն բանի ինքնին տիրելու նախանձաւոր ըլլալով, իւր ընչից փոքրագոյն մէկ մասին տնտեսութիւնն անգամ Անտօնիոսին յանձնած չէր. ասոր համար՝ մէկ մասամբ իւր գործոց մէջ ունեցած գէշ կառավարութեանը պատճառաւ, և մէկ մասամբ ալ տեսակ մը անակնկալ դիպուածոց համար, մէկէն 'ի մէկ սնանկացաւ. և պարտատեարք

վրան ժողվուած՝ մերկացուցին զինքը իւր ունեցած բոլոր ստացուածքէն։

Ոնոմիոս՝ Եղիսաբէթ անուամբ չքնաղագեղ եւ զգօնամիտ կին մը ունէր․ երկու պարկեշտ և առաքինի զաւկըներն ալ փոխադարձաբար զիրար շատ կը սիրէին․ նաեւ երկու առողջ և կայտառ որդիք ունէին, որք միմեանց հրճուանաց և բերկրութեան առարկայներ էին։ Այս չնաշխարհիկ և առաքինազարդ ծնողք՝ Ոնոմիոս և Եղիսաբէթ, իրենց քաղցր կենցաղավարութեան ատեն զաւակաց սննդեան և կրթութեան վրայօք՝ շատ կերպ յուսալի խորհուրդներ կը խորհէին, և նոցա ապագայ յառաջադիմութեան նկատմամբ յաջողակութիւններ կը գուշակէին․ բայց ափսոս, որ մէկ վայրկենի մէջ պարապն ելան նոցա ամէն խորհուրդները, և նոցա յուսոյ խարխուլ հիմէն տապալեցաւ։ Այս թըշշուառացեալները ամէն ինչ կորսնցնելով՝ ալ իրենց ապրուստի յոյսը ուրիշ բանի վրայ չէին կրնար դնել, բայց միայն փոքրագոյն կալուածի մը վրայ՝ զոր Եղիսաբէթ օժիտ բերած էր։ Այսու ամենայնիւ Ոնոմիոս խոհեմ և զգօն ըլլալով փոխանակ իւր հօրը անխոհեմութեանը վրայ տրտնջելու, կը ջանար իւր հայրը սփոփել՝ և անոր քաջալերութիւններ տալ կրած վնասուն ծանրութիւնը թեթեւացնելու համար, զոր նա մեծաւ մա-

սամբ ինքն իր ձեռօք իւր գլխուն բերած էր։ Պարկեշտ և բարեպաշտուհի Եղիսաբէթն եւս իւր ամուսնոյն հետ միասին կ՚աշխատէր ամենայն ջանիւք ողորմելի ծերը սրտի թախծութեան խորերէն հանելու։

«Իմ օժիտս որդինքը՝ կըսէր նա, թէեւ շատ քիչ բան է, սակայն բաւական է ներկայիս մէջ զմեզ սնուցանել, իսկ ապագայն Տէրը կը հոգայ իր կամեցածին համեմատ․ քաջալերուինք ուրեմն, և զմեզ մխիթարենք»։

Բայց կ՚երեւէր, թէ բարձրեալն Աստուած այս երկու ապերջանիկ զաւկաց համբերութեան փորձը աշխարհի երեւցնել կուզէր, քանզի գիտէր նա քաջ, որ զուտ սակաւ նըման լուսաւոր առաքինութեամբ զարդարեալ են նոքա․ ուստի կամեցաւ՝ որ վերջին խիստ փորձով մ՚ալ նախանձելի հանդիսանան ամէն մարդու։ Որովհետեւ այն վերայիշեալ փոքրագոյն կալուածը՝ գետոյ մը եզերքն էր, ձիւները հալելու ատեն գարնանացայր հեղեղներէն այս գետը յորդելով՝ այն կալուածին մեծագոյն մասը քշած և աւրած էր, ըստ որում նոքա չէին կրցեր հեղեղին սաստիկ բռնութեան առաջքն առնուլ։ Իսկ ջրին աւերմունքէն ազատ մնացած փոքրագոյն մասին արդիւնքը, այնուհետեւ այն թշուառացելոց ապրուստին չէր բաւեր․ ասոր համար սովալուեցան քիչ քիչ

իրենց ունեցած թանկագին ինչքերը և կահկարասիքը ծախել, մինչեւ որ խալառ տընանկացան ։

Անտոնիոսին փափուկ սիրտը կը ճմլէր ցաւօք, տեսնելով՝ իւր սիրեցեալ ամուսինը այն աստիճան կարօտութեան հասած, որ նոր իւր վրայ ունեցած կաթոգին սիրոյն համար՝ աւելի ճոխագոյն մէկէ մը կամովին հրաժարած էր ։ Բայց ինչ և իցէ, գործի մը ձեռք զարնելու յուսովը իւր վշտերը կը մխիթարէր. որովհետեւ կը յուսար նա՝ որ վերջապէս իւր ցաւոց դեղ մը պիտի կրնայ գտնել, և այս ժամանակը մօտեցած կը կարծէր ։ Բայց բաղդին յաղթահարելու համար իր ըրած բոլոր ջանքերն ու ճիգերը պարապը ելան, ինչու որ աւելի խստագոյն կերպով ամեն կողմէն դըժբաղդութիւնը յամառութեամբ վրան կը յարձակէր ։

Բազում ջանքերէն՝ հնարքներէն և աղաչանքներէն յետոյ՝ այն իւր յուսացած շատ տեսակ գործերէն բնաւ մէկուն չը կրցաւ հասնիլ . առանց խնդիրը կատարելու իւր խօսքերը միայն մտիկ ընելու հազիւ զիջանող հպարտացեալ անձանց առջեւ՝ յաճախակի անպարտ տեղ ամօթահար եղաւ . մերթ զինքը խաբել ուզող սուտ բարեկամաց միամտութեամբ ապաստանեցաւ, և մերթ խոնարհելով աղերս՝ աղաչանք և պաղատանք ը-

րաւ այնպիսի անձանց, որք երբեմն կողկողագին կերպով իւր հօրը և իրեն առջեւ ինկած շատ անգամ աղաչելնին տեսած էր ։ Բայց ասոնց մէկէն ալ օգնութիւն չը գտաւ ։ Մինչդեռ նա իւր անձանձիր գործունէութեամբ ամենայն դժուարութեանց յաղթելով, իւր ուզած նպատակին հասած կը կարծէր, մէկուն բռնութիւնը, միւսին փոփոխամտութիւնը և ուրիշ մէկու մը գլխուն եկած փորձանքը մէկէն 'ի մէկ ամեն բան տակն ու վրայ կընէին, և իւր ամեն յոյսերը կ'ոչնչացնէին ։

Ամեն բանէ ետքը մէկ վայրկեան մը գըտաւ, ուր կարծեց՝ թէ ալ բոլորովին իւր գործը ապահովուած է, և յոյսը վերստին կատարելապէս նորոգուած սեպեց ։ Ամեն գործի մէջ յաջողակ և արքունեաց մէջ մեծ համբաւ ունեցող Տէրմի կոմսը, այն միջոցին նոտարներէն մէկուն հրաժարելովը՝ անոր տեղը պարապ գտնելով միջնորդեց այն պաշտօնը Անտոնիոսին տալ, որուն համար կատարեալ խոստումն առաւ ։ Երբ եկաւ ժամանակն, և քանի մը օրէն զկնի ամենայն ինչ պիտի կատարուէր, և Անտոնիոս պիտի պարապէր յառաջադրեալ գրագրութեան գործոյն, անօրէն կոմսը ինքնին հիմնայատակ ըրաւ խոստումը՝ զոր 'ի կատար հասուցած էր . նա յանկարծ խոստմանը դրժեց, և պաշտպանութիւնը անհաշտ թշնամութեան փոխարկելով Անտօ-

նիսի ունեցած ուրիշ բոլոր յոյսերուն ալ անիրաւաբար խոչընդոտն ու արգելք եղաւ ։ Որովհետեւ այն փոյթը՝ զոր ապիրատ կոմսն յանձն առած էր Սնտօնխոսին համար, կը կարծուէր թէ մեծահոգի բարերարութենէ մը յառաջ եկած էր․ բայց ափսոս, որ խիստ անվայել նպատակի մը համար էր․ և ուրիշ պատճառէ մը յառաջ եկած չէր, բայց միայն իւր պագշոտ և պիղծ կիրքէն, զոր խղճի կուրութեամբ յղացած էր նա պարկեշտուհի Եղիսաբէթին համար ։ Սա իւր այն անմաքուր և պիղծ խորհուրդները մինչեւ այն ատեն պահելէն վերջը, ալ այնուհետեւ յարմար ժամանակ և պատեհ վայրկեան համարեց իւր սրտին չարութեան քօղը բանալ, և իւր զազիր ու վաւաշոտ բաղձանքը լըբօրէն յայտնել ։ Բայց երբ մաքրասէր Եղիսաբէթին ըզգօնամտութեան՝ անաղարտելի մաքրութեան և ողջմտութեան ու ողջախոհութեան չափը առաւ, ամաչելու և այն անմեղ տատրակէն խրատուելու տեղ, յիմարական կատաղութեամբ և դիւական ցնորքով մը սաստիկ բարկանալով, իւր յղացած պիղծ սէրը և գազանային կիրքը ատելութեան փոխարկեց, և Սնտօնխոսի համար պատրաստած նոտարութեան պաշտօնը ուրիշներուն յանձնելէ վերջը, դիւական չարասրտութեամբ Սնտօնխոսին ուրիշ ամեն պաշտօններու մէջ մտնալու ակնկա-

լութեան դռները և յաջողութիւնները դաւաճանութեամբ և նենգութեամբ գոցեց, և խափանել կամեցաւ այն անագորոյն ոճրագործն ու մարդատեաց գազանը ։

Ողորմելի երիտասարդն ամենէն երեսի վրայ թողուած, այն անօրէն բռնաւորէն հալածուած, արդէն 'ի սպառ յուսահատութեան մէջ ինկած էր ։ Իւր, և իր կնկան ունեցած բոլոր մեծագին կահ կարասիները և ինչքերը, նաեւ իւր տանը ամենապիտանի կազմածներուն և անօթներուն մեծ մասը ծախած էր, և անկէ ետքը իւր կարեւոր պիտոյքները ինչպէս և ինչ ճանապարհաւ հոգալը չէր գիտեր ։ Ալ այնուհետեւ իւր ապրանաց բոլոր յոյսը՝ միմիայն իւր երկու բարեկամաց վրայ դրած էր, որք միայն հաւատարիմ մնացած էին այնքան բազմաթիւ բարեկամաց մէջէն՝ որք յառաջագոյն իր յաջողութեան և լիութեան ատեն, նորա չորս կողմը առած քովէն չէին զատուէր ։ Բայց այս երկու հաւատարիմ բարեկամներն ալ իւր կարօտութիւնը լեցնելու չափ կարողութիւն չունէին ։ Բարեպաշտուհին Եղիսաբէթ չքաւորութեան պատճառաւ, ալ տունէն դուրս ելլել չէր համարձակէր․ ուստի եւ պարտաւորուած էր բանտարկեալի պէս արգիլուած մնալ իւր խուցին մէջ ։ Սնտօնխոսին հայրը ծերութենէն և իւր աղէտից անտանելի ծանրաբեռ-

նութենէն տառապեալ, իր մահճին մէջ քիչ քիչ երթալով կը հիւծէր և կը մաշէր. իսկ երկու խեղճ և դեռափթիթ մանկունքն՝ մաշած և նիհարցած օր աւուր անօթութենէ կը նուաղէին։ Իսկ ինքը, գունատած՝ նիհարցած՝ զօրութենէ նուաղած և գլուխը 'ի ներքուստ տոչորող ջերմով մ'ալ տագնապած, աչքերը խորունկը ինկած և մեռելատիպ դէմքով՝ ամեն վայրկեան կը կարծուէր, թէ իր ամենաթշուառ աւուրց վախճանը մօտեցած է։

Օր մը նեղութիւնը գլուխը խաղաւ կը տանջէ, որովհետեւ ամեն բանէ զուրկ և ամեն բանի կարօտ կը գտնուէր. և մանաւանդ կը տեսնէ իր ծերունի հայրը անօթութենէ նուաղած, որդիքը՝ որ կողկողագին ձայնիւ պատառ մը հացիկ կը խնդրեն, սարկեշտափայլ կինը՝ որ իր բարեջան և սիրելի այրը չը տրտմեցնելու համար իր սրտի խորոց հեծեծանքը լռութեան մէջ թէպէտ կը խեղդէր և կը ծածկէր, սակայն չէր կրնար իր ցաւերը բոլորովին պահել։ Ասոր այս սըրտաճմլիկ տեսարանին վրայ սիրտը չը դիմանալով՝ որոշեց Անտօնիոս վհատած դուրս կ'ելլէ, և կ'երթայ վերոյիշեալ երկու մտերիմ բարեկամները գտնելու, որոնցմէ միայն կըրնար սակաւ ինչ օգնութիւն յուսալ. սակայն աւա՜ղ, անոնցմէ մէկն ալ չը գտնէր։ Վասն որոյ շուարած և անճարացած կը մնայ, և չը

գիտէր՝ թէ ո՞ւր երթայ. վերջապէս կը յաղթէ բնութեան ընդդիմութեանը՝ որ կ'արգելուր զինքը մուրալէ, և առաջին անգամ իրեն պատահողին մօտենալով, անկէ ողորմութիւն կը խնդրէ. բայց իր աղաչանքը չը լսուիր...՛ կը խնդրէ երկրորդէն, և նա եւս պատճառ մը յառաջ բերելով կ'անցնի կ'երթայ. կը մօտենայ երրորդին, և նա զայրանալով՝ ո՛ն, անդին գնա՛ կ'ըսէ։ Այս ձեռքերը վեր վերցնելով՝ կ'աղաղակէ ցաւագին. «Աստուած իմ, դու իսկ կը տեսնես իմ ողորմելի ընտանիքս, որք ամենքն ալ այսօր սովամահ պիտի լինին»։ Այս ըսելով՝ սըրտաթախիծ և զանազան աղէտալի և ցաւագին մտմտուքի մէջ ինկած, տխուր խորհուրդներով յուզեալ և ալեկոծեալ, կամաց ու անզօր ընթացքով՝ գլուխը կախած կ'երթայ մեղմաբար այնպիսի ճանապարհէ մը, ուրկէ շատ անցուդարձ չըլլար, եւ անկէ քիչ մը յառաջացած ժամանակ՝ ճանապարհին վրայ պատահմամբ փոքրագոյն թուղթի ծրար մը կը տեսնէ, և բնական շարժմամբ մը խոնարհելով՝ զայն գետնէն կը վերցնէ, կը բանայ. ո՜վ անակնունելի սքանչելեաց, և կը գտնէ անոր մէջ հարիւր դահեկանի լումայագիր մի։ Զայն տեսած ժամանակ անհնարին ցնծութենէն քիչ մնաց՝ որ խելքը գլխէն պիտի երթար։ Այս աչքերը երկինք վերցնելով՝ կ'ըսէ. «Ա-

մահ Աստուած, գթած Աստուած, ես քաջ գիտէի, որ դու խսպառ երբեք չը պիտի ձգէիր զիս. հզօր Թագաւոր, միմիայն բարերար, փառք քեզ»:

Այն ցնծութենէն հոգի առած և զօրացած՝ կրցածին չափ շուտ քայլերով կը փութայ երթալ և իւր վշտագնեալ հայրը, ցաւագին կինը և նկթեալ որդիքը մխիթարել: Իւր մինչդեռ ճանապարհին վրայ զանազան բերկրական խորհրդոց՝ նաև անակնկալ այս աստուածային շնորհաց յարմար ժամանակին պատահելուն վրայ յուսադրութեամբ լըցուած էր, մինչդեռ կը մտածէր ու կը հրճճուէր նաև ապագայ զուարճալի աւուրց քաղցր յոյսերով՝ զորս այս բարեդիպութեամբ պիտի վայելէր, յանկարծ մէկ վայրկենի մէջ ամէն բան փոխուեցաւ. հակառակ մտածութիւն մը իւր միտքը գալով, զինքը կը կապէ կը կաշկանդէ, և իւր առաջին խորհուրդներէն ետ կը կեցնէ: «Ի՞նչպէս, կըսէր նա իւր մտքին մէջ, ի՞նչպէս կրնամ ես այնպիսի կարգադըրութիւն մը խորհիլ այն բանի վրայօք՝ որնոր իմս չէ. անշուշտ այս դրամը ուրիշ մէկը կորսնցուցած է, որուն տէրը պահանջելու իրաւունքն ունի, և անյապաղ առ նա դարձընելն ալ իմ անհրաժեշտ պարտքս է . . . բայց եթէ գտածս ալ տիրոջը դարձնելու ստիպւիմ, ես ի՞նչ պիտի ընեմ, և լքեալ ու անօ-

թութենէ տանջուող ընտանեացս ի՞նչպէս օգնութեան պիտի հասնիմ . . : Սակայն գիտէ Աստուած զանոնք կերակրել, գիտէ նաև որ անոնք կան, և նեղութեան մէջ են, և հետևապէս ինձ համար ներելի չէ բնաւ օտարին սեպհականութիւնը իմ ընտանեացս պիտոյից համար գործ դնել . . . : Երբեմն ինչո՞ւ, եթէ անիկա ինձ սեփհականել չէր վայլէր, ինչո՞ւ կըսեմ, թոյլ տուաւ ինձ Աստուած այս յետին կարօտութեան ժամուս մէջ այս նպաստը գտնել, ի՞նչ պատճառաւ . . . բայց ինձ չ'իյնար նորա անքննին խորհրդոց դատաւոր ըլլալ: Ինձ կը մնայ միայն՝ յուսով ըսպասել Նախախնամութեան խնամոց. և ինչ որ միանգամ՝ օտարին կը վերաբերի, անդադաղ առանց ժամանակ կորսնցնելու յետ դարձնել»: Քիչ մը ժամանակ այս խորհրդոց մէջ տակն ու վրայ ըլլալէն վերջը, իւր խօսքերը վերատին կրկնելով՝ կըսէ. «Ով ամենամեծ Տէր իմ և Աստուած իմ, գլուխս կը խոնարհեցնեմ քու ամենասուրբ և երկրպագելի օրինաց առջև, և քեզ կը հնազանդիմ»: Զայս ըսելով իսկոյն կը դիմէ աւագերիցուն տունը, և անոր կուտայ գտած լումայաքիրը, զայն գտած տեղն ալ յայտնելով, որպէս զի նա ծանուցումներով տէրը փնտռէ և գտնէ, և ստացուածքը տիրոջը յանձնէ. և կը խոստովանի մի առ մի իւր այն ստակը գտած ատեն մտքէն անցած-

ները․ կը յայտնէ նաեւ իւր ամէն աղէտալի դիպուածները և թշուառ վիճակը, որոց մէջ արդէն մինչեւ այն կէտին համոյն պարագայիւք կը տանջուէր։ Գթասիրտ քահանայն նորա թշուառ կեանքին ցաւագին հանգամանաց պատմութիւնը լսելով՝ արտասուքը չը կրցաւ զսպել, և ըսաւ․ «Ամենաբարին Աստուած անշուշտ պիտի օրհնէ քու արդարամտութիւնդ․ առ սա քիչ մը դրամը, և ներկայիս մէջ սատար հոգայ քու կարեւոր և անհրաժեշտ պիտոյքներդ․ ես կը յուսամ, որ այս թղթոյս տէրը անշուշտ առատապէս զքեզ կը վարձատրէ»։

Անտօնիոս առած ողորմութեամբը բաւականանալով, և իւր բարեգործութեանը վրայ ուրախացած՝ վազելով կը փութայ իսկոյն կերակուր գնել, և պէտք եղածը ճարելով՝ մեծաւ տագնապաւ կը վազէ և կ՚աճապարէ տանիլ զայն իւր սովեալ ընտանեաց։ Մայրը՝ կինը և գեղաբուսիկ որդիքը, որք շատ ժամերէ 'ի վեր նորա գալստեանը անհամբեր կըսպասէին, եւ արդէն անօթութեամբ նուաղած էին, երբ նա տուն հասաւ, նոքա երկնքէն իջած մխիթարիչ հրեշտակ մը համարեցան զայն։ Անտօնիոս երբեմն մէկը և երբեմն միւսը գրկելով և վրանին մրմնջելով, «Ով հայր իմ, կըսէ, դեռ Աստուած ըզմեզ իսպառ մոռցած չէ․ և մեր վերջին յու-

սաբեկութեան մէջ իսկ հաճեցաւ անակնկալ կերպիւ այս օգնութիւնը մեզ խրկել»․ և կը պատմէ անոնց մի առ մի բոլոր պատահածները։ Երբ գտած լումայագիրը առաջ քահանային տալու խորհուրդը և գործով ալ կատարելը պատմեց, նորա Եղիսաբէթ կինը՝ որ մինչեւ այն ատեն լռութեամբ սպասելէն սիրտը կը հատնէր, քաղցր արտասուօք մը անոր փաթթուելով՝ կըսէ․ «Բա՛ւ լսի, արդարեւ Աստուած զմեզ տակաւին մոռցած չէ, որովհետեւ թոյլ չը տուաւ, որ դուն սատիկ կարօտութենէդ ստիպեալ ուրիշի սեփականութեանը անիրաւաբար տիրանաս, և խղճիդ ու Աստուծոյ առջեւ յանցաւոր լընաս։ Քու այս արժանաւոր և գովելի գործէդ մեծամեծ յուսադրութիւններով կը լեցուիմ, անշուշտ ասոր փոխարէնը Տիրոջմէն կընդունիս․ այո, ամենաքաղցր կենակից իմ, այո, այս բանի համար երբէք մի երկմտիր»։

Իսկ աւագերէցը փութով աճապարելով, իսկոյն լումայագրին տէրը գտաւ։ Այն գընուած լումայագիրն ճոխագոյն և խիստ հարուստ դուքսի մը կը պատկանէր, որ նոյն ճանապարհէն անցած ատեն՝ անզգուշութեամբ վրայէն գետին ընկած էր։ Քաջարթուն և ժողովրդասէր երիցապետը անոր յիշեալ թուղթը տուած ատեն՝ բարեպաշտ Անտօնիոսին արդարամտութիւնը գովելէ, և նորա գլխէն

անցած ամէն դիպուածներն ու փորձանքները մի բառ միջէ պատմելէ, և անհնարին ու անտանելի չքաւորութիւնը յայտնելէ չը դադրեցաւ, որուն մէջ երկար ժամանակէ 'ի վեր կը տառապէր Անտօնիօս համայն պարագայիւք ։ Դուքսը այս պատմութենէն մորմոքելով՝ այն լումայագրին մէջ գտնուած գումարին ցխունը բովանդակապէս ետ դարձնելով՝ ըսաւ. «Այս դրամը առ, և իմ կողմանէս այն գերարժան մարդուն Անտօնիօսին տուր»։

Եւ բաց յայտնանէ իւր բոլոր իշխանութիւնը և շնորհը Անտօնիօսին պաշտպանութեան համար գործ դրաւ. անանկ որ քիչ ժամանակէն յետոյ փառաւոր պաշտօնի մը վրայ անցուց, այն անօրէն Տէրմի կոմսին չարասէր պղծախորհուրդ և նենգաւոր կամաց հակառակ, որոնք մինչև այն ատեն անիրաւաբար այս առաքինի ընտանեաց դէմ կեցած էր, և որոյ եղեռնագործութիւնները քիչ ժամանակէն յետոյ յայտնուելով, արքունեաց շնորհքներէն բոլորովին ինկաւ, և հայրենի երկրէն անդառնալի կերպով աքսորանքի դատապարտեցաւ ։

Արդարեւ աշխարհս միշտ յեղափոխութեան մէջ է. բաղդի պարգևներն ալ նմանապէս փոփոխական ըլլալով, պէտք չէ մարդիկ յոյսերնին անոնց վրայ դնեն, քանզի ձո-

խութիւն և մեծութիւն կուգան ու կերթան, սակայն առ Աստուած յուսացելոց բան մը չը պակսիր. այնպիսիք աղքատութեան մէջ ալ մխիթարեալ են։ Աշխարհս ամէն ուրեք լի է խաչերով. և մարդու մը կենաց բոլոր ընթացքին մէջ, դպրոցական ընթացքէն սկսեալ մինչև իւր կենաց յետին շունչը՝ ենթակայ է խաչերու։ Խաչ, մարդկան կենաց և փրկութեան ոխերիմ աներևոյթ թշնամիէն. խաչ, վատ և անխիղճ եղբարց նախանձու և կոպիտ բնաւորութենէ. վերջապէս խաչ. . . ամէն տեղ և ամէնէն. և այս խաչերը դիւրութեամբ տանելու համար, մարդ 'ի մանկութենէ պէտք է, որ իւր ծնողքներէն խոնարհութեան եւ համբերութեան մէջ կրթուած ըլլայ. և կամ չափահասութեան ատեն խոհականութեամբ խաչի զօրաւոր դասը առնի մեր Փրկչի կեանքէն, ինչպէս սովորած էր Անտօնիօս, որ երբ ճշմարիտ քրիստոնեայ իւր յոյսը միայն ներկայիս վրայ չէր դրած. կատարեալ երջանկութիւնը, աներկբայ յուսով միայն Աստուծոյ մէջ կը գտնար. իւր անձը երկրիս մէջ օտար եւ պանդուխտ կը համարի, և միայն նորա արքայութիւնը և արդարութիւնը կը խնդրէ, որոց հետ հարկաւ կը տրուին միւս պէտք եղածներն ալ։

Ինչ գեղեցիկ զուգադիպութիւն է, որ Անտօնիօսի նման առաքինի սրտի մը երբ ճըշ-

մարխս վարձք, առաքինի կենակից մը կը շնորհուի ։ Եղիսաբեթին պարկեշտութիւնը, զգօնամտութիւնը և առաքինութիւնը յայտ յանդիման կ'երեւի, որ կը մերժէ և յոչինչ կը համարի փարթամագոյն մալին, և իրեն փեսայ և ուրախութեամբ կենակից կ'ընտրէ զառաքինին Անտօնիոս, զի "Նմանն զնմանն սիրէ". և դիտէ, որ առաքինութիւն սիրողը քնաւ անկարծ և նեղութեան մէջ անօգնական չը մնար ։ Բայց այժմ ո՞ւր են արդեօք Եղիսաբեթի շաւղին հետեւողները, ո՞ւր են առաքինութիւնը փարթամութենէ և հարստութենէ վեր դասող կիները, գուցէ թէ հազարէն հազիւ թէ մէկ հատ կրնայ գտնուիլ ։

Իսկ այն անզգամ Տէրմի կոմսին համար ի՞նչ ըսենք, անիկա մարդասպան հրէշ մի է. քանզի մարդ սպանելը, միայն սրով և սրիչ բանով մը այս կեանքէն զրկելով չըլլար, այլ նաեւ կարօտելոյն օգնելու կարողութիւն ունենալով չօգնելը, մէկու մը ապրուստին աղբիւրները գոցելը, և զրկանք հասցնելը, ասոնք ամէնքն ալ մարդասպանութիւններ են ։ Շատ անգամ կը տեսնենք, որ բարի և բարեպաշտ անձինք նեղութեան և տառապանաց մատնուած ու անօգնական մնացած են, իսկ դաս մը անաստուած բռնաւոր և խաւարասէր չարագործներ, ապերախտներ և որբապղծներ փարթամացած են, սակայն ի՞նչ կա-

րող ենք մտածել այսպիսի պարագաներու մէջ. կարող ենք ճշմարտապէս ըսել, որ ճոխութիւն և աղքատութիւն մարդուն բուն արժէքը ոչ կը բարձրացնեն և ոչ կը նուաստացնեն. առաքինւոյն համար հարստութիւնը իւր բարեգործութեանց օգնող պիտանի բարիք մի է, իսկ աղքատութիւնը անոր արիութեան և համբերութեան փորձաքարն է. բայց մոլին համար երկուքն ալ պատիժ են, երկուքովն ալ միշտ դէպ 'ի կորուստ կը դիմէ ։

Աշխարհիս մէջ ինչպէս ճշմարիտ բարեկամներ և նեղութեան ատեն անշահախնդրութեամբ օժանդակիչներ կը գտնուին, նոյնպէս ալ կեղծ բարեկամներ և ամէն բան միայն իրենց օգտին համար մտածող և գործող անխիղճ ոճրագործներ անպակաս են, որ ձախորդութեան մէջ աւելի կը փորձուին, Իմաստնոյն բանին պէս. թէ՝ "Որպէս ոսկի քննի 'ի բովս, նոյնպէս և բարեկամք 'ի ձախորդութեան". ամէն ժամանակ ուրեմն մարդ պարտի զգուշանալ և բարեկամ ընտրելու մէջ խոհեմ ու հեռատես ըլլալ ։

Իսկ յանկարծական յեղափոխութեանց պատճառաւ տառապանաց մատնուող խոհական և բարեպաշտ անձինք, երբ տեսնեն որ մարդիկներէն օգնութիւն չը կայ, և Աստուծմէ գալիքն ալ կ'ուշանայ, ի՞նչ պէտք է որ ընեն, միթէ յուսահատելու՞ են. Ոչ եր-

քէք. քանզի արդէն յուսահատութիւնն է որ զմարդ կը խորտակէ կորստեան վիհը. ուստի և այնպիսիք պարտին համբերել առանց տրտնջալու և իրենց ձեռքէն եկած ջանքը ընել, պարտին Աստուծոյ օգնութեան սպասել յուսով և հաւատքով և իրենց խղճի հանդարտութեամբը մխիթարուիլ, գիտնալով՝ որ Աստուած թէեւ երբեմն կ'ուշացնէ իր օգնութիւնը, սակայն ունի հազարաւոր միջոցներ իրեն յուսացելոց օգնութեան հասնելու, և զանոնք իր ամենազօր աջովն տառապանաց գուբէն հանելու. Թող յիշէ այնպիսին Տեառն մերոյ սա անսուտ խօսքերը, «Որ համբերեսցէ իսպառ՝ նա կեցցէ». և թէ «Համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր»։

Արդարեւ այժմ Անտօնիոսի նման զգօն որդիք քիչ կը գտնուին, որք իրենց հօրը կամ մերձաւորաց անխոհեմութեամբ և դժբաղդպատահմամբ այսպիսի տառապանաց մէջ իյնան, և այսպէս համբերեն արիութեամբ և առանց տրտնջալու։

Կը խնդրեմ ազնիւ ընթերցողք, աղէկ նըկատեցէք այս չնաշխարհիկ լծակցաց նեղութեան աստիճանը, և յիշատակաց արժանի համբերատարութիւնը. օրինակ առէք անոնցմէ, և միշտ գոհացէք Աստուծմէ ձերունեցած վիճակին վրայ։

Տեսաք անշուշտ Տէրմի կոմսին անօրէն գործքը և զարհուրեցաք. տեսէք հիմա արթուն խղճիւ խորհող և գործող անզուգական Անտօնիոսին արդար խորհուրդն ու գործը, և զարմնացէք։ Մտածեցէք, որ զինքը նեղող անհնարին չքաւորութեան մէջ անգամ արդար ու բարեխիղճ է անդրդուելի առաքինութեամբ, և ներքին անաչառ դատաւորին արթնութեամբը անօթի մեռնիլը լաւ կը սեպէ, և գտած գանձը իր օգտին չը գործածեր, մինչու որ կը յիշէ թէ այն օտարին է։

Այս պատմութեան մէջ պերճիմաստ առակաբան Սողոմոնի արքային խօսքին ճշմարտութիւնը յայտնի կ'երեւի, որ կըսէ. «Կին ժրագլուխ պսակ է առն իւրում...» վասնզի ահա կը տեսնենք, որ համեստափայլ Եղիսաբէթ մեծ արիութեամբ իր սիրելւոյն հետ ձախորդութեան համբերելէ զկնի՝ այնքան չ'ուրախանար Անտօնիոսին գտած մարմնաւոր կորստական գանձին վրայ, որքան որ կը գոհանայ Աստուծմէ՝ նորա առաքինութեան յաղթանակին վրայ, որ անկորուստ հոգեւոր գանձ է։ Եւ անշուշտ եթէ Եղիսաբէթ այսպիսի առաքինի ամուսին մը չըլլար, Անտօնիոսին առաքինութիւնը մինչեւ այսչափ ատեն չը պիտի տեւէր. քանզի՝ ինչպէս որ բարի կինը իր էրկանը պսակ է, և տուն շինող է, նոյնպէս ալ չար կինը տնաւեր է, և

Երկանը նախատինք ու կորստեան պատճառ է։

Արդարոց յոյսը Աստուած է ինքնին, ուստի և իրենց յոյսէն չեն վրիպիր. ինչպէս որ համեստուհին Եղիսաբեթ ըսաւ Անտոնիոսին, թէ՝ «Անշուշտ ասոր որիսուրը Տէրոջմէն կընդունիս». ասիկա յոյս մ՚էր, և ահա կատարուեցաւ։ Ասոնց առաքինութենէն պակաս չէ նաև աւագերիցուն բարեպաշտութիւնը։

Ահա քաջ և արթուն հովիւ, ահա իւր պարտքը անթերի կատարող հովիւ. այն պարտքը, որ կը պահանջէ իրենցմէ հայր բարեխնամ լինել ժողովրդեան, որով անշուշտ պիտի վշտանան ընդ վշտացողս և խնդան ընդ խնդացողս, զի նոցա վիշտը կամ ուրախութիւնը իրենց կը համարին ուղղակի. վասն որոյ իրենց անհրաժեշտ պարտուց համեմատ կ՚աշխատին, մինչև որ վշտացեալը մխիթարեն։ Ահա այս արթուն հովիւն ալ, թէպէտ իւր պարտքը միայն կատարած է, սակայն պարտազանց ու անձնարած հովիւներու նկատմամբ արժանի է մեծամեծ գովեստից և առաքինի անուան։ Թող այս հովուին գործքէն խրատուին նոքա, որք գուցէ կը կարծեն՝ թէ առաջնորդութիւնը միմիայն վիճակաց ախրելու մէջ կը կայանայ. կը կարծեն, թէ կրօնաւորութիւնը ժողովուրդը՝ «Որպէս կերակուր հացի ուտել և առ Աստուած ոչ կարդալ» է.

կը կարծեն՝ թէ ժողովրդեան տրօք ապրիլ, ուտել խմել, և օրն 'ի բուն սենեակը անհոգ նստիլ, կամ ասդին անդին պարապ շրջիլ, շատախօսութիւն ընել ու ժողովրդեան նեղութեց և տառապանաց աչք փակել ըսել է։ Այնպիսիք եթէ կը հասկնան, թող կարդան սուրբ գիրքը. կամ եթէ լսելու ականջ ունին, թող ուրիշներէն լսեն և ուսանին, թէ ի՞նչ կըսէ հովուաց մասին. «Այսպէս ասէ Տէր Տէր, ո՛ հովիւք Իսրայէլի, միթէ հովիւք զանձի՞նս արածեն, ո՞չ ապաքէն զխաշինս արածեն. . . » Եզեկիէլ, ԼԴ. 1—31։ «Արածեցէք որ 'ի ձեզ հօտդ է Աստուծոյ. վերակացու լինել մի՛ իբրև ակամայ՝ այլ կամաւ ըստ Աստուծոյ. մի՛ զօշաքաղութեամբ այլ յօժարութեամբ. մի՛ իբրև տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին. զի յերևիլ հովուապետին՝ ընդունիջիք զանթառամ փառացն պսակ». Ա. Պետ. Ե. 2—4. ահա ասոնք են հովուի մը պարտաւորութիւնը։ Հովիւ մը անձնանուէր պէտք է լինի, և ոչ երբէք այնքան անձնասէր՝ որ հասարակաց օգուտը իւր անձին համար զոհէ։ Վերջապէս պէտք է նա Յիսուսի Քրիստոսի նման իւր անձն անգամ 'ի պահանջել հարկին դնէ հօտին վըրայ, ապա թէ ոչ՝ նա գող է և աւազակ. նա թէև արտաքուստ՝ նման գերեզմանաց գեղեցիկ վիմօք զարդարեալ է, այսինքն հովուի գեղեցիկ անունը զգեցած է, բայց 'ի ներ-

քուստ լի է յափշտակութեամբ և անօրէնութեամբ. այնպիսիք գայթակղութիւն են ժողովրդոց, որոց համար կըսէ Յիսուս. «Լաւ էր եթէ վէմ երկանաքար կախուէր վզին, և ծովը լինար, քան թէ ինձ հաւատացող այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէր»: Արդէն յայտնի է, որ խօսքս իւր պարտաւորութիւնը ճանչցող հովուաց համար չէ, որք արթուն հովուի նման անխոնջ ջանքով կ'աշխատին իրենց հօտին օգնելու և մարդկութեան բարիք մ'ընելու. այնպիսիք սիրոյ եւ երախտագիտութեան արժանի են, և այնպիսեաց խնամոց տակ գտնուող հօտն ալ պարտի հընազանդիլ անոնց ըստ բանի Առաքելոյն, թէ՝ «Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց, և հպատակ կացէք նոցա. զի նոքա տքնին վասն ոգւոց ձերոց, որպէս թէ համարս տալոց իցեն ընդ ձեր. զի խնդութեամբ արասցեն զայն, և մի յոգւոց հանելով. զի այն ոչ յօգուտ ձեր է». Եբր. ԺԳ. 17: Սակայն այսպէս բարի հովիւք եթէ իրենց արժանեաց համեմատ յարգանք չը գտնան, դարձեալ պէտք է ուրախ ըլլան, ինչու որ իրենց խղճի հանդարտութիւնը բոլոր աշխարհի վկայութենէ ու յարգանքէն աւելի մեծ է:

Այս առթիւ խօսքս չը վերջացուցած կուզեմ ազնուականաց և նոցա զաւակներուն ալ քանի մը խօսք ուղղել խոնարհաբար. մանա-

ւանդ այնպիսեաց, որ ժամանակաւոր, խաբուսիկ, երազանման համբաւներով եւ ճոխութեամբ պերճացած, և այն ալ իւրեանց աշխատասէր և որդեգորով հարց շնորհիւ, ոչ միայն չափերնին չեն ճանչնար և իրենց պաշտօնին ու պարտուց պահանջածին համեմատ չեն ընթանար, այլ նաեւ անօրէն Տէրմի կոմսի նման՝ միմիայն իրենց նենգաւոր կամքերը կատարելու համար, աստուածասէր Անտօնիոսի պէս շատ մը ողորմելիներ և անմեղներ կը հարստահարեն ...: Այնպիսեաց եղեռնական քաղցր սիրով կապուէնք, որ աչքերնուն առջեւ իրեն վերջիջեալ պատմութիւնը և ասոր նման շատ դէպքեր՝ որ չեն պակսիր, և թող խրատուին. ապա թէ ոչ՝ կանուխ կամ ուշ արդարութիւնը և ճշմարտութիւնը երեւան պիտի գայ, և համբերող խոնարհ ճշմարտասէրը պիտի պսակուի, իսկ կրից գերի հարստահարիչը խայտառակուելով սեւերես պիտի մնայ, ասա և'ի հանդերձեալն: Այս է ամեն հարըստահարողաց և հարստահարելոց փախճանը, ինչ կարգէ որ լինին. քանզի այս է տիեզերաց վրայ հսկող արդարութեան վճիռը:

Այսու ամենայնիւ չենք կարող ուրանալ այն բացառութիւնները, որք ազնուութեան և քրիստոնէութեան պատիւ կը բերեն, և ամեն սրտէ երախտագէտ շնորհակալութիւններ կ'ընդունին: Վասնզի բարեկիրթ ազնիւ-

և կարեկից սրտի տէր պատանիներ և իշխանա-
զուններ ալ կան, որք չեն դադարիր առաքի-
նական գործերով ազգին և մարդկութեան
օգնելէ ։ Միայն ցաւալին այն է, որ այնպի-
սեաց թիւը խիստ քիչ է. ուստի և ամէն ազ-
գային անհատ՝ որ իր երակաց մէջ Հայու-
թեան արիւն կը կրէ, պէտք է խնդրէ Աս-
տուծմէ, որ այնպիսեաց յաջողութիւն տայ
և թիւերնին բազմացնէ, իսկ առաջնոց ալ
կամ բարձ և կամ դարձ. բայց աւելի դարձ
խնդրենք, որ Աստուած իւր անբաւ ողոր-
մութեամբը ողորմի ամենայն աշխարհի և Ե-
կեղեցւոյ իւրում սրբոյ. ահա այս է իմ միակ
բաղձանքս ։

Գուցէ բարեմիտներէն ոմանք պիտի կը-
կնեն ինձ Հայաստանի թշուառութիւնքը ող-
բացող պատմաբան Խորենացւոյն Մովսէսի
սա յանդիմանական խօսքերը, թէ՝ «Աշակերտք
հեղգք առ 'ի յուսումն, և փոյթք առ 'ի վար-
դապետել. որ՝ նախ քան զտեսութիւն աս-
տուածաբանք» ։ Բայց այնպիսեաց խոնարհա-
բար կը պատասխանեմ. նախ՝ թէ ես որ ուս-
ման մէջ կաթնկեր մանուկ մի եմ, եթէ լռեմ,
քարերը պիտի աղաղակեն, և իրենց ալ շատ
սուղ կը նստի այն ժամանակ... երկրորդ՝ թէ
չարը բարիէն որոշելու և բարին սիրելու ու չա-
րէն խորշելու ուսումը, աստուածաբանութե̄
գործը չէ, նախապաշարումներէ և կիրքերէ

ազատ խելքի սեպհական է ։ Քանզի և անոնցմէ
շատերն ալ աստուածաբան, տրամաբան,
ճարտարաբան և վերջապէս բազմաբան են,
սակայն ահա յայտնի է գործերնին, որ այդ-
քան ... Բանո–Ըի–նները օգուտ չեն ըրած.
իսկ կան շատեր ալ՝ որք թէև այնքան Բազմա-
բան չեն, սակայն որչափ որ երկինք յերկրէ
բարձր է, նոյնքան բարձր է բարութեամբ
նոցա գործը առաջնոց արարքէն. և ասոր
պատճառը ի՞նչ է, բայց եթէ՝ ուսման հիմը
իւր հաստատուն վիմին վրայ չը դնելն է, ին-
չու որ «Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն.»
կըսէ Իմաստունը. ապա թէ ոչ՝ ուսմունքը
ինքն ըստ ինքեան զմարդը չ'ուղղէր, այլ անոր
աւանդելու եղանակն ու ընդունողին հան-
գամանքն է, որ լաւ կամ վատ հետեւութիւն
կ'ունենայ ։ Նաև ահա այս է պատճառը, որ խեղճ
և ռամիկ ժողովրդեան մեծ մասը հաստատ
մտքերնին դրած են, թէ ուսումնականները
անհաւատ կըլլան. ուստի և աւելի կը յօժա-
րին իրենց որդիքը Վոսփորի բեռնակրութեան
աշակերտել տալ, քանթէ ուսման. կամ թէ
Սաղմոս, Նարեկ սորվելու պէս կըսեն, բա-
ւական է. մեր տղան վարդապետ չը պիտի
ըլլայ, և այլն ։ Ահ, ի՜նչ խղճալի վիճակ, որ
կարող է վերնալ ըստ մասին հոլովաց արթ-
նութեամբ, և ըստ մասին ճշմարիտ ուսում-
նականաց, բարեջան հոգաբարձուաց, ըզջա-

միտ ժողովրդոց և անշահասէր բարերարաց ջանքովն ու հսկողութեամբը ։ Ուսումն կրթութիւն և դաստիարակութիւն եթէ Աստուծոյ երկիւղով սկսի, անով յարատեւէ և ՚ի նա եզերի, մարդկան շնորհաց ՚ի շնորհս յառաջանալու պատճառ կըլլայ, և բազմաբեղուն արդիւնք կ՚ունենայ ։ Ուրեմն՝ թող հասկնան թէ այս բանիս մէջ ո—րէ—ններո—կարօտութիւն չկայ այնքան, որքան որ խոհականութեան և յառաջատեսութեան ։ Ուրեմն Խորենացւոյն յանդիմանութիւնը ընդունելով հանդերձ կուզեմ ուսանիլ և ուսուցանել, եթէ դու ալ կուզես սովրէ և օգուտ քաղէ ։

ԺԳ .

Գուլիէլմոս Թէլ

ՀԵԼՎԵՏԻԱՆ զէնքի զօրութեամբ իրեն ցանկալի ազատութիւնը ստանալէն յառաջ, որնոր վերջը հաստատուն պահեց, Ալտորֆ քաղաքին մէջ Գրիսլէր անուամբ մէկը քաղաքապետ դրուեցաւ, որնոր իրեն աւանդուած իշխանութիւնը գէշութեամբ յառաջ տանելով, սկսաւ անիրաւութեամբ բռնադատել և նեղել ժողովուրդը ։ Շահախնդրութիւնը եւ կամակորութիւնը միայն իւր

դատաստանները կը կառավարէին . արդարութիւնը և իրաւունքը բոլորովին անկէ հեռացեր էին, և իրաւունքը արծաթով կը ծախուէր . անմեղներն ալ անոր հնարած տանջանքներովը կը տանջուէին . բռնաւորին պաշտօնեաները առանց պատժուելու չարութեանց ամեն տեսակները կը գործէին . ամեն բան շփոթութեան և անկարգութեան մէջ էր ։

Բռնաւորը իւր ցնորական անգթութիւնը երթալով աւելցուց ։ Հրապարակին մէջ ձող մը կանգնեցնելով՝ անոր ծայրը արտախուրակ (գլխարկ) մը անցնել տուաւ, և մունետիկ հանելով՝ կանչել կուտար ըսելով, թէ «Ամէն անցնող պէտք է ձողին առջեւը իւր գլուխը խոնարհեցնէ, և յարգութիւն տայ անոր, նոյն իսկ դատաւորին առջեւ եղածի պէս» . և միանգամայն այս հրամանին դէմ կեցողներուն մահ սպառնացաւ ։

Այն կողմերը պարզամիտ և միանգամայն համարձակախօս Գուլիէլմոս անուամբ գիւղացի մը կար ։ Այս մարդը գործի մը համար քաղաքը գալով պատահաբար այն ձողը կանգնեցուցած հրապարակէն կ՚անցնի, կը տեսնէ զանիկա . բաւական ժամանակ բերանը բաց աչքը արտախուրակին վրայ դարձուցած կը նայի, և զարմանալով անոր վրայ՝ կը ծիծաղի . այլ անոր ինչ ըլլալը չը գիտնալով և հարց ու

փորձ ընելը պարապ բան սեպելով՝ ասոր վրայ ամենեւին փոյթ չըրաւ , մանաւանդ ծիծաղելով մը անցաւ անոր քովէն ։

Կանգնուած ձողին եղած անարգութեան և սաստիկ հրամանին դէմ դնելուն լուրը շուտ մը բռնաւորին ականջը հասաւ , որ սաստիկ բարկութեամբ բորբոքած հրամայեց որ իսկոյն յանցաւորը բռնեն ։ Երբոր առջեւը բերին , դժնէհայեաց և հրացայտ աչքով գազանի պէս անոր վրայ նայելով , ըսաւ . «Ո՛վ ապիրատ մարդ , այսպէ՞ս կը հնազանդիս դու իմ հրամաններուս , և կը յանդգնիս ծաղրել զիս , և համարձակութեամբ կ՚արհամարհես իմ իշխանութիւնս . Հիմա՝ ո՛վ չարեացապարտ մարդ , քեզի արժանի եղած պատիժը պիտի կրես քու յանցանքիդ համեմատ , որ ամենուն սոսկալի նշան ըլլայ , որպէս զի ճանչնան թէ իմ մեծութիւնս արհամարհողը անպատիժ չ՚ազատիր » ։ Այս յանդիմանութեան վրայ Գուլիէլմոս ապշեցաւ , բայց իւր սրտին մէջ միասու գործք մը չ՚ունենալուն համար ամենեւին չը վհատելով աներկիւղ համարձակութեամբ հարցուց , թէ՝ ի՞նչ յանցանքի համար ամբաստանուած էր ։

Շինականը քաղաքապետին յանդիմանելուն պատճառը իմանալով , այնչափ այլանդակ երեւցաւ իրեն , որ մինչեւ անգամ չը կրցաւ ծիծաղը բռնել ։ Նախ պատասխան տուաւ

ըսելով . թէ « Այդ հրամանին վրայօք բնաւ տեղեկութիւն մը չ՚ունէի » . և վերջը գռեհկական անմեղ համարձակութեամբ մը ըսաւ . « Մէկ ձող մը ողջունելու պարտաւորութիւնը մտքէս չէր անցներ , և անոր գլուխ չը խոնարհեցնելով առջեւէն անցնիլը քրէական յանցանք ըլլալը երբէք չէի երազեր » ։ Այս անարգանքներուն համար դատաւորը գազանի նման կատղեցաւ , և պատասխանին բանաւորութեանը վրայ աւելի ամաչելով դիւահարի պէս մոլեգնեցաւ ։ Ուստի հրամայեց որ զանիկա բանտին խորը ձգեն , որ այն տեղ երկաթի կապանքով կաշկանդուած՝ իւր յանցանաց վրէժին սպասէ ։

Անողորմը բարկութենէն կը տագնապէր , և իւր ատամները կը կրճտէր , և չէր գիտեր , թէ իւր գազանային սրտին դժոխային կրակը աւելի սոսկալի տեսարանով մը զովացընելու համար ի՛նչպէս կամ թէ տանջանաց ո՞ր տեսակը կրնար գործածել ։ Մինչդեռ իւր դիւագրգիռ խորհրդոց մէջ կը ծփար , մարդուն մէկը անմեղ շինականին վրայ գթալով՝ անօրէն դատաւորին վայրագութիւնը մեղմացնելու հնարք մը հնարեց . և ուզելով միանգամայն ազատել զանիկա անոր ձեռքէն , անխոհեմաբար վրէժխնդրութեան նոր ու աւելի սոսկալի կերպ մը սովրեցուց անոր ։ Գուլիէլմոսի վրայ շատ բաներ խօսելէն վերջը՝ գո-

մեջ անոր քաջավարժութիւնը և յաջողաձեռնութիւնը, անհամեմատ բարձրացուց զանիկա նետաձգութեան մէջ, և անոր անխափանշան առնելու մասին մէկ հատիկ ըլլալը հասկցուց, որով միշտ նպատակին կը հասնէր. աւելցուց նաեւս թէ այսպիսի քաջազօր մարդու մը այսպէս թշուառաբար մեռնիլը չը վայլէր: «Շատ աղէկ, պատասխանեց դատաւորը իւր հպարտութենէ ցածնալով, անոր քաջութիւնը փորձենք, եթէ առանց չեղելու իւր նետը նպատակին հասնէ, թող ազատ ըլլայ անիկա. իսկ թէոր պարապ ելլէ, բնաւ մէկը չը կրնար զանիկա մահուանէ փրկել:

Գուլիէլմոսը տասը տարեկան մէկ հատիկ զաւակ մը ունէր, որնոր շատ կը սիրէր. արդ դատաւորը ուրիշ յարմարագոյն եղանակ մը գտաւ իւր դժոխային բաղձանքը լեցընելու համար, ուզեց՝ որ թշուառ հայրը վտանգի մէջ ձգէ նորա ձեռքովը իւր որդին նետահար սպանել տալով: Ասոր համար հըրամայեց, որ նոյն իսկ մանուկը իւր քովը բերեն. և զանիկա հրապարակին մէջ տեղը կայնեցուց, և հօրը հրամայեց ըսելով. «Թէոր քու անձդ կատամահ չարաչար սատակելէ ազատել կուզես, այն նշանակուած հեռաւորութենէն մանկան գլխուն վրայ դրուած խնձորին միայն պէտք է նետով զարնես. ապա թէ

ոչ՝ գիտեմ ես քու անհնազանդութեանդ վըրէժը լուծել»: Այս խուժադուժ վայրենական պայմանին վրայ ողորմելի հայրը սարսափելով դողաց, և մտքին մէջ դրաւ ամէն սոսկալի տանջանք յանձն առնուլ, քան թէ այնպիսի անստոյգ վախճան ունեցող գործի մը ձեռք զարնէ: Այն ժամանակ թէպէտ շատերը անօրէնին որոշած այն սոսկալի տանջանքէն սարսափելով բռնաւորին միջնորդ եղան հաւանեցնելու, որ նետը ուրիշ տեղ նշան առնէ, բայց ՚ի զուր. որովհետեւ անողոքելի անօրէնը իւր վտանգաւոր գիւտին վրայ շատ կ'ուրախանար, ուստի դարձեալ բռնադատեց ապերջանիկ հայրը առջեւը դրուած վտանգը ընդունիլ, և կամ գետնէն քաշկըռտուելով տանջանաց մատնուիլ. այս անհնարին տագնապին մէջ ողորմելին կը տարակուսէր և շատ տեսակ խորհուրդներ մէկ վայրկենի մէջ անոր մտաց առջեւ կուգային: Սակայն վտանգը մտածելով՝ սիրտը տակնուվրայ կըլլար և կը տառապէր. նա այնպէս կ'երեւակայէր որ դեռահաս մանուկը արդէն խոցուած արեան մէջ կը լողար, և վերջին շունչը տալու վայրկենին մէջ կը տատանէր. միւս կողմանէ ալ ինքը մեռնելովը իւր որդւոյն գըլուխը գալիք ցաւալի աղէտները մտածելով՝ սիրտը կը ճմլէր ու կը տոչորէր: Այս անպատմելի և անհնարին շփոթման ու մտատանջու-

թեան մէջ, կարծես ձայն մը զգաց իւր սրտին մէջ, որ ամէն տատամսութիւնները փարատեց: «Թ՛էտր դաշինքն ալ չ՚ընդունիմ, կըսէր ինքն իրեն, դարձեալ որդիս պիտի կորսուի, ինչու որ իմ մահուանէս վերջը՝ կամ ցաւերէն և կամ թշուառութիւններէն շատ ժամանակ չը պիտի կրնար ապրիլ. այլ ես պայմանին հնազանդելով կարող եմ զայն փրկել: Տէրը արդար է, և չ՚ուզեր բնաւ անոր և իմ անմեղութիւնս անտես ընել»: Եւ իսկոյն դատաւորին դառնալով աչքին տակէն անոր կընայի ու կըսէ. «Ո՛ն ուրեմն, ո՛վ անողորմ, շատ աղէկ. քու բաղձանքիդ պիտի հասնիս. սոսկալի փորձը կ՚ընդունիմ. աղեղը և նետերը տուր ինձ»: Դատաւորը իւր արբանեակներէն շրջապատուած հրապարակը կ՚իջնայ. Թշուառացեալ մանուկը մէջ տեղ կը բերուի. անողորմը կը հրամայէ, որ զանիկա ծառին կապեն և խնձորը անոր գլխուն վրայ դնեն. ապերջանիկ հայրը հրապարակին մէկ կողմը կը տանին, որուն դէմքին վրայ անհնարին ցաւոց և մորմոքանաց նշաններ կը տեսնուէր. ծովու նման բազմութիւնը հրապարակին չորս կողմը կը լեցուի հանդիսատես ըլլալու համար: Անագորոյն Գրիսլէրը կը ցնծար և կը զուարճանար, իսկ ընդհակառակն ժողովրդեան մէջ սարսափման՝ բարկութեան՝ անիծաբանութեան քրթմնջիւնը կը լսուէր ամէն կողմէն: Անմեղ զաւակը սար-

սափելով կը դողայ և բարձր ձայնով կուլայ. Եւս աւելի հայրը կը սասանի և սիրտը կտոր կտոր կըլլայ: Սակայն վերջապէս կը զգաստանայ, և քաջալերուելով աչքը և ձեռքը երկինքը կը բարձրացունէ, եւ մեծ ձայնով կը գոչէ. «Դու ո՛վ գթած Աստուած, դու ո՛վ արդար Աստուած, դու հարուածը դէպ 'ի նպատակը ուղղէ»: Այս ըսելով՝ անդրդուելի սրտապնդութեամբ մը աղեղը կը բռնէ, նետը անոր մէջ կը դնէ, և աղեղը բարձրացուցած ժամանակ ամէն ժողովուրդը սոսկալի աղաղակ մը կը վերցնէ, ամէնը մէկ ձայնով կը պոռան, և վերջը խորին լռութիւն մը կը տիրէ: Գուլիէլմոս անխռով մտօք դէպ 'ի նպատակը դիտելով՝ լարը կը քաշէ և նետը կը թռչի: Դիտող բազմութեան մէջէն ոմանք սարսափած աչքերնին գետին կը խոնարհեցնէին, և ոմանք ալ հոգինին բերաննին հասած անհամբեր այս բանին վախճանին կըսպասէին. և ահա ճիշդ ժողովրդեան բաղձանաց համեմատ կատարուեցաւ: Քանզի նետը չկահելով կը թռչի, շիտակ խնձորին կը զարնէ, և տղան նետին փետուրներէն մազերուն շփուիլը հազիւ կ՚իմանայ:

Ցնծութեան և ուրախութեան ձայներ, և ծափահարութեան շառաչիւններ իսկոյն ամէն կողմէն կը լսուի. բոլոր ժողովրդոց տրտմութիւնն ալ կը փարատի և զուարճութեան

կը փախուի . իսկ դատաւորը ինքզինք իւր դիւական անկաշառութենէն խաբուած տեսնելով, սրտմտութեամբ կը կատղի, ակռաները կը կըճրտէ . և իւր աչքը Գուլիէլմոսին վրայ դարձուցած ժամանակ կը տեսնայ, որ անոր քովէն ուրիշ նետ մը կ՚իյնայ՝ զոր հետը բերած էր ։ Կը կանչէ զինկլա իւր քովը, և շուտ խաբելու համար քաղցրաբարոյ և հեզահամբոյր ձեւանալով, կըսկսի անոր ձեռքին յաջողակութիւնը գովել, որուն փորձը վայելչապէս ցցուցած էր, անվրէպ նշանակին զարնելուն համար զայն չափազանց մեծցուց, միանգամայն խոստովանեցաւ, թէ “Այս քաջութիւնդ հերիք կը սեպեմ, և բոլոր պատիժներէն կ՚ազատեմ». այսպիսի նենգապատիր խօսքերով սիրտն առնելէն վերջը՝ քաղցրութեամբ կը հարցնէ անոր և կըսէ . “Ինչո՞ւ համար երկու նետ բերած էիր , քանի որ մէկ անգամ մը պիտի նետէիր »։ “Այս սովորութիւն չունիմ, պատասխանեց Գուլիէլմոս , մէկ նետով միայն նետաձգութեան երթալ »։ Բռնաւորը խարդախ ժպտով մը կրկնեց . “Ոչ, սիրելիս , դու պատճառը ինձմէ կը ծածկես. բայց ես աղէկ գիտեմ. արդ քանի որ ամէն բան վերջացաւ , պահելը ի՞նչ օգուտ կրնէ . մինթէ միւս նետը ինձ համա՞ր էր , առանց վախնալու խոստովանէ . քու պարզախօսութիւնդ ինծի շատ հաճելի պիտի ըլլայ , և արդէն առաջուց կը ներեմ քե-

զի »։ Գուլիէլմոս դատաւորին նենգաւոր շողոքորթութիւններուն հաւատալով՝ կըսէ . “Որովհետեւ կուզես՝ որ ճշմարիտը ըսեմ, ուրեմն գիտցիր , որ կատարելապէս միտքս այն նետով քեզ զարնել չէր , բայց եթէ իմ դժբաղդութեամբս երբոր զաւակս քու պատճառաւդ աչքիս առջեւ խոցուած և դիաթաւալ գետինը ինկած տեսնայի, արդարեւ այն ատեն չեմ գիտեր թէ ի՞նչ պիտի սպասէիր որդին կորսնցնող հօր մը յուսահատութենէն »։

Խորամանկը երբ այս լսեց , նենգութեան քողը մերկանալով և սրտմտելով կըսէ. “Ուրեմն իմ խորհուրդներուս մէջ սխալած չեմ. արդ՝ ով նենգաւոր, հիմա շատ լաւ պիտի սանձահարեմ քու յանդգնութիւնդ աշտարակի մը խորը , և զիս քու դաւաճանութենէդ պիտի ապահովցնեմ». և սպասաւորներուն դառնալով՝ ըսաւ . “Ասիկա կրկին շղթայով կապեցէք և բանտ դրէք »։ Այս անակնունելի չարութեան և ուխտադրժութեան վրայ շրջակայ բազմութիւնը բարկութեամբ կը գրգռի. բայց աւելի եւս ողորմելին Գուլիէլմոս , որ լալով օգնութիւն կը խնդրէր , սակայն մէկը չը համարձակիր անօրէնը շրջապատող զէնքերուն բռնութեան դէմ դնել, ասոր համար թշուառացեալը կը պարտաւորի հանդարտիլ և հնազանդիլ։

Ալտորփի եզերքէն սկսած մինչեւ Լուցեռնա հասնող համանուն ծովակի մը մէջ հինցած ամրոց մը կայ Քուսնաքթ անունով. ժամու Գրիսլէրը խորհեցաւ՝ որ այս տեղ աքսորէ զանիկա. այս այնպիսի տեղ մը էր որուն մէջէն ելլալու ճար չը կար: Նաւակ մը պատրաստել տուաւ, և յանցաւորը այնտեղ դրաւ ըզգուշութեան համար պահապաններով շրջապատած, և իր անօրէն հրամանը կատարուելուն վրայ աւելի լաւ ապահով ըլլալու համար ինքն ալ հետերնին գնաց: Երբոր ծովակին մէջ տեղերը հասան, և ահա յանկարծակի լեռան մը ետեւէն թանձրացած մութ ամպեր կը տեսնուին, որ բարձրանալով սաստիկ հովէն քշուած քիչ ժամանակի մէջ երկնքի երեսը պատեցին. որոտման զարհուրելի ձայնէն բոլոր երկրագունդը կը դղրդէր, և շանթ արձակող փայլակները տեսնողները կը սարսափեցնէին. մրրկին ուժգնութիւնը զարհուրելի կատղած ալիքներ կը հանէր, և ալէկոծեալ նաւակը ջարդ ու բուրդ ըլլալու վտանգին կը հասցնէր: Թիավարները զուր տեղ կը ջանան ամէհի ալիքներուն դէմ դնել, որ երթալով աւելի եւս կը լեռնանան, և կ'երեւէր թէ մահէն ազատելու ճար չը կար: Այս անհնարին ու սոսկալի միջոցին թիավարներէն մէկը կըսէ դատաւորին. «Թէոր Գուլիէլմոսը չը քակես, որ մեզի օգնութեան հասնի, մենք ամէնքնիս

ալ ջուրին մէջը պիտի խեղդուինք. հիմա մենք անոր ուժին ու կորճութեանը կարօտ ենք մեզ ազատելու համար»: Անօրէնն Գրիսլէր այս վտանգէն զարհուրած և ահ ու դողով պաշարուած՝ անմիջապէս հրամայեց որ կապերէն քակուի: Քաջազօր Գուլիէլմոս երկու թի առնելով, սկսաւ բուռն զօրութեամբ ալիքներուն սաստկութեանը դէմ կենալ. ուրիշներն ալ իր զօրութեամբը քաջալերուած օգնեցին իրեն, և ծովակին մէջէն յաջողեցաւ նաւակը ցամաքին մօտեցնել: Այն տեղ ժայռ մը կար՝ որ ցամաքէն քիչ մը դէպ 'ի ջուրը երկնցած էր, զոր ալիքները զարնելով քիչ քիչ կը ծածկէին: Երբոր Գուլիէլմոս այն քարին մօտեցաւ, թիերը բոլորովին մէկդի նետելով ցատքեց, և ոտքով նաւակը հրելով դարձեալ ջուրին մէջ քշեց: Հնար չէ գրով յայտնել, թէ դատաւորը ինչպէս կատղած ու սասկացած կը մնչէր Գուլիէլմոսի խորամանկութեան և այն վտանգին վրայ՝ որ նորէն մատնուած և ստիպուած էր անզուսպ ալեաց վրայ տարուբերիլ: Իսկ Գուլիէլմոս վազելով կը փութայ վերստին իր զէնքերը առնել, և բարձր տեղ մը ելլալով նաւակին ինչ վիճակի մէջ ըլլալը կը դիտէ, որ շատ սաստիկ ալէկոծութիւն կրելէն վերջը՝ հովը քիչ քիչ հանդարտելով վերջապէս նաւակը ցամաք կը հասնի: Երբոր դատաւորը սաստիկ բարկութեամբ

եւ սրտմտութեամբ աւելի սաստիկ վրէժ առնելու փափաքով ցամաք ելաւ, աճապարեց Ալտորփ դառնալ եւ հոն սաստիկ հրաման հանել, որպէսզի ամէն տեղ Գուլիէլմոսը փընտռեն։ Իսկ Գուլիէլմոս տեղ մը պահուելով, դարան մտաւ այն ճանապարհին վրայ՝ ուր տեղէն որ դատաւորը պիտի անցնէր, եւ երբոր մօտեցաւ, Գուլիէլմոս անոր ահագին ձայնը լսեց, որ սպառնալեօք կ'աղաղակէր ըսելով. «Թէ որ անդունդներուն մէջ Թաղուած ըլլայ, ես զինքը հանելը շատ աղէկ գիտեմ, եւ մէկը չը պիտի կրնայ ազատել զանիկա իմ ձեռքէս, եւ անոր չարախօսման սատակումը իմ ծարաւըս պիտի զովացնէ»։ Գուլիէլմոս այս խօսքերը լսած ատեն գոչելով ըսաւ. «Ով բարբարոս, դու առաջ մեռիր». այս ըսածին պէս դարանէն նետ մը նետեց, եւ անոր սրտէն անցընելով գետին փռեց։ Վայրենի եւ անօրէն եւ այլանդակ Գըսլէր դատաւորին վախճանը այս եղաւ. եւ անոր սատկած տեղին ու Գուլիէլմոսի ծովակէն ելլելով ազատութիւն գըտած ժայռին վրայ՝ Գուլիէլմոսի պատուոյն համար երկու արձաններ կանգնեցուցին, որոնք իբրեւ յաւերժական յիշատակ մինչեւ ցայսօր կը պահուին։

Արդէն բոլոր դարերու մէջ երեւցող բըռնաւոր հրէշներու վախճանը այսպէս չարաչար

սատակմամբ եղած է, ինչպէս որ պատմութիւնները կը ներկայացնեն մեզ։ Եւ յիրաւի, ինչ կարող են յուսալ ասանկ վայրագ սրտի տէր անօրէն բռնաւորները, քանի որ իրենք այլոց արիւնովը կը սնանին, քանի որ իրենց նման մարդկան վրայ չեն գթար, միթէ կարո՞ղ են ուրիշէն գթութիւն յուսալ։ Դատաւոր կամ իշխան, որ ժողովրդեան վրայ հայր եւ խնամակալ կարգուած է, պարտաւոր է իւր զաւակաց պէս հսկել անոնց վրայ, աչքին լոյսին պէս զգուշանալ եւ բոլորովին իւր հոգն ու մտածմունքը անոնց բարօրութեանն ու երջանկութեանը նուիրել։ Միահեծան Թագաւորէն սկսեալ մինչեւ հասարակ մշակներու տէր, մինչեւ գերդաստանի մը հայր՝ պէտք է այսպէս վարուի իւր ստորադրեալներուն հետ, վասնզի իրենք երկրի վրայ Նախախնամութիւնը կը ներկայացնեն, ուստի իրենց իշխանութիւնը հիմնուած պիտի ըլլի արդարութեան, իմաստութեան, գթութեան եւ բարերարութեան վրայ. առանց այս հիմանց իշխանութիւն վարել ուզողը ամենաանգութ բռնաւոր, մարդկան աղէտ հարուած, աշխարհի անէծք եւ չը կշտացող պատառիչ գազան է, եւ այնպիսին հարկաւ ամենուն ատելի ըլլալով, օր մ'ալ զինքը չարաչար մէջ տեղէն պիտի վերցնեն։

Ժողովուրդ մը որչափ ալ յաղթուած՝ խո-

նարհած եւ վերջին աստիճան հնազանդուած ըլլայ այս կերպ գաղանաբարոյ բռնաւորի, սակայն միշտ իւր մէջ կը սնուցանէ տակաւին արիասիրտ, ազատասէր, աներկիւղ ու կրարիճ Գուլիէլմոսներ, որք այնպիսի գերութենէ մը կարող կըլլան իրենց ազգը ազատել, եւ աշխարհի բարի օրինակ ու անմահ յիշատակաց արժանի անուն թողուլ . . . :

ԺԴ.

Երկու եղբարք

Կեսար եւ Եվերարդոս հօր կողմանէ հարազատ եւ մօր կողմանէ խորթ երկու եղբայրներ էին. սակայն ինչպէս ծննդեամբ նոյնպէս բնութեամբ ալ իրարմէ բոլորովին կը տարբերէին: Առաջինը որչափ որ քաղցրաբարոյ՝ սիրուն՝ խելացի՝ ժիր եւ աշխատասէր էր, այնչափ ալ երկրորդը խիստ անամոքելի՝ անժուժկալ եւ դատարկաշրջիկ մէկն էր: Ասոր անկարգութեան առաջին եւ միակ պատճառն էր իւր մայրը, որ իւր որդւոյն վրայ ունեցած վնասակար սնոտի եւ չափազանց սիրոյն համար ամեն մոլութեանց աչք գոցելով, անոր կիրքերը կը շոյէր, ամեն բանի մէջ զայն կը նախադասէր. եւ բոլոր փայփայանք ու խնամք կ՚աւելնային անոր վրայ, ինչ բանի որ կը ցանկար, պատ-

րաստ կը գտնէր, իւր ամեն տեսակ խենդ ու խելառ ցնորքները եւ բաղձանքները յայտնածին պէս կը կատարուէին: Իսկ ընդ հակառակն Կեսարոսի համար առաւել անողորմ խորթ մայր մ՚էր, ամեն յանդիմանութիւնք եւ նախատինք նորա համար էին, եւ երբէք նորա կամքը չէր կատարեր եւ բնաւ մէկ բանով մը անոր սիրտը չէր շահեր, Եվերարդոսի վայրենի՝ անկիրթ բնութեան եւ ամբարտաւանութեան համար՝ երկու եղբարց մէջ շատ անգամ պատահած վէճերուն մէջ միշտ Կեսարոսը յանցաւոր կը սեպուէր: Այսու ամենայնիւ հեզահամբոյր երիտասարդը ամեն բանի մէջ համբերութեամբ միշտ կը տանէր իրեն եղած զրկանքները. որչափ որ իւր եղբայրը աւելի կոպիտ եւ ապերախտ էր, այնքան եւս ինքը կ՚աշխատէր քաղցրութեամբ յաղթել անոր, եւ իւր խորթ մօրէն ընդունած անիրաւութեանց տեղը իւր հօրը իրաւադատութեամբ կը մխիթարուէր, որ իւր մօրէն աւելի արդար աչօք կը նայէր նորա ըրածներուն վրայ:

Երբոր հայրերնին վախճանեցաւ, մայրը ուզեց իւր որդին եղբօրէն զատել: Եւ իրենց ամեն ունեցածները մէջերնին բաժնեցին: Եվերարդոս իրեն ընկած ժառանգութիւնը առնելով իւր մօրը հետ ուրիշ կողմ մը քաշուեցաւ:

Իրեն ընդունած բաժինը գրեթէ տասն հազար դահեկանի մօտ եկամուտ էր, բայց շռայլաբար մսխող և դատարկ ապրող մէկուն համար ի՞նչ պիտի օգտէ այսչափ ստակը։

Քիչ ժամանակի մէջ խաղի, հանդէսի, պարգեւի և ամէն տեսակ գէշութեան և մոլութեան մէջ վատնեց եկամուտները և բուն դրամագլուխը, և գրեթէ բոլորովին չքաւորութեան դուռը հասաւ։ Այսու ամենայնիւ, այն յետին աստիճան աղքատութեան մէջ իւր վրայ վհատութեան նշոյլ մը անգամ չէր տեսնուեր, վասնզի իւր ծերունի հօրեղբօրը հարստութենէն իրեն իյնալիք այն ճոխ և առատ ժառանգութեան յուսով կը քաջալերուէր և կը մխիթարուէր։

Կարծես թէ հօրեղբօր մահը յարմար ժամանակի մէջ պատահեցաւ. քանի որ Եվերարդոս բոլոր ունեցածը վատնելով և իւր մեծագումար պարտքերը իւր վրայ ծանրանալով յետին չքաւորութեան մէջ կը գտնուէր, այսպիսի ժամանակի մէջ մեռաւ հօրեղբայրը. և դեռ եւս նորա թաղման հանդէսը չը կատարուած՝ սկսաւ իւր մօրը հետ իւր Կլեարոս եղբայրը թախանձել իրեն ժառանգութեան կարծեցեալ մասին համար։ Կլեարոս քաջգիտէր թէ Եվերարդոս ի՞նչ վատ անուն ժառանգած էր իւր հօրեղբօր կտակին մէջ, այսու ամենայնիւ զանց ընելով՝ և մանաւանդ առա-

տասրտութենէ շարժուած անոր ըսաւ։ «Քեզի ինկած բաժինէն աւելի պիտի առնես, բայց հիմա պէտք է մեզ ըստ օրինի նորա թաղման հանդէսը կատարել»։

Ամբարտաւան Եվերարդոսը պատասխանեց. «Ես քաջ գիտեմ՝ թէ ի՞նչպէս և թէ ե՞րբ պէտք է կատարեմ իմ պարտաւորութիւնս և ես ուրիշի խրատներուն կարօտութիւն չունիմ. արդ՝ ես առանց ժամանակ անցնելու ինծ ինկած բաժինս կուզեմ և կը պահանջեմ. շուտ հոս բեր կտակը, և իմ բաժինս թող յայտնուի»։ Կլեարոս տակաւին անոր հեզութեամբ պատասխանեց. «Դեռ եւս այդպիսի բաներու զբաղելու ժամանակը չէ առ այժմ. եթէ պիտանութիւն մը ունիս՝ քու հաճոյից և կամացդ համեմատ ինչ որ կուզես տամ, և ատորմէ աւելի ուրիշ բանի մի փափաքիր»։ Եվերարդոս սրտմտած և խիստ բարկացած կրկնեց. «Արդեօք ի՞նչ կըսես դու, ինչո՞ւ համար երախտապարտ պիտի ըլլամ քեզ այն բանի համար՝ որ արդէն ինծ կը պատկանի և իմ սեպհականութիւնս է. կամ թէ այդ համարձակութիւնը քեզ ո՞վ տուաւ, որ կ'աշխատիս քու կամացդ համեմատ քեզ գրաւել ուրիշին սեպհականութիւնը»։ Կլեարոս հեզութեամբ և քաղցրութեամբ պատասխանեց. «Ես երբեք քեզ պատկանած բան մը չը պիտի գրաւեմ»։ Եվերարդոս ըսաւ. «Ուրեմն

կտակը տեսնանք »: Կեսարոս պատասխանեց. «Հիմա առենը չէ, այդ իւր ժամանակին պէտք է ընենք, հիմա քեզ ո՛րչափ բան հարկաւոր է »: Ալվերարդոս սաստիկ բարկանալով և նոյն իսկ իւր մօր ազդեցութեամբը գրգռուելով՝ սկսաւ իւր եղբօր վրայ անհնարին անարգանքներ կուտել, զայն խեռ, հպարտ, բռնաւոր, անսանձ և խարդաւան համարել, իբր թէ խարդախութեամբ ժամանակ որսալ կուզէր՝ որ իրմէ կտակը պահէ: Յայնժամ Կեսարոս արդար բարկութեամբ մը անոր ըսաւ. «Արեմն անմիջապէս կտակը կուզես տեսնել, այնպէս չէ՞, աղէկ. արդ՝ ո՛վ ապերախտ, տե՛ս նախ և յառաջ քու խայտառակութիւնդ »: Ու կտակը կը բացուի. Ալվերարդոս մեծ կարօտութեամբ մը կտակը յափշտակեց և սկսաւ կարդալ, և կարդալու ժամանակ պատահեցաւ այս սոկալի խօսքերուն: «Իմ եղբօրորդիս Ալվերարդոս իւր վատ և մոլեկան վարքովը անարժան գտնուելով իմ բարերարութեանցս, անոր եղբայրը Կեսարոս միայն ընդհանրական ժառանգորդ կը հաստատեմ իմ ստացուածոցս և բոլոր ունեցածներուս »:

Այս խօսքերէն ինքը և իւր մայրը կարծես թէ շանթահար եղան, և մինչդեռ այս յուսահատութեան մէջ նեղը ինկած շուարած ինչ ընելնին չէին գիտեր, Կեսարոս իւր բնական ազատ ազնուաբարոյութեամբը զանոնք քաջալերելով ըսաւ. «Արդէն յառաջուց ըսի ձեզ՝ թէ դուք ձեզ ինկած բաժինէն աւելի պիտի ընդունիք, և ես իմ խօսքերս առանց ետ առնելու այժմ կրկին նոյնը կը հաստատեմ. մեծաւ յօժարութեամբ ձեզ ամեն բանի մասնակից պիտի ընեմ, բայց ես փոխանակ այս ամեն եղածներուն՝ միայն կը խնդրեմ որ դուն ինձ ճշմարիտ և հարազատ եղբայր ըլլաս, և դուն ալ ճշմարտապէս որդեսէր մայր: Այսօր իսպառ թող վերցուին մեր մէջէն ամեն հակառակութիւնք, վերջապէս կամակցութեամբ քաղցրութեամբ և միասին միանալով ապրինք յաւուհետեւ: Այսչափ երկար տարաձայնութիւններէն և բաժանմունքէն ի՞նչ օգուտ քաղեցինք. ահա յայտնի կը տեսնէք, որ դուք կորսնցուցիք ձեր բոլոր ունեցածը, և ես ալ ձեր ինծմէ բաժնուիլը տեսնելով՝ սաստիկ վիշտ կրեցի »:

Ալվերարդոսի և մօրը գոռոզութիւնը խոնարհած, կտակին մէջ գրուած այն խօսքերուն առաջին հարուածէն յաղթուելով, և միանգամայն Կեսարոսի երկրորդ խօսքերուն հարուածէն շուարած՝ խոնարհեցան և զղջջացին:

Իւր մայրը եւ եղբայրը զինքը քաղցրութեամբ գրկելով շատ շնորհակալեաց խօսքերով և գոհութեամբ ընդունեցին այս մեծահոգի դաշինքը, և Կեսարոս անոնցմէ աւելի

ուրախացաւ, տեսնելով այն հաստատուն համակամութիւնը իւր տան մէջ՝ որուն շատ ժամանակէ 'ի վեր կը փափաքէր ։

Բայց ո՜հ, որչափ Լոմերարդաններ կը տեսնուին եղբարց մէջ, և մէկ հատիկ Կեսարոս մը գտնելը շատ մեծ բան է ։

Խիստ մեծ խոհեմութեան կարօտ են ծընողք, մանաւանդ մայրերը որդեսիրութեան մասին, վասնզի շատ անգամ որդւոց ապագայ կենաց լաւութիւնն ու վատութիւնը ծնողաց անոնց հետ վարուելու կերպէն կախում ունի։ Դժբաղդաբար փափկասիրտ մայրեր կը կարծեն, որ իրենց զաւակաց բոլոր բաղձանքները կատարելով՝ զանոնք սիրած կըլլան, բայց ընդհակառակն աղայք պզտիկ հասակնուն մէջ բանականութիւնը և դատողութիւնը դեռ զարգացած չըլլալով՝ իրենց բաղձանաց սանձ դնել չեն գիտեր. ծնողք պարտաւոր են կանոնաւորել զանոնք շատ անգամ անոնց ուզածը մերժելով ։

Թէպէտ մանկանց առաջին պահանջմունքները խիստ փոքր բաներ կըլլան, բայց իրենց հասակին հետ այդ կիրքն ալ աճելով՝ քանի երթայ կը մեծնայ, և բաղձանքներն խիստ դըժուարին բաներու կը ձգտի, մինչև անգամ անհնարին բաներ ուզելու և խստութեամբ պահանջելու կը համարձակին. որ եթէ չը

կատարուի, կը զայրանան կը կատաղին և շրջակայները գոռուողներն անհանգիստ ընելէ զատ, գազանական կիրքէն յաղթուած՝ թէ իրենց անձին և թէ այլոց վնասներ կը հասցընեն ։ Շարունակ սիրուած և կամքերնին կատարուած տղայք կը չփանան, յամառ և անհնազանդ կըլլան, կոպիտ վարմունք կ'ունենան, նեղսիրտ ու բարկացող կըլլան, ծուլութեան, շռայլութեան և զեղխութեան կը մատնեն իրենց անձը, խրատը կ'արհամարհեն, և վերջապէս ընտանեաց ուրախութիւն ըլլալու տեղ՝ անոնց նախատինք, վիշտ և տարապայման հոգ կը պատճառեն, ազգին անարգանք և աշխարհի ծանր բեռ մը կըլլան ։

Ուրեմն որչափ զգուշանալու են ծնողք, մանաւանդ մայրերը, որ օրօրոցէն սկսին իրենց զաւակաց կրթութեան մեծ գործը, և կաթին հետ ջամբեն անոնց բարի վարուց և առաքինութեան քաղցր ու կենդանութիւն տուող օշարակը ։ Աւաղ ափսոս, որ դեռ մայրերը չեն գիտեր իրենց մեծ կոչումը, և մայրութեան ու զաւակ սնուցանելու դժուարին, բայց քաղցր պարտաւորութենէ տեղեկութիւն չ'ունին։ Ցաւալի է արդարև, որ դըպրոցներէ ելող մայրերն ալ գոռոզ և ունայնասէր կըլլան, վասնզի այն տեղերն ալ փոխանակ սիրտ ու միտք կրթելու՝ կիրք ու հաճոյք կը գգուեն. եթէ առաջին մայրերը տգէտ

պարզամիտներ էին, այժմեան շատերուն ալ գիտուն . . . չըգիտեմ ինչ կրնայ ըսուիլ։

ԺԵ.

Կանայք Վինսբերգայ

ԿՈՐՐԱԴՈՍ Գ. կայսրը սաստիկ բարկացած էր Պավէրիոյ Գուելֆոս անուն դքսին վրայ, ու երդուած էր՝ որ իր վրէժը հանէ անկէ։ Ուստի զանիկա պաշարելով Վինսբերգ քաղաքին մէջ, այնչափ նեղը ձգեց՝ մինչեւ որ Գուելֆոսի դիմանալու զօրութիւնը հատաւ։ Դուքսը տեսնելով՝ որ ուրիշ կերպով ազատութեան յոյս չը կայ, և ամբողջ ժողովուրդը սովէն կը մեռնի, սկսաւ դեսպանութիւն խրկել կայսեր իր յօժարութիւնը ծանուցանելու, թէ կուզէ քաղաքը յանձնել իր ձեռքը եւ անձնատուր ըլլալ՝ եթէ աւելի յաջողակ սեպած քանի մը պայմանները ընդունէր կայսրը։ Բայց սաստիկ խստացած գտաւ Կորրադոսի սիրտը, որ ոչ միայն չը շնորհեց անոր արժանաւոր խնդրածները՝ այլ և խիստ ծանր ու նուաստ պայմաններ ալ պատրաստ էր Գուելֆոս ընդունելու, միայն թէ հնար ըլլար իր անձը ու հետն եղողները ազատել, բայց չը կամեցաւ կայսրը ընդունիլ։ Որովհետեւ անխտիր ամեն բան

սրով ու հրով տալն ու վրայ ըսել կուզէր համարձակ. ոչ աղաչանաց, ոչ կողկողանաց և ոչ հեծեծանաց ձայները կրնային կակղացնել անոր բարկութեան սաստկութիւնը։ Ողորմելի դուքսը ուրիշ բան չը կրնալով ընել, անոր կամաց յանձնուեցաւ, և այս շնորհքը միայն խնդրեց անկէ, որ գոնէ կանանց միայն ողորմի, ու չը թողու անոնց թշուառաբար անհամեստ ու կատղած զինուորաց ձեռքը մատնուիլ, այլ թողու, որ ամեն մէկը իրենց կըրցածին չափ ունեցածնին շալկելով քաղաքէն ելլեն ու իրենք զիրենք ապահովցնեն։

Կորրադոս իր բարկութիւնը միայն մարդկանց ու մանաւանդ դքսին վրայ թափելը հերիք սեպելով՝ կանանց վրայօք հոգ չըրաւ. ուստի միայն այս պայմանին զիջանելով՝ հաւանեցաւ ու յօժարութեամբ հրաման հանեց։ Երբոր այս ազատութեան լուրը քաղաքին մէջ տարածուեցաւ, ուրախութեան ու ցնծութեան ձայներ կը լսուէին ամեն կողմէն. ամեն մէկ մարդ իր անձին ազատութեան համար ալ շատ հոգ չէր ըներ, քանի որ իրենց կիները, աղջիկները, քոյրերն ու մայրերը կրնային ազատիլ վտանգէն։ Ամենէն աւելի դուքսը ուրախացաւ այս լուրին վրայ իր ընտանեաց սիրոյն համար։ Բայց կանայք ամենն ալ հաւասարապէս ուրախ չէին, որովհետեւ ամիպուած էին իրենց այրերը, որդիքը, ծնող-

քը, եղբարքը և իրենց բոլոր՝ սիրելիները թողուլ, և յոյս չունէին զանոնք անգամ մ'ալ նորէն տեսնելու, վասն զի անոնք կամ սրով պիտի ջարդուէին, և կամ երկաթէ շղթայներու մէջ պիտի հալէին ու մաշէին: Ասոր համար մէկ կողմէն օդը, աղաղակ, լաց և վայնասուններ կը լսուէին, միւս կողմէն ալ ցընծութեան ձայներ կը հնչէին. տեղ տեղ յուսակտուր կանչըռտուքի ձայներ կը լսուէին, տեղ տեղ ալ երգոց ու պարուց ձայներ կը բարձրանային: Մինչդեռ գլխաւորապէս կանայք հաստատուն կերպով որոշած էին, որ չը պիտի բաժնուէին անոնցմէ, ու մտքերնին դրեր էին՝ որ մնացողներուն գլխուն գալիքն ու փորձանքները իրենք ալ պիտի կրեն, ու անոնցմէ չը պիտի զատուէին, յանկարծ այն միջոցին կնիկներէն մէկը կարծես թէ երկնային ազդեցութեամբ մը յառաջ մօտենալով կըսէ. «Ինչու համար չը պիտի կրնանք մենք մեր անձին հետ մէկ տեղ ազատել նաեւ այն մարդկանց կեանքն ալ, որք մեր կեանքէն աւելի սիրելի ու ցանկալի են մեզ: Այս բանին կերպը նոյն ինքն կայսրը մեզի կը սորվեցնէ, որուն մտաց աչքը կարծես երկնային ոգի մը գոցած է, որ իրեն մեզ պարգեւած մեր անձին փրկութեան հնարքը չը տեսնայ: Նա կը թողու մեզ, որ համարձակ ելնենք քաղաքէն ու ամեն մէկերնիս մեր ուժին համեմատ կրցածնուս չափ

բեռ շալկենք: Արդ ո՞վ կարգելու մեզ՝ որ մենք եղբայրնիս, ծնողքնիս, մեր էրիկ մարդիկն ու մեր որդիքը ուսերնուս վրայ առած զանոնք ալ մեզ հետ փրկենք»: Այս խօսքին վրայ ուրախանալով՝ ամենքնին ալ առ հասարակ գովեցին այս մեծահանճար խելացի կնոջ խորհուրդը, այն ատեն ամենքն ալ կարծեցին թէ մահուան ձեռքէն ազատելով՝ կեանքի փոխւեցան: Ուստի չուզեցին վայրկեան մը անգամ մ'անոնալ, և այն քաջայարմար խորհուրդը գործ դնելու համար ժամանակ կորսնցնել: Ու ասկէ աւելի սրտաշարժ գորովալիր տեսարան մը ո՞վ տեսած է երբէք. ամեն հասակի և վիճակի կանանց անհամար բազմութիւն մը, ամենքն ալ համաձայն ու համախորհուրդ այսպիսի բարեգութ գործով մը կ'զբաղէին, մէկ զմէկ քաջալերելու մասին իրար կը գերազանցէին. կիները իրենց էրիկները ուսերնուն վրայ շալկած կը տանէին. մամերն ալ իրենց թոռները. կատարեալ հասակով աղջիկներն ալ իրենց պապերը կամ հայրերը և կամ իրենց եղբայրները կը տանէին. դուքսն ալ ամենուն առջեւ իր կալթողին սիրելի տիկնոջ ուսը բարձրացած էր, այն փափուկ ու քնքուշ տիկինը իւր քաղցր բեռը այնպիսի ուժով մը շալկած կը տանէր, որ կարելի չէ պատմել: Կոնրադոս կայսրը ասիկա տեսած ատեն՝ սիրտը կը-կըծալով ալ չը կրցաւ դիմանալ և մորմոքելով

սկսաւ լալ, ու դառնալով դէպ 'ի դուքսը ըսաւ. «Որովհետեւ այդքան խելացի էք ու կինդ և այդչափ գութ ունի վրադ, և որովհետեւ մեծարու և սիրելի են մարդիկ իրենց կանանց, որ ամեն բանէ աւելի իրենց էրիկները կը հոգան, ուրեմն արժանի է, որ ես ալ թէ քեզ և թէ այդ կիները արժանաւոր կերպով մեծարեմ ու պատուեմ: Ուրեմն ձեր կեանքը՝ որ ատոնք զարմանալի և չը տեսնուած կերպով մը փրկեցին, ահա հիմա ամենուն համար ալ փրկուած թող ըլլայ. և ապահով եղէք, որ ըստ ամենայնի ազատ էք, այսուհետեւ այնպէս վարուեցէք, որ անոնց ձեզ ըրածին արժանաւոր փոխարէնը հատուցանէք: Ո՛վ Գեղփոս, մինչեւ հիմա մեզ իրարմէ բաժնող այն թշնամութիւնը՝ նոյն իսկ այս ժամուս մէջ թող վերնայ արուի և բոլորովին փարատի. քեզի կը ներեմ, և զիս քու վրայ բարկութեան բորբոքող պատճառը բոլորովին կը մոռնամ, ասկէց յետոյ իմ ու քու մէջդ մշտակայ ու հաստատուն բարեկամութիւն թող հաստատուի»: Ու կանանց մեծամեծ գովութիւններ տալով ու մեծարելով զանոնք, հրաման տուաւ ամենուն՝ որ նորէն խաղաղութեամբ տուներնին դառնան. և ինքն ալ չէ թէ թշնամիի պէս՝ այլ իբրեւ մտերիմ բարեկամ՝ դքսին հետ մտաւ Վինսբերգ. և այն տեղ հաշտութեան ու խաղաղութեան վերանորոգուելուն համար երկար

ատեն հանդէսներու ու տօնախմբութեանց մէջ ուրախ ու զուարթ օրեր անցուցին:

Կանանց սեռին մէջ դիւցազնուհիք գըտնուած են, որ խելքով ու արիութեամբ շատ մեծամեծ գործեր ըրած են, որոնցմէ մէկն ալ այս պատմութիւնն է: Կանայք զգացմամբ և գործով կը գերազանցեն քան զայրս. ուստի զգացմունքնին շարժած ատեն՝ զարմանալի հընարքներ ու ճարտարութիւններ կրնան ընել, մինչեւ կարելի է ըսել, թէ կանանց խելքը ու ուժը սրտերնուն վրայ է. այս պատճառաւ երջանիկ և բարեբաղդ կ'ըլլար մարդկային ազգը, երբ կանանց սիրտը ըստ օրինի կրթուած ըլլար, երբ կանայք իրենց արանց վրայ անձնանուէր սէր ունենային: Կանանց հաւատարմութիւնը և գորովալիր սէրը գերդաստանի մը կենդանութիւնն է. երբ այս սէրը պակսի, կամ՝ նենգուի և կամ՝ անհաւատարմութեամբ ուրիշ կողմ դառնայ, արդէն նոյն գերդաստանը իւր թշուառ մահուան մօտեցած կ'ըլլայ:

Արարիչը կինն ստեղծած է իբր մարդուն մէկ մասը. երբ կանայք իրենց միութեան շաղկապը, սէրը, իրենց ամուսիննէն կը քակեն, ըսել է անկէ կը բաժնուին, և կըսպանեն զայն բարոյապէս, որուն հետեւած է շատ անգամ նաեւ բնական մահն ալ: Հանճարեղն Սողոմոն արդէն ըսած է, թէ «Իմաստուն կիները

իրենց տուները կը շինեն. բայց անխելք կնիկները իրենց ձեռքովը զայն կը քակեն»։ Առակ. ԺԴ. 1 ։ Եւ այս խիստ ճշմարիտ է, և ուրուն փորձը շարունակ կը տեսնուի ։ Ուրեմն ո՛վ կանայք, ջանացէք, որ տնաշէն ըլլաք ու իմաստուն կոչուիք, և ոչ թէ տնաւեր ըլլաք՝ որ յիմար ըսուիք ։ Իսկ եթէ յաջողիք արտաքոյ կարգի մեծագործութիւն մի ընել հասարակաց օգտին համար, այն ատեն պատմութեան մէջ ձեր անունը գովութեամբ պիտի հնչակուի դարուց 'ի դարս ։

ԺԶ.

Իպրահիմ Բդեշխը

Պարսից Շիրվան գաւառին մէջ շատ տարիներէ 'ի վեր մեծ անդորրութիւն ու խաղաղութիւն կը թագաւորէր. և երկրին բնակիչները ուրախութեամբ կը վայելէին այն ամեն բարիքները, զորս հանճարեղ իշխան մը կրնայ իւր հպատակներուն համար հայթայթել ։

Այս իշխանը Իպրահիմ բդեշխն էր, որ իւր անձը բոլորովին իւր ժողովուրդը երջանկացնելու նուիրած էր. և իւր իշխանութիւնը բարեկարգ օրինօք կառավարելով, մեծ ճըգամբ կ'զգուշանար՝ որ մի գուցէ իւր պաշտօնեաները ագահութեամբ կամ բռնու-

թեամբ ժողովրդեան արդար իրաւունքին վընասեն. շատ կը յորդորէր՝ որ անդաստանները մշակեն. մեծ խոհեմութեամբ կը բաշխէր պատշաճաւոր վարձք կամ պատիժ. գիտէր նմանապէս ամեն տեղ ապահովութիւն և անդորրութիւն հաստատել, և զուարճալի ու երջանիկ առատութեամբ բարգաւաճել։

Այն ինչ ժողովուրդը իրենց հանգստութեան և զուարճութեան մէջ ցնծալով կ'ուրախանային, և իրենց տիրոջ համար բարիք կը մաղթէին, գոյժ մը հասաւ՝ որ զամենքն ալ սարսափեցուց ։ Հպարտ Լանկթամուրը այն ժամանակ Ասիան աւատնեցնելով, և բաղձալով՝ որ իւր տէրութեան սահմանը աւելի ընդարձակուի, բազմաթիւ զօրքով Շիրվան գաւառին վրայ կուգար, զայն նուաճելու և իւր տէրութեանը հետ միացնելու համար։

Իպրահիմ երբոր այս լսեց՝ իւր ժողովուրդէն աւելի տագնապեցաւ, քանզի անոնց վրայ անհնարին չարիքներ ու տառապանքներ հասած կը տեսնէր. ուստի շուտ մը ժողվեց իւր բոլոր նախարարները, անոնց հետ խորհելու թէ արդեօք ի՛նչ ընել պէտք է ։

Օսման զօրագլուխը՝ որ խրոխտ և քաջաբազուկ մէկն էր, մէկէն աղաղակեց. «Պէտք է որ մենք անոր դէմ կենալով՝ պատերազմինք ։ Թող գայ հպարտացեալ Լանկթամուրը, և այս տեղ գտնայ վերջապէս իւր

հպարտութեան յաղթողը. մենք պիտի նը-
ւաճենք իր ամբարտաւանութիւնը։ Ո՛վ
տէր, մեր մէջէն մէկը չը կայ՝ որ իր արիւնը
բոլորովին քեզ համար, իր որդւոցը և իր
երկրին համար չը թափէ։ Այն գոռոզը թող
տեսնէ, թէ որչափ վտանգաւոր է պատե-
րազմ մղել այն ազգերուն հետ՝ որոնք մըտա-
քերնին հաստատ դրած են ամէն բան կոր-
սնցնել, քան թէ իրենց պարանոցը անոր անա-
գորոյն լծոյն տակ դնել»։

Բայց միւս կողմէն արքունի գանձուց Լօլ-
պէք հազարապետը ոտքի վրայ ելաւ՝ ու ըսաւ.
«Եթէ դու Լանկթամուրին հետ պատերազ-
միլ կուզես, և կը կարծես՝ որ մենք ասոր վը-
տանգէն կրնանք փրկուիլ, ես ամենէն առաջ
պատրաստ եմ իմ արիւնս թափելու, և կեանքս
ալ քեզ համար նուիրելու։ Բայց բազմաթիւ
յաղթանակով քաջալերուած զօրաց անհա-
մար բազմութեան՝ ինչպէս դէմ պիտի դնենք
մեր սակաւաթիւ զօրքերը, որոնք արդէն եր-
կար տարիներ խաղաղութեան մէջ լինելնուն
պատճառաւ՝ պատերազմի կրթութենէն թու-
լցած են։ Իմ կարծեացս համեմատ լաւ է՝ որ
հաշտութիւն ընենք, թէպէտեւ անհան-
դուրժելի և անարգ. գերութենէ մը զատ՝ ու-
րիշ խաղաղութիւն և հաշտութիւն չը յու-
սայուիր անկէ։ Մենք ուրիշ եղանակաւ մը
չենք կրնար ազատիլ, բայց միայն փախըս-

տեամբ։ Դու պէտք ես քու գանձերդ և-
քու անձդ ուրիշ աշխարհի մը մէջ ապահով-
ցնել. դու ուր որ ամփանաս, մենք ամենքնիս
ալ հաւատարմութեամբ քու շաւղիդ պիտի
հետեւինք։ Այն յոխորտ Լանկթամուրը այս
դատարկ տէրութեան մէջ երկար ժամանակ
չը պիտի դեգերի. անոր ճոխութեան վրայ
ունեցած միտքը, կամ ագահութեան բաղ-
ձանքը քիչ ժամանակէն զայն աւելի դէպ 'ի
հեռաւոր թագաւորութեան պիտի ձգէ. և
այն խռովութեան միգապատ մրրիկը փարա-
տելով, թերեւս Բարձրեալը ողորմի մեզ ճա-
նապարհ մը բանալու, որով կարողանանք վե-
րստին մեր աթոռը դառնալ, և մեր բնակու-
թեան սեպհական տեղը մտնել»։

Այս երկու հակառակ խորհուրդներուն
վրայ հասարակութեան կարծիքը համաձայն
չէր. ոմանք Լանկթամուրին արշաւանաց դէմ
դնել կուզէին, ուրիշներն ալ փախստեամբ
իրենց անձը ապրեցնել։

Իպրահիմ այս երկու կողմերուն հակառա-
կութիւնը իմանալով՝ ըսաւ. «Կը գովեմ ես այն
մարդուն սրտապնդութիւնն ու քաջութիւ-
նը, որ մեր առջեւ եղած այսպիսի վտանգին
մէջ կազմ և պատրաստ է արիաբար իր կեան-
քը իմ վրաս դնելու, և այս երախտեաց հա-
մար անոնց վրայ ունեցած իմ սիրտս հուրը
կը բորբոքէր և կ'առատանար, եթէ ես այնու-

հետեւ զանոնք կարողանայի սիրել. բայց նոյն իսկ իմ սէրս չը ներէր, ինձ համար թափուած այն արիւնը տեսնել՝ որ սիրելի է ինձ։ Արդարեւ փախուստը զիս կարող է ապահովցընել, բայց իմ փախստեամբս Անկթամուրին բարկութիւնն ու սրտմտութիւնը՝ անոր գազանութեանը որս մնացող խեղճ ժողովրդեան վրայ աւելի պիտի բորբոքի։ Բայց երկնաւոր Թագաւորին փառքը իմ մտացս մէջ աւելի յաջող խորհուրդ մը կը ծնանի, որով կարող եմ զձեզ ամենքնիդ ալ փրկել, զոր քիչ ժամանակէն յետոյ պիտի գիտնաք։ Բայց հիմա ջերմեռանդն աղօթքով հայցեցէք Տիրոջմէն՝ որ իմ խորհրդոցս յաջողութիւն տայ”։

Ատեանը արձակելով՝ շուտով փութաց տեսակ տեսակ ազնիւ ընծայներ պատրաստելու, և անոնցմով Անկթամուրին առջեւ ելլելու պատրաստուեցաւ, որպէսզի անով իւր ժողովրդի փրկութեանը համար բարեխօս լինի։ Անկթամուր սովորութիւն ունէր՝ զոր իւր հրամանովն ալ հաստատած էր, որ իրեն մատուցուած ընծայներուն ամենքն ալ իրենց տեսակով հանդերձ ինը հատ ըլլան։ Իպրահիմ գիտնալով այս՝ երբոր անոր առջեւը ելաւ, ընծայեց ինը նժոյգ, իրենց ոսկւով ու մարգարտով զարդարուած մեծագին կազմուածքով հանդերձ. որսի մէջ քաջավարժ ինը ինձ (գուբլան). ամենքն ալ վայելչագեղ, որոնք

իրենց պարանոցին վրայ ոսկեղէն օղամանեակ ունէին. ինը հատ ճաճանչաւոր ոսկեթել մետաքսեայ վրաններ. ինը Հնդկաստանի վայելչագործ պաստառակալներ. պատուական ակամբ զարդարուած ինը ոսկեղէն անօթ. Նմանապէս ասոնց նման ուրիշ շատ մեծագին բաներ ընծայեց։ Ամէն բանէ ետքը՝ մէկ քանի ծառաներ ալ ընծայեց, բայց ասոնք թըւով ութ հատ էին։ Ուստի Անկթամուր աքքայն խորխոտալով մը հարցուց, թէ “Ո՞ւր է միւսը”։ Իպրահիմ անոր ոտքը իյնալով՝ ըսաւ. “Քու ոտքիդ տակն է Տէր արքայ. ինձմէ աւելի հաւատարիմ և հլու ծառայ պիտի չը կարողանաս գտնել. և իմ կապանքներս ինձ համար շատ քաղցր պիտի ըլլայ, քանի որ անոնցմով ես քու առջեւդ շնորհք պիտի գտնեմ, և իմ լքեալ ժողովրդիս ալ փրկութիւն։ Քեզմէ այս շնորհքը միայն կը խնդրեմ, որ իմ ժողովուրդս քու բարկութենէդ խնայես, և զիս ինչ որ կուզես ըրէ. ես արդէն բոլորովին քուկդ եմ”։

Այս խօսքերէն Անկթամուրին բնական խստութիւնը մեղմանալով և հեզութեան փոխուելով՝ Իպրահիմը գետնէն վերցուց և քաղցրութեամբ ըսաւ. “Այս տեսակ գեղեցիկ առաքինութեան ծառայութիւն և կապանք պէտք չէ. դու իմ մտերիմ բարեկամացս մէջ առաջինը պիտի ըլլաս. զքեզ եղբօր ու հօր պէս

պիտի համարիմ։ Դարձի՛ր խնդութեամբ քու ժողովրդեանդ քով, և զանոնք երջանկացնելու աշխատէ, ինչպէս որ մինչեւ ցարդ ըրիր։ Եթէ իմ վիճակս ուրիշ աւելի ընդարձակ և մեծահամբաւ տիրապետութիւններու չը հրաւիրէր զիս, ուրիշ լաւագոյն հեշտութիւն մը չէի կրնար գտնել, բայց միայն իմ կենացս օրերը փոքր թագաւորութեան մէջ վարելով, քեզ նմանող լինել»։

Այսպէս է հրատարակէր իշխանը, և այսչափ զօրաւոր ներգործութիւն ունի իւր անկեղծ անձնուիրութիւնը, մինչեւ անգամ այնպիսի անագորոյն, արիւնարբու, անգութ սրտի մը խստութիւնը կը կակուղցնէ, որ ամբողջ Ասիան աւերակ դարձուցած էր։ Լանկթամուր, աշխարհի այն սոսկալի պատուհասն էր, որ կարծես նոյն իսկ օձերին մահը ահ ու սարսափ ազդող կերպարանքով անոր վրայ անձնաւորուած էր. ոչ ծերոց ալեաց և նոցա դողդոջուն շրթանց աղերսներուն կը նայէր, ոչ կորիւն երիտասարդաց կորովի մարմնոյն կը խնայէր, ոչ թշուառ կանանց գթալի նայւածքը, աղիողորմ հեկեկանքը, սրտակտուր աղերսն ու աղաչանքը, և ոչ ալ մատաղ մանկանց կականալի ճիչն ու սրտաճմլիկ կողկողանքը անոր կ՚ազդէին, ամէն բան իւր ցասման և անգթութեան առարկայ ու պատճառ

էր. ահա այսպիսի անագորոյն ճիւաղի մը սիրտը կարող եղաւ 'ի գութ շարժել բարի իշխանի մը ճշմարիտ ժողովրդասիրութեան անկեղծ հոգին։ Եթէ ամէն իշխան ճանչնար իւր այս մեծ պարտքը և ըստ այնմ վարէր իւր իշխանութիւնը, եթէ գազանի պէս ժողովուրդ ջարդելու՝ արիւն թափելու անզգամ ու դժոխային կիրքը բոլոր իշխանաց սրտէն վերնար, արդարև իշխանութիւնները օրհնութիւն պիտի համարուէին. բայց դժբաղդաբար անոնց փառասէր ոգին տեսնելով և անտանելի հարըստահարութիւնները կրելով ժողովուրդը իբրեւ անէծք և իբրեւ պատուհաս կը նկատէ զանոնք, և անոնց լուծը թօթուելու համար ամէն միջոց ձեռք կ՚առնու։ Ո՜հ, ի՜նչ քաղցր է այն իշխանին սրտին, տեսնել՝ որ ժողովուրդը զինքը իբրեւ բարեգութ հայր կը նկատէ, և անոր կորուստն ու վնասը իրեն սեպելով կը վշտանայ և յօժարութեամբ իւր անձը անոր վրայ կը դնէ. Իսկա բարեբաղդ է նաեւ այն ժողովուրդը, որ զաւակի պէս կը սիրուի, կը դարմանուի և կը պաշտպանուի իշխանէն։ Իպրահիմի նման իշխան ունեցող ժողովուրդը թող ճանչնայ անոր յարգը, քանզի հազուագիւտ է։

ԺԷ.

Գոցցուած ակները

ՕԳՈՍՏԱՓԱՌ Յովսէփ երկրորդի վայելչագործութիւններէն մէկը պատմագրութեանըս սկիզբները յիշեցինք, թէ ինչպէս գեղեցիկ կերպով մը իւր ըրած բարերարութիւնը կը քաղցրացնէ, որով բարեաց արժանաւորութիւնը կը բարձրացնէ և զայն վայելողը աւելի զուարճալի կընէ ։

Բայց նա որչափ՝ որ իւր բարերարութիւնները բաշխելու մէջ հանճարեղ ու խելացի էր, այնքան ալ արդարութեան պահանջած ամէն ճշմարտութիւնը յայտնելու՝ և իրաւունք խնդրողներու դատը վճռելու համար առատ հնարագիտութեան մէջ արթուն ու քաջարուեստ էր ։

Տակաւին շատ ժամանակ չ'եղաւ, որ Վիէննա քաղաքին մէջ ազնուական երիտասարդ մը իւր ընչից մեծ մասը խաղի մէջ վատնելով յետին աստիճան նեղութեան մէջ ինկաւ, ինչպէս որ այս մոլութեան անձնատուր եղող բոլոր անզգոյշները սովորաբար կիյնան. արդէն իւր ամէն ունեցածներէն կողոպտուած էր, և իւր վրայ տիրող անկարգ բաղձանքը կատարելու ալ անբաւական կը գտնուէր, այսու ամենայնիւ տակաւին չէր կրնար ինքզինքը զսպել և համբերել. որովհետև միշտ խաղի մէջ իւր ըրած կորուստները նորէն ձեռք բերելու սուտ ու մնոտի յոյսերէն խաբուած ու յաղթուած էր, ուստի սկսաւ իւր սրտի մէջ խորհիլ, թէ արդեօք ի՞նչ կերպով կրնայ դրամ գտնել, նորէն իւր բաղդը փորձելու համար ։

Կը տեսնար ՝որ արդարութեամբ դրամ ստանալը դժուարին է, և ուրիշ մէկ մը խաբելն ալ անհնարին, ուստի խորամանկութեան և դաւաճանութեան դիմելէն 'ի զատ ուրիշ եղանակ մը չը կար. բայց այս մտածմանց մէջ մանկութեան ժամանակէն ստացած բարեկամութեան մնացորդ մը տակաւին ինքզինք կը զսպէր, թէև այս լաւութեան գաղափարն ալ խիստ տկար է մոլի մը համար, երբ մոլութիւնը իւր վրայ կը թագաւորէ, և երբ իւր սիրտն արդէն իսկ ապականուած է. արդարութեան խորհուրդը մէկ կողմէն զինքը կ'արգիլէր, և միւս կողմէն մոլութիւնը կը մղէր ու կը գրգռէր, բայց այս ներքին հակառակութիւնը, խղճի այս կռիւը երկար չը տեւեց, և 'ի վնաս իրեն՝ մոլութիւնը յաղթանակեց ։ Այս պատճառաւ օր մը զանազան հընարքներ մտածելէն և հնարելէն ետքը՝ և տակաւին անոնցմէ որ մէկը գործադրելը չ'որոշած՝ յանկարծ ակնագործը (ճէվահիրճի) միտքը բերաւ, որմէ քանի մը տարի առաջ իւր ամուսինը զարդարելու համար՝ ակներ (ճէվահիր) գը-

նած էր, և մանաւանդ նորա պարզամտու-
թիւնն ու բարեսրտութիւնը շատ աղէկ գի-
տէր. ատոր համար լաւ համարեց ամենէն
առաջ զայն իւր խաբէութեան թակարդին
մէջ ձգել։ Ուստի անոր քով երթալով սկսաւ
աղաչել, որ իւր ունեցած անդամանդներուն
մէջէն պատուական յակինթները և գոհարաց
ամէն տեսակները իրեն ցոյց տայ. նա ալ միա-
մտութեամբ բերաւ. և երբեմն այս, երբեմն
այն զննելով ու գովելով և անոնց գնոյն վրայ
հարցափորձներ ընելով՝ և զանոնք զարդարանք-
ներ շինելու և կազմելու զանազան ձեւերու
և տեսակներու վրայ երկարաբանելէն ետքը,
հրամայեց՝ որ զանոնք որոշուած այլեւայլ ձե-
ւերու համեմատ զարդեր շինէ և պատրաս-
տէ, վերջը ըսաւ. «Հիմա ինձ այնպէս կ՚երե-
ւի՝ որ այս օրինակները կնոջս հաճոյ պիտի ըլ-
լան՝ որուն ընծայ տալ կուզեմ. արդ՝ քանի՞
օրուան մէջ կրնաս այս գործը կատարել և ինձ
տալ, որովհետեւ կուզեմ յանկարծ չը յու-
սացած միջոցին կնոջս նուիրել, և այսպէս
զուարճալի կերպով մը անոր սիրտը թռունա
հանել»։ «Ակները շատ են, պատասխանեց ակ-
նագործը, նոյնպէս գործն ալ երկար և տա-
ժանելի է, կը փութամ և կը ջանամ կարելի ե-
ղածին չափ շուտ ընել, բայց և այնպէս զա-
նոնք լմցնելու համար երկու ամիսէն պա-
կաս չեմ կրնար խօսք տալ»։ Ափսոս, ըսաւ ազ-

նուականը, որովհետեւ շատ երկար պիտի ըս-
պասեմ... թէեւ ես ալ կը խորհիմ, որ կա-
նանց ախորժակը մերիննէն այնքան այլեւայլ
և տարբեր է, որ շատ անգամ մեր սիրած
ձեւը կրնայ է իրենց անհաճոյ երեւնալ։ Ու-
րեմն պէտք է որ առաջ այս օրինակները
տանիմ իրեն ցուցնեմ, և թողում՝ որ իւր հա-
ճոյից համեմատ ինքն իր ուզածը ընտրէ, և
իմ պարգեւատուութեան եղանակը թող
այսպէս ըլլայ, վասն զի պատասխան կուտամ.
բայց ահաւասիկ առաջուընէ քեզ կը պա-
ւիրեմ և քու ճարտարութեան կը յանձնեմ,
որ կարելի եղածին չափ շուտ և զարմանալի
ճարտարութեամբ շինես»։ Այս ըսելով՝ գո-
հարները տուփի մը մէջ դրաւ, առաւ խո-
րամանկութեամբ և մնաս բարով ըսելով՝ իս-
կոյն կծիկը դրաւ։ Ակնագործը՝ որ առջուընէ
զայն բարեպաշտ և առուտուրի մէջ անխար-
դախ երիտասարդ մը ճանչցած էր, անոր խա-
ղերու մէջ ըրած մոլութեան և եղած կորըս-
տեան վրայ բան մը չը գիտնալով՝ անոր վրայ
ամենեւին կասկած մը անգամ չունեցաւ, և
չը կարծեց բնաւ որ նենգութիւն էր ըրածը,
ուստի իւր գանձը ապահովցնելու հոգ չըրաւ,
չուզեց նաեւ որ նորա հետ երթայ, և հա-
ւատարիմ կարծելով զայն արձակեց։

Երբ նենգաւոր երիտասարդը խնդու-
թեամբ իւր տունը հասաւ, մտածեց՝ որ ակ-

նախաճաշը ինչպէս որ խաբեց, անանկ ալ իր կինը խաբէ, որպէսզի անկէ յափշտակած ձնարտի (խո—մարք) մէջ կորսնցուցած ծանրագին գոհարեղէններուն համար կնոջը ամենօրուան տրտունջները դադրեցնէ։ Ապա իր քովը կանչեց, և իր մօտ եղած ակները ցցնելով ըսաւ. «Ալ այսուհետեւ ակունքներուդ վանուելուն համար անդադար տրտունջներովդ գլխս չը պիտի զզուեցնես, ահա տես՝ որ կրնամ անոնմէ աւելի լաւերով փոխարինել քեզ։ Մ՝անաւանդ ես գիտեմ՝ որ բաղդը միշտ չը պիտի հակառակէր ինծի. յաջող վայրկեան մը՝ շատ տարիներու մէջ ըրած իմ բոլոր կորուստս ինծի գտնել տուաւ այսօր, և իմ քու վրայ ունեցած սէրս կըստիպէ զիս՝ որ առաջ քեզ հատուցանեմ այն պարտքս, որ քիչ մը առաջ քեզմէ յափշտակեցի. արդ՝ քու կամքիդ ուզածը ընտրէ ուրեմն ասոնցմէ. և վաղը ականագործին պիտի պատուիրեմ՝ որ քու հաճութեանդ համեմատ ուզած զարդերդ շինէ։ Այժմ ժողվէ և ապահով տեղ մը պահէ. եթէ կը փափաքիս՝ որ ասոնք վայելես, բնաւ մարդու մի իմացըներ. չեմ ուզեր որ դեռ դու անոնցմով չը զարդարուած՝ մէկը գիտնայ»։ Կինը ցնծութեամբ և խնդութեամբ լեցուած՝ խոստացաւ ծածուկ պահել այն խորհուրդը, առաւ ակները և պահեց զանոնք. խեղճ իր կինը ծաղրելով՝ գնաց գաղտնի ըստեսել, որ-

պէս զի զանոնք ծախելու յարմար ժամանակ մը գտնէ։

Հետեւեալ գիշերը՝ ակնագործը այսքան թանկագին ակները առանց զգուշութեան երիտասարդի մը յանձնելը միտք բերելով, իր մեծ պարզմտութեանը վրայ սկսաւ խոկալ։ Բայց միանգամայն կը յիշէր երիտասարդին ազնուականութիւնը և նորա բարի կրթութիւնը. բնաւ չէր կարծեր, որ իր ծննդեան՝ սննդեան և ազնուատոհմութեան բարի համբաւին անարժան այսպիսի գործ մը կրնայ ընել, դեռ եւս յառաջուան պէս ճոխ և փարթամ կը կարծէր, ուստի ինչպէս որ անկարօտ էր, այնպէս ալ ուրիշին ունեցածն անիրաւաբար առնել չէր կրնար. այս կերպով իր մտաքին հակառակ խորհրդոց յուզմունքները թէեւ կը փարատէր, այսու ամենայնիւ ուրիշ անգամ պարապ տեղ իր միտքը չը հոգնեցնելու և իր սրտին մէջ չփոթութեան և խռովութեան տեղի չը տալու համար՝ միտքը դըրաւ որ այնուհետեւ աւելի խոհեմ՝ զգաստ և արթուն լինի։

Առաւօտ եղածին պէս, իր մտմտուքներէն տակնուվրայ ըլլալով՝ վերստին եւս քան զեւս այլայլուած, մտածեց՝ որ անձամբ ազնուականին տունն երթայ պատասխան առնէ, և առանց այլ և այլ պատճառանաց ակունքը ետ առնէ։ Երիտասարդը ակնագոր-

ծին գալն իմանալով առաջին անգամ իմա-
ցուց՝ որ տակաւին կը քնանայ, և թէ այժմ
թող երթայ և ուշ ատեն թող գայ. իսկ ակ-
նագործը որ միտքը դրած էր չերթալ այն տե-
ղէն՝ մինչև որ ակները չ'ազատէ, իմաց տուաւ
երիտասարդին, թէ «Կարեւոր գործ մը չ'ու-
նիմ որ երթամ. կը սպասեմ որչափ որ հաճոյ
է քեզ»: Քիչ մը սպասելէն յետոյ, ազնուա-
կանը տեսնալով որ թէ ուշ թէ կանուխ ակ-
նագործին ամենարդար իրաւանց պիտի հա-
կառակէր, իւր անձին վստահացած, նենգու-
թեան հետ յանդգնութիւն և լրբութիւն
եւս խառնելով՝ իւր ընտանիքէն հեռու զատ
տեղ մը առանձնացաւ, և հրամայեց որ ակ-
նագործը ներս բերեն. երբ տեսաւ զայն՝ ան-
ծանօթի մը պէս սկսաւ հանդարտօրէն հար-
ցնել. «Ո՞վ ես դու, ի՞նչ կը խնդրես»:

«Ինձ պատասխան բերելու համար, ըսաւ
ակնագործը, քեզ չը ձանձրացնելու մտքով
պարտաւորութիւն համարեցի քու մօտդ գալ
և անձամբ լսել հրամաններդ՝ երէկուան պա-
տուիրած ականց համար: «Ակները, պատաս-
խանեց ազնուականը զարմանալով մը, ի՞նչ
ակն, դու ո՞ր ակներու համար կը խօսիս»:
Ակնագործը երեսին գոյնը նետած և խռոված
կրկնեց. «Որ ակներու համար ըսած խօսքդ
ի՞նչ կը նշանակէ, միթէ դու այն մարդը չե՞ս,
որ երէկ իմ տունս եկար, և ինձմէ խնդրեցիր

որ իմ ունեցած բոլոր պատուական և թան-
կագին ակներս քեզ ցոյց տամ, և զանոնք զա-
նազան ձեւերով շինեմ: Միթէ դու չէի՞ր՝ որ
ակները առիր, այս տեղ բերիր անոնց վրայօք
կնոջդ հաճութիւնն ու որոշումը առնալու
համար, և կըսէիր թէ կնոջս ընծայ տալ կուզեմ.
և դարձեալ չը խոստացա՞ր, որ այս առաւօտ
ինձ դարձնես, պատուիրեցիր ալ որ անոր կա-
մաց համեմատ շինեմ զանոնք, և ջանամ զայն
հաճեցնել»: Դարձեալ զարմացած և անխռով
դէմքով մը ըսաւ նենգաւոր ազնուականը. «Ես
բան չեմ գիտեր, ոչ ականց համար, ոչ նորա
ձեւոց համար, և չեմ գիտեր ալ թէ ի՞նչ կը-
սես. կամ ուրիշ մէկ մը զիս կը կարծես, եւ
կամ թէ երազ տեսած ես»:

Ակնագործը ազնուականին այս խօսքե-
րուն վրայ յուսահատած խելքը գլխէն գը-
նաց: Այս լսելով՝ արտասուելով սկսաւ ա-
ղաչել՝ որ գթայ իւր վրայ, Աստուծոյ և իւր
կենաց սիրոյն համար զինքն չը փճացնէ. «Ե-
թէ այն ակները ինձ չը դարձնես, ըսաւ, իմ
տունս ու տեղս պիտի կորսուին, իմ կինս ու
զաւակներս սովամահ պիտի մեռնին. կ'առա-
ջարկէր անոր ու կը յիշեցնէր բարի մարդու-
մը պարտաւորութիւնը, մանաւանդ ազնուա-
տոհմ մարդու մը՝ որ աւելի պէտք է, կըսէր,
իւր պատուոյն և ողջմտութեան վրայ հոգ տա-
նիլ. և աղաչեց ալ, որ իւր հաւատարմութեան

տեղ՝ որով ակունքն անկասկած իրեն վստահացած էր, նենգութիւն և խաբէութիւն չը փոխարինէ. և վերջը Աստուծոյ արդար դատաստանին ալ իրեն սպառնացաւ, որուն առջեւ ամեն բան յայտնի ու մերկապարանոց է. և յիշեց՝ որ անօրինաց համար ալ անհեղ դատաւոր է. բայց անոնց մէկն ալ ազնուականին հոգը չըլլալով սկսաւ նորա ըսածները ծաղրել, երբեմն սխալանաց, երբեմն երազի և երբեմն ալ արբեցութեան և ցնորքի արդիւնք կը համարէր. և զայն յանդիմանելով՝ հաստատուն կերպով ուրացաւ՝ թէ իրմէ ոչ ակունք և ոչ բան մը առած է. և երբոր ակնագործը իր յուսահատութենէն աղաղակեց, ինքըն ևս սաստիկ բարկացած ձեւանալով սկսաւ աղաղակել, և անարգական խօսքեր խօսելով անոր՝ սանդուխէն վար քաշքշելով տունէն դուրս հանել տուաւ: Ուրեմն ակնագործը՝ իւր իրաւունքը հաստատելու համար վկայ և ձեռագիր մը չունենալով, շատ աղէկ կը տեսնար՝ որ դատաստանի դիմելն ալ անօգուտ է, ուստի ամեն բան կորսնցուցած սեպեց. Նենգութեամբ կորսուածներուն վրայ սիրտը սաստիկ վշտացած՝ տրտմութենէն ինքզինք կորսնցուց, և գրեթէ խելքը գլխէն գնաց: Այս վարանման և յուսահատութեան մէջ յանկարծ միտքը եկաւ՝ որ կայսեր դիմէ, և զայն աղաչէ՝ որ իրեն իրաւունք ու դատաս-

տան ընէ. իւր մտաց մէջ կ՚ըսէր, որ կայսրը շատ իմաստուն է, և լաւ կը ճանչնայ՝ թէ ո՛ր մէկերնիս ճշմարտութիւն կը խօսինք, և խիստ արդարադատ ըլլալով կը յուսամ որ զիս անշուշտ իմ իրաւանցս տէր պիտի ընէ. այս որոշման վրայ ուղղակի կայսեր գնաց: Կայսրը իւր ընդաբոյս հեզաբարոյ և խիստ գթասիրտ բընութեամբը թողուց՝ որ համարձակ ներս մտնէ, մտադրութեամբ ալ մտիկ ըրաւ նորա խօսածները. ակնագործը բոլոր առջեւն ինկած իւր ամէն անցքերը մի ըստ միոջէ պատմեց, և միանգամայն խօսածներուն ճշմարիտ ըլլալը ապացուցանելու համար՝ երդմամբ ալ հաստատեց. կայսրը որ աւելի թշուառ մարդուն արտասուքէն և ցաւերու կսկիծէն ուղիղ ըլլալը կը ճանչէր, քան թէ երդումէն, զայն առանձին տեղ մը պահեց, և հրամայեց՝ որ ազնուականը ուր որ է շուտով գտնան և իւր առջեւ բերեն:

Ազնուականը կայսեր այս յանկարծական հրամանին վրայ սակայն, տաքէն մինչեւ գըլուխը սկսաւ դողալ, սակայն ինքզինք իրախուսուելով և իր վրայ խորամանկ վստահութիւն կեղծելով, և սուտ անմեղութեան դիմակ առած՝ եկաւ գնաց, մանաւանդ վստահ ըլլալով որ ակնագործը բնաւ մէկ կերպով մ՚ ալ պիտի չկրնայ իւր ամբաստանութիւնը ապացուցանել, համարձակ կայսեր առաջն

եղաւ, և ինչ որ իրեն հակառակ լսեց, ամէնն ալ ուրացաւ և ինքզինք արդարացուց։

Կայսրը տեսնալով՝ որ ամենևին օգուտ մը չունի, և չկրնար նորա բերնէն իւր ըրած գողութեան և նենգաւորութեան խոստովանութիւնը առնալ, արդէն միտքը դրած էր անոր տան չորս կողմը փնտռել տալ, բայց որովհետև կարելի էր, որ ակները ուրիշ տեղ մը պահուած լինէին, ուստի գտնալը դժուար կըլլար, ասոր համար ճշմարտութիւնը շուտով յայտնելու ուրիշ հնարք մը մտածեց 'ի գործ դնել, որ լաւ ևս յաջողեցաւ։ Մտաբերեց՝ որ այս խորհուրդը անշուշտ իւր կնոջմէն գաղտնի չը պիտի ըլլար, երիտասարդին ըստիպեց՝ որ այսպէս նամակ մը գրէ իւր կնոջ. «Եթէ իմ կեանքս ազատել կուզես, շուտով երեկուան քեզ ցոյց տուած ակունքը թղթաբերիս յանձնէ». աղուականը կայսեր այս հրամանաց վրայ դեղնեցաւ, և իւր սըրտապնդութիւնը բոլորովին թուլցաւ, և ինքնակալին ոտից առջև իյնալով դողալով իւր մեղքը խոստովանեցաւ. սակայն ստիպուելով և բռնութեամբ եղած այն խոստովանութիւնը արժէք չունեցաւ, արժանահաւատ պատուհասէն զինքը ազատելու համար օգուտ մը չըրաւ, այլ իւր արդար պատիժն ընդունեց. և ակնագործը վերստին ոգեւորուած՝ 'ի վերջոյ իւր իշխանին հանճարեղութեամբ իւր

չափազանց հաւատարմութեան և պարզմտութեան պատճառաւ կորնցուցած ակները բարեբաղդաբար վերստին ստացաւ։

Դրամով խաղ խաղալը որչափ հարուստ գերդաստաններ փճացուցած և մուրոց վրայ նստեցուցած է, որչափ պատմութիւններ, և քանի՞ կենդանի օրինակներ ունինք մեր աչաց առջև. սակայն ցաւ 'ի սիրտ կ'ստիպուինք խոստովանիլ, որ այժմ մեր ազգին մէջ խիստ յաճախած է այս ամենաչար՝ կործանիչ և անաւեր մոլութիւնը, որ բազմաց զեղծման երևելի պատճառ մի է, վասնզի նորա (խաղոր) խաղցողը որչափ ազնուազգի՝ բարեկիրթ և քաղցրաբարոյ ալ ըլլայ, անշուշտ այդ մոլութեան մէջ պիտի աւրուի և պիտի կորսնցընէ իւր բոլոր գեղեցիկ յատկութիւններն ու գովելի հանգամանքներնը։ Նախ, բաղդին անյաջողութեան պատճառաւ, մանաւանդ իւր մոլի ընկերաց օրինակին հետևելով խըռովարար, զայրացկոտ, բարկացող, հայհոյիչ տխուր ու վշտացեալ պիտի ըլլայ. երկրորդ, ստախօս, խարդախ, նենգաւոր, երդւող և խաբեբայ պիտի ըլլայ. երրորդ, մարդկութեան, ընկերութեան, քաղաքական և կրօնական օրինաց դէմ մեղանչել պիտի ստիպուի. վերջապէս թէ իւր անձին՝ թէ շրջակայից թշուառութեան և իւր ընտանեաց կոր-

ծանման պատճառ պիտի ըլլայ։ Իսկ եթէ դժբաղդաբար խաբուսիկ անհաստատ բաղդը յաջողելով շահիլ սիրտ, արդէն վերոյիշեալ մոլութիւններէն զատ՝ կունենայ շռայլութիւն, ամբարտաւանութիւն, նախանձութիւն, թշնամանք, կամապաշտութիւն, բարի խորհուրդներն արհամարհել և մտիկ չընել, և այլն և այլն. որովք յայտնի է, թէ այս տեսակ խաղեր խաղցողը ով և ինչ աստիճանի տէր ալ ըլլայ, խոհեմ ու պատուաւոր մարդ չէ։

Ուր խաղամոլները շարունակ զոհողութեան մէջ են, միշտ նիւթապէս և բարոյապէս կը կորսնցնեն՝ և չեն զգար. ով անմիտ կուրութեան, անմեղ աշխատանաց արդար վաստակէն զատ անոյշ և հաստատուն ի՞նչ կայ։ Ողորմելի եղբայրներս, հաւատացէք, որ սիրտս սաստիկ կը ցաւի ձեր վրայ, մանաւանդ ձեր խաբուսիկ լեզուէն խաբուող այն խեղճ պարզամիտներուն վրայ սիրտս կը խռխռայ. արդեօք չէ՞ք սարսափիր, երբ միամիտ թըշուառ մը խաբելով անոր քրտանց արդիւնքը անգթաբար ձեռքէն կը յափշտակէք և ձեր մոլեկան հաճոյքը կը զոհէք. ձեր խիղճը այդ-աստիճան քնացուցա՞ծ էք, որ ձեր ըրածին անարժանութիւնը ձեզ չ'ազդեր. կամ դուք այնչափ անզգա՞յ դարձած էք, որ ձեր խղճմըտանաց խայթը չէք իմանար։ Ափսոս, աղէ-

տալի է ձեր վախճանը եղբարք իմ, սոսկացէ՛ք, կ'աղաչեմ, և ետ դարձէք այդ կործանման և ապականութեան առաջնորդող ճանապարհէն, եթէ ոչ՝ օր մը անշուշտ զրկեալներու արտասուքը և սրտի աղաղակը արդարութեան ականջը կը հասնի, և այն ատեն ալ ամէն բան անօգուտ է ձեզ համար։ Երանի՛ թէ ամէն տեղ հանճարեղ, բարեսէր և իմաստուն իշխաններ ու դատաւորներ գտնըւէին, որպէսզի բուն ձեր լաւութեանը համար զձեզ պատժելով զգաստացնէին։

Բայց ավա՜ղ ընթերցող, ես չեմ յուսար, որ դու այնպիսի մէկն ըլլաս, սակայն ո՞ գիտէ . . . ես խոնարհաբար կ'աղաչեմ, որ ըզգոյշ կենաս. եթէ դժբաղդաբար խաբուած ու մոլորած ես, առանց ժամանակ կորսնցընելու շուտով հեռացիր այդ վնասակար գործէն. անարգէ՛ անկէ եկած շահը՝ որ միշտ անօգուտ է. շուտով պատուաւոր գործի մը զբաղէ. վաստակդ քիչ ալ ըլլայ՝ հոգ չէ, միայն թէ արդարութեամբ և անմեղութեամբ թող ըլլայ։

Այն ատեն թէ վայելումը քաղցր կըլլայ, և թէ տեւողական առատութիւն մը կունենայ, վասնզի քրտանց արդիւնք ըլլալով՝ պարապ տեղը վատնելէ կըզգուշացուի, և վասնզի աշխատութիւնը այնպիսի աղբիւր մի է, որ քիչ կամ շատ՝ միշտ ու շարունակ կը

հոսի, զոր եթէ օրինաւոր խնայողութեամբ վառնուի, և բուն պիտոյից համար գործածուի, միշտ բաւական կըլլայ և չը պակսիր։ Ապրուստը պակսեցնողը մեր բուն պիտոյքէն դուրս աւելորդ ու անկարգ բաղձանքներն ու դատարկութիւնն է, որք ամէն չարեաց ճանապարհ կը բանան։ Իսկ դու ազնիւ ընթերցող, կենացդ մէջ թէ որ կուզես խաղաղ ու հանգիստ ապրիլ, նայէ, որ աշխատասէր, արդար, ճշմարտախօս և բարեսիրտ ըլլաս. զրկողը պիտի զրկուի, և անօրէնը օրինօք պիտի պատժուի։

ԺԸ.

Փոխարինուած վնասը

ԿԸ ՊԱՏԱՀԻ երբեմն, որ իշխանները թիւր կարծիքով կամ զրպարտութեամբ եւ կամ բարկութեան կրից սաստկութեամբը իրենց հպատակներն անիրաւութեամբ կը դատեն, և անմեղ տեղը կը դատապարտեն ու չարաչար կը պատժեն։ Սակայն ստորադրեալ պարտաւորը՝ այսպիսի դիպուածոց մէջ պէտք է ամենայն խոհեմութեամբ սանձէ իւր ցասման կիրքը, զոր անիրաւ դատավճիռ մը բռնակալաբար 'ի սկզբան կը վառէ ու կը բորբոքէ. նա փոխանակ դիմադարձելու և տրտնջալու՝ իւր անմեղութիւնը յայտնելու

համար երկայնմտութեամբ դիպող ժամանակի մը պէտք է սպասէ, յուսալով՝ որ շուտ կամ ուշ ճշմարտութիւնը ինքնին կը յայտնուի, և անիրաւութիւնը կը խայտառակուի աշխարհի առջեւ, քանզի ժամանակը՝ բնութեան այն անաչառ դատաւորը անշուշտ կը մերկանայ ապագային մէջ իւր անմեղութիւնը։ Բայց և իշխանը կամ դատաւորը իւր սրտմտութեան մեղմանալէն անմիջապէս յետոյ պարտաւոր է ամենայն յօժարութեամբ մտադիր լինել դատապարտելոյն նկատմամբ եղած ջատագովութեանց, և անմեղութեանը վերահասու ըլլալէն զկնի՝ հարկ է իւր վճիռը ետ դարձնել, և պարտաւորին կրած վնասը հատուցանել եւ փոխարինել ըստ արժանւոյն։ Այս երկու պարտականութեանց նկատմամբ՝ ահա երկու ճշգրիտ օրինակներ կ'ընեն մեր դիմացը յետագայ պատմութեան մէջ։

Հայտէր Ալին, անցեալ վերջին տարիները երկար ժամանակ տառապեցուց Անգղիացիները Կորոմանտէլի քովերը։ Ասիկա դաշնակից էր Գաղղիացւոց, և մտերմական սերտ կապակցութիւն ունէր նոցա հետ այն ատենէն 'ի վեր՝ յորում սոյն այս երկու քաջ ազգաց մէջ ահեղ պատերազմ մը տեղի ունեցած էր Քրիստոսի 1755 թուականին, որ ոչ միայն Եւրոպան տակնուվրայ ըրաւ, այլ և Ամերի-

կէն, Ամերիկան և Ասիան արեց ու աւերեց։ Այս վերջին անգամի եղածն ալ անկէ պակաս չէր մեծ որ. Անգղիացիք պաշարեցին Հնդկաց Գանգիջէրի քաղաքը, որ թէ իր ընդարձակութեամբը և թէ իր գեղեցիկ դիրքովը կը գերազանցէր այն կողմերը Գաղղիացւոց ձեռքը գտնուած բոլոր երկիրները։ Այս միջոցին Հայտէր Ալի եւս պատերազմ ունէր իր անհաշտ թշնամի Խաներին և քաջամարտիկ Մարաթայ ազգին հետ իր Բէնկալուր երկրին մէջ, և թէպէտ Հայտէր սաստիկ նեղւած էր, բայց Գաղղիացի ազգին գլխուն եկած այս անակնկալ դէպքը լսածին պէս՝ իսկոյն Մախտում–Սահիպ անուն քաջ զօրապետին շատ մը զօրք և պաշար յանձնելով՝ իր դաշնակից Գաղղիացի ազգին օգնութեան հասաւ։ Մախտում իր ունեցած զարմանալի արիութեամբը և ռազմագիտական հմտութեամբը թշնամեաց բոլոր աչալրջութեանց և զգուշութեանց հակառակ՝ ամենայն յաջողութեամբ կրցաւ քաղաքէն ներս մտնել թէ իր զօրքը, թէ պաշարը և թէ պատերազմական ամէն կերպ գործիքներն ու զէնքերը։ Այնպէս որ քաղաքին մէջ գտնուողները՝ որ պաշարէ և օգնականէ զրկուած ըլլալով՝ վհատած էին, և մի քանի օրէն ինքնակամ յօժարութեամբ թշնամւոյն անձնատուր ըլլալու վրայ էին, Մախտում–Սահիպի քաջալերութեամբ

սիրտ առին զօրացան, և միասին կարողացան ընդերկար դէմ դնել թշնամւոյն։ Բայց որովհետև թշնամին աւելի զօրաւոր էր. ուստի ամէն ընդդիմութիւն, ամէն օգնութիւն 'ի զուր գնացին, և վերջապէս քաղաքը յակամայից անձնատուր եղաւ թշնամւոյն։

Այլ. Հայտէր այս գործը առածին պէս՝ սիրտը սաստիկ վշտանալով տրտմեցաւ, և իր շատ անգամ յաջող գտնուող զինուցը մեծ անարգանք համարեց այն ձախող դիպուածը, և այս ծայրայեղ ամբարտաւանութեան շարժառիթն ալ նոր յաղթութիւնն եղած էր, քանզի արեան հեղեղներով՝ արդէն Մարաթայ խաժամուժը յանակնկալս նուաճած և զԽաներ յաղթահարած էր։ Թող զայս, այլ նաև կարծելով՝ որ Մախտում զօրավարին անձեռնհասութենէն էր այս ձախորդութիւնը այնպէս սաստիկ վառեցաւ բարկացաւ նորա դէմ, որ նոյն զօրավարը պատերազմէն դարձածին պէս, իսկոյն առանց հարցափորձի կծու և դառն անարգանօք մերկացուց բոլոր ունեցած պատիւէն, եւ ամենայետին ստախականի մը պէս մերժեց իր առջեւէն։ Մախտում այս ամէն անարգութեանց մեծահոգի արիութեամբ մը համբերեց, և իրեն համար խղճի անդորրութիւնը և ունեցած անմեղութիւնը հերիք սեպելով՝ առանց դիմադարձութեան եւ առանց իսկ տրտունջ

մը յայտնելու՝ ընդունեց այս անարդար հատուցումը ։ Բայց զօրքերը իւր քաջութենէն աւելի իւր զարմանալի առաքինութեանց վըրայ խիստ սքանչացած՝ չափազանց կը սիրէին ու կը յարգէին զինքը, ուստի տեսնելով՝ որ իրենց զօրավարը փոխանակ մեծամեծ պատիւներու՝ չարաչար անարգուեցաւ, խիստ տրտմեցան. Նաեւ մի քանի Գաղղիացի զօրականներ գտնուեցան, որոնք Թագաւորին զայրոյթը հանդարտածին պէս սկսան ջատագովել իրենց զօրավարը. “Տէր արքայ, կըսէին անոնք, ինչ որ հաւատարիմ և քաջահմուտ զօրավարի մը պատշաճ էր, ըստ ամենայնի փոյթ տարաւ մեր քաջ զօրավարը, ասոր ձեռօք և քաջութեամբը միայն պաշարեալ քաղաքը կրցաւ երկար ատեն դիմանալ Թշնամւոյն բուռն զօրութեանը դէմ, որուն մեք իսկ ականատես եմք. արդարեւ բարձր աստիճաններու և առատ ու լաւթոշակ պարգեւներու արժանի էր նա, և չէ թէ պատժոյ”։

Հայտէր Ալին, թէպէտ առաջին անգամ այն զայրոյթը բորբոքած ժամանակ խիստ անգութ և անհաւոր երեւցաւ, սակայն ամեն կողմէ բարձրացած ջատագովութիւնները ինքըն իսկ իւր ականջովը լսած ըլլալով, իւր բարկութիւնը զիջած ատենն ալ արդարեւ շատերը զարմացուց իւր արդարամտութեամբն ու

մեծանձնութեամբը ։ Նա երբ զգաստացաւ, անմիջապէս պատերազմական տեղեկութիւններ առնելու համար նախարարաց և մեծամեծաց ժողով մը կազմեց, և հոն հաւաքելով Գնդիչերի քաղաքին օգնական զօրաց երեւելիները, սկսաւ իւրաքանչիւրին մի առ մի հարցնել, թէ արդեօք Մորտում պաշարման ատեն ի՞նչ փոյթ, ի՞նչ հոգացողութիւն ունեցաւ, ի՞նչ հրամաններ հանեց և ի՞նչ գործ ցըցուց. նաեւս թէ ի՞նչպէս վարուեցաւ, և մեծամեծ ու փառաւոր քաջագործութեանց համար ո՞րոնք յարգուեցան, և ի՞նչ վախճան ունեցաւ ։

Ամեն բերան պարտ ու պատշաճ կերպիւ ներբողական գրուատեօք պատուելով զՄորտում, այս մանրաքննին հարցափորձութեան ատեանը վերջացաւ ։ Իսկ Թագաւորը բացարձակապէս մեծ անխոհեմութիւն նշմարելով ըրած անխորհուրդ դատաստանին մէջ, միտքը հաստատ դրաւ՝ որ անյապաղ վարձատրէ զՄորտում առօք փառօք. և որովհետեւ հասուցած զրկանքն ու նախատինքը հրապարակաւ էր, ուստի կամեցաւ՝ որ նոյնպէս դարձեալ հրապարակական հանդիսով մը կատարէ ընելիք հատուցումը ։ Ապա իսկոյն հրաման ըրաւ՝ որ շուտով արքայական մեծաշուք եւ փառաւոր հանդէս կազմեն, ճիշդ ամենախմբութեան աւուրց պէս՝ ուր նա

ասխրաբար մեծավայելուչ փառքով կը ներկայանար։ Հրաման ամենայն ճշգրտութեամբ կատարուեցաւ, և ինքն ալ իր Թիկնապահներովը, մեծամեծներովն ու այն քննութիւն ընող խորհրդականներովը շրջապատած՝ սկսաւ Մորտուճի տնակը երթալ մեծ հանդիսով, որուն աւելի շքեղութիւն կուտար ժողովրդեան հետեւակ անհամար բազմութիւնը։

Մորտուճ այս ամէն հանդերձանաց բոլորովին անտես՝ չինական պարզ զգեստովը, բայց և զուարթ դիմօք՝ իր պարտիզին մէջ ժուռ կուգար վեհանձնօրէն, և կը զուարճանար միանգամայն բոյսերուն և տունկերուն բնական գեղեցկութեանը վրայ։ Սակայն զարմանալի չէր, որ նա իր այն միայնակ վիճակին մէջ դարձեալ գոհունակ սիրտ մը կը կրէր միշտ, ըստ որում Թէպէտ անողորմ և ոխերիմ բաղդը իր արտաքին փառքը եւ պերճութիւնը նուաստացուցած էր, բայց ոչ երբէք հոգւոյ բարեպաշտութիւնն ու առաքինութիւնները, զորս պատուական կը համարէր քան զոսկի և զարծաթ։

Աշխարհակալ Հայտէր Ալին, որ փառաւոր և շքեղապանծ փղի մը վրայ նստած էր, երբ տեսաւ զՄորտուճ իր այն անպաճոյճ՝ բայց գոհ վիճակին մէջ, զարմացաւ. խոկոյն իջաւ՝ և ոտքով փութեց դէպ 'ի անոր, և գրկելով՝ սկսաւ անդադար համբուրել և ըսել. «Թէպէտ քու արժանապատուութեանդ յանիրաւի հասուցած զրկանաց համար բատուգիւ մեծ ամօթ կ'զգամ, բայց արդ՝ ուրախ եմ չափազանց, որ շուտով յայտնուեցաւ քու անմեղութիւնդ, որով ահա կրած անարժան անարգանացդ փոխարէն՝ պարտ ու պատշաճ հատուցումն ընելու բաղդը կը վայելեմ այն երջանիկ վայրկենիս։ Բայց գիտեմ այժմ, որ քու գործերդ խիստ մեծ գովութեան արժանի են, զոր անխորհրդաբար պարսաւեցի ես։ Արդ՝ ուրեմն առ, ընդունէ վերստին քեզ վայելուչ պատիւները, և ուրիշ ինչ որ կուզես կամ կը փափաքիս՝ գանէ իմ առ քեզ ունեցած խանդակաթ սիրոյս և անկեղծ բարեկամութեանս ապաստանելով խնդրէ եւ պիտի ընդունիս»։ Թագաւորին այս յարգական խօսքերուն պատասխանեց Մորտուճ և ըսաւ. «Տէր իմ արքայ, Թէեւ անգութ բաղդը զիս այսչափ հալածեց, բայց պէտք է գիտնաք, որ կրկին գոհ էի ես ըստ ամենայնի. միայնութեանս մէջ խոր Թախծութեանս միակ շարժառիթը ոչ այլ ինչ էր, բայց եթէ անգին կորուստ մը, այն է Ձերդ վեհափառութեան ազնիւ եւ բազմագորով սիրտը. և արդ՝ դուք որ Ձեզէն կը բարեհաճիք շնորհել ինձ այդ Թանկագին գանձը, այլ եւս անկից աւելի ինչ քաղցր բան կայ, որ խնդրեմ»։

Ասոր վրայ՝ Հայտէր Ալին կրկին գգուելով առաքինի և վեհանձն զօրապետը, փառօք նստեցուց իւր փղին վրայ, և ինքն ալ ձի հեծնելով սկսաւ անոր առջեւէն երթալ ժողովրդեան խուռն բազմութեան գովաբանական երգերովը. և այսպէս շքեղ հանդիսով բերաւ իւր արքայական պալատը, և հոն ևս շնորհելով նախկին պատույ աստիճանները՝ այնուհետեւ միշտ մեծարեց զայն մինչեւ իւր կենաց վախճանը, և իւր բոլոր նախարարներէն և սիրելիներէն վեր կը դասէր։ Հայտէր Ալին իւր այս հաղուագիւտ օրինակովը ուսոյց աշխարհի, որ վեհանձն և մեծահոգի մարդիկ միշտ պատրաստ են փոխարինել իրենց անխորհրդաբար գործած անիրաւութեանց, երբ ճշմարտութիւնը յայտնուի։ Բայց աւա՜ղ, ցաւալին այն է, որ այսպիսի անձինք շատ և շատ նուազ են թուով։

Եթէ իշխանաւորք և թագաւորք այս աստիճան արդար ըլլային, որ իրենց անիրաւ վճռովը զրկեալ առաքինւոյն իրաւունքը հրապարակաւ վերադարձնէին ու զրկանաց փոխարինէին, այն ատեն իրենց բոլորտիքը առաքինիներով շրջապատուած պիտի ըլլար, և այն ատեն միայն արդիւնաւոր՝ գործունեայ և բանիբուն մարդիկ կը հաճէին նոցա գործերուն մէջ մնալով՝ օգնել և բարեկարգել. բայց անիրաւ զրկանաց տեղ չը փոխարինող իշխանութիւնը թող չը յուսայ, որ արդար՝ անաչառ եւ արդիւնաշատ պաշտօնեայներ կունենայ։

ԺԹ.

Կոման Օրենգայ կամ հրահանգութիւն

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ մը, մանաւանդ ազնուականներու ամենէն վտանգաւոր վիճակն է դաստիարակութեան ու կրթութեան լուծէն ազատուած ժամանակը, երբ կ'սկսի անձնիշխան ըլլալ, և միմիայն իւր կամքին հետեւիլ. և ահա այս վիճակն է՝ որ իւր բովանդակ կեանքը կ'որոշէ։

Ինչպէս որ շատ անգամ կը տեսանք, այսպիսին գործի մը պարապելու պատրաստուած չըլլալով՝ և իւր անձը շարունակ դատարկութեան մատնած ըլլալով, մանաւանդ եթէ պատահի՝ որ և շատ դիւրին է պատահիլ, իրեն պէս պարապ ու շատաշրջիկ երիտասարդաց հետ ընկերակցի, որոնք դիւրաւ մոլութեան մէջ կ'իյնան, այն ատեն քիչ ժամանակի մէջ հրահանգութեան ամենէն իմաստնագոյն և զգօյշագոյն արդիւնքներն ալ կը կորսնցընէ. կը մոռնայ բոլոր բարի խրատները, մէկդի կը ձգէ ամեն ուսմունքները, իրեն ան-

ութիւն լցած մարդկանց իր վրայ լցած գէշ տպաւորութենէն եւ անոնց դիւական չար օրինակներէն թելադրուելով՝ ճամբէն դուրս կելլայ, և իր դաստիարակութենէն ձանձրանալով՝ քիչ-քիչ ամէն մոլութեանց մէջ կ'իյնայ։

Օրէնգոյ երիտասարդ կամաւ ալ վարժարանէն ելած ատեն՝ իսկապէս այս վիճակը ունեցաւ։ Ասիկա ճոխագոյն և խիստ հարուստ հօր մը միամօր որդին էր, բայց ինքնատէր մնալով, եւ առանց առաջնորդի ու առանց փորձառութեան՝ կենցաղոյս մարդկային լայնածաւալ ծովուն ընկերական յորձանքին մէջ մտնալով՝ իսկոյն դատարկասուն երիտասարդներէն շրջապատուեցաւ, և հետեւաբար անոնց ամէն չլխոփ եւ անկարգ բարքերը սորվեցաւ։

Պարապ և անգործ այս տեսակ մոլիներէն երբեմն մէկուն և երբեմն միւսին հետ կը պտըտէր, ու այսպէս պարապ բաներով անառակութեամբ և խաղերով ժամանակը կը կորսնցնէր և կեանքն անցընել կուզէր։ Յիրաւի այս տեսակ մոլութիւններ սնուցանելու համար, հօրը ամէն ամիս տուած դրամով չէր կրնար բաւականանալ, սակայն իր չար ընկերները՝ որ գեղեցիկ կերպով կը վայելէին անոր շռայլութեան արդիւնքը, սատկը հատածին պէս դիւրութեամբ կարողացան իրեն

համար վաշխառուններ գտնալ, որոնք անիրաւ պայմաններով և խարդախ ձեռագիրներով կուտային անոր՝ տասնին տեղ հարիւր առնելու պայմանաւ, և այս շահուն պատճառաւ դրամի կարօտութիւն ունեցած ատեն՝ անոնք ալ կարծես ձեռքերնին պատրաստ բռնած՝ իսկոյն ուզածը կուտային անոր։

Այս եղանակաւ քիչ ժամանակի մէջ մեծագումար պարտուց տակ ինկաւ, այնպէս որ եթէ այն ատենները հայրը մեռած ըլլար, իր հայրական ժառանգութեան մեծագոյն մասը պիտի կորսնցնէր։ Իսկ հայրը այս ամէն եղելութեանց բնաւ տեղեակ չէր, ուստի խաբուելով որդիական սուտ կեղծաւոր ակնածութենէ եւ յարգանքներէն, որ խիստ աղէկ սորված էր անմիտ որդին ինքզինքը այնպէս ձեւացնելու կերպը, որով զայն աւելի խաբելու համար այնպէս մը կը ցուցնէր ինքզինք հօրը առջեւ, որպէս թէ ամէն բան իրեն բաղձանքին համեմատ յառաջ կ'երթայ։

Բաղդի խաղերու մէջ ըրած մէկ չափազանց կորուստը առաջին անգամ հայրը ցընցեց և թմրութենէ սթափեցուց, որ գրգռուելով ստիպուեցաւ որդւոյն առաջուան անցուցած կեանքը մանրամասնաբար քննել, որով յայտնապէս տեսաւ այն ահագին պարտուց անդունդը՝ որուն մէջ ընկղմած էր։

Իր որդւոյն այս յայտնուած չարութեան վրայ չափէ դուրս վշտացաւ և սաստիկ զայրացաւ, մանաւանդ իր նախատես չ'ըլլալուն համար սիրտը տակնուվրայ եղաւ. չափազանց կիրք եռած և անոր եղեռնութեանց վրայ բարկութեամբ լեցուած ըլլալով՝ առաջին անգամ մտածեց՝ որ իր որդին երեսէն բոլորովին ձգէ և տունէն վռնտէ, և 'ի պատիժ անոր գործած անառակութեանց՝ խոր աշտարակի մը մէջ դնել տայ։

Բայց յետոյ քիչ մը հանդարտելով՝ երբ անդորրամտութեամբ մտածեց, հասկցաւ՝ որ զայն տունէն դուրս ընելով և բանտի մէջ դնելով՝ միմիայն կը պատժէր, և անոր վարքը շտկած չէր ըլլար, վասնզի գուցէ որդին աւելի ստահակած ըլլալով՝ այն պատիժը փոխանակ անոր չար բարքը և կամ մոլութիւնները սրտէն արմատաքի խլելու, աւելի գրգռելու առիթ կըլլար զայն պատժողին դէմ։

Այս լուրջ մտածութեան մէջ զգաց նաեւ՝ որ այս վնասին պատճառը ըստ մեծի մասին ինքն էր, որ անզգուշաբար իրեն կամքին յանձնած և ինքնագլուխ թողուցած էր, որով գրեթէ անգործ մնալով՝ սախլուած էր անառակ և չարաբարոյ ըլլալու։

Ուստի մտածեց՝ որ իրեն այս մեծ սխալանքը ուղղէ։ Որդին իր քովը կանչեց. նա ալ քաջ գիտնալով իրեն յանցաւոր ըլլալը՝ դողալով և երեսին գոյնը նետած հազիւ կը համարձակէր հօրը առջեւ գալու, վերջապէս երբ այսպիսի ափշութեամբ հօրը դիմացը եկաւ, բարեսիրտ հայրը այսպէս ըսաւ անոր.

«Քու ամաչելդ բաւական չափ կը յայտնէ՝ որ շատ աղէկ հասկցած ես, թէ քու անցեալ ընթացքիդ փոխարէնը ի՞նչ պէտք է ընել»։

«Արդարեւ դու յանցաւոր ես, և անարժան հայրական սիրոյ, բայց և այնպէս տակաւին չը պիտի դադրիմ քեզ հայր ըլլալէ։ Այն սէրը՝ որուն չես դու արժանի, և զոր տակաւին չեմ ուզեր իմ սրտէս հեռացնել, այն հայրական սէրը կըստիպէ զիս քեզ ներել, և անտես ընել քու անառակութեանցդ արժանաւոր պատիժը. այսուհետեւ բռնելիք ճամբադ, եւ ունենալիք բարքդ ու վարքդ պիտի որոշել տայ ինձ՝ թէ արդեօք պէ՞տք է զքեզ տակաւին սիրել իբրեւ որդի, և կամ միշտ ատելու իմ անէծքներս քու վրադ թափել, բայց հիմա պէտք է քաւել քու անկարգութիւններդ. գիտեմ քու ամեն տեղ ըրած չափազանց պարտքերդ, թէպէտեւ կուզէի անոնց ծանրաբեռնութիւնը քու վրայ ձգել, սակայն չեմ ուզեր, վասնզի քանի որ ջանք մը զիս կըստիպէ և հոգ կը տանիմ միշտ ամեն մէկուն ունեցած պարտքս հատուցանել, այն ատեն իմ որդւոյս անունը պարտականներու կարգըն անցընելով՝ պարտատէրներու մատեան-

ներու մէջ գրել տուած պիտի ըլլամ։ Յայտնէ՛ ինձ ուրեմն մէկիկ մէկիկ պարտատէրներուդ անունները, մանաւանդ պարտքիդ որչափ ըլլալը և ինչ բանի համար առնելդ։ Պարտուցըդ գումարը կամ թիւը յայտնելէն բնաւ մի վախնար, վասնզի ինչ որ ալ ըլլայ՝ ես պատրաստուած եմ վճարելու. կը ցանկամ՝ որ գտնէ այս պարագայիս մէջ քու պարզութեամբդ իմ բարեմտութիւնս փոխարէն մը ընդունած ըլլայ, և թէպէտ դու մէկուն անունը պահել ուզես եւ ինձմէ ծածկես՝ ես զայն յայտնել տալու եղանակը քաջ գիտեմ, բայց այն ժամանակ դու խարդախ պիտի երեւնաս իմ աչքիս, և խստիւ ու յարաժամ անարժան պիտի գտնուիս այն սիրոյն՝ զոր ես տակաւին քու վրայ ունիմ„։

Երիտասարդը այս սիրայորդոր եւ միանգամայն ցասկոտ խօսքերէն յաղթուած՝ առկայն կերպով կը տառապէր խղճէն, և իւր անցեալ մեղադրելի մոլորութեանց ամէն նախատինքները հօրը ներկայացնելու հարկադրուած ըլլալով՝ ամչնալէն գետինը կ՚անցնէր։ Այսու ամենայնիւ տեսնելով՝ որ ստիպուած էր պարզ և անխարդախ ըլլալ, ուստի առանց բան մը պահելու՝ ամէն բան յայտնեց։ Հայրը մտադրութեամբ ամէն ըսածները լսելով՝ ըսաւ. “Քու պարտքերդ թող վճարուին„. և տեսնելով՝ որ աւելորդաբանութեան հարկ

չը կայ, առանց ուրիշ խօսք մը ըսելու՝ թուղուց որ երթայ, բայց տղան զղջմամբ՝ մորմոքմամբ եւ միանգամայն ամօթով պաշարուած էր։ Յետոյ անոր պարտատէրները զատ զատ կանչելով՝ նորէն հետեւեալին սակարկութիւն ըրաւ, և այնպէս եղածին չափ կարեց՝ ինչպէս որ արդարութիւնը կը պահանջէր այս տեսակ պարտքերէն վար իջնալ. այս ընելէն և հաստատելէն զկնի՝ մեծ սրահի մը մէջ երկու սեղան պատրաստել տուաւ, եւ հրամայեց՝ որ մէկուն վրայ պարտատէրներուն վճարելիք դրամոց գումարը սփռեն, և միւսին վրայ նմանապէս այն դրամներէն զեղջածը դնեն։

Անկէց յետոյ պարտատէրները բոլորն ալ մէկտեղ կանչեց, և իրեն որդին ալ այն տեղ բերել տուաւ, որովհետեւ ուզեց՝ որ անոր աչքին առջեւ իւրաքանչիւրին ինկած պարտքերը տրուին. և այսպէս զանոնք մի առ մի արձակելով՝ երբ անոր հետ առանձին մնաց՝ սիրալիր ու ցած ձայնով ըսաւ անոր. “Եթէ դու քու անառակ վարուցդ տոյժը կամ վընասը աղէկ գիտնայիր՝ հաւատալի եմ, որ աւելի խոհականութեամբ կը անօրինէիր քու կենացդ ընթացքը։ Արդէն դու քու աչքովդ տեսար, ասկէց յետոյ պէտք է՝ որ դուն քեզմէ խրատուիս։ Այս սեղանին վրայ կեցած պատրաստի դրամները ամբողջապէս պիտի յափըշ-

տակէն այն չարաբարոյ մարդիկները, որոց հաւատացած էիր դու, վասնզի քու անոնց ունեցած պարտքդ ամբողջ գումարը այնչափ էր, թերեւս ժառանգութեդ միւս մնացած մասն ալ քեզմէ պիտի կողոպտէին, բայց ես ահա կարող եղայ անոնց ձեռքէն ազատել քեզ համար, որ իմ մահուանէ ետքը քեզի պիտի յանձնուի ։

«Բայց այս պարգեւը ինձմէ միայն այն ատեն կրնաս ստանալ, երբոր կենցաղավարութեանդ կերպը դէպ ՚ի լաւը փոխելով՝ այսուհետեւ կորուսածէդ աւելին շահիս. թէոր այսպէս չը տեսնամ, այն ատեն իմ ջանասիրութեամբս ու աշխատութեամբս վաստկածներս անառակ փճացնող մը անարժան կերպով չը ցրուած՝ ես խիստ լաւ գիտեմ զայն ուրիշներուն օգտին սահմանել, որոնք իրենց բարի վարքովը ու արժանաւորութեամբը խելացի կերպով կարող են զայն գործածել ։ Հիմա ինչ որ քեզմէ կըսպասեմ՝ կուզեմ զայն փորձով մը ճանչնալ. կուզեմ՝ որ երկու տարիի չափ իմ հարստութեանս մէկ մասին հոգը քեզ յանձնեմ, զանոնք գործածելու կերպէդ և հիմա քու անձդ կառավարելու հանգամանքէդ պիտի մակաբերեմ քու ապագայ կեանքդ» ։

Երիտասարդ կոմսը երբոր այն դրամոց ամենամեծ քանակութիւնը տեսաւ, և ճանչցաւ՝ որ ինքը շռայլաբար վատնած էր, շփո-

թեցաւ և յիմարեցաւ, այնպէս որ՝ ոչ կրցաւ խօսիլ և ոչ ալ շարժիլ ։ Ինչու որ առաջուց անոնց այնքան մեծ գումար մը ըլլալը չէր կարծած, որովհետեւ անփորձ ըլլալով՝ տղաւին չէր գիտէր, որ բերնէն ելածը գործով կատարելը շատ անգամ ծանր է ։ Մանաւանդ ալ աւելի կը վախնար հօրը սպառնալիքներէն՝ որ լաւ գիտէր թէ որչափ արդար և իրաւացի էր ։

Այսու ամենայնիւ, եթէ առաջին սովորութեան պէս պարապ մնար, կարելի էր՝ որ քիչ օրէն ապշութիւնը և սոսկումը փարատելով գուցէ քիչ քիչ առաջի ընթացքին պիտի դառնար, ինչպէս որ շատերն ըրած են, ինչու որ անգործ մնալով պիտի ստիպուէր վերստին իւր անձը նոյն զեղխութեանց մատնել, և առաջուան ընկերներուն կամ անոնց նմանեաց հետ պտըտելով՝ անոտի խաղերու և անօգուտ զբօսանքներու մէջ ժամավաճառ պիտի ըլլար ։ Բայց իւր փրկութեան պատճառ եղաւ այն զբաղմունքը՝ որ իրեն յանձնուեցաւ ։

Հօրը իրեն յանձնած գործին յօժարութեամբ պարապելով, այն պարապորդ ընկերներէն և անոնց խմբէն զատուեցաւ, և իւր օրերը աւելի օգտակար ու խիստ զուարճալի կերպով անցնելու եղանակը գտնելուն վըրայ շատ ուրախ եղաւ ։

Երբ երկու տարին լըացաւ, հայրը այնքան ուրախութեամբ հաւնեցաւ անոր գործոց՝ որ

իր ուրիշ ընչից տնտեսութիւնն ալ անոր յանձնեց. ինքն միայն կը կառավարէր, և Հարկը պահանջած ատեն իր խորհրդովը միայն անոր կ'օգնէր ։ Յետոյ ամուսնացուց զայն հանճարեղ՝ համեստաբարոյ և ազնուազարմ օրիորդի մը հետ, որ իր բաղձանքին համեմատ իր որդւոյն բարքը կատարելապէս մեքանորդեց, և այնուհետեւ աւելի խելացի և աւելի բարեկենցաղ ազնուազգի երիտասարդաց օրինակ եղաւ ։

Հօրը մահէն յետոյ՝ ամեն ստացուածքները ժառանգելով ամենահարուստներուն մէկն եղաւ, բայց իր անցեալ դէպքը միտք բերելով՝ մտածեց, որ ամեն բանէ աւելի իր ստացուածքները իր դեռաբուսիկ որդւոյն լաւ դաստիարակութեան ու կրթութեան համար մսխէ. հաստատ համոզուած ըլլալով որ թէպէտ այս գործին համար իր գոյից մեծագոյն մասն ալ վատնէր, դարձեալ հարուստ թողած պիտի ըլլար զայն, քանի որ բարի պիտի անուցանէր և կրթեալ ու դաստիարակեալ պիտի թողուր, վասնզի շատ աղէկ հասկցաւ որ զաւկի մը համար ամենէն հարուստ ժառանգութիւնը անոր վարուց և բարուց անարատութիւնն է։ Երբ մանկան լեզուն ու ոտքերը բացուեցան, իսկոյն զայն սպասաւորաց ձեռքէն առաւ, վասնզի սովորաբար մանկան վերջին կեանքը առաջին ընկերներէն կախում

ունի, և սպասաւորք միշտ սովրած են սնոտի և մոլար խորհրդով մանկանց միտքը լեցնել, ու սերմանել նոցա սրտին մէջ մոլութեանց սկզբունքը. այս պատճառաւ ուզեց՝ որ կամ միշտ իրեն հետ ըլլայ և կամ մօրը հետ, որոնք բարեխառնութեամբ եւ Հարկը պահանջած ատեն քիչ անգամ խստութեամբ վարուելով՝ այնքան հլու և հպատակ ըրին զայն և միանգամայն այնքան ուրախամիտ՝ համարձակ և կայտառ՝ որ իրենց բերկրութիւնն ու հրճուանքն եղաւ, և բոլոր զինքը տեսնողները վրան կը զարմանային ։ Երբոր տասն եօթը տարեկան եղաւ, սկսաւ զայն կրթելու արժանաւոր դաստիարակի մը վրայ մտածել, որ ոչ միայն գրականութեան մէջ վարժեցնէ զայն՝ այլ և կարող ըլլայ ազնուական բարուց, համեստութեան, ողջամտութեան, արդարութեան, աստուածպաշտութեան եւ ազատ որդւոյ մը վայլած ամեն բանի մէջ հրահանգել եւ կրթել ։ Այսպիսի դաստիարակ մի գտնալու համար շատ տեղ փնտռեց, բայց զգօնութեամբ եւ հանճարեղութեամբ լաւ դաստիարակութիւն տալու յաջողակ եղողները չէին ուզեր իրենց անձը ձանձրացուցիչ և տաղտկալի մանկավարժութեան մէջ ձգել, և որոնք որ յօժար էին այս մասին, սակայն անոնց վրայ ալ իր փափաքած ձեռնհասութիւնը և կարողութիւնը չէր գտնար ։

Նաեւ շատ կը տարակուսէր, տեսնելով՝ որ մանուկը օր ըստ օրէ կ'աճէր ու կը զօրանար, և գրեթէ անհնար կըլլար զայն ուրիշ մանկանց ընկերակցութենէ միշտ հեռացնել, մանաւանդ այն սպասաւորաց ընկերութենէ՝ որոնք շատ անգամ չար օրինակով կամ այլանդակ խօսքերով կամ անառակ մարդահաճութեամբ և կամ դիւական ներշնչմամբ մէկ վայրկենի մէջ երկար ատենուան աշխատութե̃ արդիւնքը կ'աւրէին ու կ'ապականէին։ Այս հոգերուն և մտածմանց մէջ իւր կրթուած վարժարանը միտքը եկաւ, բայց կը համարէր թէ անկէ ի՛նքը քիչ օգուտ ստացած էր, ուստի դժկամակեցաւ։ Այսու ամենայնիւ՝ շատ մը տարակուսանքներէ յետոյ, լաւ մը խորհեցաւ վերստին, և յիշեց՝ որ նոյն դպրոցին մէջ եղած ատեն՝ անհնազանդութիւնը, անըզգաստութիւնը, ուսմունքն ատելը, չարութեան ու գէշ վարուց առաջին բողբոջները այնտեղ զգացած չէր, այլ երիտասարդութեան հասակին մէջ մտած ատեն՝ երբ սկըսած էր հրահանգութեան լուծը մէկդի ձըգել և օրէնքները՝ սահմանադրութիւններն ու պատուիրանները բանի տեղ չը դնել, այն ատեն աւրուած էր իւր բարքը. վասնզի այն մանկութեան հասակին մէջ՝ իւր վրայ կառավար կարգուողներուն իշխանութեան և միշտ անոնց հոգունակութեան տակ գտնուելով՝

քանի որ այն դեռաբոյս հասակը հըլու և հըպատակ ըլլալ կը պահանջէր, այն ատենները անմեղութիւնն ալ անխախտ և անապական մնացած էր, անոր հետ մէկտեղ աստուածպաշտութիւն՝ հնազանդութիւն և ուսումնասիրութիւնն ալ պահած էր։ Յիշեց նաեւ իւր տղայական հասակին մէջ այն վարժարանէն շահած օգուտները, վասնզի իրենց վրայ հսկող պահապանին աչքին առջև՝ իրեն հաւասար ընկերներու հետ կենցաղավարելով հեռացուցած էր իրմէն թէ մոլար ու վնասակար կարծիքները և թէ մեծամտութիւնն ու յանդգնութիւնը, զորս հօրը տունէն իրեն հետ տարած էր. և իրեն ընդարձակ միջոց յանձնուած էր իւրաքանչիւր անձանց ձիրքերն ու յատկութիւնները յաջողապէս նկատելու և քաջ տեղեկանալու. և զանազան կողմերու մէջ բարեկամ ստանալու առիթներ շնորհուած էր իրեն, որոց հետ տակաւին հաղորդակցութիւն ընել կ'ախորժէր. մտածեց նաեւ՝ որ այն տեղ անմեղ խաղեր և օգտակար զբօսանքներն արգիլուած չէին, որք մանկանց բնական կազմութեան համար շատ պէտք են, որ եթէ խոհեմութեամբ և առանձնակի կրթութեան մէջ խափանուած և արգիլուած ըլլան՝ տասնամեայ մանուկ մը կատարեալ մարդ ընել ջանալով անհմուտ կրթիչէ մը, այն ատեն վերջապէս անոնք վնասակար ու անվայել կերպով

երեւան կուգան, և փոքր մանուկ մը տարաժամ կը ծերացնեն ։

Այս բաները լաւ մը խորհրդածելով, ճանչցաւ և հաւկցաւ՝ որ իր որդին այս մանկութեան հասակին մէջ ուրիշ տեղէ աւելի կարող է վարժարանի մը մէջ լաւագոյն հրահանգութի գտնել, ուստի այս պատճառաւ այն վարժարանին մէջ դրաւ ։ Երբոր տասնչորս տարեկան եղաւ, հայրը տեսնելով՝ որ աղայամիտ բարքերէն սթափած է, որով մանուկ կրթել ուզող խոհական մարդ մը չափէ դուրս կը տաղտկացնեն ու կը ձանձրացնեն, զայն դպրատունէն հանելով՝ մեծ փոյթ ունեցաւ քաջըրաբարոյ, հեզահոգի, խոհեմամիտ, շընորհալարդ և քաջագէտ մարդ մը փնտռելու, որպէսզի իմաստասիրութեան՝ բնաբանութեան և իրաւագիտութեան մէջ զայն աղէկ մը կրթէ, և անոր հետ կենակցի իբրեւ ընկերակից և բարեկամ, քան թէ դաստիարակ ․ որպէսզի միանգամայն համեստ քաղաքավարութեան մէջ ալ լաւ մը վարժուի, և ուրիշներուն օրինակներէն և անոնց խօսքերուն ու գործքներուն վրայ ուշադրութեամբ նկատողութիւններ ընելէն՝ քաջայարմար ու պէտք եղած պատճառներ գտնայ իր խօսքերն ու գործքերը կանոնաւորելու, միանգամայն կարող ըլլայ սովրեցնել ժուժկալութիւն ու բարեյարմար լռութեան եղանակը, վերջա-

պէս քաջահմուտ և խելացի սնուցչի մը վայլած ամեն հոգ ու խնամք տանել կարողանայ։ Այսպիսի դաստիարակ մը գտնալու համար խիստ առատ վարձք և մեծամեծ պարգեւներ խոստացաւ, որով շուտ մը իր փնտռածը կրցաւ գտնալ ։

Անկէ զատ լեզուագիտութեան, ձիընթացութեան, զինաշարժութեան և ուրիշ ամեն ազատական արուեստից մէջ հմուտ վարժապետներ ալ գտաւ, որպէսզի յարմար կերպով յաջողապէս որոշուած ժամերուն մէջ վարժեն զայն, որ չըլլայ թէ անժամանակ և անկարգ կերպով մէկին վրայ պարապիլը միւսը չփթէ, և զանազան կրթութեանց զբաղմունքը զայն սփոփելու ու կազդուրելու տեղ՝ նեղէ ու ձանձրացնէ ։

Ուզեց՝ որ երաժշտութեան և նկարչութեան մէջ ալ վարժուի, որպէսզի իրեն հետ միշտ զբօսանք մը ունենայ, և իր պարապ միջոցները զուարճալի զբաղում մը ըլլայ իրեն։ Երբ նա քսան տարուան եղաւ, նոյն վերակացուին հետ թղթերով և ամեն պէտք եղած բաներով հայրը ղրկեց՝ որ երթայ Իտալիոյ և Եւրոպիոյ կողմերը պտըտի, երկիրներուն զանազան դրից, բնութեան տեսակ տեսակ արդեանց, արուեստից աւելի յարգի յիշատակներուն, աւելի հռչակաւոր և երեւելի գիտնականաց, և իւրաքանչիւր աշխար-

հի արուեստաւորներուն, սահմանադրութեանց, օրինաց, սովորութեանց և զանազան ազգաց բարուց վրայ տեղեկութիւն և հմտութիւն ստանայ։ Երկու տարիէն յետոյ պիտանի ծանօթութեամբ բազմացեալ՝ հայրենիք իւր ծնողաց քով դարձաւ։ Իսկ ծնողքը սաստիկ կը փափաքէին՝ որ իրենց սերունդը անոր վրայ յարատեւած տեսնեն, ուստի ամուսնացուցին զայն պատուաւոր սերունդէ եղող օրիորդի մը հետ, և այսպէսով իրենց քաղցր բաղձանքին ու երջանկութեան հասան։

Հարսանեաց ուրախալից հանդէսէն ետքը հայրը մէկ կողմ առնելով իւր տղան՝ ըսաւ անոր. «Հիմայ դու, ո՛վ որդեակ, եթէ Տէրոջը կամքն ըլլայ՝ քիչ ժամանակէն նորագոյն գերդաստանի մը հայր ու տանուտէր պիտի ըլլաս, և կրնայ ըլլալ՝ որ քիչ ժամանակէն ես մեռնելով՝ իմ ունեցած ստացուածքներս քեզ թողում, որպէսզի դու ալ քու որդւոցդ աւանդես. հիմայ կը վայելէ՝ որ դու առաջուց քեզ ինկած սեպհականութիւնը գիտնաս, որպէսզի պէտք եղած ատեն կարողանաս զայն տնօրինել ու գործադրել։ Տե՛ս, և ուրիշ տնտեսութեան ո՞ր մասը կուզես՝ որ քեզ յանձնուի. կամ եթէ կ՚ախորժիս՝ ինծ օգնական և զօրավիգ եղիր այն ամէն ստացուածոց տնտեսութեան մէջ»։ Հօրը այս

խօսքերուն պատասխան տուաւ որդին. «Ես հաստատուն յոյս ունիմ, որ դեռ երկար ժամանակ քու ինչքերդ և գոյքերդ քեզմէ զատ ուրիշի տնտեսութեան կարօտութիւն չունին. այսու ամենայնիւ՝ քեզ հաճելի եղած ամէն գործերը քու իշխանութեանդ տակ և քու առաջնորդութեամբդ պիտի ընեմ, և այդ հոգերուն ծանրութիւնը քեզմէ թեթեւցնելու և զքեզ հանգստացնելու պիտի աշխատիմ»։

Այսպէս ահա որդին ընկերանալով հօրը ճգանց և վաստակոց, ժամերն ու ժամանակները բաժնեց, թէ տնտեսութիւնը հոգալու՝ թէ ուսման պարապելու և թէ համեստ զբօսանաց համար։ Զգօնամիտ երիտասարդը զուարճանալով և բերկրելով իւր սրտին մէջ, ուրախ ու զուարթ կեանք անցուց, և ամենքն վրան կը զարմանային և միշտ կը սիրէին, և Օրէնգայ կոմսն ալ ինչպէս որ իւր հայրը՝ թէպէտ ուշ, բայց յաջողակ կերպով իւր վրայ հոգ տարած էր, անանկ ալ ինքը հիմա այս կերպով իւր որդւոյն վրայ ըսկիզբէն հոգ տանելով՝ ուրախ եղաւ, որ անոր արդիւնքը թէ ինքը վայելեց, և թէ իւր ընտանեաց այն երջանկութիւնը ու անդորրութիւնը թողուց։

Երիտասարդական հասակը որչափ որ մարդկային կենաց մէջ թանկագին՝ գեղեցիկ և ա-

մենաօգտակար հասակն է, այնչափ ալ երկիւղալի ու վտանգաւոր է, և իմաստուն ըզգուշութեան կարօտ։ Վասնզի երիտասարդական հասակի մէջ անցուցած կեանքին լաւութենէն և վատութենէն կախումն ունի մարդուս ծերութեան թշուառութիւնն ու երջանկութիւնը. մարմնոյ բնական կազմութիւնը զօրացնել կամ տկարացնել, հոգւոյ կարողութիւնները ընդարձակել՝ սրել եւ պիտանացու ընել կամ կորսնցնել, բթացնել և ապականել, առողջութիւնը հաստատել կամ խանգարելով վատառողջ ընել, բոլոր երիտասարդութեան գործն է մէկ խօսքով՝ երիտասարդութիւնը մարդուս բովանդակ կենաց հիմն է։ Երանի անոր, որ այս հիմը իմաստութեամբ հաստատուն վէմի վրայ ամրացնել գիտէ, անոր ապագան իրեն նախանձելի կըլլայ։

Բայց դժբաղդաբար անփորձ երիտասարդութիւնը յանձնապաստան՝ սնապարծ և ինքնահաւան ըլլալով՝ ինքզինքը անընկճելի կը կարծէ. թէև իւր աչքին առջև իրեն նմանները եղծուած եւ ապականուած կը տեսնէ, սակայն տակաւին ինքզինքը կը խաբէ, իր ընթացքը անոնց ընթացքէն տարբեր կը համարի, իւր խիղճն հանդարտեցնելու եւ ուրիշները խաբելու համար սուտ ու փուճ պատճառներ կը հնարէ, և ինքզինքը արդարացնելու կ'աշխատի, սակայն իւր շարժմունքները իւր տը-

խուր վիճակին յայտարարներն են։ Իւր օրէ օր մաշիլը, գոյնը նետելը, մարմնոյն փափկութեան կորսուիլը, գեղածիծաղ դէմքին թարմութեան անժամանակ թառամիլը, տխուր թախծութեան ակամայ իւր վրայ տիրելը, զգուշաւոր հայեացքը և գաղտնի շարժմունքները զինքը կը մատնեն, իւր գործքերը կը քարոզեն, կը յանդիմանեն և կը խայտառակեն, միայն ինքն է՝ որ իւր վրայօք բան չը գիտէր. այլ ափսոս, որ օր աւուր կ'եղծուի և կ'ապականուի, զինքը խրատողին եւ յանդիմանողին դէմ կը յանդգնի, իւր խայտառակութիւնները ծածկել կ'աշխատի, ամեն կեղծ ու պատիր միջոցներ 'ի գործ կը դնէ իւր բարեկամ խրատիչը սուտ հանելու համար. և երբ նա լռելը խոհեմութիւն սեպելով թողու և քաշուի, անմիտ երիտասարդը կը կարծէ թէ յաջողեցաւ զայն խաբելու, ուստի իւր վնասակար գործերը՝ խաղերը և անառակութիւնները կը շարունակէ 'ի վնաս եւ 'ի կործանումն իւր անձին։

Խիստ վնասակար է երիտասարդաց դատարկութիւնը, որով կըստիպուին բարքն աւրուած իրենց նման դատարկ ու ծոյլ ընկերներ գտնալ, որոց կենցաղավարութիւնը մարդկային կենաց մահատու թոյնն է. բայց զարմանալի է, որ այս ընկերակցութիւնը որչափ վնասակար՝ անպատիւ եւ վտանգաւոր է,

այնչափ ալ սիրելի կըլլայ անոնց, մինչեւ ան֊
գամ կը յօժարին ամենամեծ կորուստներ ը֊
նել և այն չար ընկերութենէն չը հեռանալ.
բայց վերջապէս ուշ կամ կանուխ փորձը կը֊
սորվեցնէ իրենց, սակայն այս փորձը առանց
մեծ վնասի չեն կրնար սորվիլ, և գուցէ այն֊
պիսի ժամանակ մը կըլլայ այս, որ ալ կորուս֊
տը դարմանելն անհնար ըլլայ ։ Ուրեմն ո՛րչափ
պարտաւոր են երիտասարդք, որ իրենց ան֊
կեղծ ու հաւատարիմ խրատիչներուն յան֊
դիմանութեանց յօժարութեամբ զիջանին,
և խրատներն հաւատարմութեամբ պահեն.
մանաւանդ իրենց օգտին համար պէտք են
միշտ ճշմարտախօս ու անկեղծ ըլլալ, վասնզի
խաբէութիւնը խրատիչը կը զայրացնէ եւ չը
թողուր՝ որ իւր օգտակար խօսքերը շարու֊
նակէ ։ Լաւ մարդը իւր ընկերէն կը ճանչ֊
ցուի, այս պատճառաւ ընկեր ընտրելու մէջ
խիստ խոհեմ ու սրատես ըլլալու է ։

Այս պարագայիս մէջ ո՛րչափ մեծ պար֊
տաւորութիւններ կան ծնողաց վրայ, ո՛րչափ
խնամոտուն կարգադրութիւն՝ հսկողութիւն և
խոհական զգուշութիւններ ընելու են իրենց
զաւակաց կրթութեան, վարուց, բարուց և
կենցաղավարութեան վրայ ։ Աշխարհի մէջ
զաւակ ծնանելով կամ անոնց արտաքին պի֊
տոյքն հոգալով և սնուցանելով միայն զաւա֊
կի տէր եղած չեն ըլլար, այլ բարի, խմա֊

տուն, առողջ և մարդկան ազգի օգտակար
անդամ ընելու համար ամեն բան զոհելու
են, որպէս զի թէ իրենք վայելեն եւ ուրա֊
խանան, թէ զաւակնին հանգիստ ու երջա֊
նիկ ըլլան, և թէ մարդկան ազգը օգտակար
անդամ մը ունեցած ըլլայ. այն ատեն իրենք
ալ արժանապէս ծնողք կրնան ըսուիլ, և զա֊
ւակնին ալ իրաւամբ մարդ ըսուելու արժա֊
նի կըլլան ։

Արդ՝ կ՚աղաչեմ ձ՛զ ծնողք, մեծ հոգ ու
խնամք ունեցէք ձեր զաւակաց կրթութեան
վրայ. ամեն կրթութիւն լաւ չէ, պիտանին
ընտրեցէք. աղէկ նկատեցէք, թէ ձեր զաւակ֊
ները որու կը յանձնէք. մի՛ խաբուիք, ամեն
դաստիարակ եմ ըսողը՝ լաւ հրահանգիչ չէ.
զգոյշ կեցէք ձեր զաւակաց ընկերներէն, չէք
գիտեր թէ սպասաւորքը և սպասուհիք ո՛րչափ
կ՚ապականեն ձեր զաւկըները . . . ։

Կ՚աղաչեմ և զձեզ ո՛վ երիտասարդք, եղբայ֊
րական անկեղծ սիրով կ՚աղաչեմ, հեռացէք վը֊
նասակար ընկերներէ. փախէք բաղդի խաղերէն.
տոկալով հեռացէք ամեն տեսակ մոլութիւն֊
ներէն, որք ձեր այդ գեղեցիկ հասակը կըսպան֊
նեն և տարաժամ ծերութիւնը վրայ կը բե֊
րեն ։ Ո՛հ, սարսափեցէք այն ահաւոր վտանգ֊
ներէն, որ ձեր անխոհեմութեանց պատճա֊
ռաւ՝ թէ դուք պիտի իյնաք, և թէ ձեր սե֊
րունդը պիտի ձգէք. թէոր լսելու ականջ և

շտկուելու սիրտ ունիք, այնչափ ալ բաւական է . . . :

Ի.

Օրիորդի սէրը իւր նշանածին վրայ

ԺԱՄԱՆԱԿ մը այնքան խիստ և դառն ձմեռ եղաւ Գաղղիոյ և Գերմանիոյ մէջ, որ լայնատարած ևսրընթաց գետերն անգամ սառեցան ու պնդացան և շատ մարդիկ մեռան. այս ատեններս մինչդեռ գիշեր ժամանակ հիւսիսային սառուցեալ բեւեռէն ցրտաշունչ հովերը կը փչէին և առհասարակ ահ ու սարսափ կը տարածէին բոլոր մարդկան վրայ, Գաղղիոյ Մեց քաղաքին մէջ զինուոր մը պահապան կարգեցաւ դիտանոցի մը մէջ, որ նոյն ցրտագին հովերուն դիմացն էր: Այս զօրականը տկար և վատառողջ ըլլալով՝ սառելու վտանգի մէջ էր, և նոր նշանուած փեսացու էր երիտասարդ աղջկան մը՝ որ զայն շատ կը սիրէր: Այս երիտասարդ աղջիկը երբ լսեց՝ որ նա այն գիշեր դիտանոցին մէջ պահպանութիւն պիտի ընէ, խիստ սկսաւ մտատանջութեան մէջ ընկղմիլ և խղճալ, քաջ իմանալով որ նա իւր անառողջութեան պատճառաւ՝ չը կրնար նոյն ցրտային եղանակին համբերել: Այս մտածմունքներով խռովելով և յուզուե-

լով, չէ թէ միայն չէր կրնար քնանալ, այլ մինչև անգամ անկողին չէր կրնար մնալ. և երբ իւր մտաց մէջ այնպէս ներկայացուց՝ որ իւր սիրելին արդէն դիտանոցին մէջն է և ցրտոյն խստութենէն սառած և կծկուած է, այն ժամանակ առեալ իւր տարակուսանքը և ցաւը կրկնապատկեցաւ. և այն ցաւագին մտածութեանց ալէկոծութեանց չը կրնալով դէմ դնել, գիշերուան այն աղջամուղջ խաւարին մէջ, ոչ ցրտութեան, ոչ ձիւներուն շատութեան և ոչ ալ ցրտաբեր հովերուն խստութեան նայելով՝ ելաւ իւր տունէն, որ բարեբաղդաբար շատ հեռու չէր դիտանոցէն, և սկսաւ դէպ 'ի հոն յառաջանալ: Հոն տեղ գտաւ այն թշուառացեալ զօրականը՝ որ ցրտոյն խստութենէն գրեթէ հոգեվարքութեան աստիճանը հասած էր: Նա երբ զայն այս վիճակի մէջ տեսաւ, սկսաւ աղաչել՝ որպէսզի իւր տունը երթայ և հոն քիչ մը տաքնայ. բայց զօրականը որովհետեւ քաջ գիտէր՝ որ եթէ ինքը իւր պահպանութեան մէջ հաւատարիմ չը գտնուի, մեծ յանցանք կը համարուի իրեն, այս պատճառաւ անկէ շնորհակալ ըլլալով՝ չուզեց տեղէն հեռանալ և վատութեան անուն ստանալ: Երիտասարդ աղջիկը ըսաւ. “Գնա՛ գոնէ քանի մը րոպէ տաքցիր, որպէսզի այդ զքեզ կծկտեցնող սառը հալեցնես”: Զօրականը պատասխանեց ըսելով.

«Թէ որ այս գործը յայտնուի, բնաւ մէկը զիս մահուան դատապարտութենէ չը կրնար փրկել»: Երիտասարդ աղջիկը նորէն պատասխանեց և ըսաւ. «Դուն այս տեղ մնալով անշուշտ պիտի մեռնիս, բայց պէտք է՝ որ դու հիմայ նոյն մահուան առաջն առնուլ աշխատիս և զայն արգիլես: Իսկ գործոյն յայտնուելուն համար մի՛ վախնար, որովհետեւ կարելի չէ՝ որ այս ժամուս մէջ յայտնուի, և Աստուած որ գթած ու ողորմած է, երբէք զքեզ չը զրկեր իւր ողորմութենէն»: Զօրականը պատասխանեց. «Թէեւ այս գործը չը յայտնուի, կը կարծե՞ս՝ որ ես իմ պահպանութիւնս վատութեամբ կը թողում իմ վրայէս. իմ պարտաւորութիւնս և իմ համբաւս այսպիսի թուլամորթութեան մը չը կրնար զիջանիլ»: Երիտասարդ աղջիկը վերստին պատասխանեց. «Իմ դիտաւորութիւնս այն չէ՝ որ դու այս տեղէն հեռանաս, և քու պաշտօնդ տեղը մնայ, վասնզի ես ունիմ քաջութիւն՝ որով կարող եմ քու տեղդ պահպանութիւն ընել, մինչեւ որ դու երթաս տունս և նորէն տեղդ դառնաս: Առա՛ ուրեմն՝ մի՛ ուշանար, տո՛ւր ինձ քո զէնքերդ . . . : Եւ այս միջոցին՝ այնպէս աղաչանօք և արտասուօք սկսաւ զայն ստիպել, որ ալ զօրականը չը կրնալով նորա աղաչանաց և թախանձանաց դէմ դնել, և 'ի հարկէ ստիպուելով, որովհետեւ քաջ

գիտէր՝ որ ինքը իւր 'ի վատառողջութեան պատճառաւ չէ կարող երկար ատեն ցրտոյն խստութեան դիմանալ, և քաջալերուելով այն յոյսէն՝ որ եթէ քանի մը վայրկեանէ զկնի իւր տեղը վերադառնայ, գործը հրապարակ չելլար, ուստի օրիորդին խօսքերուն հաւանելով՝ իւր զէնքերը՝ նաեւ իւր արտախուրակը անոր յանձնեց, ու սովորական նշանը սորվեցնելով՝ հեռացաւ այն տեղէն:

Թէպէտև սաստիկ ցուրտ էր, բայց երիտասարդ աղջիկը իւր սիրելին ազատելուն համար զգացած ուրախութեան պատճառաւ, գրեթէ հազիւ կ'զգար օդոյն խստութիւնը: Երբ հազիւ թէ սակաւ ինչ ժամանակ անցաւ, ահա յանկարծ գիշերապահը վրայ հասաւ: Երիտասարդ աղջիկը այս անակնկալունելի դիպուածէն վախնալով՝ փոխանակ սովորական նշանը տալու անձայն մնաց: Պահապանը ձայն մը չը լսելով՝ կարծեց որ զօրականը կամ քնացած է և կամ փախած, ուստի իսկոյն պահպանութեան տեղը աճապարեց, և հոն նորա ձեւով երիտասարդ աղջիկ մը գտաւ՝ որ վախնալով և շփոթուելով գործին ինչպէս ըլլալը յայտնելու համար բերնէն խօսք մը անգամ չէր կրնար արտասանել:

Երբ պահապանաց գլխաւորներուն քով բերուեցաւ, հոն սակաւ ինչ համարձակութիւն առնելով, իւր սիրելոյն համար սկսաւ

զալ և աղաչանաց խօսքեր արտասանել ։ Պահապանաց գլխաւորը խիստ կնոջ տունը մարդիկ խրկեց՝ որ երթան գործին վրայօք տեղեկութիւն առնան, որոնք եկան և զօրականը գտան. բայց դեռ եւս այնպէս կծկըւած և սառած էր, որ դատաւորին կողմանէ խրկուած մարդիկը յոյս չունեցան նորա առողջանալուն վրայ ։ Բայց սակայն քիչ քիչ տաքցնելով և աստիճան աստիճան նորա մարմնոյն մէջ ջերմութիւն մանելով, կենդանութիւն ստացաւ ։ Բայց ողորմելի զօրականը այն մահէն աւելի դառնագոյն և աւելի չարաչար մահ առնելու համար նորէն իւր առաջուան կենդանութիւնն ստացաւ ։

Հետեւեալ օրը պատերազմական ատեան բացուելով՝ խորհուրդ եղաւ և վճռուեցաւ, որ նա փայտէն կախուի, ինչպէս որ ինքը առաջուանէ գուշակած էր ։ Ով կարող է այս տեղ պատմել երիտասարդ աղջկան սրտին ցաւը, սրտաբեկութիւնը. որ ոչ միայն իւր սիրելին կորսնցնելուն համար կը տառապէր ու կը ցաւէր՝ զոր ինքը 'ի բոլոր սրտէ կը սիրէր, այլեւ կը տագնապէր իւր բոլոր խորճովը զայն այս տեսակ աղէտալի դիպուածի մատնելու պատճառն ինքն ըլլալուն համար ։ Բայց նորա ցաւը փոխանակ զինքն յուսահատեցնելու, առաւել քաջալերեց և աւելի զօրացոյց նորա սիրտը ։ Այն ժամանակ իւր

մազերը փետտելով, լալով ողբալով իւր սիրելին ազատելու համար բոլոր յուսացած տեղերը գնաց. արդէն այս զարմանալի դէպքը՝ այս սրտաշարժ եղակի գործը ամեն մարդիկ անոնց երկուքին համար կարեկից ըլլալու կը յորդորէր, և երիտասարդ աղջկան նորաքանչ արիական գործը մեծ զարմանք կը պատճառէր ամենուն, որ բոլոր աշխարհի եռաբորբոք սիրոյ և քաջասրտութեան օրինակ մի էր ։ Ամեն մարդ, մանաւանդ երեւելիները, անոնց համար միջնորդութիւն ընելէ չէին դադարեր, որպէսզի այս պատահման պարագաները նոր ըլլալուն համար, օրինաց խստութիւնը քաղցրանայ ։ Ամենէն աւելի կիները իրենց սերնդեան նոր պարծանք մը համարելով այն երիտասարդ աղջկան գործը, երբէք չէին դադարեր աղաչելէ եւ թախանձելէ. մինչեւ որ վերջ ամենայնի՝ դժբաղդ զօրականը յաջողեցան ազատելու. եւ երիտասարդ գթասիրտ աղջիկը իւր սիրելին մահուանէ ազատելուն համար ոչ միայն ուրախացաւ 'ի բոլոր սրտէ, այլեւ սակաւ ժամանակէն զինքն իւր կարողութեան համեմատ հարուստ օժիտով նորա հետ ամուսնանալով՝ իւր բաղձանքը ըստ ամենայնի կատարեցաւ ։

Շատ երջանիկ կըլլար աշխարհ, եթէ երիտասարդաց և երիտասարդուհեաց սէրը այս֊

այս անկեղծ և առաքինական ըլլար· փոխանակ սրտանց զիրար անձնուիրաբար սիրելու, յիմարութեամբ մնոտի հարստութեան ու գեղեցկութեան վրայ չը գնէին իրենց սիրոյ հիմը, որ շուտով չը փճանային. այն ատեն միայն կրնային ճանչնալ ամուսնութեան յարգը և խաղաղ կեանք անցնել։

ԻԱ.

Ընչաքաղցութիւն

ԸՆՉԱՔԱՂՑՈՒԹԻՒՆԸ կամ հարստութեան վրայ անկարգ բաղձանք ունենալը՝ ծերոց յատկացեալ ախտ մի է, ուրկէ շատ չարիքներ երբեմն յառաջ կուգան. բայց երբեմն այս ընչաքաղցութիւնը երիտասարդաց սիրտն անգամ կրնայ սոսկալի չարութեանց մէջ ձգել։

Օրինակ մը տեսնուեցաւ մեր ժամանակներս, ուրկէ ամէն մարդ կրնայ խրատուիլ, և սկիզբէն՝ այս անարգ բաղձանաց երեւցած ատենէն զայն ճանչնալով՝ կրնայ մեծ ջանքով ու փութով անոր խլրտումները սանձահարել։

Տիկին մը այրիանալով և մինակ մնալով կենցաղոյս տաղտկալի ընդունայնութիւններէն ձանձրացած էր. ուստի մտածեց՝ որ իրեն կե-

նաց մնացած օրերը առանձնութեան մը մէջ անցընէ. հաւատաւոր կանանց մենաստանի (մայրապետանոցի) մը մէջ առանձնանալով ուրախ կը լինէր երբ ժամերը աղօթքով՝ պաղատանքով պէտք եղած յարմար գործեր կատարելով՝ և հոգեւորական գրքեր կարդալով կ'անցնէր, և մնացած ժամանակն ալ այն տեղ կրթուելու համար եկող օրիորդաց հետ կըզբօսնուր, և վերակացու եղող կանանց խորհրդով ու գործքով ձեռնտու և օգնական կըլլար։ Վերոյիշեալ օրիորդաց մէջ օրիորդ մը կար, որ ուշիմութեամբ՝ հեզահամբոյր բնութեամբ և իր անստգիւտ անարատ վարքովը ամենէն աւելի գերազանց էր։

Տիկինը ասոր վրայ սէր ձգեց, կարծելով՝ որ ինքն ալ անկէ հաւասարապէս սիրուած է, ուստի իր միտքը դրաւ զայն իրեն հոգեզաւակ ընել, և շատ անգամ անոր քով երթալով ու մեկտեղ կենալով՝ կը զուարճանար, և խելացի ու համեստ օրիորդի մը վայլած պիտանի բաներ կը սորվեցնէր, մօր պէս հոգալով զանիկա ու խնամելով. բայց այսչափն ալ հերիք չը սեպելով, մտածեց՝ որ աւելի մեծ բարերարութիւն մը ընէ, և որովհետեւ ինքը մերձաւոր ազգական չունէր, և մանաւանդ օրիորդին ծնողաց աղքատութիւնն ալ գիտէր, ուստի միտքը հաստատ դրաւ, որ զանիկա իրեն բոլոր ստացուածոց ժառանգ

ընէ. եւ իր դիտաւորութիւնը կտակագըրով հաստատելէն զկնի՝ նորա օգտին համար ըրած այս խորհուրդը իրեն յայտնել պատշաճ համարեց, որպէսզի անով յորդորուի իր գործերուն մէջ աւելի լաւ յառաջ երթալու, եւ իր վրայ ունեցած յատուկ սէրը արդիւնաւորելու աշխատի։ Այս մտքով զայն եւս առաւել քաջալերելու եւ սիրտ տալով յորդորելու համար, ցոյց տուաւ անոր խիստ պատուական ակներով շինուած գեղեցիկ զարդեր, զոր փոքրիկ սնտուկի մը մէջ պահած էր. «Ասոնք՝ կըսէ, եւ ուրիշ բոլոր ունեցած ստացուածքներս մտքս դրած եմ քեզ տալու, եթէ իմ յուսացածիս պէս միշտ այսպէս պարկեշտ, քաղաքավար եւ խելացի ըլլաս, եւ չըլլայ թէ վարքդ փոխելով ստիպես զիս, որ ըրածիս վրայ զղջամ եւ նորէն այս տըւածներս ետ առնեմ։

Բայց բարեսիրտ կնոջ այս բանը անխոհեմաբար աղջկան յայտնելը դէշ հետեւութիւն ունեցաւ, ինչուոր վախճանը իր խորհուրդներուն բոլորովին հակառակն եղաւ, եւ ինքն ամեն չարեաց պատճառ դարձաւ։ Մեծագին ու շքեղազարդ գոհարներու եւ վայելչագեղ զարդարանաց փափաքը թէեւ բնականապէս կանանց ընդաբոյս բնութիւն է, բայց աբիորդըլին սրտին մէջ տակաւին արթնցած չէր, եւ ահա այն առատագոյն խոստմունքներէն ըս-

կսաւ այն փափաքը անոր սրտին մէջ ալ արթննալ եւ բորբոքիլ. իր աչքին առջեւը ունէր միշտ այն լոյսի պէս փայլկլտող ճառագայթարձակ գոհարներու խաբուսիկ պայծառութիւնը, եւ իր սրտին սաստիկ բաղձանքէն այնչափ անոնց կարօտը կըքաշէր, որ կը կարծէր թէ մինչեւ այն զարդերն ստանայ՝ եւ անոնցմով զարդարուելու ժամանակը գայ, դեռ հազար տարի պէտք է. այն հարուստ վիճակը, որուն յուսով կըսպասէր, ազատութիւնը եւ հեշտութիւնը՝ զորս այն հարստութեամբ գըտնելու յոյս ունէր, որուն եւ արդէն կը ցանկար, ալ աւելի տաղտկալի եւ ծանր կ՚երեւցնէին իրեն այն առանձնութիւնը եւ պարկեշտ կենցաղավարութիւնը՝ զոր ստիպուած էր այլոց իշխանութեան տակ վարելու։ Երթալով անհանգստութիւնը եւ անժուժկալութիւնը անոր սրտին մէջ աճեցաւ, այլ եւս չէր կրնար իր բորբոքած սաստիկ բաղձանքին բռնութիւնը զսպել, եւ միանգամայն կը կասկածէր՝ որ իր սրտի այս նոր փոփոխութիւնը դուցէ յայտնուի եւ զրկուի այն ինչքերէն, որոց վրայ այնքան կը բորբոքէր ու կը տոչորէր. ուստի իր ընչաքաղց կրից բռնութենէն կուրանալով, խորհեցաւ դժոխային՝ եղեռնագործ խորհրդով եւ ահաւոր չարութեամբ այն ստացուածքները ապահովցնել։

Իսկ բարեմիտ տիկինը զայն բոլոր օրը գը-

րեթէ իրեն քով պահելով՝ ճաշի եւ ընթրիքի մէջ իրեն ընկերակից ըրած էր։ Մէկ երեկոյ մը նենգամիտ օրիորդը չը գտնեմ՝ ինչպէս գաղտնի կերպով կերակուրին մէջ մահադեղ խառնեց և անոր կերցուց, այս անզգամէն ասանկ սատանայական դիւահնար դաւաճանութիւն երբէք չէր յուսացուեր։

Անօրէնը այնպէս կը կարծէր՝ որ գիշերւան մութը իւր չարութիւնը կրնայ գոցել, բայց քանի մը վայրկեանէն վերջ՝ ողորմելի տիկինը սկսաւ տանջուիլ մահադեղոյն սոսկալի ազդեցութենէն։ Ցաւէն սկսաւ ճչել ու աղաղակել, և ձայնը բոլոր մենաստանը դըղրդեց. աղէտալի գոյժը ամէնքն ալ լսեցին. շփոթութիւն ու շշուկը զամէնքն ալ ոտքնու վրայ ըրաւ, և աճապարելով՝ իսկոյն բժիշկը կանչեցին, որ բարեբաղդաբար շուտ հասնելով՝ ցաւը ճանչցաւ ու փարատեց։ Երբ մահադեղին անունը լսեցին, ամէն հաւատաւորներու վրայ սարսափ պատեց, և նենգաւոր օրիորդը իւր խղճէն տառապած՝ դէմքին տըխրութեամբն ու շփոթութեամբը՝ ահաւոր ոճիրը գործող յանցաւորն ինքն ըլլալը բոլորովին յայտնուեցաւ. այս մեծ չարութիւնը պատժելու համար պատուհաս մը կամ տանջանք մը չէին գտնար՝ որ հերիք սեպեն, ամէն տեսակ պատուհաս քիչ կը համարէին։ Բայց այսու ամենայնիւ՝ մեծահոգի տիկինը զայն

փրկել ուզելով, աղաչեց՝ որ յանցաւորը իւր կամքին ձգեն. և զայն իւր քով կանչելով՝ մեղմաբար և սիրալիր կերպով ըսաւ անոր. «Ես կը տեսնամ քու առաջին արդարամտութենէդ այսպէս յանկարծ անիրաւութեան փոխուելուդ պատճառը։ Ես սխալեցայ՝ որ ըսկիզբէն հանդարտ ու լաւ չը խորհեցայ ստացուածքի ցանկութեան վրայ, որ մարդիկ շատ կը սիրահարէ. մանաւանդ եթէ զայն ձեռք ձգելու միջոցն ալ երկար տեւէ՝ երիտասարդական սրտին վրայ կրնայ ներգործել և ապականել։ Այն գոհարները՝ որոնք քու անկարգ բաղձանքդ այդքան վառեցին բորբոքեցին, պէտք էր՝ կամ միշտ քեզմէ պահել և կամ անոնք քեզ ցուցնել ուզած ատենս՝ բոլորը մէկ տեղ քեզ տալ։ Բայց այն ատեն ինչ բանէ որ չը կրցայ զգուշանալ, հիմա կրնամ զայն ուղղելու ճանապարհը գտնալ, որովհետեւ տակաւին ժամանակ կայ։ Չեմ ուզեր որ այսուհետեւ երկար ժամանակ մնաս այդ ցանկութեանդ մէջ, որովհետեւ այն ստացուածքը ալ ինծի օգուտ չունի։ Ահաւասիկ այս ժամէն քեզի պիտի յանձնեմ զանոնք, և դու կարող ես քու հաճոյիցդ համեմատ վայելել։ Որքան որ հնար է, պիտի ջանամ զքեզ պատուով յաշխարհ մտցնելու, վասնզի ճշմարտապէս քու երջանիկ վիճակիդ կը փափաքիմ։ Հիմա այս միայն կը խնդրեմ քեզմէ՝ որ իմ կենացս մնա-

ցած քիչ մը օրերուն վրայ չը նախանձիս · կենացս այս օրերն ալ որչափ քու օգտիդ համար անցնեմ, այնքան սիրելի եւ փափաքելի պիտի ըլլան ինծի »։

Ողորմելի օրիորդը բոլորովին յաղթուած և անոր առջեւ խոնարհած, այս սիրալի և չնաշխարհիկ գործին ու առատասրտութեան վրայ աղիողորմ և առատ արտասուք թափելէ զատ՝ չը կարողացաւ ուրիշ պատասխան մը տալ։

Բայց այս անհամեմատ տիկնոջ եղական առաքինութիւնը որչափ որ հաճոյ և ընդունելի եղաւ Աստուծոյ, այնքան ալ արդարութեան օրէնքը պահանջեց՝ որ նենգամիտ օրիորդին յանցանքը անպատիժ չը մնայ։ Այն սոսկալի չարութեան համար խղճմտանքէն կրած տանջանքը, յանցանքը դուրս ելլալուն վրայ կասկածելով զգացած երկիւղը, և իր յանցանքն յայտնուած ատեն կրած ամօթը՝ շփոթումը և անձին նախատինքն ու անպատուութիւնը, և սարսափելի պատիժներու զարհուրանքն ու երկիւղը՝ որոց արժանի ըլլալը քաջ կը տեսնար, այնքան չարաչար և խիստ տառապեցուցին զայն, որ այս ցաւերուն ալ չը կրցաւ դիմանալ, և այրող տոչորող տենդէ մը բռնուելով՝ քանի մը օրէն ետքը չարաչար մեռաւ։

Այս պատմութեան մէջ կը նկատենք նախ՝

բարեսիրտ կնոջ՝ բարերարութեան՝ մեծանձնութեան և անյիշաչարութեան ոգին, որ արդարեւ նախանձելի է · սակայն անաչառութեամբ կուզենք դատել նաեւ՝ իր բռնած քիչ մը անխորհուրդ և անխոհեմ ընթացքը, վասնզի կուզենք դաստիարակներու և խնամակալներու ուշադրութիւնը դարձնել այս դէպքին վրայ, որ իրենց սանուց ամեն կիրքերն ու հաճոյքները չը փորձած ու չը չափաւորած, անոնց բաղձանքները կարգէ դուրս գրգռող պատճառները հեռացնեն անոնցմէ, և ամենէն առաջ այնպիսի ցանկութիւններէ ու փափաքներէ փախչիլ սորվեցնեն · և երբոր ամեն կերպիւ հրահանգելով արժանաւոր գտնան, այնուհետեւ դարձեալ քիչ քիչ մատակարարեն՝ միշտ սանձելով անոնց չափազանց միտումները, որպէսզի անոնք իրենց տրուած շնորհքը արժանաւորութեամբ և օգտակար կերպով վայելել գիտնան։

Կը տեսնանք երկրորդ՝ մեծ երախտեաց դէմ ամենամեծ՝ սոսկալի և խիստ ահաւոր ապերախտութիւն մը, աններելի ոճիր մը, որ լսողին հոգին ու մարմինը կը սարսափեցնէ, և այս ալ ընել տուողը միմիայն չափազանց և անկարգ բաղձանք մ՚ էր։ Այնպիսի համեստ՝ կրթեալ և ուշիմ աղջիկ մը իր մէկ փոքր բաղձանքը չը զսպելով, տեսէք, ո՜ր աստիճան ապականեցաւ իր մաքուր սիրտը, և ո՜րչափ սոսկալի

չարութիւն մը ընել համարձակեցաւ. ասկէ կարող ենք մակաբերել, որ մեր մէջ արմտցած ամէն կիրքերն ու ցանկութիւնները եթէ առաջին անգամ չը զսպենք ու չը չափաւորենք, անշուշտ երթալով կ՚ուռճանան, անոնք մեզի հետ կը մեծնան և զմեզ մեծամեծ չարեաց մէջ կը ձգեն։ Ուրեմն այս բանիս համար պէտք է մեծ հոգ ունենանք, և մանկութեան ատենէն սկսինք մեր կամաց ու բաղձանաց իշխել. ամէնուն պարապ ու թեթև բանի տեղ չը դնենք զանոնք։ Պէտք է իրաւամբ ստիպելով փախչինք մեր ցանկութիւններէն՝ ոխերիմ թշնամիէ մը փախչելու պէս. վասնզի արդարև կրից ու կամաց բռնութիւնը խիստ ծանր և խիստ վտանգաւոր է, որ բնաւ ուրիշ թշնամիի մը չը նմանիր։

Երրորդ՝ այս պատմութենէն կը սորվինք յայտնապէս, որ գաղտնիք մը միշտ գաղտնիք չը կրնար մնալ, ուշ կամ կանուխ կը յայտնուի, և ամէն բան կը խայտառակուի. անօգուտ է ամէն խաբէութիւն, ճարտարմտութիւն և գաղտնի հնարքներ. ճշմարտութիւնը և արդարամտութիւնը ամէն բանէ զօրաւոր է։

Չորրորդ՝ բացարձակապէս կը տեսնանք արդարութեան հատուցումը, որ շուտով վրայ հասնելով պատժեց նենգաւորը՝ չարագործ աղջիկը. և այսպէս շարունակ յայտնուած է.

«Ու պիտի յայտնուի երկնքէն Աստուծոյ բարկութիւնը մարդկան բոլոր ամբարշտութեան ու անիրաւութեան վրայ, որոնք որ ճշմարտութիւնը ստութեամբ բռնած են»։ Հռովմ. Ա. 18։

ԻԲ.

Քաջահնար բարերարութիւն

ԵՐԲԵՄՆ մարդկային սեռի օգտին համար այնպիսի մարդիկ յառաջ կուգան, որոնք յաւիտեան մնալու արժանի են, սակայն մեր դժբաղդութենէ շատ քիչ են այնպիսիք. և երբ ասոնք աշխարհք կուգան, կարծես թէ մահը վրանին նախանձելով՝ ուրիշներէն յառաջ շուտով կը մեռնին։

Շատ ժամանակ չըներ՝ որ Գաղղիա աստանկ անզուգական անձ մը կորսնցուց, որ անմահ մնալու արժանի էր. այս անձն էր Աուքս մայրաքաղաքի գերապատիւ Յովհաննէս արքեպիսկոպոսն, որ Կուասկոյն գաւառին մէջ ժողովրդեան միտքը կը բերէր այն նախնի հովուապետները՝ որոնք միմիայն ուրիշին աղեկութիւն ընելը կը համարէին ստոյգ բարութիւն։ Ան իր հովուական պաշտօնին մէջ անխոնջ ու փութաջան լինելով, իրեն դիմողներուն և խնդիրք մը ընողներուն ինչ և իցէ կեր-

պիւ օգնելու համար յարմար առիթ կամ վայրկեան մը չէր կորսնցներ, ամենուն ալ կը հաճէր և ամենն ալ գոհ կընէր ։ Տրտմողները կը մխիթարէր, անօգնական եղողներուն կ'օգնէր, ամենուն պիտոյքը իւր պիտոյքը պէս կը հոգար, և իր առատ ընդունած եկամուտէն քիչ մասը իւր պիտոյքը 'ի գործ կը դնէր, և միւս մեծ մասը աղքատաց կը բաժնէր ։ Նոր առատասրտութեան վրայօք անթիւ մեծամեծ գործեր կը յիշուին, բայց մենք մտադիր ընթերցողաց երկուքը միայն ուղեցինք յիշել, որոնցմէ մէկը կը ցուցնէ՝ թէ ինչպէս ճարտարութեամբ գիտէր ծածկել իր բարերարութիւնները՝ իրմէն բարերարութիւն ընդունողներուն վրայէն երախտագիտութեան ծանր բեռը վերցնելու համար ։ Իսկ միւսը կը ցուցնէ՝ թէ իւր գերագոյն սէրը զինքը ո՛ր աստիճան աներկիւղ կընէր, և ի՜նչ աստիճան արիութիւն կուտար իրեն հասարակաց օգտին համար անձը վտանգի մէջ ձգելու ։

Աշխարհիս մէջ պերճութեան և ճոխութեան մէջ ծնող՝ և դժբաղդութեամբ յետին աստիճան խեղճութեան մէջ ինկնող մարդը ամենէն աւելի կարեկցութեան արժանի է, վասնզի ամաչելով ուրիշներուն պէս չը կրնար իւր կարօտութիւնը յայտնել և օգնութիւն խնդրել ։ Արդ՝ բաւական չէ անոնց օգնութիւն ընելու համար միայն առատասրտու-

թիւն ունենալ, այլ ճշմարիտ գթութիւնը գիտէ այնպիսի կերպիւ բարերարութիւն ընել՝ որ օգնութիւն ընդունողը չ'ամաչէ ։ Աշխարհիս մէջ մարդկանց կարծիքով փարթամութիւնը աղէկ՝ յարգելի և մեծարանաց արժանի սեպուելէն 'ի վեր, եւ տնանկութիւնը վատ, անարգ, անպատիւ և արհամարհելի երեւնալէն 'ի վեր՝ սկսած են ամեն մարդիկ խորշիլ և երես դարձնել տնանկներէն, որ ընդհակառակն՝ եթէ առաքինութեան հետ կապուած ըլլայ, աւելի սիրելի պէտք էր ըլլալ ։ Իսկ այն տնանկները՝ որք իրենց աղքատութեան պատճառաւ իրենց վրայ գալիք անպատուութենէն կ'ամաչեն և կը քաշուին, այնպիսիք իրենց ազնուականութեան և առաքինութեան համար աւելի մեծ սիրոյ և պատուոյ արժանի են ։ Ինչուոր այսպիսի առաքինի տնանկներ շատ անգամ լաւ կը սեպեն առանց մէկուն իրենց կարօտութիւնն իմացնելու եւ օգնութիւն խնդրելու թշուառութեան մէջ մնալ և անօթի մեռնիլը, քան թէ իրենց կարօտութիւնը յայտնելով՝ օգնութիւն ուզել, մանաւանդ թէ որ օգնողը այնպիսի կերպով մը ընէ, որ անոնց կարօտութիւնը յայտնուի, այն ատեն նոյն օգնութիւնը ընդունելը աւելի անարգութիւն կը համարին՝ քանթէ բարերարութիւն ։ Այնպէս պէտք է օգնութեան հասնիլ անոնց՝ որ իրենց կարօտ ըլլալը յայտ-

նուած չըլլայ, կամ անոնք բնաւ չը կարծեն՝ որ մենք իրենց խեղճութիւնը իմացած ենք. Եւ ահա վերոյիշեալ արքեպիսկոպոսը, Աւքս մայրաքաղաքի աթոռը նստած ատեն՝ նոյն իսկ սկիզբի օրը ցոյց տուաւ աշխարհի այսպիսի քաջահնար բարերարութեան կերպը։

Երբոր եպիսկոպոսը Աւքս մայրաքաղաքը հասաւ, բնակիչները իմացուցին՝ որ այն տեղը երկու ազնուատոհմիկ՝ անօգնական եւ սաստիկ աղքատ տիկնայք կան, որ իրենց այս չքաւորութեանը համար ստիպուած են առանձնութեան մէջ մնալ և դուրս ելլալու կ՚ամչեն, բայց սակայն իրենք հեզ և առաքինի ըլլալով՝ այս իրենց ամեն պատահած թշուառութեանցը կը համբերեն։ Երբ մարդասէր ու բարեսէր առաջնորդը զայս լսեց, սաստիկ ցաւեցաւ անոնց թշուառութեանը վրայ. և որովհետեւ բարերարութիւն ըրած ատեն խոհեմութեամբ և զգուշութեամբ կը վարուէր, ուստի իսկոյն հնարք մտածեց՝ թէ ինչպէս անոնց օգնութեան հասնի։ Արդ՝ զանոնք պատուելը և մեծարելը ցոյց տալու համար՝ ամենէն յառաջ զանոնք ողջունելու գնաց. իւր հայրական ողջոյնն ու օրհնութիւնը անոնց տալէն զկնի՝ նստաւ, եւ մեծարանքով ու պատուով անոնց հետ խօսեցաւ. և խօսած ատենը իբր թէ պատահմամբ այն տեղը նկար մը տեսաւ, և սկսաւ զայն այնչափ գովել՝ որ

հաճեցաւ զայն ստանալու համար յօժարութեամբ մինչեւ երկու հազար մառչիլ վճարել, “Որովհետեւ՝ ըսաւ, մինչեւ հիմա այսպիսի գեղեցիկ և խիստ ընտիր նկար տեսած չեմ, ու թէոր չ՚ամչէի և չը քաշուէի՝ պիտի համարձակէի աղաչել՝ որ այդ նկարը ինչ գնով որ կուզէք ինձ ծախելու բարեհաճիք, բայց այս աղաչանքը համարձակութեամբ ընելու կը վախնամ, վասնզի գուցէ այդ նկարը ձեզ ալ շատ սիրելի ըլլայ”։ Կանայք պատասխանեցին. “Շատ ուրախ ենք մեր տանը մէջ Ձեզ հաճելի բան մը գտնուելուն համար, և եթէ առանց գին վճարելու ընդունիք՝ զմեզ չափազանց պատուած կըլլաք”։ Արքեպիսկոպոսը շատ շնորհակալ եղաւ անոնցմէ, և երբոր իր տեղը դարձաւ՝ իսկոյն երկու հազար մառչիլը ղրկելով՝ նըկարը խնդրեց. եւ որպէսզի այն գումարը պարգեւ չը կարծեն, վերստին շնորհակալ եղաւ, որպէս թէ իւր խնդրածը տալով՝ իրեն մէկ մեծ պարգեւ մը ըրած են։

Քաջ հովուապետին այսպիսի հնարիմաց բարերարութիւն ընելովը՝ այն կանայք առանց կոտրուելու՝ եւ առանց գիտնալու իրենց թշուառութենէն ազատեցան. և թէպէտ այն նկարը յիրաւի խիստ վար տեսակ էր, և շատ քիչ արժէք ունէր, բայց այն բարի անձը լաւ համարեց ամեն մարդիկներէ բան չը

հասկցող՝ անմիտ կոչուելով պարսաւիլ, քան թէ այն խեղճերը նեղութեան ու կարօտութեան մէջ թողուլ, և կամ այնպիսի կերպով օգնութիւն ընել՝ որ կերպով մը անոնց պատիւը վնասուի ։ Բայց այս գերապանծ մարդուն աւելի գեղեցիկ առաքինական գործը հետևեալ պատմութեան մէջ պիտի տեսնենք։

ԻԳ.

Հրդեհը

Մեկ գիշեր քանի մը աղքատ բնակչաց տան մէջ սաստիկ հրդեհ պատահեցաւ ։ Տան ներքնայարկին մէկ սենեկին մէջէն կրակը աղէկ չէին մարած եւ ծածկած . կրակը կըսկսի տարածուիլ մօտն եղող փայտերուն վրայ, և այն տեղին շուրջը գտնուող չոր փայտերուն և մինչեւ դուռը հասնելով՝ կ'այրէ զայն ու փայտաշէն սանդուխներու վրայ կը տարածի, և այն տեղէն ելլալով մինչեւ վերի առաստաղը կը հասնի ։

Ողորմելի բնակիչները այն սոսկալի ծուխէն և բոցոյն շշնկոցէն արթննալով, դէպ 'ի սանդուխը կ'աճապարեն ազատելու համար, սակայն անիկա այրած գտնելով՝ սաստիկ ճիչ ու աղմուկ կը բարձրացնեն ամեն կողմանէ ։

Դրացիները այն աղաղակին ձայնէն զարհուրած դուրս կը վազեն և այն սոսկալի տեսիլը կը տեսնեն . արդէն վարի դստիկոնը բոլորովին այրած ըլլալով և այն սենեկաց առաստաղէն կրակը դէպ 'ի վերին դստիկոնը ծաւալելով, սարսափելի բոցը տանիքէն վեր բարձրացած էր . պատուհանները բնակիչներովը լեցուած էին, որոնք կրակը չորս կողմերնին շրջապատած փրկութեան տեղ մը չը գտնալով՝ յուսակտուր կը գոչէին և հեծեծալով օգնութիւն կը խնդրէին ։

Ոմանք ասդիէն և ոմանք անդիէն՝ առանց դանդաղելու իսկոյն սկսան լուսամուտաց առջեւ սանդուխ կանգնել, որպէսզի այն ողորմելիները կարենան փրկել ։ Ոմանք աւելի արիասիրտ ըլլալով՝ չուանով իջան, իսկ որոնք որ վարի լուսամուտներուն մէջն էին, իրենք զիրենք վար նետեցին . վերջապէս ոմանք այսպէս և ոմանք այնպէս իրենց անձին փրկութեան ճանապարհը գտան ։ Միայն ամենէն վերի դստիկոնին փոքրիկ սենեկաց մէկուն մէջ երկու մանուկներ մնացին ։ Նոցա հայրը իւր տիրոջը հետ այն ժամանակ այն տեղէն բացակայ գտնուած ըլլալով դժբաղդաբար զանոնք առանձին մինակ թողած էր ։ Նոքա չը կրնալով իրենց անձին փրկութեան ճար մը գտնել, սկսան արտասուքով և աղաղակաւ ուրիշներէն օգնութիւն խնդրել. Թէպէտ ամեն ներկայ գտնուողները կը մոր-

քերն և իրենց աղջկները կը ճմլէին եւ սըր-
տերնին կը ցաւէր այս ողորմելեաց համար,
սակայն անոնք հնարք մը չէին կարող գտնել։
Այս մանուկներուն սենեակը ուրիշ ելե-
լու տեղ մը չունէր, բայց միայն փայտէ շի-
նուած վերնադիտակ մը՝ որ այն ալ արդէն
կ'այրէր, և այն սենեակը ուրիշ հնարքով կա-
րելի չէր մտնալ, բայց եթէ անոր կից եղող
սենեկի մը պատուհանէն։ Սակայն խիստ բար-
ձըր ըլլալէ զատ՝ արդէն կրակին բոցը այն տեղ
ալ մտած էր, և ամեն ոք գիտէր յայտնապէս՝
թէ ով որ փախչէր այս ճանապարհաւ նոյն
խեղճ ողորմելեաց փրկութեան ել.ք մը գըտ-
նալ, անշուշտ նոյն կրակին մէջ պիտի այրէր
ու ճենճերէր։

Այս տագնապալից միջոցին՝ վրայ հասաւ
արքեպիսկոպոսը, և ողորմելի մանուկները այս
սոսկալի վիճակին մէջ տեսած ժամանակ՝ իւր
սիրտը կարգէ դուրս ցաւելով և սաստիկ ա-
ղեկէզ վիշտ ու մորմոք զգալով՝ սարսափե-
ցաւ։ Իսկ երբ տեսաւ՝ թէ անոնց փրկութեան
ճար մը կրնայ գտնուիլ, և յայտնի վտանգ մը
չէր տեսնուեր՝ եթէ մէկը աճապարելով շուտ
մը զանոնք հրոյ ժանիքներէն ազատել ուզէր.
ուստի որ եւէ մէկը այն գործին յորդորելու
և խրախուսելու համար, սկսաւ բարձր ձայ-
նով աղաղակել, թէ՝ "Հարիւր ոսկի կուտամ,
ով որ զանոնք ազատէ"։ Իսկ երբ տեսաւ՝ թէ

մէկէ մը յոյս չը կայ և բնաւ մէկը այս առա-
ջարկութենէն չը շարժեցաւ, կարծեց թէ
խոստացած փոխարէնը առաջիկայ վտանգին
համեմատ չըլլալուն համար է, ուստի հարիւր
ոսկի եւս խոստացաւ։ Բայց դարձեալ այս
կրկնապատիկ խոստմամբ ալ ոչ մէկը այս գործ-
քին պատրաստուելու կամք չէր ցուցներ, որով-
հետեւ ամեն մարդ իր անձը աշխարհի ամեն
գանձերէն և բոլոր բաներէն աւելի կը սիրէր։

Բայց հովիւը տեսնալով՝ թէ իւր խոստ-
մամբն ու քաջալերութեամբն և ոչ մէկը կը
շարժի, մէկէն ահագին ձայնով մը գոչեց.
"Բա՛ւ լիցի, Աստուած չընէ, որ մենք ամեն-
քըս ալ հեղգութեամբ այս տեղ երերանք, և
այս անմեղ գառնուկները՝ անօգնական մա-
նուկները թողումք՝ որ հրոյ ճարակ ըլլան. եթէ
հրաւէրս մարդ յանձն չառնուր, և եթէ բնաւ
մէկն ալ չը համարձակիր, ես պիտի համարձա-
կիմ"։ Այս ըսելով՝ իսկոյն երկու սանդուխ ի-
րարու կապել տուաւ, ըստ որում մէկը չէր
բաւեր, և այն սենեկին լուսամուտին առջեւ
կանգնեցուց՝ ուրկից մանկանց սենեակը եր-
թալու ճանապարհ կար. և արիաբար վեր
ելլալով՝ բոցոյն մէջէն անցաւ, և անոնցմէ մէ-
կը ուսին վրայ և միւսն ալ գիրկը առած՝ նոյն
սանդուխէն կրկին վար իջաւ. և այսպէս եր-
կուքն ալ կրակին մէջ խաշուելէն անվնաս ապ-
րեցուց, և որով բոլոր բազմութիւնը զարմա-

ցուց և ափ 'ի բերան թողուց։

Այլ աւա՜ղ, ափսո՜ս աշխարհի թշուառներուն, ամենէն ցաւալին այս է՝ թէ ի՛նչու այնպիսի անձինք շատ քիչ կը գտնուին աշխարհիս վրայ, կամ ի՛նչու համար երեւցածնուն պէս իսկոյն կը զատուին աշխարհէս, և հասարակաց օգուտ ու բարիք մատակարարելու համար երկար չեն ապրիր։

Այս զարմանալի արիութիւնը գործող դիւցազունը՝ նախորդ գլխոյն մէջ ճարտար հնարքով բարերարութիւն ընող Յովհաննէս Եպիսկոպոսն էր։ Այս անզուգական հովիւը իւր անձը ժողովրդեան բարօրութեան ու փրկութեան վրայ դնող մարդասէր հովուի մը կատարեալ օրինակ կրնայ համարուիլ։ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտ ըսուելու և անմոռաց յիշատակութեան արժանի է այս վսեմ հոգին։

Այժմեան դարուս մէջ մարդկային ազգը որչափ մեծ կարօտութիւն ունի ասանկ ընտիր հովիւներու, մանաւանդ մեր ազգը, որուն չորս կողմը պաշարած են նիւթական ու բարոյական աղքատութիւն, կրակ, հարուած, կործանիչ ատելութիւն, ամեն չարեաց պատճառ տգիտութիւն, որք ամեն կողմէն կը մաշեն կը լափեն և բնաւ մեկուն հոգը չէ։

Ընչաքաղցութեան ու զօշաքաղութեան

ախտը, անձնասիրութեան եւ փառասիրութեան ոգին այնչափ տիրապետած է սրտերու վրայ, որ թշուառաց աղետից ականատես ըլլալով հանդերձ՝ անզգայ կը գտնուին։

Ափսո՜ս, արդարեւ ցաւալի վիճակ. հովուական բուն պարտաւորութիւնները բոլորովին մոռցուած՝ այնպիսի գործեր, այնպիսի զբաղումներ հնարուած են, որոց ըլլալն ալ միտս չունէր. բայց մենք Տեառն մերոյ սա խօսքը կը կրկնենք, թէ՝ "Պարտ էր զայս առնել և զայն չը թողուլ"։

Իրաւ է որ առաքինազարդ՝ անձնադիր հովիւներ չեն պակսիր աշխարհէս, ճշմարիտ է որ ամեն ժամանակ, ամեն տեղ տեսնուած են, բայց դժբաղդաբար նորատեսիլ պայծառ աստղի մը նման հազիւ իրենց պայծառ լուսոյ զմայլելի նշոյլները մեզ կ'երեւին և ահա իսկոյն անհետ կ'ըլլան. այսպիսի հնաշխարհիկ հոգիներ կարծես աշխարհի մէջ իրենց փառաւոր առաքինասէր եռանդը յագեցնելու բաւական ճարակ չեն գտնար, և կը փութային շուտով թողուլ ու երջանկաց գաւառը վերասլանալ։

Բայց եթէ աւելի ճշմարիտն ըսել պէտք ըլլայ, աշխարհի ապաշնորհութիւնը, մարդկանց ապերախտութիւնը զանոնք կը հալածէ։ Այո՛, շատ անգամ մենք ինքնին անարժան կը գտնուինք անոնց կենսատու ներկայութիւնը վայելելու, վանդի յամառութեամբ, կամա-

պաշտութեամբ եւ սոսկալի ապերախտու-թեամբ բարի և առաքինի հովիւները կ'անար-գենք, կը նախատենք, անպատիւ կընենք և վերջապէս կը հալածենք ։ Արդարութիւնն ալ անոնց զրկանաց վրէժը լուծելու համար մեզ այնպիսի առաջնորդներ կուտայ, որք իրենց անարժան ու չարաչար ընթացքովը զմեզ կը տառապեցնեն, և այնպիսի սով մը կը բերեն մեր վրայ՝ որ Մարգարէին ըսածին պէս՝ ոչ հացի և ոչ ջրի սով է, այլ Աստուծոյ խօսքը չը լսելու սով, որով կ'իյնանք յետին թշուա-ռութեան մէջ թէ հոգւով և թէ մարմնով ։ Ուրեմն նախ մենք սրտով զղջանք մեր ըրա-ծին վրայ, դառնանք մեր մոլորութիւններէն, և ջերմեռանդ սրտով աղաչենք զԱստուած՝ որ գթալով և զիջանելով իւր արդար սրտմը-տութենէն՝ իւր ժողովրդեան համար ընտ-րեալ ու արժանաւոր հովիւներ յարուցանէ . . . ։ “Հունձք բազումք են, և մշակք սա-կաւք, արդ աղաչեցէք զտէր հնձոցն. զի հան-ցէ մշակս 'ի հունձս իւր ” ։

ԻԴ.

Ամուսնութիւն

ՀՌՈՄԱՆԻԱ նահանգին մէկ փոքրիկ քա-ղաքին մէջ կը բնակէր խիստ հարուստ և ճոխ մարդ մը, որ իւր բոլոր ունեցածները առան-

ձին ժառանգող մէկ հատիկ աղջիկ մը ունէր։ Այս աղջիկը տասն և վեց տարեկան էր. և որովհետեւ բաց 'ի ճոխութենէ ունէր նաեւ գեղեցիկ դէմք, եւ զարդարուած էր առա-քինութեամբ և մաքուր վարուք, ուստի նոյն քաղաքին երեւելիները միշտ կը վիճէին իրենց մէջ զայն կնութեամբ առնելու համար։ Գի-տէր հայրը՝ որ ամեն բանէ աւելի այդ մարդի-կը հրապուրող և այս բանին յորդորողը իրենց յուսացած հարուստ ժառանգութիւնն է, և չկար անոնց մէջ մէկը, որ իրեն բարի վար-քովն ու առաքինութեամբը հաճոյ լինէր ի-րեն։ Քանզի անոնց մէջ ազնուական և մեծ-տոհմէ մարդ մը կար, որ իւր հօր վնասներով կորսնցուցած էր առաջուան ճոխութիւնը, և կը փափաքէր այս ամուսնութեամբ դարձեալ հարստանալ, բայց այս մարդը իւր ազնուա-կանութենէ բան չէր շահած, միայն հպար-տութիւն և ծուլութիւն. քանզի աշխատու-թիւնը անարգ բանի մը պէս կ'առնէր, և կը կար-ծէր՝ որ պարապորդութիւնը մեծ փառք և պար-ծանք է ազնուատոհմութեան։ Ուրիշ մ'ալ կար, որ շատ տարիներ համալսարանի մէջ ժա-մանակ անցուցած էր ուսման և գիտութեան պարապելով, բայց իւր ծնողքներէն հեռու ըլ-լալով և իւր չարասէր ընկերներէն ապականուե-լով, աւելի յառաջադիմած էր զեղխութեան և շուայտութեան մէջ, քան թէ իւր նպատակ ու-

նեցած գիտութեանց մէջ։ Ուրիշ մէկն ալ խենթը բոլորովին խաղի տուած ըլլալով՝ ոչ միայն ցորեկը՝ այլ և գիշերուան մեծ մասը անով կ'անցնէր։ Ուրիշ մ' ալ ինքն իր վրայ ըղձայելով, օրուան մեծ մասը իւր անձը զարդարելով կ'անցնէր, և բոլոր նորաձեւ ու խենէշ պաճուճանաց և զարդարանաց հետեւողներէն առաջինն ըլլալով, ցոփութեամբ և կանացի վարմունքով ու թուլութեամբ կը փափաքէր իրեն նման աչքող զարդասէրներու սիրտը շահել։ Ուրիշ մ'ալ տատափիկ կը վախցնէր զմարդին՝ բարկասիրտ և վայրենաբարոյ ըլլալով։ Ուրիշ մէկն ալ չափէ դուրս ագուշ և ժխոր խեղքանը զրուելէ էր ամենուն։ Խելացի և իմաստուն հայրը անանց ամենուն մէջն ալ թերութիւններ կը գտնէր, որք հակառակ էին իւր հայրական բարի բաղձանաց, զոր ունէր իւր միամօր աղջկան կատարեալ և հաստատուն երջանկութիւն գտնալու համար։

Ուստի օր մը առանձին առնելով իւր սիրելի զաւակը՝ ասաց. “Աղէկ գիտես աղջիկս, որ իմ ծերութեանս միակ մխիթարութիւնը դուն ես, գիտես նաեւ թէ ես ինչպէս կը սիրեմ զքեզ։ Բայց ժամանակդ կը մօտենայ, և պէտք ես կենակից մը ընտրել քեզ համար, և ինձ ևս պէտք է համբերել տեսնելով զքեզ ինձմէ բաժնուած, և անկից խիստ տարբեր տան մը մէջ մտած և ուրիշ դերդաստան կազ-

մած։ Այսպիսի մեծ գործի մէջ, որմէն կախուած է քու ապագայ երջանկութիւնդ կամ դժբաղդութիւնդ, չեմ ուզեր նմանիլ այն անգութ ծնողաց, որք կը համարձակին բռնաբարել իրենց որդւոց սիրտը։ Դուն պէտք ես ընտրել այն մարդը, որ մինչեւ կենացդ վերջը քեզ լծակից պիտի ըլլայ։ Բայց որովհետեւ քաջ տեղեակ ես՝ թէ ինչ զգուշութիւն պէտք է այս ընտրութեան մէջ, ուստի իմ քու վրայ ունեցած սիրոյս փոխարէն միմիայն կը խնդրեմ՝ որ զքեզ իմ բազմաժամանակեայ փորձառութեանս յանձնես, քու այն թերութիւններդ լեցնելու և այն սխալմունքներդ շտկելու համար՝ որ դու անփորձ ըլլալով և այդ մատաղ հասակիդ մէջ չը պիտի կրնաս իմանալ, ուստի կը խնդրեմ՝ որ իմ խորհուրդներս ըլլան զքեզ լուսաւորող լապտեր։ Իմ քեզ համար ըրած աշխատանքս, և այն երկար ժամանակը՝ որուն մէջ դու հեռու կեցար ընկերակցութենէ և աշխարհային զբաղմունքներէ, կը վստահացնեն զիս՝ որ քու սիրտդ թերեւս ոչ զոք չէ գրաւած։ Ասոր համար կը փափաքիմ քեզմէն իմանալ, և դուն կը պարտիս առանց խարութեան՝ առանց զիս տարբեր մէկը սեպելու և առանց ինձմէ բան մը ծածկելու խոստովանիլ, որովհետեւ ես ոչ թէ քու յօժարութեանդ հակառակիլ կուզեմ, այլ զայն ուղղել միայն”։

Երբ աղջիկը հաստատեց՝ որ իւր սիրտը

դեռ ազատ է ամեն ցանկութիւններէ, և իւր հօր խրատուց սահմանէն դուրս չելլար. յաւելցուց հայրը դարձեալ ասելով. «Պէտք ես գիտնալ ուրեմն՝ որ շատեր կան, որք քեզ հետ ամուսնանալ կուզեն, բայց անոնցմէ բնաւ մէկը չսիրեցի ես, և քեզ յարմար ու օգտակար չը գտայ: Քեզ տուած խրատներս կարծեմ չեն յորդորեր զքեզ՝ որ քեզմէն աւելի ազնուագոյն և պերճ մարդկանց փափաքիս: Դուն առանձին և հասարակ քաղաքացի մը ըլլալով, իմ քեզ ձգելիք հարստութիւններով չես կրնար մեծցնել քո ազգատոհմդ. և երբ հանդիպի քեզ մեծազգի մէկի հետ ամուսնանալ, այս է միայն քու շահդ, որ չը պիտի կրնաս այնուհետեւ ուզածիդ պէս քու հաւասարներուդ հետ փարուիլ, որովհետեւ ամուսինդ չը պիտի հաճի. չես կրնար նաև ազնուագիներու հետ կենակցիլ, որովհետեւ կամ պիտի մերժեն զքեզ իրենց ընկերութենէն և կամ տհաճութեամբ և արհամարհելով պիտի ընդունին: Պէտք է առն և կնոջ վիճակը հաւասարութիւն ունենայ. կամ գէթ ինչպէս հասակով՝ նոյնպէս վիճակով ալ մօտ ըլլան, որպէսզի երջանիկ կեանք վարեն: Եւ ոչ միայն այսչափ՝ այլ ամենէն աւելի պէտք ես խմանալ քեզ ամուսին ըլլալիք մարդուն բարքն ու վարքը, քանզի անոր հետ պիտի միանաս անքակտելի կապով մինչեւ կենացդ վերջը, և ո-

րունպէտք ես հաւատալ անձդ և զքեզ՝ Նարտ (խոսմար) խաղցողը, անկիրթը, վայրենաբարոյն, չարամիտը, խորամանկը, ագահը, դատարկասէրը, թոյլը, ծոյլը, խենդը, յիմարը, շռայլը, ասոնք ամենքը քո կեանքդ ցաւերով և հեծութեամբ անցնել կուտան քեզ: Արդ՝ իմ ճանչցածներուս և քեզ հետ ամուսնանալ ուզողներուն մէջ, ո՛չ մէկը չեմ տեսներ, որ այս մոլութեանց մէկումը շաղուած չըլլայ: Ուրեմն՝ միտ դիր իմ այս խորհրդիս. ինձ կը թըւի որ աւելի լաւ կըլլայ՝ թէոր ասկից աւելի մեծ քաղաք մը փոխադրուինք: Այն տեղ մեծ բազմութեան մէջ դիւրին կըլլայ քեզ ընարել զուգակից, և ամենուն խնամող Աստուածը շուտով կը յայտնէ քեզ քո կեանքդ զուարճալի և քաղցր անցնել տուող մը: Եւ ո՛րչափ պիտի ուրախանամ, սիրելի և թշուառ աղջիկս, թէ որ Աստուծոյ յաջողութեամբը բարեբաղդ և առաքինազարդ մէկի մը հանդիպելու ըլլաս: Այժմ պէտք չէ՝ որ հոգաս ամուսնոյդ շատ կամ քիչ հարստութեանը վրայ, իմ ճոխ հարստութիւններս՝ զորս Աստուած տուած է ինձ, և զորս սակաւ ժամանակէն քեզ թողելու եմ՝ խիստ բաւական են, որովք դուն և քու ամուսինդ՝ ով որ ըլլի, կարող կըլլաք ուրախ և հանգիստ կեանք վարել աշխարհիս վրայ»:

Աղջիկը իւր հօրը այս խօսքերուն համար աչքերը լեցուելով՝ ըսաւ. «Ով հայրս, ո՛ր-

չափ պարտաւոր եմ քեզ՝ քեզմէն ստացած կենացս համար, քո իմ վերայ ունեցած սիրոյդ համար և իմ վրայ ըրած խնամոցդ համար, որովք մինչեւ հիմայ իմ անփորձ և տկար հասակիս պաշտպան եղար։ Ու քեզմէ աւելի որո՞ւ կրնամ հաւատալ ես զիս։ Հայրիկս, բոլոր անձս քո խնամոցդ և սիրոյդ կը յանձնեմ. և թէ որ հաճի Աստուած, որ քո ստացուածքըդ նեղեալի մը առաքինութեան փոխարէն լինի, այն ատեն ուրիշ բանի չէի փափաքեր, բայց միայն սրտով կուզէի՝ որ քո ստացուածքներդ ստացողը վերջէն չը զղջար, և զիս ալ քու ընկերդ հետ շահել կարողանար։ Բայց շատ կը հաւատամ՝ որ չը զղջար, և այսպէս դիւրաւ կը հաճի գալ քեզ մօտ և որդիանալ քեզ, որով և ես երբէք չեմ զատուիր քո քաղցըր կենցաղավարութենէդ և բարի խրատներէդ"։

Երբ հայրը լսեց աղջկան իմաստուն խօսքերը՝ սիրտը ուրախութ լեցուեցաւ, և գուրգուրալով գրկեց զայն և համբուրեց ասելով. "Տէրը միշտ անխռով պահէ քո մէջ այս առաքինութիւնը և քաջ խոհեմութիւնը, որով ուրախացուցիր զիս այժմ, և միշտ պիտի երջանկացընես քո հայրդ"։ Յետոյ ուրախութեամբ լցուած ամէն բան պատրաստելով՝ եկան Հռովմ երթալու։ Այն տեղ հասնելով՝ սկսաւ իւր աղջկան համար արժանաւոր և յարմար

մէկը փնտռել։ Երկար ժամանակ զգուշութեամբ փնտռելէն վերջը՝ օր մի ըսաւ աղջկան. "Գտայ ես զայն՝ որ պիտի երջանկացընէ զքեզ։ Օրինաւոր մարդու մը որդին խիստ անուանի՝ ոչ այնչափ քաջութեամբ որչափ անթերի վարուք և իմաստութեամբ, որն որ իւր հօրը արուեստին մէջ կրթուելով՝ ջանքով եւ խելացիութեամբ հիմակուանէ հօրը հաւասար եղած է, և կուզէ ամուսնանալ քեզ հետ։ Միմիայն քո հաճութիւնդ պէտք է, և ես կերպով մը կը ներկայացնեմ քեզ զայն և անոր հետ խօսելով՝ ոչ միայն արտաքին ձիրքը, այլ և հոգւոյ ներքին հանգամանքներն ալ կարող ես իմանալ։ Բայց շնորհք մը միայն կը խնդրեմ քեզմէ, աղջիկս, և վստահ եմ ընդունելու քո առատասրտութենէդ։ Արդէն ըսեր եմ քեզ՝ որ իմ բոլոր ստացուածքս քուկդ պիտի ըլլան, եւ յիրաւի չը կայ ուրիշ մէկը, որուն թողելու միտք ունենամ։ Սակայն այս առաւօտ դէպք մը պատահեցաւ, որ կը յորդորէ զիս անոնց մէկ մասը ուրիշի մը տալ։ Լումայափոխ բարեկամիս քովը եղած ատենս՝ քսան տարեկան երիտասարդ մի տեսայ, խօսակցութեան և շարժման մէջ վայելուչ և շնորհալի, որով սիրտս գրաւեց, և հարցուցի բարեկամիս թէ իրեն որդի՞ն էր։ Պատասխանեց, թէ՝ "Ոչ, այլ ուրիշ մէկու մը, խիստ անուանի վաճա-

ուկանի մը որդին էր, զոր դու ճանչցած ես ուրիշ ժամանակ Հռովմայ մէջ, բայց տեսակ տեսակ դիպուածներով կորսնցուց իր բոլոր ունեցածները, և իր օրերը ցաւոց և նեղութեանց մատնած թշուառութեամբ մեռաւ։ Զգեց անիկա իր կինը այս որդւոյն հետ անտէր և անօգնական, և ես առի զանիկա քովս գրագրութեան, որպէսզի իրեն և մօրը ապրուստը ճարէ։ Նա յիրաւի իր մօրը հանգստութեան համար ամէն միջոց գործ կը դնէ և ամէն բան կը զոհէ. և որովհետև ասկից աւելի հմուտ՝ զգոյշ և խոհեմ մէկը չը գտայ, անոր համար սակաւ ժամանակ է՝ որ իր վարձքը աւելցուցի։ Բայց իր ընտիր վարքուն ու առաքինութիւններովը արժանի է աւելի լաւ վարձատրութեան»։ Երբ այս ամէնը լսեցի, իմ այս վաղեմի ծանօթս խոպառ չը յիշելուս՝ և անգամ մի գոնէ իր մօրը այցելութեան չգնալուս համար ամաչելուս ինչ ըլլալս չը գիտցայ, քանզի առաջուընէ աղէկ կը ճանչնայի, և գիտէի անոր պատուական ձիրքը, իմաստուն խոհեմութիւնը և համեստութիւնը։ Երկար չը դանդաղեցայ այս պարտաւորութիւնը կատարելու. շուտով գացի, գտայ զայն առանձին, և զիս իրեն ճանչցնելով՝ նորա անցեալ դիպուածոց պատմութիւնը ընել տուի. զորս լսած ատենս սիրտս կը ճմլուէր, և կը զարմանայի անոր համբե-

րութեան և երախտագիտութեան վրայ, որով կ'օրհնէր զԱստուած՝ որ վերցնելով իրմէն ամուսինը և բոլոր ստացուածքը, իր բոլոր թշուառութեանցը փոխարէն ամենասիրելի որդի մը թողած էր իրեն։ Արդ քաջապէս գիտեմ՝ որ եթէ մենք հանդիպէինք այս թշուառութեան, և այն ատեն եթէ մէկը մեզ օգնական ըլլար, դու շատ պիտի ախորժէիր. այս ալ միտքս չը բերած՝ հաստատապէս կը յուսամ՝ որ քո գորովալիր սիրտդ չը պիտի կամի, որ երկու այնպիսի առաքինիք երեսէ ձգուած մնան։ Կուզեմ՝ որ ստացուածոցս մէկ մասը անոնց օգտին համար գործ դնեմ։ Բայց այսու ամենայնիւ մնացածները քեզ կը բաւեն, մանաւանդ թէ որ հաճիս վերոյիշեալ երիտասարդին՝ օրէնսգէտի որդւոյն հետ ամուսնանալ, անիկա շատ հարուստ ըլլալով՝ դուն կարօտութիւն չունիս մեծ հարստութեան։

Աղջիկը՝ այս խօսքերէն սիրտը ցաւած և իր մտքին մէջ եւս քիչ մը խռոված՝ պատասխանեց. «Քու ստացուածոցդ կառավարութիւնը քո կամացդ յանձնուած է. և ես զանոնք գործ դնելու յարմար միջոցը քեզմէ լաւ ուրիշը չեմ գիտեր։ Բայց սաստիկ կը ցաւիմ՝ որ քու վկայութեանդ համեմատ եթէ այնքան առաքինի է այս խեղճ երիտասարդը, ինչո՞ւ քո բոլոր ունեցածներդ եւս և զիս չես վիճակեր այդ առաքինւոյն, և աւելի կուզես՝ որ

ուրիշին ձեռքն յանձնես, զոր յառաջուց չես ճանչնար, մանաւանդ կը թուի ինձ՝ որ երբեմն այս էր քո դիտաւորութիւնդ։ Բայց հիմա կարծես թէ անվայել կը համարիս անոր ընելու փափագած պարգեւիդ հետ զիս ալ անոր տալու»։

«Մի՛ գերապանծ և հազուագիւտ աղջիկս, քաւ հայրը, որչափ փառք եւ գոհութիւն տալու եմ Աստուծոյ՝ զքեզ ինձ շնորհելուն համար, և քո հոգիդ այսքան անզուգական առաքինութիւններով զարդարելուն համար։ Հաւասիկ քո անոր հետ ամուսնանալդ փոխանակ անպատեհ սեպելու՝ դու ես աւելի արժանաւոր եւ պայծառ պարգեւ մը, զոր պէտք է ընեմ համբաւաւոր և ընտիր երիտասարդի մը։ Բայց ի՞նչպէս կարելի է՝ որ նշանեմ զքեզ մէկի մը հետ՝ որ առանց քո ընտրութեանդ պարապ և ունայն է։ Ուրեմն պէտք է տեսնես երկուքն ալ, և անոնցմէ մէկը քեզ ընտրես ամուսին։ Թէեւ դեռ երկրորդը տեսած չէ զքեզ, սակայն չեմ երկմտիր՝ որ եթէ դուն անոր վիճակիս, ամենէն աւելի բաղդաւոր կըլլայ։ Բայց որպէսզի դուն չը զղջաս ընտրութեանդ մէջ, կուզեմ՝ որ միւսն ալ տեսնես, որ եթէ քեզ համար նախապատիւ համարուի, հաւասարապէս պիտի ուրախանամ անոր հետ ամուսնանալուդ համար ալ։

Կորովամիտ հայրը կատարեց իւր խոր-

հուրդը, և կերպով մը երկուքն ալ ներկայացուց աղջկան, որպէսզի տեսնելով և անոնց հետ տեսակցելով և փորձելով՝ իմանայ անոնց բարքը։ Թէեւ շատ բաներով առաջինը արժանաւոր գտնուեցաւ, բայց երկրորդին բարի վարքն ու առաքինութիւնը նախամեծար հանդիսացաւ, և մեծ ուրախութեամբ հարսանեաց հանդէսը կատարուեցաւ, որոյ պէս բաղդաւոր բերկրալի և բազմազուարճ հարսանիք չը տեսնուեցաւ։

Որչափ որ մեծ խորհուրդ ունի ամուսնութիւնը եւ որչափ բարձր ու վսեմ նպատակի համար սահմանուած է, այնու ամենայնիւ մարդիկ անոր սրբութիւնն ու պատուականութիւնը բանի տեղ չը դնելով՝ անասնական կիրքով բորբոքուած չարաչար կը վարուին անոր դէմ և արժանապէս կը պատժուին։ Այն սուրբ միութեան խորհուրդը, որով երկու էակներ անլուծանելի կերպով պէտք էր կապուէին, և գերդաստաններ բազմացնելով մարդկան ազգի պիտանի անդամներ և մեծին Աստուծոյ արժանաւոր փառաբանիչներ պիտի հասցնէին, այժմ չեղած է այս նպատակէն։ Այն խորհուրդը կըսեմ՝ որ երկու էակներու ուրախութեան, երջանկութեան և մխիթարութեան համար սահմանուած էր, մարդիկ իրենց հաճոյից ու ար ցանկութեան գոր-

ծի ընելնուն համար, անպայման հոգերու, տխրութեան, թշուառութեան եւ ցաւոց աղբիւր է դարձած։ Երիտասարդը տեսակ մը անկայուն ցնորքներով և անխոհեմ նպատակաւ կուզէ ընդունիլ այդ սուրբ միութիւնը, և օրիորդ մը ուրիշ տարբեր տեսակ խենդ երեւակայութեամբ մը, անստոյգ երազներով ու թեթեւամիտ խորհուրդներով կը մղուի, ուստի երկու հակառակ նպատակներով և հակակիր ու իրարու վնասակար ըզգացմունքով երբ միմեանց քով կուգան, փոխանակ սիրոյ, հաւատարմութեան և քաղցրութեան, ատելութիւն, նենգութիւն և դառնութիւն կը մատուցանեն իրարու, որով կը թշուառանան և կը թշուառացնեն։

Ի՜նչ ցանկալի և երանաւէտ կըլլար մարդկան ազգի վիճակը, երբ ծնողք վերոյիշեալ ծերոյն պէս իմաստուն ըլլային, և օրիորդք անոր հազուագիւտ օրիորդին պէս խոհեմ, առաքինի, բարեկիրթ և համեստ ըլլային. արդարեւ աշխարհ դրախտ մը կըլլար այնատեն։

ԻԵ.

Հայրենասիրութիւն

ՆԱԽՆԻ պատմագրաց մէջ մարդիկներէն մէկ քանին գեր 'ի վերոյ հռչակուած և փառաւորուած կը տեսնեմք, որք հայրենեաց համար՝

մահը ինքնայօժար յանձն առին, ինչպէս Կոդրոսը՝ Յունաց, և երկու Դեկոսներն ու Մարկոս—Կուրտիոս Հռոմայեցւոց մէջ։ Արդէն այդ փրկութեան համար յօժարութեամբ մահն յանձն առած արիութեամբ հակառակորդին դէմ կենալէն աւելի փառաւոր և խիստ գովելի գործ չը կայ։ Բայց այն առաջուան մարդիկներէն ոմանք՝ ունայն սնապաշտութենէ մը և կոյր մոլորութենէ շարժուեցան. վասնզի Մարկոս—Կուրդիոս կարծեց՝ թէ իւր անձը Հըռովմայ հրապարակին մէջ բացուած անելանելի անդունդին մէջ ձգելով, դից ցասումը կը շիջուցանէր և Հռովմը սպառնացեալ աւերմանէ կ՚ազատէր։ Կոդրոս և երկու Դեկոսներըն ալ առանց զինուց թշնամեաց յանձնուելով՝ և անոնցմէ չարաչար չարչարանօք մեռնելով՝ այնպէս սեպեցին, թէ իրենց հայրենակիցները յաղթանակը կը վաստկին. մինչ զի համարեա թէ սոցա դիտաւորութիւնը աւելի գովելի եղաւ, քան թէ նոյն իսկ գործը։ Բայց քաջասրտութեան համար շատ աւելի փառաւոր և արդեամբ խիստ օգտակար եղաւ այն մահը՝ զոր անցեալ դարուն սկիզբները ինքնայորդոր յանձն առաւ Անդոանոյ երկրէն Պետրոս—Միկկիս անուամբ մէկը՝ որ մեզ խիստ քիչ ծանօթ մարդ մ՚է, որ կարելի էր համբաւով ու փառօք այն նախնիքներէն աւելի գերազանց էր, եթէ անոնց պէս երեւելի վկայաններ

գտնար, որք ջանային զայն դրուատել։

Փրկչի 1706 Թուականին Գաղղիացիք Թուրին քաղաքը բազմաթիւ զօրքով պաշարած էին. և Թէպէտ պաշարուողները անդրդուելի հաստատութեամբ և արիական քաջութեամբ կը պաշտպանէին քաղաքը նոցա յարձակմունքներէն, երբեմն բանի տեղ չէին դներ, երբեմն Թշնամեաց բազմութիւնը յանկարծ չփոթելով անոնց յարձակումը կ'արգիլէին, և երբեմն պարիսպներէն յաճախակի հրացաններ արձակելով վնաս կը հասցնէին, իսկ շատ անգամ ալ յանկարծ դուրս յարձակելով սաստիկ հարուածներ կուտային անոնց. այսու ամենայնիւ՝ սոյն եռամսեայ յամառեալ պաշարմանէն զկնի՝ Թշնամիք այնքան յառաջացած էին, որ մինչեւ անգամ գրեթէ դուրսի բոլոր ամրոցներուն արդէն կը տիրէին, և միայն մէկ հատ մը կար՝ որ ան ալ ձեռք առնուած էր, և սկսած էին մօտէն քաղաքին զարնել, որ ալ չէր կրնար անոնց զէնքերուն դէմ դնել։

Քաղաքապետ Դաւնից կոմսը տեսնելով՝ որ Թշնամիներն այս վերջին ամրոցին վրայ սաստիկ զօրութեամբ յարձակելու կը պատրաստուէին, և արդէն անոր դէմ շտկած՝ պատրաստած էին իրենց ահագին Թնդանօթները, ուստի ինքն ալ իւր ականահատներուն (լաղըմճը) հրամայեց՝ որ գետնի տակէն ճամբայ բանալով մինչեւ Թշնամեաց եղած տեղը եր-

Թան, որպէսզի յանկարծ պայթեցնելով նոցա բոլոր մեքենայները և զօրութիւնները յօդս ցնդեցնեն։ Պետրոս-Միքքա անուն գլխաւորն էր, որ փոյթեռանդն և անխոնջ աշխատանօք յաջողեցաւ այն տեղ անցնիլ, ուր փոսը շինուած և լցած ըլլալով՝ երբ ալ ուրիշ բան մը չէր մնար, բայց միայն փառօզին կրակ առնելու սովորական ճամբան Թողուլ և անկէ դուրս ելնելով կրակ տալ, այս միջոցին յանկարծ վերի կողմէն գետնին Թնդումէն և սարսելէն գիտցաւ՝ որ Թշնամիները ականը (լաղըմ) փլցնելու և իւր գործը ոչնչացնելու կ'աշխատին։

Թշնամիք արդէն իրենց խորհուրդը կատարելու մօտ էին, և եթէ Պետրոս-Միքքա վայրկեան մը եւս դանդաղէր, իւր բոլոր հնարքը՝ ջանքովը մէկտեղ պիտի փճանային։ Սակայն ի՞նչ կրնար ընել, վասնզի գրեթէ հազիւ հազ անկէ դուրս ելնելու և իւր անձը Թշնամեաց ձեռքէն ազատելու միջոց կարող էր գտնել, ալ ամենևին փառօզին պէտք եղած ճանապարհը շինել, անով հեռուէն կրակ տալ և ականը յօդս ցնդեցնելու ժամանակ չը կար։ Գործոյն կատարմանը համար ուրիշ միջոց մը չէր մնացած, բայց եթէ փոսին մէջ իւր ձեռքովը կրակ ձգել և իւր անձը մահուան անճողոպրելի վտանգէն մատնել։ Պետրոս իւր հայրենեաց և Թագաւորին

վրայ ունեցած ջերմեռանդն սիրով բորբոքած՝ խնկապէս այս միջոցին ձեռք կը զարնէ, եւ Թշնամիք տակաւին իրենց նպատակին չը հասած, այսինքն իւր այնչափ աշխատանօք ձեռք բերած փառք չը ոչնչացուցած, որուն միայն յուսացած էր Նեղեալ քաղաքը, միաքը կը դնէ անոնց հետ ինքն ալ մեռնիլ: Իսկոյն իւր ընկերակցացը կը հրամայէ՝ որ անկէ ելնելով՝ հեռանան երթան, և լալով կըսէ անոնց. «Ցիշեցէք՝ Թագաւորին հայրական գթութեանը յանձնել իմ մատաղատունկ եւ նորաբողբոջ որդիներս, որպէսզի հայր և պաշտպան ըլլայ անոնց, և ես յօժար և ուրախ սրտով կը մեռնիմ իրեն ու հայրենեացս համար»: Այս մեծ քաջասրտութեամբ մը կը մօտենայ դէպ 'ի այն հրանիւթ փոշեաց մթերքը, և իւր ձեռաց մէջ ունեցած պատրուգով համարձակապէս կրակ կուտայ անոնց: Ակնթարթի մը մէջ ականը կը պայթի, և չափէ դուրս ուժգնութեամբ պետինը կը պատռէ, և Թշնամեաց մեքենայները տակն ու վրայ կը դարձնէ, որոցմէ շատերը կը մեռնին, և ինքը կենդանւոյն փլատակներու տակ կը թաղուի: Այս գործը այնքան չփոթեց Թշնամեաց յարձակմունքը, և խուչընդոտ լինելով ուշացուց նոցա պատերազմին գործը, մինչեւ Նուկինէոս քաջ իշխանը շատ զօրք ժողովելով քաղաքին օգնութեան հասաւ. և յիշատակաց արժանի քաջութեամբ զանոնք յաղթելով՝ յաղթութեան կոթողը կանգնեց, որով Թշնամիք բռնադատուեցան պաշարումը թող տալ և փախչելու ապաստանել: Բայց Թուրին քաղաքը ըստ մեծի մասին՝ իւր ազատութեան փառքը Պետրոսին համարեց և անոր երախտապարտ եղաւ:

Շատ անգամ առաքինութեանց կամ բարեգործութեանց անունները պատրուակ ըրած են մարդիկ իրենց մոլութիւնները արձակ համարձակ կատարելու, կարճամիտ մարդիկ ալ փոխանակ այն մոլութիւնները պատժելու և անոնցմէ խորշելու՝ նոյն իսկ զանոնք, այն պատրուակ առնուած նուիրական ամենօգտակար սկզբունքները մերժելու և ուրանալու կը ժպրհին. զորօրինակ եղան մարդիկ՝ որ կրօնք և աստուածպաշտութեան սրբութիւնը իրենց վրայ իբրեւ դիմակ առած և անոր սուրբ և պաշտելի օրէնքներն ու պատուէրները գործիք ըրած՝ ամեն տեսակ չարիք գործեցին: Անոնց չարեաց առաջքն առնելու և զանոնք յաղթահարելու համար՝ փոխանակ բուն կրօնք և աստուածպաշտութեան իսկական ճշմարտութեամբ պատերազմելու, ոմանք անմտաբար կը դայթակղին և ուրացութեան կը դիմեն, որով թէ իրենց անձին և թէ հասարակութեան բարոյապէս և նիւթապէս կը վնասեն. յետոյ թէպէտ իրենց այս թերամիտ և ան-

խորհուրդ գործէն յառաջ եկած չարիքները փորձով տեսնալով կը դառնան, բայց ի՞նչ օգուտ իրենց խօսքովն ու գործքովը մոլորուած թշուառ մարդիկ կը մնան նոյն սխալմանց և վնասուց մէջ։

Այս կարգէն է նաև հայրենասիրութիւնը, որ դիւցազնական առաքինութիւն է, որ եթէ իւր ամէն պայմաններովը 'ի գործ դրուի, խիստ մեծ փառաց և անմահ յիշատակաց արժանի է, և որուն օգուտը անպատմելի է, զոր ամէն ազգ դարերէ 'ի վեր կը վայելէ. ինչպէս մեր ազգն ալ ունի իւր հայրենասէր՝ արի նահատակները, Վարդան, Վահան, Սմբատ և այլն. որոց հայրենասէր անձնուիրութեան շնորհիւն է, որ այսօր իբր ազգ և իբր ժողովուրդ մարդկութեան մէջ կ'ապրինք. իսկ եթէ տկար և յետադէմ կը գտնուինք, այդ ամօթը մեր անտարբերութեան և հարենատեցութեանն է։

Բայց եղան, և են այնպիսի փառասէր՝ չարախորհուրդ և ամբարտաւան մարդիկ, որ այս հայրենասիրութեան անունը իրենց փառասիրութեան և տիրապետութեան պատրուակ առնելով՝ մարդկան ազգի չարիք կը հասցնեն և բիւրաւոր անմեղ արիւններ կը թափեն. այս մասին նշանաւոր է դարուս մէջ Ֆրանքօ-Գերմանական ամենավնասակար և յաւերժական անարգանաց արժանի անմիտ

պատերազմը։ Բայց մարդասէր կարծեցեալ մարդիկ ոմանք՝ փոխանակ կշտամբելու և անարգելու այսպիսի արիւնհեղութեանց բուն շարժառիթները, փոխանակ խաբէութիւնը մերկանալու և խայտառակելու՝ բուն իսկ հայրենասիրութիւնը կ'ուրանան, որ մարդկան ազգի համար խիստ կարևոր առաքինութիւն մի է. բայց ինչպէս ըսինք, պէտք է որ իւր պայմանները անթերի ունենայ, եթէ ոչ ամենավնասակար անձնասիրութեան մէկ ընդարձակ տեսակը կըլլայ։ Հայրենասիրութիւնը մարդասիրութեան ընդհանուր սկզբունքին՝ արդարութեան, պարտուց և իրաւանց անժխտելի հիման վրայ հաստատուած պիտի ըլլայ. մեծ օգուտ մը և անխուսելի հարկ մը բանադատած պիտի ըլլայ, ինչպէս որ սոյն պատմութեան մէջ ալ ակներև կը տեսնենք։ Ահա այս պայմաններէն դուրս հայրենասիրութիւն չը կայ։

ԻԶ.

Գիշերային երևումները

Հին ժամանակները ամէն կողմ հին տուները՝ մանաւանդ հին աւանները սատանայի բնակութեան տեղեր կը համարուէին, և այն տեղերը բնակելու համարձակելով վնասուող-

ները՝ հին եղած երեւմանց, զարհուրանաց և դիպուածոց վրայ այլ և այլ բաներ կը պատմէին։ Երթալով քիչ քիչ յայտնուեցաւ այս գաղտնիքը, վասնզի փորձով տեսնուեցան, որ այն տեսակ երեւոյթներն ու զարհուրանքները՝ կամ վախէ յառաջ եկած երեւակայութեան ցնորք էին, կամ անծանօթ պատճառներէ յառաջ եկած ներգործութիւններ էին, կամ՝ թէ չարաբարոյ մարդկանց խաբէութեան ու վնասակար կատակի գործը, որք այս իրենց չարագործութիւնները ծածկած տեղերէն իրենց գաղտնիքը յայտնող մարդիկները հեռացնելու համար՝ այսպիսի սարսափեցնող միջոցները կը գործածէին։ Այժմ չկայ խելացի մը, որ այս տեսակ զարհուրանաց հաւատ ընծայէ. բայց այս վաղեմի մոլար կարծիքը տակաւին բոլորովին վերցուած չէ հասարակութեան մէջէն, և այսպիսի դիպուածներու պատմութիւնները մեր ժամանակներն ալ կը լսուին։ Խոհեմ մարդը ասոնց հանդիպած ատեն անհոգաբար կը ծաղրէ միայն։ Ոմանք ալ իրենց քաջասրտութիւնը ցուցնելու համար վտանգը առ ոչինչ համարելով՝ կը յանդգնին դէմ դնել անոր։ Բայց Վիլլէրս դքսին օրինակը կ'ըզգուշացնէ զամենքը, որ առանց ամէն պէտք եղած պատրաստութիւնները ընելու՝ և անձը չար պատահարներէն պաշտպանելու ապահովութիւ-

նը ունենալու չը փութան վտանգին դէմ դնել, որ կամ բնական պատճառէ՝ կամ այնտեղ պահուող մարդկանց չարութենէն դիւրաւ կրնան պատահիլ։

Վիլլէրս դուքսը իւր երիտասարդութեան ժամանակ՝ իր Թագաւորին հրամանաւ կարեւոր գործի համար Գերմանիա խրկուեցաւ. անկից դարձած ատեն խոտաշէն խեղճ գիւղ մի հասաւ, ուր երկրագործաց քանի մը հին փլած հիւղերէն զատ՝ գիշերը անցնելու տեղ չը գտաւ, և արդէն գիշերը հասած էր ու սաստիկ անձրեւ կուգար։ Այն տեղ մօտ ամրոց մը տեսաւ, ուր կը կարծէր՝ որ կարող է նոյն գիշերը հանգիստ անցընել. այս պատճառաւ հարցուց գիւղացւոց, թէ՝ «Ո՞վ կը բնակի այն տեղ, և թէ կարելի՞ է նոյն գիշերը հոն անցընել»։ Պարզամիտ գիւղացիքը յայտնեցին իրեն՝ որ երբէք մէկը չը վստահիր այն տեղ բնակիլ, որովհետև գիշերը լսուած զարհուրելի դղրդիւններէ և տեսնուած երեւոյթներէն ամէնքն ալ վախցեր էին։ Երիտասարդ Վիլլէրս ծաղրելով անոնց չափէ դուրս պարզմտութիւնը ըսաւ. «Շատ պիտի ուրախանամ՝ թէ որ ես անձամբ տեսնամ այս երեւոյթները և լսեմ երկիւղալի դղրդիւնները»։ Յետոյ հրամայեց հետը եղողներուն գիւղին մէջ մնալ, և որպէսզի լաւ իմացնէ թէ որչափ ոչինչ կը համարի այսպիսի ցնորքները, առաւ իւր զէն-

քը, և գինի բերել տալով ու տաքնալու և զօրանալու համար կրակ բերել տալով՝ միայնակ եղաւ և ամրոցը գնաց։

Երբ կէս գիշեր եղաւ, սկսաւ հեռուէն պոռալու խառն 'ի խուռն ձայներ և շղթաներու սաստիկ շաչիւններ լսուիլ։ Վիլլէրս առանց երբէք խռովելու՝ զէնքը առաւ և պատրաստ կեցաւ։ Պոռալու և աղաղակներու ձայնը և շղթաներու շառաչիւնները երթալով կը սաստկանար և աւելի կը մօտենար։ Վիլլէրս անշարժ հաստատութեամբ և քաջասրտութեամբ այս ահարկու պատահման վերջը տեսնելու կ՚սպասէր, և ահա սաստիկ որոտմամբ կարծես թէ ամբողջ ամրոցը կը կործանուէր․ և տեսաւ դրան բացուիլը և ահռելի հսկայաձեւ ու անճոռնի երեւոյթ մը սպիտակ հագած՝ որուն հետ չորս դիւահար ձեռքերնին լապտերներ առած ներս կը մտնէին։ Այն այլանդակ երեւոյթը կայնելով՝ և դէպ 'ի Վիլլէրս դառնալով, զարհուրելի և դժոխային ձայնով սաստեց ըսելով․ “Յանդուգն մահկանացու, դու՝ որ համարձակեցար մտնալ այս սոսկալի տեղը, հեռացի՛ր շուտով՝ և քու անձդ ազատեցո՛ւր, ապա թէ ոչ՝ վախցի՛ր կենացըդ համար”։ “Ինձ վախնա՜լ, պատասխանեց քաջ երիտասարդը, հիմա կը տեսնես դու՝ անօրէ՛ն, թէ Վիլլէրս վախնալ գիտէ՞”։ Այս ըսելով՝ սաստիկ ուժով կը յարձակի անոր վը-

րայ։ Երեւոյթը աճապարելով կը փախչի, Վիլլէրս ետեւէն կը վազէ, բայց 'երբ երկու սենեակ կ՚անցնին, ահա գետինը կը բացուի և երեւոյթը կ՚անհետանայ, և ինքը առանձին կը գտնայ զինքը անծանօթ տեղ մը լռութեան և սոսկալի մթութեան մէջ։ Խիստ դիւրին է մակաբերել՝ թէ Վիլլէրսը զարհուրեցնողները որոնք էին։ Վիլլէրս այն գուբին մէջ իյնալով՝ բարեբաղդաբար վնասուած չէր, բայց յայտնի կը տեսնէր՝ որ ալ յոյս չկայ այն գուբէն ելլալու և ազատելու։

Երկար ժամանակ այլ և այլ մտածութիւններով վարանելէն զկնի՝ լուսոյ նշոյլ մը կը տեսնէ ձախ կողմէն վերի դրան քով՝ ուրկից այն գուբը կ՚իջնային, և մարդոյ ձայնի նման շըշնկոց կը լսէ։ Ուշադրութեամբ մտիկ կընէ, և խուլ այն սարսափման մէջ կը լսէ՝ որ չարագործներու խումբ մի խորհուրդ կընեն, թէ ի՞նչպէս սպաննեն զինքը։ Երկար ժամանակ իրենց մէջ վիճելէն զկնի, կը լսէ մէկուն ըսածը, թէ “Մեզ համար խիստ վտանգաւոր կըրնայ ըլլալ զայն սպաննելը, անիկայ խիստ երեւելի մէկն է, վաղը բոլոր ամրոցին մէջ կը փնտռուի, և վերջը մենք կը յայտնուինք․ ինձ կը թուի՝ որ աւելի լաւ կըլլայ բանալ գուբին վերի ծակը և արձակել զայն”։ Զայս ըսելով Վիլլէրս և քաջալերուելով՝ անմիջապէս ըսաւ անոնց․ “Այո՛, շատ մեծ պիտի ըլլայ ձեր վնասը։ Քովս

խիստ հարկաւոր թղթեր ունիմ, զորս պէտք է թագաւորին ձեռքը հասցնեմ. այս մօտակայ գիւղին մէջ ալ չորս սպասաւոր ունիմ, կարելի չէ՝ որ մահս ծածկուի և անվրէժ մնայ։ Բայցէք, կը խոստանամ ամենուդ ալ այս բանը երբէք չյայտնել, և իմ անձիս արժանաւոր փոխարէն մը հատուցանելու խօսք կու տամ ձեզ»։

Սակայն ինչ իրենց մէջ խորհելէն վերջը՝ որոշեցին զայն արձակել. բայց պատուիրելով որ երդնու՝ թէ ուրիշ բան չըպիտի ըսէ այլ՝ բայց միայն զարհուրանք տեսնալը։ Խոստացաւ Վիլլէրս, և այս կերպով ազատեցաւ այն վտանգաւոր տեղէն։

Սակայն ժամանակէն զկնի՝ մինչդեռ Վիլլէրս իւր բարեկամաց հետ իւր այգւոյն մէջ նստած էր, անծանօթ մը գալով անոր առջեւ կեցաւ, և երկու հատ կարճ մորուքներ ներկայացնելով՝ ըսաւ. «Այս ընծաները ընդունելդ կը խնդրեն անոնք, որոնց ծածուկ խորհուրդը չյայտնել խոստացար ամրոցի մը մէջ, մինչեւ ցարդ հաւատարմաբար պահեցիր, զոր կարող ես յիշել։ Արդ՝ զքեզ քու այն պարտաւորութենէդ այժմ ազատ կը թողուն, որովհետեւ իրենք այն սահմաններէն ելլալով և ապահով ըլլալով՝ բնաւ պէտք մը չունին և մէկէ մ՚ ալ չեն վախնար։

Այն ատեն պատմեց Վիլլէրս ամեն բան՝ ինչ որ ամրոցին մէջ իրեն պատահած էր։ Հսկային երեւոյթը և անոր չորս արքանեակներն՝ էին հինգ հատ դրամ գողցողներ, որոնք ուրիշներուն հետ այն տեղ կը պահուէին գետնի տակ շինուած ճանապարհի մը մէջ, որոյ նման ամեն ամրոց ալ կունենար պատրաստի քաղաքական խռովութեանց և մասնաւոր բռնաւորաց ժամանակ։ Թէեւ Վիլլէրս ուրախ էր իւր անձը ազատելուն համար, սակայն քանի մարդու՝ որ իւր այս անցքերը պատմելու կըսկսէր, ընդ նմին միշտ իւր խիստ յանդգնութիւնն ալ կը կշտամբէր, եւ այս տեսակ վտանգաց ատեն՝ որոգայթի մէջ չիյնալու համար իւր անձը օրինակ կ՚ընծայէր, և կը խրատէր՝ որ այսպիսի պարագայից մէջ անխորհուրդ քաջասրտութիւնը շատ անգամ վտանգաւոր է, ուստի խոհեմութեամբ հեռացուելու և ընկերներով դէմ դնելու է։

Այս պատմութիւնը կարող է բաւական չափ պարզել և լուսաւորել նախապաշարեալ խեղճերու մոլորած միտքերը. վասնզի այս ահաւոր երեւոյթը իրաւ որ սոսկալի է, սակայն ահա կը տեսնենք՝ որ ասոնք ալ ո՛չ ոգիներ են և ոչ ջիներ և ոչ ուրիշ երեւակայական ցընորքներէ ստեղծուած սուտ էակներ, այլ պարզ մարդիկներ են, որոնցմէ խելքով խոհեմութեամբ և զօրութեամբ կրնանք ազատիլ։ Հապա ո՞րչափ ամօթ է այն մարդկանց, որք սնո-

տի ստուերէ մը, աննշան ձայնէ մը, անորոշ երեւոյթէ մը կը վախնան, մինչեւ անգամ ընտանի կենդանիներէ կամ՝ չնչին սողուններէ կը սոսկան ու կը սարսափին, և առանց քննելու՝ առանց անոր ինչ ըլլալը լաւ հասկնալու կը յանդգնին ուրիշներն ալ համոզել, որ այն իրենց պատահածը անշուշտ ոգի էր։ Խիստ ամօթ է կըսենք և կը հաստատենք՝ որ ծուրք եւ բաղէակին չը վայելեր այս կերպով խաբուիլը և խաբելը. բարեկամաբար կըսենք բոլոր այս գիրքը կարդացողներուն, որ ամենեւին մի՛ հաւատաք այդ կերպ ստութեանց, և ասանկ պատմութիւնները լսերնիդ ճշմարիտ բաներ կըե-լեցնել ուզողներուն քովէն հեռացէք, քանզի խիստ վնասակար են այդպիսի գաղափարները։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Այսպիսի նախապաշարմանց վրայ ուրիշ անգամ Սիոն ամսաթերթին մէջ յօդուած մը հրատարակեցինք, և լսելով որ մէկ քանի կարդացողներուն մեծ օգուտ ըրած է, արժան համարեցինք ամբողջապէս այս տեղ վերստին հրատարակել. կը յուսամք՝ որ այս գիրքը դըպրոցներու և ժողովրդեան մէջ մուտ գտնալով՝ նախապաշարմունքները եթէ ոչ բոլորովին, գոնէ մասամբ մը վերցնելու համար բաւականի չափ օգուտ կընէ։

ՆԱԽԱՊԱՇԱՐՄՈՒՆՔ

Աշաղխածիկ, փերի, խորթշախ, Ալ, եւ այլն։

Մարդուս առողջութիւնը խանգարող շատ մը ախտներ կան՝ զորս իբր բերկրանք 'ի գործ կը դնենք, ինչպէս են զգայական անչափաւոր բերկրութիւնք. հանդերձի, կերակրոյ, ըմպելեաց՝ և այլն չարաչար գործածութիւնք. ասոնցմէ զատ օդոյն անհաւասարութիւնք կարող են շատ կերպիւ մարդուս առողջութեանը վնասել։ Այս ամենը երբեմն այնպիսի ցաւալի արդիւնքներ յառաջ կը բերեն, որ ամենէն հմուտ բժիշկներն անգամ կը շըւարին, վասնզի ամեն միջոց 'ի գործ դնելէն վերջն ալ՝ տակաւին չեն յաջողիր հիւանդը առողջացնել. սակայն մենք դիտաւորութիւն չունինք ասոնց վրայօք խօսիլ, այլ կը թողունք որ բժիշկք և կազմաբանք խօսին ու ճշգրիտ կերպով բացատրեն. մեր ուշադրութիւնը նորանոր շարժառիթներով կը հրաւիրուի ուրիշ առթի մը, որ վերոյիշեալ ախտներէն աւելի մարդուս ապերջանկութիւն կը պատճառէ, այն է ցնորքներն ու առաչօք երեւոյթները, որոնց ռամիկը զանազան անուններ տըւած՝ իւր մատաղ սերունդին կը սորվեցնէ, որով անոնց թշուառութեան, մինչեւ տարաժամ մահուան պատճառ կըլլայ։ Այս ցը-

նորից անուններն են Աշաղիւծիւկ, Փերի, Ալպասդը, Ալ, կամ Ալքարըսը կամ Ալլէկ, և այլն և այլն։ Ասոնք այնպիսի ցնորական խաբեբայ և սուտ բաներ են, որք գոյութիւն չունենալէ զատ՝ ասոնց վրայ եղած պատմութիւններն ալ խիստ այլանդակ և խելքի դէմ են։ Ուստի մենք այս գերս ասոնց վնասակար հետեւութեանը պատահելով՝ ստիպուեցանք ասոնց վրայ քանի մը խօսք ընել. թողլով որ ուրիշներն աւելի հմտալից ու ճշգրիտ բացատրութիւններ տան յօգուտ հասարակութեան։

Ա.

Աշաղիւծիւկ

Գիտնալու ենք՝ որ մանկանց երեւակայութիւնը վաղվաղուն ըլլալով արդէն իրենք իրենց այլանդակ ձեւեր, կերպարանքներ և մտացածին անձանց հրեշներ կ'ըստեղծեն, հապա երբ ուրիշէն, կամ բուն իսկ իրենց ծնողքէն ալ այնպիսի բաներ լսեն, ո՞րչափ ալտի սաստկանայ իրենց երեւակայութեան զօրութիւնը։ Մանաւանդ վախը՝ որ բնական է տղայոց փոքր հասակին, օգնական կըլլայ անոնց զգայութիւնը խանգարելու և ահաւելի բաներ երեւցնելու, որոնցմէ մանուկը սոսկալով անտարակոյս անիմանալի հիւանդու-

թեան մը կը հանդիպի, որուն առաջքը շատ անգամ անկարելի է առնել։

Երբոր մայրը կը տեսնէ՝ որ տղան լալէ չը դադրիր, փոխանակ իւր մայրական սիրոյ կամ իշխանութեան ազդեցութիւնը բանեցնելու՝ փոխանակ խոհեմութեամբ զայն լռեցնելու, յանկարծ կըսկսի երկիւղ տալ. «Թէ՛ որ ձայնդ չըկտրես՝ կըսէ՝, քեզ Աշաղիւծիւկին կուտամ»։ և որպէսզի տղան հաւատայ, եթէ փողոցէն այն միջոցին ուրիշ ձայն չը լսուի, ներսէն ուրիշ մէկը այնպիսի այլանդակ ձայն մը կը հանէ, որ կարող է յանկարծական դէպքերու մէջ մեծ մարդիկներն ալ շփոթել և վախցնել։

Այնուհետեւ տղան թէեւ քիչ մը կը լռէ, բայց երեւակայութեանը մէջ այն ձայնը հանողին գաղափարը կը մեծնայ, բնականապէս կուզէ գիտնալ՝ թէ ինչ էր այն, ուստի ներքէն կըսկսի լալ, մէկէն նոյն ձայնը աւելի ահաւելի կերպով կը լսէ։ Տղուն մտքին մէջ այս կէտէն կըսկսի երկիւղն ու հաւատքը այնպիսի բանի մը վրայ, որ իրօք չը կայ և խաբէութիւն է. ասանկ դէպքերու մէջ տղայք ստութեան գաղափարն ալ կըսորվին և սուտ խօսելու սկիզբը իրենց ծնողքէն դաս կ'առնեն, վասնզի մայրը իւր խաբէութիւնը պատրուակելու (ծածկելու) համար՝ կըսկսի բարձր ձայնիւ. «Գնա, [illegible] իմ տղաս չէ, դրացինին տղան է. իմ տղաս չի լար, [illegible] է»։ և այն ըսել

Մինչդեռ տղան գիտէ՝ որ ինքն է լացողը, բայց կը տեսնայ որ եղած բանին համար չեղածն ալ կրնայ ըսուիլ, կամ մէկու մը բրածը ուրիշի մը վրայ ալ կրնայ ձգուիլ, ալ այնուհետեւ եթէ կրնաս՝ անոր սրտին մէջ ճշմարտութիւն բնտռէ :

Զետեղեալ տղուն մտացը մէջ այդ Ըլ-ալի-ճի-կին գաղափարը սաստիկ ներգործած ըլլալով, շատ անգամ՝ յիշողութեան մէջ կը նորոգուի. քնացած ատեն երազի մէջ կը տեսնայ, կը սոսկայ, վեր կը ցատկէ և յանկարծ կըսկսի աղաղակել. սակայն այս միջոցին մօրն ըրած ամէն խնամքներն ու գգուանքները ապարապը կ'երթան, ուստի կարծելով՝ որ տղան հիւանդ է կամ ցաւ մը կըզգայ, բժշկին կը դիմէ, բժիշկը գննելով երակին արագ բաղխումը և մարմնոյն ջերմութիւնը, մանաւոր տենդ մը կը համարի և դեղ կուտայ. անմիտ մայրերն ալ գիշերը չը քնանալուն համար խաշ-խաշ կը խմցունեն և խեղճ երախային ներքին կազմութիւնը կը խանգարեն, ալ այնուհետեւ միշտ դեղերով պիտի ապրի, որուն հետեւութիւնն է վատառողջ ու թշուառ կեանք մը անցնել :

Բ.

Փերի

Երբ որ և իցէ պատճառաւ տղայ մը փերիէն կը վախցունենք, գիտնալու ենք՝ որ պատ-

ճառ կըլլանք անոր երկչոտ ըլլալուն, այս երկչոտ բնաւորութիւնը շատ անգամ ամենաչնչին բաներէն կը սոսկացնէ զինքը և ցաւի տէր կընէ. ժամանակ կըլլայ՝ որ երկիւղէն երեւակայութիւնը յուզուած ըլլալով, իր ստուերը (շուքը) իրեն ահագին մարմին մը, գլուխը երկինք հասած մարդ մը կ'երեւի, կամ առջեւէն կատու մը ցատկած ատեն զայն փերի կարծելով անդիմադրելի սոսկում մը կիյնայ սիրտը եւ բոլոր անդամները կըսկըսին դողալ, ջիղերը կը թուլնան, սրտէն արիւնը առատութեամբ գլուխը կը զարնէ, կըսկսի այլանդակ ցնորքներ տեսնել, ուրկէ շատ անգամ կը պատճառի խելագարութիւն, սրտի շարունակ բաբախումն, գլխու շարունակ ցաւ, վերջապէս ջղային ամէն տեսակ հիւանդութիւն. վերջը թող աշխատին ծնողք զայն բժշկել, բայց քանի որ այն ցաւոց պատճառը իրենց ներսի դին է, բնաւ աղէկնալիք չունին : Գիտենք երեւակայութեան զօրութիւնը, գիտենք արեան սաստիկ գրգռումէն յառաջ եկած անթիւ վտանգները, գիտենք նաեւ որ անոնց գլխաւոր պատճառը երկիւղն է : Բժիշկք ցաւը մերժելու դեղ կուտան, բայց երկիւղը մերժելու դեղ չունին. երկիւղը կրնայ փարատիլ, երբ վախցած բանին ոչնչութիւնը հաստատենք, երբ ճշմարիտ ապացոյցներով համոզենք՝ որ այն առարկայն՝ ուրկէ

որ՞ կը վախնայ, սուտ է, իւր կարծածին չափ զարհուրելի չէ. եթէ վախցած բանը ներկայ է, վախցողին թեւէն բռնել տանիլ և շօշափել տալ, որով իւր խաբուած ըլլալը տեսնելով՝ կը վստահի և երկիւղը կը փարատի։

Օրինակի համար. կըզգուշացնեն տղայքը, որ առանց նայելու կամ առանձ ձայն հանելու. գիշեր ժամանակ պատուհանէն ջուր կամ ուրիշ բան չը նետեն, ասոր պատճառը իբր թէ հոն ջինի եղած կըլլայ և իրենց կը զարնէ։ Այս պատճառը սուտ է, ասոր ճշմարտութիւնը աս է՝ որ գուցէ այսպիսի ժամանակ հոն մարդ կը գտնուի, կամ պատուհանին տակ կենդանի մը պատսպարուած կըլլայ, յանկարծ վերէն բանի մը թափուիլը տեսնելով՝ կը շարժի, կամ վրան թափուելով ձայն կը հանէ, և գիշերուան մթութեան մէջ մարդու սոսկումն կը պատճառէ. վասնզի բան թափողը չը տեսնալով անոր ինչ ըլլալը և կարծելով՝ որ ջինի է, կը վախնայ, սիրտը կը վրդովի և կը հիւանդանայ, ասկէ կը հետեւցնեն որ ջինը հարուածեց զինք. կըսկսին այնուհետեւ կախարդներու դիմել, կարծելով թէ անոնցմէ օգնութիւն պիտի գտնեն, որ ընդհակառակն բան մը չեն կրնար ընել, իրենց ստութեամբն ու ճարտարմտութեամբը ռամկին սիրտը ահ ու դողով կը լեցնեն, անմիտներու զարմանքը կը գրաւեն և վերջապէս հիւանդն աւելի կը

ծանրացնեն։ Եթէ պատահի՝ որ հիւանդը բժշկուի, գիտնալու է՝ որ հիւանդին վստահութիւնն է այն և ոչ թէ կախարդին հնարքը. ուստի եթէ նոյն վախցողը փորձով տեսնէ՝ որ տեսած բանը մարդ կամ ուրիշ կենդանիի ձայն է, այն ատենն ալ կը բժշկուի, քանզի սրտին մէջ տպաւորուած երկիւղը կը փարատի, միտքը յուզմունքէ կը խաղաղի և կ՚ոչընչանայ իւր ցաւոց պատճառը. Ճշմարտութեան ու վտանգին ալ հաստ ըլլալով՝ ուրիշ անգամ ոչ անանկ անզգուշութիւն կընէ և ոչ ալ պարապ բաներէն կը վախնայ։

Սանկ է նաեւ այն զգուշութիւնը՝ որ կը պատուիրեն առանց ճրագի մութ տեղերը չերթալ. այս զգուշութիւնն ալ խիստ կարեւոր և օգտակար է, քանզի մութ տեղերը յանկարծ բանի մը կը զարնուի և կը սոսկայ, կամ կը վիրաւորի, կամ գուցէ ուրիշ մարդու մը պատահելով իրարու կը զարնուին. ընտանի կամ վայրի կենդանի մը գտնուելով իրենց կը վնասէ, վերջապէս ամեն կերպով վնասակար է մութ տեղը առանց ճրագի երթալ, մանաւանդ փերիի գաղափար ունեցող մարդիկ, որ շատ անգամ ասանկ ոչինչ պատճառներով նուաղած են. մինչդեռ մէկը մութ սենեակէն դուրս ելած և դուռը գոցած ատեն՝ քղանցքը (փէշը) դրան մէջ կը մնայ, և փոխանակ ազատելու՝ սաստիկ ճիչ մը կը ձգէ, լեղապատառ փախչիլ ուզելով՝

քղանցքը կը պատռի, ինքը կ'իյնայ երեսի վրայ և կը մարի. Թէպէտ կը խնամեն կ'սթափեցնեն, բայց առաւօտ անկողնոյն մէջ մեռած կը գտնեն. յետոյ սենեկին դուռը, որ վախերնուն գիշերը մարդ չէր բացած, առաւօտուն զգուշութեամբ բանալով դրան մէջ կը գտնեն հանդերձին կտորը, կը հասկնան բանին էութիւնը, բայց ի՞նչ օգուտ վախցողը արդէն մեռած էր: Արդ աւելի աղէկ չէ՞՝ որ ասոնց բուն պատճառները բացատրուին, որպէսզի այս ծանր հետեւանքներէն ազատ մնան:

Ահաւասիկ ինձ պատահած դէպք մը. տղայութեանս ատենը ինձ այսպիսի բաներ շատ պատմուած են. ես ալ հաւատացած էի որ իրօք Փէրիներ կան և ինձ կը փնտռեն, այս համոզմամբ շատ անգամ ալ վախցեր եմ. բայց երբ քիչ քիչ այս ամենուն սուտութիւնը ճանչնալ սկսած էի և այսպիսի դէպքերու մէջ փորձեր կընէի, օր մը երկար սրահի մը մէջէն կ'անցնէի, գիշերը ժամը հինգին միջոցներն ըլլով՝ սրահին երկու կողմի սենեակները ձայն չը կար, ամէն մարդ պառկած էր, ահաւոր լռութիւն մը կը տիրէր, սրահին վերի ծայրը աղօտ ճրագ մը կը պլպլար, որ այնտեղի լուսաւորութեան համար սահմանուած էր. վարի կողմն ալ մութ կամարի մը տակ ճերմակ պատ մը կար. երբ այն պատին մօտեցայ, տեսայ՝ որ դիմացէս երկայնահասակ վիթխարի

մարդ մը կուգայ. այնչափ սոսկալի երեւոյթ մը թուեցաւ ինձ, որ վախուս ստիպուեցայ կենալ, բայց աչքս անոր վրայէն չէի վերցուներ. իմ կայնելուս հետ անմիջապէս այն ալ կեցաւ. սիրտ առի և հետաքրքրութեամբ քայլ մը փոխեցի, տեսայ որ այն ալ քայլ մը յառաջ եկաւ. դիմացս սպիտակ պատ ըլլալը նշմարեցի, և փորձ մը ևս ընելու համար քիչ մ'ալ յառաջ գացի և իսկոյն պարզուեցաւ աչքիս առջեւ այն ահաւոր մարմինը, քանզի վերը վառուած ճրագին լոյսէն իմ ստուերս պատին վրայ ինկեր էր: Այս դէպքն ալ խորհրդածութեանս առարկայ ըլլալով և վստահութիւն տալով սրտիս՝ շատ այլանդակ բաներ, սուտ գաղափարներ քիչ քիչ հերքեցի մտքէս: Սակայն մտածեցի՞ որ եթէ ուրիշ մը ըլլար իմ տեղըս, անշուշտ վախուն առանց քննելու ետ պիտի դառնար, մէկուն սենեակը պիտի մտնէր, և պատմէր որ Փէրի տեսայ, այն ալ պիտի հաւատար, և ահա երկու սուտ վկաներ ալ պիտի աւելնար Փէրիի գոյութիւնը հաստատող:

Ուրիշ պատմութիւն մը ևս:

Օր մը՝ երբ բարեկամիս մէկուն տունը վարի դահլիճը նստած՝ կը տեսակցէի, բարեկամիս տղան դպրոցէն գալով՝ ուղղակի սանդուխէն վեր ելաւ, վերը առանձին քիչ մը զբաղելէն վերջը՝ յանկարծ ահռելի աղաղա-

կով սանդուխէն վար գլորեցաւ՝ քան թէ ի-
ջաւ. այս սարսափին մէջ՝ որ մենք ալ շուա-
րած պատճառը կը հարցունէինք, հազիւ թէ
կակազելով՝ Փէ . . . րէ . ըսելն ու նուաղիլը
մէկ եղաւ. անձապարանօք ամէն խնամք ՚ի
գործ դրինք՝ հազիւ կրցանք սթափեցնել. քաղց-
րութեամբ հարց փորձ ըրինք, և ահա խեղճ
աղուն բուն խօսքերը. «Մէր Էլայ Բոպղիերս
տեղը դրէ. էտխը ձորս անօրէ էր տէէ տօլապը բոյէ,
մէյմալ տեսայ որ տօլապին մէջէն Փէրին վըրաս նոգայ
նոր, վախցայ փախայ, ան ալ ետեւէս վազեց»։ Այս
խօսքէն վերջը աղուն մօրաքոյրը, որ իւր խը-
նամածուն էր ըսաւ. «Հապա ես ձեզի հազար
անգամ ըսած չե՞մ՝ որ տօլապը մի՛ խառներ»։ Իսկ ես
սաստիկ ցաւելով այս եղելութեանց վրայ, և
հասկնալով բանին էութիւնը, սկսայ համո-
զել աղան՝ որ այդ բաները սուտ են, Փէրի
ըսուածը գոյութիւն չունի. բայց աղան կը
պնդէր և տեսած ըլլալը հաստատել կը ջանար,
և կըսէր որ սեւ կերպարանքով՝ փայլուն աչ-
քերով դէպ ինձ կուգար։ Շատ աշխատե-
ցայ և տեսայ՝ որ չը պիտի համոզուի, ուզեցի
բուն տեսած տեղը երթալ և այն տեղի հան-
գամանքներէն առնելով բացատրութիւն տալ.
խեղճ աղան ամենայն երկիւղածութեամբ և
և դողդղալով հետս եկաւ պահարա՛ը ցոյց
տուաւ, որուն փեղկը բաց էր. բարեբաղ-
դաբար այն կարծեցեալ Փէրին տակաւին հոն

էր. կանչեցի աղան մօտս, որ հեռուն կայ-
նած էր և ըսի. «Տես քու Փէրի կարծածդ և
ամչցիր», և խկոյն բռնեցի իւր ամէն օրուան
սիրած կատուն և իրեն տուի. սակայն աղան
տակաւին կը դողար, այնչափ երեւակայու-
թիւնը խանգարուած էր՝ որ չէր կարող հա-
մարձակիլ կատուն ձեռքն առնելու։ Այսպէս
են ահա այն ամէն կարծեցեալ Փէրիները՝ որք
շատերը կը սարսափեցունեն պարապ տեղը և
ցաւերու տէր կընեն։

Գ.

ԽՈՌԹԼԱԽ

Ահաւասիկ զարհուրեցուցիչ ցնորք մը
եւս, որուն վերջիշեալներուն պէս սուտ եւ
խիստ վտանգաւոր է։ Խոռթլախի վրայ այնչափ
սուտ, անվայել, բանականութեան ընդդէմ
և քրիստոնէութեան հակառակ պատմու-
թիւններ կը լսուին ռամկաց մէջ՝ զորս յիշելն
անգամ ամօթ կը համարինք։ Վասնզի Արար-
չին ամենակարող զօրութենէն զատ՝ ուրիշ
առթիւ անկարելի է որ մարդ մեռնելէն վեր-
ջը կենդանանայ, գերեզմանէն ելլայ և աստին
անդին շրջի, կամ ուրիշ ընտանի կենդանեաց
կերպարանքն առնելով տուն գայ և այլն. ա-
սոնք երեւակայութիւններ, ցնորք և մտա-
ցածին բաներ են։ Հին ատենը կռապաշտից

մէջ աղանդ մը կար՝ որ հոգեփոխութիւն կը դաւանէր. այնպէս կը կարծէին՝ որ մարդ մը իւր մեռնելէն վերջը հոգին ուրիշ կենդանիի կ'անցնի և այնպէս կը շրջի աշխարհիս մէջ. այս պատճառաւ կենդանիի միս ուտելէ կը զգուշանային։ Բայց ամօթ չէ՞ մեզի՝ որ քրիստոնէութեան մէջ տակաւին հեթանոսական մոլար գաղափարներու հաւատանք. ամօթ չէ՞ մեր բանականութեան՝ որ ատանկ խաւարային բաներ առանց 'ի լոյս ածելու, առանց դատողութեան ենթարկելու՝ կոյր զկուրայն ընդունինք։

Ինչպէս որ յառաջ ըսինք, դարձեալ կը կրկնեմք՝ որ երկիւղը և արիւնը այս կերպ ցնորական երեւոյթներ կը ստեղծեն. եթէ որ այս բաները տեսնող կամ լսողներ աներկիւղ վստահութեամբ քննել ուզէին, շուտով պիտի համոզուէին անոնց ոչնչութեան վրայ։ Զարմանալին հոս է՝ որ այս բաները պատմողներուն հազարէն մէկը չը կայ որ՝ ինքն աչօքը տեսած ըլլալը պատմէ. այլ միշտ կըսեն, «Սա անանկ եղեր է, մեր դրացին պատմեր է. այս ինչը պատմեց. ողորմած հոգի մերս կըսէր». և այլն, և այլն։ Ահա ասոնք են իրենց բոլոր փաստերը, որոնցմով համոզուած՝ ոչ կը քննեն և ոչ կը փորձեն, այլ կոյր զկուրայն կընդունին և անոտի ու չընչին բաներէ կը սարսափին 'ի նախատինս և յամօթ իրենց մարդկութեանը. քանզի այս եր-

կիւղը անոնց սրտին մէջ այնչափ տպաւորութիւն ըրած է՝ որ պարապ դագաղին եղած տեղէն չեն կրնար առանց մարդու ընկերութեան անցնիլ։ Մարդ գիտեմ՝ որ դատարկ դագաղ մը սենեակին մէջ դրուած և սենեակին դուռն ալ գոց եղած ատեն՝ չը կրնար այն սենեակին դրան առջեւէն անցնիլ։ Չը գիտեմ ի՞նչ պիտի ըլլայ պատասխանի երկիւղ կրող մէկը, երբ այն սենեակին առջեւէն անցնելու ատեն դիպուածաւ սենեկին մէջ հովէն շարժում մը ըլլայ, և իւր քովէն կատու մը կամ ուրիշ բան մը անցնի. անշուշտ լեղապատառ պիտի ըլլայ, և եթէ ողջ ալ մնայ իւր թիւր կարծեաց վրայ հաստատուած պիտի ըլլայ, վասնզի քննելու քաջութիւնը չը պիտի ունենայ։

Ես ալ տղայութեան ատենս՝ թէ Խոռնկլխէ և թէ մեռելէ վախնալով՝ ոչ գիշերը գերեզմանատունէ կրնայի անցնիլ, և ոչ մեռելի վրայ կրնայի նայիլ, բայց այս երկիւղն փարատեցի խորհրդածութեամբ և փորձով։

Քանզի կը մտածէի՝ որ ուրիշ մարդիկ մեռելին քով կը նստին, զայն կը հանուեցնեն, կը լուան, կը պատնեն և այլն, ու բան մը չեն ըլլար. քիչ քիչ սիրտ առի, գերեզման դրած ատենները դիտմամբ վրան կը նայէի. յետոյ մեռելի ժամանակը տեսնել կ'աշխատէի, հոգեվարի ժամանակ քովը կը մնայի, այսպէսով այս երկիւղն ալ բոլորովին վստահութեան

դառնալու վրայ էր՝ և ահա ուրիշ դիպուած մը բոլորովին ոչնչացուց զայն։ Մենեկիս մօտ ծանր հիւանդ մը կար. օր մը տեսայ՝ որ հիւանդին դրան առջեւ բազմոց մը կար, հետաքրքրութեամբ դէպ'ի հոն մօտեցած ատենս՝ տեսայ որ հիւանդը սաւանի մէջ երկու հոգի բռնած դուրս կը հանեն, որ նոր մեռած էր. տեսայ զայն և քիչ մը կենալէս վերջը՝ հեռացայ անկէց. դէպքը այնպէս բերաւ որ մինչեւ գիշերը սենեակս չը դարձայ. ժամը երեքին երբ սենեակս գալու համար այդ մարդուն դրան քովէն պիտի անցնէի, յանկարծ միտքս եկաւ՝ որ այսօր հոսկէ ննջեցեալ հանեցին. հազիւ այս բանը միտքէս անցաւ, յանկարծ մարդուն դրան մօտ ճանապարհէն երկու քայլ անդին պատին տակը աչքիս ստուեր մը երեւցաւ, այնպէս կարծեցի՝ որ նոյն իսկ այն մարդն էր. այս կէտին երկիւղն ու սարսափը անդիմադրելի կերպով սիրտս պատեց, մարմինս փուշփուշ եղաւ, և կարծես հոգիս մարմինէս բաժնուիլ կուզէր, դողդոջուն քայլերս արագեցի և քանի քայլ չափ հեռացայ այն տեղէն, սակայն անդամներս թուլնալով՝ ալ չը կրցայ յառաջ երթալ և հոն նստայ. ջանացի սիրտս խաղաղեցնել. ետեւս նայեցայ, բան մը չէր տեսնուեր. քիչ մը խորհելէն և հանդարտելէն վերջը՝ ես զիս մեղադրեցի և լաւ ըրի. «Եթէ այդ տեսածս նոյն

իսկ մեռեալն ըլլար, այն անշունչ դիակը ինձ ի՞նչ վնաս կրնար տալ, որ այսչափ սարսափեցուց զիս. թէ որ մեռելն ողջացած ըլլար, ըստ ցնորաբանութեան ռամկաց, դարձեալ ինձ ի՞նչ վնաս պիտի ընէր, որ ծանօթ էր ինձ և թշնամութիւն մը չունէր. կամ՝ թէ որ ուրիշ մարդ մը կամ՝ նիւթ մը ըլլար այն՝ ամօթ չէ՞ր ինձ որ առանց ստոյգ տեղեկութեան այսչափ վախցայ. ուրեմն այս բանին ինչ ըլլալը գիտնալու եւ այս երկիւղը փարատելու համար պէտք եմ քննել»։ Այսպէս առաջադրելով ամէն վտանգ աչքս առի և զգուշութեամբ կամաց կամաց մօտեցայ, զարմացայ. միանգամայն և ես ինձմէ ամչցայ, երբ տեսայ որ այն զիս զարհուրեցնող առարկան ոլորած փսիաթ (հասըր) էր, որուն մէկ կողմը կեղտոտ լաթերու կապոց մը և միւս կողմը աթոռ մը կար. հոն բաւական կենալէս եւ խորհելէս վերջը՝ սենեակս գացի և գրեթէ բոլոր գիշերը այն բանը խորհրդածութեանս նիւթ եղաւ. ալ որոշեցի՝ որ այնուհետեւ ամէն երկիւղի պատճառն հետազօտեմ, քննեմ և ճանչնամ. այս կերպով թէ ես այս վտանգաւոր երկիւղներէն ազատեցայ, և թէ շատերուն ալ ազատութեան պատճառ եղայ. կը խնդրեմ նաեւ ամէն անոնցմէ՝ որք թէ անձնական փորձով և թէ ուսմամբ հասու եղած են այս բաներուն ստութեան և անոնց բուն

պատճառներուն, աշխատին ժողովրդեան մէջէն վերցնելու, որով մեծ ծառայութիւն մը ըրած կըլլան հասարակութեան, ազատելով զիրենք իրենց մերձաւոր դահճէն կամ ընտանի ժանտախտէն ։

Դ.

Ահ, խառախուռա կամ խողշիկ

Ռամիկը երբոր բանի մը բուն պատճառը չը գտնայ, երեւակայական պատճառներ կը հնարէ եւ անով գոհ կըլլայ. ուստի պէտք է զայն համոզել եւ իրաց բուն պատճառները ցոյց տալ ու մոլորութենէ ազատել. մարդուս ընկերականութեան պարտքն է այս ։

Սարսափելի կարծիք մը եւս կայ ռամկաց մէջ, որ խիստ վտանգաւոր է եւ շատ ցաւալի զոհեր կընէ. իբր թէ նոր երախայ ծնող կինը՝ եթէ օր մը սենեկին մէջ մինակ մնայ, աներեւոյթ ոգի մը կուգայ, երախան կը փոխէ, անոր տեղը այլանդակ հրէշ մը կը դնէ, կամ թէ նոյն իսկ մայրը կը խեղդէ. այս ոգիին զանազան անուններ կուտան, ինչպէս Ալ, Խըրդչէկ, Խառախուռա, եւ այլն ։ Մենք չենք ուրանար՝ որ տղաձգանը մինակ ձգելը վտանգաւոր է, բայց այդ տեսակ անուններով ոգիներու գոյութիւնը իսպառ կը մերժենք, վասնզի սուտ են եւ ցնորքը մարմնացուցած են. ուստի այս

ալ կրցածնուս չափ բացատրենք, եւ թողունք որ աւելի կատարեալը աւելի հմուտները խօսին ու բնական պատճառներով միտքերը համոզեն ։

Ինչպէս ըսինք. իրաւ է որ այն միջոցին տղասինքն երախան ծնելէն մինչեւ դրեթէ քառասուն օր՝ վտանգներ կրնան պատահիլ, կրնայ թէ մայրը թէ երախան չարաչար վնասուիլ. վասնզի այն միջոցին մօրը արիւնը սաստիկ գրգռուած կըլլայ, բնականապէս աչքին շատ այլանդակ կամ հաճոյական բաներ կ՚երեւին. մանաւանդ երբ սենեկին մէջ մինակ մնան եւ իրենք իրենց զանազան մտածմանց մէջ իյնան, այն ատեն իրենց խորհածները կը մարմնաւորին եւ աչքերնուն կենդանի՝ շարժող էակներու պէս կ՚երեւին. խորհրդոցը մէջ գաղափարները կ՚աճին եւ կըսկսին սոսկալի հրէշներ տեսնալ, որ իրօք չը կան. ինչպէս որ սաստիկ տենդէ բռնուողներուն ալ կը պատահի ։ Իսկ որովհետեւ տղաձգանը սովորաբար միշտ կռնակի վրայ պառկած կըլլայ, արիւնը դիւրութեամբ շրջան չը կրնար ընել. այս պատճառաւ վրան սաստիկ ծանրութիւն մը կուգայ, շունչը կըսպառի, ձայնը չելլար, սիրտը կը ճնշուի, շարժիլ կուզէ եւ չը կրնար, եւ վերջապէս եթէ մէկը քովը չըլլայ, զինքը չը շարժէ, իսկոյն արիւնը կը խեղդէ զինքը եւ կը մեռնի. ասոնցմէ ողջ մնացողը իրեն գլխուն

եկածը սարսափով և աշխուժիւ կը պատմէ ուրիշներուն, և ասկէ կը ծագի Ալւէսին գոյութիւնը. ուրկէ ազատելու համար կերպ կերպ կախարդական անարժան միջոցներու կը դիմեն։

Այս բանը կրնայ որ և իցէ մարդու ալ պատահիլ, վասնզի ննջած ժամանակը կռնակի վրայ պառկած կըլլայ և միեւնոյն կերպով նեղութիւն կըզգայ, վերջը փոքր շարժումով մը կը ցրուի ամեն ծանրութիւնը։

Իսկ տղայ փոխելուն գալով՝ այսչափ միայն կրնանք ըսել՝ որ տղաբերքի ցաւէն նոր ազատուող մայրը խիստ զգայուն կըլլայ. և այն միջոցին մասնաւորապէս աւելի կը սիրէ իւր զաւակը, այս զգացմամբ և իւր երեւակայութիւնը արդէն խանգարուած ըլլալովը՝ շատ անգամ իրեն այնպէս կ'երեւի որ զաւակը կը տանին, կամ կը մեռցնեն և կամ կը նեղեն. այս երեւոյթով կամ ցնորքով իւր սէրը, գորովը, ցաւը և ցասումը կը շարժի, բնազդմամբ կը մղուի դէպ 'ի զաւակը, սոսկալի աղաղակ մը կը փրցունէ. խեղճ երեխան հանգիստ ննջած տեղէն կ'արթննայ, կը վախնայ և վեր կը ցատքէ, որով անոր փափուկ կազմութիւնը կը վտանգուի, և այն օրէն ալ կ'սկսի ներքին աննշմարելի ախտ մը իրեն հետ աճիլ. բաց յայսմանէ՝ եթէ զաւակը մօրը մօտը ըլլայ, մայրը զայն վտանգէ պաշտպանելու համար յանկարծ վրան կ'իյնայ, կը գրկէ

և կը սեղմէ, որով անտարակոյս անոր մարմնոյն արտաքին ձեւը կը խանգարի և կըլլայ այլանդակ ցուցանք մը։ Այսպէս ահա մայրը կըլլայ տղուն այլանդակութեան կամ ցաւագարութեան պատճառ, և կը կարծէ թէ ոգի մը զայն փոխած է. և որդւոյ որդի այս անձոռնի գաղափարը ժառանգութիւն կը մնայ, և պատճառ կըլլայ անմեղ մանկանց ախտաւոր ըլլալուն. այս բաները հասարակօրէն այն տեղերը աւելի կը պատահին, ուր որ այս սուտ պատմութիւնները յաճախ լսուած և ընդունուած են։

Ով գիտէ, տակաւին հասարակութեան մէջ ինչե՜ր կան զգուշանալու, զոր իբր հարկաւոր բաներ 'ի գործ կը դնեն։ Եթէ քիչ մը մեր բնութեան, կազմութեան և անոնց օրէնքներուն վրայ տեղեկութիւն ունենայինք, դեռ որչափ չարիքներէ ազատ պիտի ըլլայինք. սակայն ագիտութիւնը, մանաւանդ բուն մեր անձին վրայ ունեցած ագիտութիւննիս այսպէս չարաչար կը տանջէ զմեզ և կեանքը կը թշուառացնէ, ծնողքներու սիրելիները ողբերու և հառաչանքներու տակ հալումաշ կընէ, թշուառ էակներ որբ ու անխնամ կը թողու. սակայն մենք տակաւին չունինք այնպիսի կատարեալ գիրք մը՝ որ գիտնական կերպով, ռամկական լեզուաւ ռամկաց հետ խօսէր, ազգու օրինակներով զա-

նանք կրթէր, և իրենց աղէտաբեր նախապա-
շարումէն զիրենք ազատէր. չունինք գիրք մը՝
որ մարդուս կազմութեան, ջղաց կապակցու-
թեան, արեան շրջանին, զգայարանաց սըր-
ւելիք խնամոց և զանոնք բնական կերպով գոր-
ծածելուն վրայ խօսէր, անվնաս պահելուն
միջոցները սովրեցնէր. կամ թէ չունինք այն-
պիսի գիրք մը՝ որ հոգւոյ կարողութեանց վրայ
ընդարձակ, պարզ ու դիւրին ոճով խօսած
ըլլայ, որպէսզի ռամիկն ալ գիտնար՝ թէ ինքը
ինչ կարողութիւններ ունի և այն կարողու-
թիւնները ինչ բանի պիտի գործածէ: Գիրք
մը պէտք է՝ որ բուն ժողովուրդին հետ խօսի,
անոր սիրտն ու միտքը մտնէ, և հոնկէ քաշէ
հանէ այն ամէն խառն 'ի խուռն գաղափար-
ները՝ որոնցմով անպիտան տեղը տոգորուած
է իր ազնիւ ու անմահ հոգին. այլ սակայն
թողուած է այս և ասոր պէս ժողովուրդին
օգտակար մեծամեծ բարոյական պիտոյքները,
և ետեւէ ինկած են սնոտի փառաց, վայրե-
նական պարծանաց, ընկեր ընկերի վրայ յաղ-
թանակ կանգնելու համար զանազան մութ
ու նուաստ միջոցներու կը դիմեն, իրարու
սիրտ կը վիրաւորեն անվայել կերպիւ և անի-
րաւ տեղը: Այն լեզուն, այն միտքը և այն
վսեմ բանականութիւնը զոր բարերար Նա-
խախնամութիւնը շնորհած է իրարու օգնե-
լու և զիրար շահելու, կը գործածուին ընկերին

դէմ իբր զէնք մահառիթ, և գովեստի արժա-
նաւոր սրտերը նախատանօք կը վիրաւորեն:
Սակայն չենք ուզեր չը յիշել նաեւ այն պատ-
ուական գրիչները, որք իրենց հմուտ տաղան-
դով կը ձգնին միշտ պարկեշտ ու օրինաւոր
կերպիւ ողջմտութեամբ պարզել ամէն խըն-
դիրները և հասարակութիւնը կրթել. անոնք
շնորհակալութեան և խորին յարգանաց ար-
ժանի են, այո, երախտապարտ կը դաւանինք
զմեզ այն աննկուն միտքերուն՝ որք ճշմարտու-
թիւնը կը պաշտպանեն, ժողովուրդի պարտքն
ու իրաւունքը կը ճանչցունեն, անոր առջեւ
բացուած մօտալուտ վտանգը մատնանիշ կը
ցուցնեն, անկէ զգուշանալու կերպերը կը
սովրեցնեն. այս է գիտունին պարտքը: Մենք
ալ այսօր այս առթիւ կ'աղաչենք՝ ու կը խըն-
դրենք ձեռնհաս ուսումնական անձերէ որ չը
կասին ճշմարտութիւնը խօսելէ, որ կարող է՝
թէ զիրենք և թէ հասարակութիւնը վտանգ-
ներէ փրկել. բարեհաճին նաեւ ժողովուրդի
կերպ կերպ նախապաշարումները վերցնելու
համար ընտիր ու կատարեալ գիրք մը աշխա-
տասիրել յօգուտ մարդկութեան և 'ի փառս
իրենց անմահ հանճարոյն:

ԻԷ.

Սպարապետն Տուրենա

Թէպէտ այս տեղ այն մեծանուն մարդուն վրայ պատմելիք պատմութիւննիս շատ համառօտ և չնչին բան մ'է, սակայն յայտնի կը ցուցնէ՝ թէ երեւելի ու պերճ անձինք ինչպէս գիտեն համբերել այնպիսի պատահմանց, որոնցմէ տխմարները ու ռամիկները բորբոքուած կը կատղին: Իրաւ է, որ ասոնք դիւրաւ ու շուտ կը բորբոքին նոյն իսկ ամենաչնչին պատճառաց համար. թէեւ ակամայ ալ եղած ըլլայ այն՝ սակայն սոսկալի կերպով կը բարկանան ու կը վրդովին, որովհետեւ իրենց վրայ չը գտնուիր այնպիսի բան մը՝ որ զիրենք ճշմարտապէս պատուելի և յարգելի երեւցնէ, անոր համար անարգուելէ միշտ կը վախնան. և երբոր թեթեւ կասկած մը կունենան՝ թէ ուրիշները իրենցմէ չեն քաշուիր ու զիրենք չեն պատուեր, այս կասկածը իրենց ամբարտաւանութեան անտանելի վէրք կըլլայ, որով բոլորովին արտմութեան և բարկութեան կը գրգռուին: Իսկ ընդհակառակն՝ անուանի և վսեմ մարդիկ խիստ լաւ համոզուած ըլլալով՝ որ իրենց պատիւը այս տեսակ չնչին բաներով չը պակսիր ու չը թեթեւնար, դիւրութեամբ կրնան բանի տեղ չը դնել և հանդարտ սըր-

տով անդորրութեամբ և զանցառութեամբ կը համբերեն: Մանաւորապէս այս բանի համար շատ օրինակներ ունինք հին ժամանակներէն, իսկ մենք նոր օրինակ մը միայն յառաջ բերենք, որ գերահռչակ սպարապետն Տուրէնա մեզ կը ներկայացնէ: Անիկա իւր արիութեամբը պատերազմի մէջ զօրաց ահ ու սարսափ կ'ազդէր, և երկայն ատեն Գաղղիոյ հաստատութեան սիւնն ու փառքը եղաւ: Սակայն իւր հասարակ կենցաղավարութեան մէջ բոլորովին սոսկական ու խոնարհամիտ էր, հանդերձի ու քալելու մէջ պարկեշտ, իւր քաղաքավարութեամբն ամենուն հետ հեզաբարոյ ու քաղցրախօս էր:

Աս ամառուան ժամանակ առաւօտ մը իւր սենեակէն կանուխ ելլելով, և իւր գիշերային հագուստովը՝ բոլոր սենեակէ սենեակ կ'երթար ու կուգար. յետոյ պատուհանի մը մօտենալով՝ իւր արմունկներն անոր վրայ դնելով կրթնեցաւ, և կղակը ձեռքին մէջ առած պարտէզն 'ի վար կը նայէր: Մինչդեռ այն դիրքին մէջն էր, սպասաւորներէն մէկը անիկա իւր ընկերներէն մէկը կարծելով՝ կամացուկ մը եկաւ և մեղմով մը անոր մօտեցաւ, ու ծառայական մտերմութեամբ անոր կռնակին լաւ բռունցք մը իջեցուց, և ծիծաղելով մէկ կողմ գնաց: Սպարապետը հանդարտօրէն դառնալով՝ կըսէ անոր. «Բարեկամ, քու

ձեռքդ շատ ծանր է, ուրիշ անգամ յիշէ, որ խնայելով զարնես»։ Իսկ աշակերտը իր տէրը ձայնէն ճանչցաւ, և երբ դառնալով զանիկա տեսաւ, քիչ մնաց՝ որ վախէն սրտի մեռնէր։ Յետոյ երեսին գոյնը նետած՝ դողալով անոր ոտքը ինկաւ, զղջմամբ ու արտասուօք թողութիւն խնդրեց՝ ըսելով. «Կարծեցի թէ իմ Յոհաննիկ ընկերս է»։ Սպարապետն անխռով ու պարզ դիմօք պատասխանեց. «Ո՛վ դու սխալանքին մեծը աչքին չէ, այլ ձեռքին. կարելի էր՝ որ այդ ողջոյնը Յոհաննիկին ալ ծանր պիտի գար. քեզի խրատ կուտամ՝ որ այսուհետեւ ձայնով ողջոյն տաս, քան թէ ձեռնաշարժութեամբ»։ Յետոյ գետնէն վերցուց զանիկա և քաջալերեց, ու լռութեամբ միայն սենեակը մտաւ, եւ զանիկա թողուց լի ամօթով եւ քաղցր զարմացմամբ։

Արդէն իմաստուն պատմիչը իր պատմութեան սկիզբը պէտք եղած խորհրդածութիւնն ըրած է, ուստի մեզ հարկ չը մնար երկար խօսիլ. միայն քանի մը խօսք ալ այս նիւթիս վրայ մեր կողմէն աւելցնելը անօգուտ չենք համարիր։

Ձեռքիկատակ ընելու սովորութիւնը մարդու համար անպատշաճ բան է, վասնզի մարդուն լեզու ու բերան տրուած է՝ որ քաղցրաբանութեամբ և օգտակար զուարճախօսու-

թեամբ իրար մխիթարեն։ Անասունի գործ է ձեռքով և ոտքով իրարու հետ զզուիլը, մանաւանդ ասանկ անվայել սովորութիւն ընողները՝ երբեմն անխոհեմութեամբ յանկարծ առանց ընկերին գիտութեանը այնպիսի վայրենի կատակներ կընեն, ուրկէ շատ մեծ վըտանգներ յառաջ եկած են և միշտ կուգան։ Ի՞նչ անյարմար և ընկերութեան անվայել բան է, մարդուն հանդարտ եւ առանձնութեան ժամանակ ետեւէն գալ, և յանկարծ ձայնով կամ ուրիշ շարժումով վախցնել։ Խոհականութեան որչափ ընդդէմ է, առանց դիմացինին ով ըլլալը աղէկ ճանչնալու, առանց անոր բընութեան ու յօժարութեան վրայ ստոյգ գաղափար ունենալու, առանց անոր նոյն ժամուն մէջ ինչ վիճակի՝ ինչ խորհրդոց և ինչ յուզմանց մէջ ըլլալը գիտնալու՝ անխոհեմաբար անոր հետ իյնալը, հանդարտութիւնը վրդովել ու շփոթել, բերնով կամ ձեռքով գաղտնի կամ յայտնի։ Մարդ երբեմն այնպիսի խորհուրդներով զբաղած, այնպիսի ըզգացմունքներով վարակուած կըլլայ, որ շատ անգամ ամենահեշտալի առարկաներն ալ իրեն տաղտկութիւն կ'առթեն և զայրոյթը կը շարժեն։ Արդ՝ ասանկ միջոցին մը աստիճան ատելի կըլլան անոր ամեն կատակ, իր աչքին լոյսը՝ ամենասիրելին ալ ըլլայ ընողը՝ կրնայ անհնարին կերպով զայրացնել, գրգռել և մինչև

անգամ անհաշտ ատելութեան պատճառ դառնալ։

Վասնզի խիստ դժուար կրնայ պատահիլ Տուրէնա կոմսին նման մեծահոգի, ազնուամիտ և վեհանձն մարդ, որ պատուաւոր կերպով սրտի հանդարտութեամբ ու մարդավայել ծանրութեամբ պատասխանէ։

Ուրեմն պարտք կը համարիմք յորդորել մեր կատակասէր եղբայրները, որ զգոյշ կենան եւ խոհականութեամբ նկատեն անձը, կերպը, տեղը և ժամանակը։ Նմանապէս ամէն մարդ թող Տուրէնա կոմսին վեհանձնութեանն ու մարդավարութեանը հետեւի, որպէսզի թէ ինքը խաղաղ ըլլայ, և թէ դիմացինը խրատուի և զգուշանայ։

ԻԲ.

Ազատուած գերին

Շատ մարդիկ կան, որոնք ուրիշներուն բարութիւն մը ըրած ատեննին այնքան ատոր անոր կը խօսին և կը հռչակեն, որ մինչեւ անգամ այն բարութիւնն ընդունող խեղճը կ՚ամչեցնեն, և սնափառութեամբ ու հպարտութեամբ այն իրենց առատաձեռնութեան փայլած արժանաւոր յարգն ու ճշմարիտ պատիւը կը կորսնցնեն։ «Ընդհակառակն՝ կըսէր

Սենեքա, պէտք է որ բարերարութիւնը ընողին բերանը գոցէ, և ընդունողին բերանը բանայ»։ Ահաւասիկ յիշատակութեան արժանի օրինակ մը պիտի տեսնենք մենք ալ մեր ժամանակի անձերէն երեւելի մէկը, և պիտի զարմանանք՝ թէ որչափ վերահասու եղած էր նա այս ճշմարտութեան, և որչափ քաջ գիտէր յաջողապէս 'ի գործ դնել այս բանը։

Այս մարդը Մարսիլեա քաղաքը կը գտնուէր. և հանդիպաւոր օր մը երեկոյեան դէմ նաւահանգիստ գնաց, և ամառուան տօթէն զովանալու համար ուզեց նաւակ մը նստելով՝ ծովուն վրայ քիչ մը պտտիլ։ Երբոր նաւավար կանչեց, ներկայացաւ իրեն առոյգ եւ շնորհատեսիլ երիտասարդ մը, եւ իւր մակոյկը անոր մօտեցուց։ Ազնուականը նստաւ այս երիտասարդին մակոյկը. և երթալու ատեն իւր աչքը սոյն աշխոյժ նաւավարին վրայ ձգելով, տեսաւ ակներեւ նորա երեսին շնորհքը, յատուկ ձիրքերը և բարեկիրթ շարժմունքն ու խօսքերը՝ որ բուն նաւավարներու վրայ չէր տեսնուած, և ըսաւ. «Ինձ այնպէս կ'երեւի՝ որ դու յատկապէս սոյն վիճակին մէջ ծնած չես, այլ աւելի զբօսանաց համար միտում ունիս այս արհեստը ուսանելու»։ «Ճշմարիտ է կարծիքդ, պատասխանեց երիտասարդը, յիրաւի ես այս բանիս համար ծնած չեմ, և արդէն իմ յատուկ ար-

Հեստս ալ այս չէ, սակայն հօրս կրած տառապանքը եւ նեղութիւնները հարկադրեցին զիս, որ այս արհեստին մէջ ալ կրթուիմ, տօնի օրերը բաւական բան շահելու համար»։ “Ի՞նչ են քու հօրդ աղէտները”. ըսաւ դարձեալ օտարականը ։ Երիտասարդը արտասուելով պատասխանեց, թէ “Գերի գնացած է նա, եւ ես ալ չեմ գիտեր՝ թէ առանց այսպիսի ծանր աշխատանքներով անոր փրկութեան ճարը հոգալու ինչպէս պիտի կրնամ ազատել զայն”։

“Որչափ ժամանակ կայ, եւ ո՞ւր է հայրդ”։ —“Արդէն վեց ամիս եղաւ, որ խուժաստան (Ալճէզայէր) գերի ինկած է. շատ աշխատութեամբ քիչ մը արդիւնք շահած էր, զորս հաւաքելով բոլորը մէկէն Օմիւանիա գնացող նաւ մը դրաւ եւ ինքն ալ ուզեց հոն երթալ, որպէսզի իւր հնարքով եւ աշխատութեամբը աւելի շահեցնէ ։ Բայց նաւը ծովամարտիկ բարբարոս աւազակներէն բռնուելով, ինքն ալ ստացուածոց հետ գերի գնաց. հիմա անոր ազատութեան համար երկու հազար [illegible] կը պահանջեն. բայց որովհետեւ ինչպէս որ քիչ մը առաջ ըսի, իւր բոլոր ունեցածը իրեն հետ տարած էր, այս պատճառաւ շատ դժուար է մեզ համար այս գումարը գտնել. այսու ամենայնիւ իմ ողորմելի մայրս եւ իմ երկու համեստուհի քոյրերս՝ գիշեր ցորեկ ամեն ճիգ եւ ջանք 'ի գործ դնելով՝ կ'աշխատին, որպէսզի կարողանան թերեւս հաւաքել այն գումարը. ես ալ ահա նոյնը կընեմ, եւ իմ կարողութեանս համեմատ սորվուած եմ տօնի օրերն ալ աշխատիլ. առաջին անգամ ուզեցի, որ ինքզինքս հօրս տեղը գերութեան մատնելով՝ զինքը գերութենէ ազատեմ, բայց իմ այս խորհուրդս իմանալով մայրս ինձ հասկցուց, որ պարապ էր այս առաջադրութիւնս. եւ կասկածելով, որ ես առանց իւր գիտութեան գուցէ կ'երթամ, անձս գերութեան կը մատնեմ, բոլոր նաւապետաց պատուիրեց՝ որ զիս նաւերնին չ'առնեն”։ —“Նորա վրայ տեղեկութիւն մ'՚ առա՞ծ ես, գիտե՞ս, ո՞ւր կը ծառայէ, եւ ինչպէս կ'ապրի արդեօք”։ —“Արքունի բուրաստանաց վերակացուին կը ծառայէ, եւ թէպէտ իւր տէրը մարդասիրաբար կը վարուի հետը, բայց նորա այս մարդասիրութիւնը շատ չնչին մխիթարութիւն է իրեն համար, ինչպէս որ ալ ըլլայ՝ գերի է նա. հեռանալով մեր մէջէն, հեռանալով իւր ամուսինէն, եւ երեք որդւոցմէ՝ զորս միշտ բարեգութ սիրով կը սիրէր անմխիթար կ'ապրի”։ —“Անոր անունն ի՞նչ է”։ —“Ռոբէրտոս”։ —“Քանի՞ տարեկան է”։ —“Գրեթէ յիսուն”։ —“Արդարեւ դու մէկ լաւագոյն բաղդի մը արժանի ես, զոր 'ի բոլոր սրտէ կը մաղթեմ քեզ համար, եւ տեսնելով քու այդ առաքինու-

թիւնդ կը համարձակիմ նաեւս գուշակել՝ որ պիտի հասնիս այն բաղդին»։

Երբ օրը սկսաւ տարաժամիլ, օտարականը հրամայեց՝ որ նաւակը ցամաքը հանէ. և քսակ մը ձգելով շուտ մը այն տեղէն ելաւ, առանց ժամանակ տալու՝ որ շնորհակալ ըլլայ իրեն այն շնորհած պարգեւին համար։ Նոյն յիշեալ քսակին մէջ կար տասնըվեց լուիզ ոսկիներ եւ տասն ալ ն–ռչէլ։ Երիտասարդը նորա այս տեսակ առատասրտութեան վրայ զարմանալով, շատ օրեր հետամուտ եղաւ և շատ փնտռեց զայն վերստին գտնելու և անկէ շնորհակալ ըլլալու համար, բայց չը յաջողեցաւ։

Երկու ամիսէն ետքը՝ օր մը այս երիտասարդը իւր աղքատիկ տան մէջ մինչդեռ մօրը և երկու քոյրերուն հետ սեղան բազմած էր, մէկ մ' ալ ինչ կը տեսնես, յանկարծ Ռոբէրտոս հոն հասնելով՝ ներս կը մտնէ։ Այս յանկարծակի և անակնկալ տեսլեան վրայ իրենց զարմանքէն և խնդութենէն՝ ամենքը մէկէն ճիչ և աղաղակ վերուցած՝ զարմանալու ձայներ կը հանէին, և տարակուսելով՝ իրենց մտքի մէջ կը կարծէին՝ թէ երազօք բան մը կը տեսնեն։ Ռոբէրտոս երբեմն մէկը և երբեմն միւսը գորովալիր սիրով գրկելով՝ կըսէր. «Ով ամուսին իմ, ո՛վ որդեակք իմ, ո՛րքան պարտաւոր եմ ձեզ, ձեր այդ գթութեան եւ սի-

րապատար հոգունակութեան համար։ Դու ի՞նչպէս կարողացաք այսչափ շուտով զիս ազատել. ի՞նչպէս յաջողեցաւ ձեզ այնքան օգնութիւն խրկել. զիս փրկելու համար այն մեծ գումարը, յիսուն լուիզ ոսկին ճանապարհի ծախուցս համար և նաւորդութեանս գինն ալ առաջուց վճարուած. այս ամենը յիրաւի զիս զարմացմամբ կը լեցնէ. թէեւ արդէն կը տեսնեմ զձեզ՝ թէ ո՛ր աստիճան թշուառութեան և անձկութեան հասած էք ինձ համար»։ Կինը սաստիկ ուրախութենէն խօսք մը անգամ չը կրցաւ ըսել, և բերանը չէր բացուեր պատասխան տալու. աճապարեց եւ փաթթուեցաւ անոր, և կարօտանաց ու սիրոյ արտասուք թափելով՝ ինկաւ նորա վերայ։ Իւր աղջկունքը կը մորմոքէին և կ'արտասուէին իրենց հետ, իսկ որդին խելքը գլխէն գնաց և մարեցաւ։ Կինը գետի պէս առատ արտասուք թափելէն վերջը՝ հանդարտելով վերստին գիրկը ինկաւ և դէպ 'ի որդւոյն ակնարկելով՝ ցոյց կուտար ըսելով. «Ահաւասիկ քո փրկիչը»։

«Քու ազատութեանդ համար երկու հազար մաչիկ կը պահանջէին, և մենք ալ տակաւին կէսը հաւաքած չէինք, և արդէն ինչ որ ժողովեր էինք՝ մեծաւ մասամբ երախապարտ եմք որդւոյդ անդադար և անխոնջ աշխատութեանը։ Այս օրհնեալ որդիդ ան-

կասկած պաշտպաններ գտած է , որոնք իրեն առաքինական գործերը տեսնելով՝ շարժուած են օգնելու . քուկին գերութեան մէջ եղած ատենդ՝ կուզէր որ զքեզ փրկելու համար գաղտուկ իւր անձը քու տեղդ դնէ ։ Արդարեւ հիմա քու փրկութիւնդ որդւոյդ կ'ընծայեմք , և մենք երախտապարտ եմք անոր . վասնզի ամեն բան ինքն ըրաւ և ինքը վճարեց և մեզ միայն զարմանք թողուց . տե՛ս, հիմա . ահա՛ իւր ուրախութենէն և խնդութենէն անզգայացած է . շուտով փութանք , և օգնենք իրեն »։ Քոյրերը արդէն գթացած էին անոր վրայ և կ'աշխատէին զգաստացնել, ծնողքն եւս գնացին և իրենց ազգականց հետ շատ մը չարչարուելէն և աշխատելէն զկնի՝ վերջապէս խելքը գլուխը բերին և զգաստացուցին իւր թմրութենէն ։ Աչքերը դէպ 'ի հայրը դարձուց , բայց տակաւին չէր կըրնար խօսիլ ։

Բայց հայրը խոր մտածութեան մէջ ընկղմելով, յանկարծ ուրախութիւնը տրտմութեան փոխուեցաւ . քանզի դէպ 'ի որդին դառնալով՝ ցասման և բարկութեան ձայնով մը ըսաւ . « Ո՜վ Թշուառական, խօսէ՛ շուտ ըսէ՛ ինձ, տեսնեմ՝ ի՞նչ ըրած ես դու ։ Յիրաւի չեմ կրնար առանց սարսափելու իմ անձիս փրկութեան համար քեզ պարտաւոր ըլլալ, որ խիստ ցանկալի էր ինձ ։ Թէոր զիս ազա-

տելուդ կերպը առանց վնասի մ՚ է , ի՞նչպէս և ի՞նչու պահեցիր մօրմէդ ։ Թշուառ եւ ողորմելի գերին մը զաւակ մատաղ հասակիդ մէջ բնաւ հաւատալի չէ , որ այս տեսակ օգնութիւն մը արդարութեան ճանապարհաւ ըրած ու յաջողած ըլլաս ։ Ոսկորներս կը դողան և կը սարսին , երբ միտքս կը բերեմ՝ որ գուցէ որդիական սէրը կրցեր է զքեզ դէպ 'ի ոճրագործութիւն տանիլ ։ Փարատէ՛ իմ այս տարակուսութիւնս , միանգամայն ճշմարտախօս եղիր , նա մանաւանդ . . . »։ « Թող չը խռովի սիրտդ, հայրիկ , պատասխանեց որդին, ոչ ինձ և ոչ ուրիշ մէկուն պարտիս քու ազատութիւնդ ։ Այն օտարականը՝ մայր իմ , կը յիշե՞ս , որ այնքան մեծ առատաձեռնութեամբ այն քսակը ինձ պարգեւ թողուց , և որ շատ մը հարցափորձներ ըրաւ ինձ . անշուշտ և անտարակոյս անկէ է մեր այս երջանկութեան ծագումը ։ Ե՞րբ պիտի ըլլայ , որ անգամ մ՚ ալ տեսնեմ զայն ։ Հոգայիմ՝ ջանամ, գոնէ կարողանամ անոր վրայով լուր մը առնել կամ զինքը գտնել »։ Եւ յետոյ մի առ մի օտարականին իրեն ըրած բոլոր բաները պատմեց հօրը . այսպէսով ահա՛ անոր բոլոր տարակուսութիւնը և կասկածանքը փարատեց և պահոյցուց ։

Ամբողջ երկու տարի 'ի զուր և ունայն տեղը փնտռելէն ետքը , առաւօտ մը յանկարծ

հանդիպեցաւ անոր նաւահանգստին վրայ, ինկաւ անոր ոտքերը և փաթթուելով կըսէր. «Ով տէր իմ, միայն բարերարս, իմ յենարանս, կեանքս և իմ երջանկութիւնս։ Օտարականը գլխն վերցնելով՝ ըսաւ. «Ի՞նչ է այս, ի՞նչ կ'ուզես։ —«Ո՛հ, տէր իմ, միթէ կարելի՞ է՝ որ մոռացած ըլլաս տարաբաղդ Մուքէրասի որդին՝ որուն հայրը գերութենէ ազատեցիր»։ —Ուրիշը կը կարծես զիս, բարեկամ, ես օտարական մը եմ և տակաւին անցեալները եկայ այս տեղ։ Իրաւ է, ճշմարիտ կըսես, բայց անգամ մը եւս եկած ես հոս՝ քանիցից ամիս առաջ. միտքդ բեր այն շրջանը, զոր իմ նաւակիս այն այս նաւահանգստիս մէջ այս ծովուն վըրայ ըրիր. յիշէ այն քսակը՝ զոր ինծ ընծայեցիր, այն կարելցութիւնը՝ զոր իմ հօրս ազէններուն համար ցոյց տուիր, այն մանրամասն հարցաքննութիւնը՝ զոր ըրիր անոր վըրայով։ Ո՛հ, տէր իմ, դու երկնքէն խրկուած հրեշտակ մ' էիր, դու ամբողջ գերդաստան մը երջանիկ ըրիր, որ հիմա ուրիշ բան չը խնդրեր, բայց միայն անգամ մը տեսնել և ամբաւ օրհնութեամբ լեցնել զքեզ։ Օ՛ն, կ'աղաչեմ, փութա՛, զանց մ' ըներ մեր խնդիրքը ... Եկ։ —«Արդէն ըսի քեզ, բարեկամ, որ մարդ շատ դիւրաւ կրնայ խաբուիլ, թերեւս դուն ալ... —«Ո՛չ, տէր իմ, ես այս մասին բնաւ սխալած չեմ. ձեր պատկերը խիստ լաւ տպաւո-

րուած է մտքիս մէջ, զոր չեմ կրնար ուրիշի մը նմանցնել։ Եկ, կ'աղաչեմ»․ ըսաւ՝ և շատ սիրալիր խօսքերով սկսաւ անոր ձեռքէն բռնել, ու քաղցրութեամբ բռնադատել։

Ժողովուրդէն շատերը նոցա շուրջը հաւաքուելով՝ նոցա այս բանակռուութիւնը կը դիտէին։ Օտարականը արդէն փառօք լեցուած էր. բայց փոխանակ մնապարծելու և մեծանալու, արիութեամբ կրցաւ իշխել իւր կրից և զսպել իւր շարժմունքն ու սրտին արդար գրգիռը, և հաստատապէս որոշեց գաղտնեաց մէջ մնալ։ Երիտասարդին հետ երթալու ատեն՝ միշտ անոր ըսածները կը ծաղրէր, մինչև որ պարապ միջոց մը գտնելով՝ ժողովրդեան բազմութեան մէջ խառնուեցաւ և անհետ եղաւ։ Մինչև ցարդ գաղտնիք պիտի մնար այս բանը, թէոր Մարսիլիացի վաճառականի մը մահուան ժամանակ իւր հաշուակիցքը նորա թղթերուն մէջ եօթն հազար հինգ հարիւր դահեկանի մուրհակ մը չը գտնային՝ որ ուղղուած էր Մուքէրասա—Մ`էնի անուն Կատիկեցի մէկուն. և երբ անկէ այս գումարին հաշիւը պահանջեցին, այս մեծանուն Անգղիացի լումայափոխը պատասխանեց, թէ Մարսիլեացի Մուքէրաս անուն մարդու մը Ալժառան (Ճէզայիր) գերի ինկած միջոցին՝ անոր ազատութեան համար նոյն գումարը ծախս ըրած էր Բուրդեայ դիւանին վերակացու՝

Մոնդեսքուեայ սեպուհ Սեկոնդատեցի կա-
րոլոսի հրամանաւ ։ Այս գերապանծ մար-
դը սովորութիւն ունէր շատ անգամ Մարսի-
լեա քաղաքը երթալ իւր Մագթաղինէ տի-
կին քրոջը այցելութիւն եւ տեսութիւն ը-
նելու համար, որոնք Մարսիլիոյ մէջ հարս-
նացած էր ։ Իւր ըրած այս առատաձեռնու-
թիւնը՝ զոր հիմա մենք պատմեցինք, արդարև
մեծ գովութեան արժանի կը հանդիսացնէ իւր
փառաւոր անունը, քան թէ իւր խնամա-
տիրական գործերը՝ որոնցմով արդէն անմա-
հացած էր ։

Այն մարդիկը, որ իրենց ըրած աղեկու-
թիւնը իրենց բերնով կը հռչակեն, անոնք՝
որ իրենց տուած ողորմութիւնը կամ գոր-
ծած մէկ առաքինական գործը կը գովեն ու
գովքներ կը փնտռեն, անոնք կ'ըսեմ, որ հռ-
չակուելու և ներբողուելու համար բարերա-
րութիւն կընեն, և այս նպատակաւ տեսակ
տեսակ միջոցներ կը գործածեն՝ որ իրենց ա-
նունը յայտնեն, ամէնեւին արժանի չեն բա-
րերար, ողորմած, առատաձեռն և առաքինի
ըսուելու. Նոքա չեն գործեր լաւութեան հա-
մար, այլ իրենց բարութիւնը ցածութեամբ
ծախել կուզեն գովեստով, որ այն իսկ է ի-
րենց վարձքը ։ Հապա ո՞ւր թողունք այն չա-
րամիտները՝ որ փոխանակ մէկուն աշխատա-

նաց վարձքը ըստ օրինի վճարելու, փոխանակ
անոնց հաւատարմութեան և անխոնջ աշխա-
տութեան համար առատութեամբ վարձատ-
րելու և նուէրներով ու ընծաներով քաջալե-
րելու, անգթութեամբ կ'աշխատցնեն, և հա-
զար խնդիրներէ ու աղաչանքներէ յետոյ չնչին
բան մը տալով՝ կ'ուզեն միանգամայն՝ որ երախ-
տաւոր սեպուին. այն տուածնին շնորհք ու պար-
գև կը համարին, մինչդեռ այն աշխատութեան
քառորդն ըսող ուրիշները մեծամեծ շահեր,
անդորրութիւն, ապահովութիւն, փառք և
համարում կ'ունենան ։ Այսպիսիք պէտք է
խորհին, որ իրենց ըրածը մշակին վարձքը կըտ-
րել է, որ Աստուծոյ վրէժխնդրութիւնը կը
շարժէ. պէտք է յիշեն, որ զրկողութիւն ը-
նել է և անհաւատարութեամբ ու անարդա-
րութեամբ բնութեան օրինաց դէմ մեղան-
չել է. Թող գիտնան ու համոզուին, որ զըր-
կեալներուն բողոքը շուտ կը հասնի արդար
Աստուծոյ ամենալսելի ականջին, և անոր ամե-
նատես աչքը շուտ կը տեսնայ աշխատաւո-
րին տառապանքն ու արտասուքը ։ Այն ա-
տեն զրկողը պիտի ընդունի իւր հատուցու-
մը, պիտի աշխատի ու չը պիտի յաջողի, պի-
տի ցանէ ու չը պիտի քաղէ, պիտի տայ ու
չը պիտի կրնայ առնուլ. Թէոր աշխատաւորէն
զրկածը վաստակ կը սեպէ՝ անոր կրկնապատիկը
պիտի տուժէ և ուրիշ անօգուտ տեղ պիտի

վատնէ. իւր անյաջողութեան համար Աստուածոյ պիտի կանչէ, և այն չը պիտի լսէ, վասնզի Թշուառին ձայնն ու հառաչանքը մէջ տեղ պիտի մնայ և արգիլէ։

Իսկ ճշմարիտ բարերարը, իսկական ողորմած առաքինին միմիայն բարերարութիւնը պարտք ճանչնալով կընէ, մարդասիրութեան քաղցր զգացումէ շարժուելով կընէ. առանց ակնկալութիւն մը ունենալու, առանց գովեստի սպասելու և առանց իսկ ճանչցուիլ ուզելու կը գործէ, միմիայն աղէկութիւն մը ըրած ըլլալուն վրայ իւր սրտին մէջ զգացած ուրախութիւնը և մխիթարութիւնը շատ կը սեպէ. այսու ամենայնիւ՝ դարձեալ թող չը կարծէ որ իւր ըրածը թաքուն կը մնայ. տիեզերաց վրայ սաւառնող և հսկող արդարութեան Աչքն՝ ինչպէս ամբարիշտը կը պատժէ, նոյնպէս ալ առաքինին կը վարձատրէ և կը պըսակէ, և ամենափառաւոր կերպով այն ծածկուած յարգելի անունը դուրս կը հռչակէ ու կ'անմահացնէ. Հերիք է որ գործողը ստոյգ առաքինի ըլլայ, ինչպէս որ ներկայ պատմութեանս մէջ տեսանք. և ինչպէս որ միտք ու աչք ունեցողը միշտ ալ կը տեսնայ։

Ուրեմն աշխատեցէք սնափառութենէ, անիրաւութենէ եղկելութենէ հեռու փախչիլ. խոնարհամտութիւն, բարեսրտութիւն, մարդասիրութիւն, գութ և կարեկցութիւն

ունեցէք. ճշմարիտ առաքինի և ողորմած եղէք. այն ատեն ձեր փառքն ու պատիւը խիստ մեծ կըլլայ թէ՛ մարդկան և թէ Աստուծոյ քով։

ԻԹ.

Եղբայրն առատասիրտ

Արդէն այս պատմութեան ընթացքին մէջ, եղբայրական սիրոյ վայելուչ օրինակ մը՝ այն երկու եղբարց պատմութեան մէջ յառաջ բերած էինք։ Բայց ասոր վրայ անգամ մ'ալ խօսելու ստիպուեցանք. որ թէպէտ և միւսին խիստ նմանութիւն ունի, բայց դարձեալ չենք ուզեր զանց ընել։

Եղբարց մէջ եղած սէրը նոյն իսկ բնութեան ներգործութիւնն ըլլալով, պէտք էր երկու կողմէն եռանդոտ և յարատեւ ըլլար. սակայն շատ անգամ կը տեսնենք՝ որ քիչ քիչ երթալով կը պակսի ու կը ցամքի, և շատ անգամ կը տեսնենք, որ արենակից և խիստ մերձաւոր եղողները՝ անվայել վարմունքով մը իրարու հետ անհաշտ և ոխերիմ թշնամւոյ պէս կը վարուին. շատ պատճառներ կան, որք կը թելադրեն զմարդիկ՝ որ այսքան պարսաւելի կերպով բնութեան խիստ յարգելի կապը խզեն, բայց ամենէն աւելի մեծ պատճառը շահախնդրութիւնն է։ Արդարեւ մար-

դիկ շահախնդրութիւնը իրենց համար յարգելի կուռք մը շինած՝ անիրաւաբար անոր կը դիմեն, և անարժան կերպով ամեն բան կը զոհեն անոր համար ։

Երանի՜ թէ՝ մեր պատմած այս ողորմածութեան օրինակները մեր մէջ գեղեցիկ նախանձաւորութիւն մը զարթուցանէին, և յօժարեցնէին զմեզ այս տեսակ մեծահոգի և փառաւոր գործքերու ։

Ալպերտոս—Պուալոերի շատ ժամանակէ 'ի վեր մեծ աշխատութեամբ կը ջանար մոլութեանց մէջ խորասուզուող իւր Ֆերրանտ որդին մոլութիւններէն դարձնել, և ուղղել նորա շաւիղը դէպ 'ի ուղիղ ճամբուն վրայ՝ ուսկից որ թշուառաբար խոտորած էր ։ Բայց անօգուտ եղան իր ջանքերը, սիրայորդոր խրատները ամենևին ներգործութիւն մը չէին ըներ անոր վրայ, կշտամբանաց և սպառնալեաց ամենևին մտադրութիւն չէր դարձներ, և պատիժներն ալ զայն զգաստացնելու տեղ՝ ևս առաւել կը գրգռէին ։ Աստաբաղդ հայրը չը գիտնալով ինչ ընելիքը՝ զանիկա աշտարակի մը մէջ բանտարկած և շատ ամիսներ այնտեղ թողուցած էր. սակայն այս ալ ընելով՝ օգուտ մը չը.քաղեց զատ, աւելի ևս զայն իւր կամապաշտութեան ու յանդգնութեան մէջ հաստատած էր ։ Բարեմիտ հայրը համբերելով՝ հոգին բերանը հասած էր, և արդէն իւր

որդւոյն անուղղայ և չար ընթացքէն վշտացած էր ։ Երբօր մ' ալ տղան լրբենի համարձակութեամբ ու անարգական խօսքերով յանդըգնեցաւ իւր հօր դիմադարձութիւն ընելով՝ զայն վշտացնել, հայրն ալ իւր միտքը դրաւ՝ որ շուտով մը զայն իւր անէն արտաքսէ. ու հազիւ թէ անոր մէկ փոքրիկ բաժին մը տալով՝ զայն իւր ամեն բաժիններէն և ստացուածքներէն զրկեց, ու իւր բոլոր ժառանգութիւնըն ալ Արրիգոս փոքր որդւոյն թողուց. վասնզի Ֆերրանտ որչափ որ իւր հօրը սրտին վիշտ ու պատւոյն անարգանք էր, այնչափ ալ Արրիգոս բնութեամբ ու վարքով հաճելի էր և իւր հօրն ալ պարծանք ու մխիթարութիւն։ Ֆերրանտ այնքան լրբացած էր, որ այս անհընարին և.քստմնելի պատիժներէն ոչ թէ միայն չը վախցաւ ու չ'ապաշխարեց, հապա ևս առաւել ուրախութենէն խելքը գլխէն գընաց սկսաւ աւելի ևս խնդալ և բերկրիլ իւր վստահաւոր ազատութեանը վրայ, որ անկէ վերջը սանձարձակ մնալով՝ ևս առաւել իւր ամեն մոլութիւնները պիտի կարողանար ուզածին պէս կատարել ու շատցնել. բայց իւր հօր շնորհած փոքրիկ բաժինն երթալով կը պակսէր, և անմտաբար վատնելու սկսած ըլալով՝ քիչ ատենուան մէջ բոլորովին հատաւ, և շուտով չքաւորութեան հասաւ, ու սկըսաւ խելքը գլուխը ժողուելով մտածել և իւր

անցուցած գարշելի ու անուղղայ կենաց վըրայ զղջալ. շատ անգամ իւր սրտին մէջ խորհեցաւ՝ որ դառնայ իւր հօրը քով, և անոր ոտից առջև խոնարհելով՝ թողութիւն խընդրէ, բայց մէկ կողմանէ սաստիկ կ՚ամչէր, և միւս կողմանէ կը կասկածէր՝ որ գուցէ կը մերժուի իւր խնդիրքը. այսպէս ահա երկու արգելքներ սկսան իւր այս օգտակար խորհուրդը ջնջել. և երբ դեռ այս խորհրդոց մէջ կը տատանէր, յանկարծ հօրը անակնկալ մահը վրայ հասաւ, որով իւր յոյսն ալ հատաւ՝ ջընջուեցաւ, ու բոլորովին թշուառ անանկութեան սաստիկ տառապանաց մէջ ինկաւ:

Ի վերջոյ տեսնելով Ֆերրանտ՝ որ ուրիշ կերպով հնարք չը կայ ազատելու, փութաց և մինչև այն ժամանակ վարած զեղծ ու անառակ կեանքը յօժարութեամբ փոխելով, բոլորովին տարբեր վարուց նուիրեց իւր անձը. հեռացաւ ամեն գէշութիւններէն ու մոլեկան կիրքերէն, և իւր ժառանգութենէն կորնցուցածը՝ որ ձեռք բերելը ալ անկարելի կը համարէր, սկսաւ սրտի մտօք աշխատիլ, և այն կորուստին տեղը իւր վաստակովը լեցնել: Արրիգոս իւր մեծ եղբօրը գարշելի ընթացքէն դէպ ՚ի լաւ ընթացքի փոխուիլը շուտով իմացաւ. և որովհետև ինքը խելացի կորովախոհ և քաղցրասիրտ մէկն էր, այնքան չէր ուրախանար իւր ստացած մեծ գումարին վը-

րայ, որքան որ կը ցաւէր իւր մեծ եղբօր անկարգութեանցը վրայ, ուստի այսպէս շատ մը նորա բարուց անակնկալ կերպիւ ուղղուիլը լսելով՝ չափազանց ուրախութեամբ լըցուեցաւ: Բայց որովհետև ՚ի հարկէ ստիպուած և կարօտութենէ յառաջ եկած զղջումը անհաստատ կըլլայ, ու երբոր այն հարկը կամ կարօտութիւնը շուտով փարատի, կընայ ըլլալ, որ անոր հետ այն զղջումն ալ փարատի, և դարձեալ առաջուան վիճակը մտցնէ. ատոր համար խորհեցաւ զանիկա մի քանի ժամանակ ևս աղքատութեան տառապանաց մէջ թողուլ, որպէսզի անով իւր նոր փոփոխութիւնը և նպատակը աւելի հաստատուն հիման վրայ կայանայ. նաև իւր անձնական փորձովը անառակ և մոլեկան կեանքը բաղդատելով մաքուր՝ պատուաւոր և քաղցր կենցաղավարութեան հետ, ինքնիրեն իմանայ բարեհամբոյր կենցաղավարութեան որչափ նախամեծար ու գովելի ըլլալը: Երբոր բաւականի չափ տեղեկացաւ անոր հաստատուն կերպով ուղղութեան մէջ ընթանալը, կամաց մը իւր հօր կտակը առաւ, ու իր գըրած նամակին մէջ ծրարելով՝ անոր ուղարկեց:

Ահաւասիկ գրած նամակին օրինակը:

“Սիրելի եղբայր իմ”:

“Քեզ կը դարձնեմ այն թուղթը՝ որով մեր հայրը զիս իւր ամեն ստացուածոց ժառանգ-

կարգեց։ Սակայն Թէոր մինչ ցարդ կենդանի ըլլար մեր հայրը՝ անշուշտ հաւաստի եմ, որ այս գործը ուրիշ կերպով պիտի անօրինէր։ Նա քու առաջին ընթացքիդ նայելով, զրկեց զքեզ ամեն ժառանգութենէ, սակայն ես քու հիմակուան ընթացքդ տեսնելով՝ կը հաւանիմ ուրախութեամբ դարձնել քեզ քու սեփական ժառանգութիւնդ։ Ուրեմն ընդունէ յօժարութեամբ այս արդարութեան և պարտաւորութեան գործը, զոր սրտի անկեղծութեամբ քեզ կ'ուղարկէ»։

Եղբայր քո
Արրիգոս

Տարեգլուխ էր, երբ Ֆերրանտ այս նամակը հանդերձ ընծաներով ընդունեց, որուն վրայ յիրաւի երբէք չէր կարող յոյս ունենալ։

Արրիգոսի սիրապատար խօսքերը Ֆերրանտին սիրտը շարժեցին, նորա անհամեմատ առատասիրտ ողորմածութիւնը զայն զարմացուց և շուարեցուց. բայց չուզելով իր անձին վրայ փոքրոգութեան մեղադրանքը ընդունիլ, և իր եղբօր ողորմածութիւնն ու առատասրտութիւնը չարաչար գործածել, ետ դարձուց այն կտակագիրը, այսպէս պատասխանելով իր եղբօր։

«Գերարժան և աննման եղբայր»։

«Քու ազատ բնութեանդ ազնուութիւնը

ինքնին կ'արդարացնէ մեր հօր արդէն ըրած կարգադրութիւնը։ Ուստի ինձ ուղարկածներդ նորէն ձեզ կը դարձնեմ, ըստ որում ձեզմէ ուրիշ մէկ մը չեմ կարող գտնել զանոնք արդիւնաւորող եւ անոնց արժանաւոր։ Եւ որքան որ մեր հօր կենդանութեան ժամանակ անարգեցի նորա հանճարեղ խորհուրդները, այնքան ալ պէտք է՝ որ ես հիմա պատուեմ և մեծարեմ նորա յիշատակը և անոր վերջին կամքը։ Քու եղբայրական սէրդ, եւ առ իս ունեցած յարգանքդ ու մեծարանքդ նորէն ստանալս չափազանց երախտապարտութեան կը շարժէ զիս»։

Եղբայր քո
Ֆերրանտ

Արրիգոս երբ այս պատասխանը ընդունեց, առանց յապաղելու անմիջապէս անոր քով գնաց և անոր փաթթուելով այսպէս ըսաւ. «Մեր արժանապատիւ և խնկելի հօր յիշատակը չը կրնար արժանաւոր կերպիւ մեծարուիլ, մինչեւ որ նպատակը չը մեկնուի և չը լուծուի, ինչպէս որ ինքն ալ եթէ ողջ ըլլար՝ պիտի ընէր, որովհետեւ թէեւ իրեն ըրած այս գործը յառաջ իրաւամբ և ուղիղ կրնար սեպուիլ, սակայն հիմա անիրաւ կը համարուի։ Ուրեմն հիմա ես անոր տօնելի անուամբը կտակագիրը բոլորովին կը ջնջեմ,

և դուն ալ բնութեան քեզ պարգեւած իրաւանց տէր եղիր, որուն քու բարելաւութեամբդ վերստին արժանի կը գտնուիս։ Զայս ըսելով՝ խիստ առանց դանդաղելու դէպ 'ի կրակը մօտեցաւ, ու կտակագիրը հրոյ ճարակ ըրաւ։ Եւ ահա այս տեղ գեղեցիկ վէճ մը և սրտաշարժ հակառակութիւն մը ծագեցաւ երկու եղբարց մէջ։ Ներիգոս կըստիպէր իւր ամէն իրաւունքները կորսնցնող եղբօրը՝ որ վերստին ընդունի իւր ժառանգութիւնը. իսկ Փերրանտ ալ կը պնդէր և կը հաստատէր՝ որ իրեն չը պատկանիր այն ստացուածքը, և կըստիպէր՝ որ ետ առնու։ Վերջապէս յաղթող հանդիսացաւ Ներիգոս, և 'ի հարկէ ստիպեալ հաւանեցան՝ որ գոնէ երկուքն եւս հաւասարապէս իրենց հայրենի ժառանգութիւնը վայելեն առանց իրարմէ բաժնուելու։ Փերրանտ ալ այս պայմանին հաճութիւն տալով, անկէց վերջը իրենց կենաց բոլոր օրերուն մէջ, մէկ խորհուրդ և մէկ սիրտ ունեցան իրարու հետ, և այնպիսի կարեկից ու սիրալիր կեանք մը վարեցին, որ մինչեւ այն ատեն անանկ գորովական սիրով և բերկրութեամբ լեցուած երջանիկ կեանք անցնող եղբայրներ չը տեսնուեցան։

Եղբայրական սիրոյ կապը այնքան սուրբ, այնքան սիրուն և այնքան յարգանաց ու մեծարանաց արժանի է, որ մէկը չէ կարող իւր սրտէն քակել զայն, մինչեւ որ մարդկութիւնը չ'ուրանայ և գազանական սիրտ մը ընդունի։

Եղբայրութեան միայն վսեմ անունը ըզգացողին սիրտը կը շարժէ. եթէ բարեկամութիւնը քաղցր պատուական և օգտակար է, մեր եղբայրէն աւելի ո՞վ կրնանք գտնալ վըստահութեան արժանի բարեկամ, քանի որ մէկ արիւն, մէկ մարմին ենք, և մէկ տան մէջ մէկ տեղ ծնած, սնած ու մեծցած ենք։ Եթէ երկու եղբայր իրարու հետ համաձայնութիւն չեն կրնար ունենալ, թող չը յուսան՝ որ օտարին հետ մինչեւ վերջը կարող կըլլան միաբանիլ։ Ոչ ապաքէն մարդասիրութեան, մինչեւ անգամ աստուածսիրութեան հիմը եղբայրսիրութիւնըն է։ Ով որ իրեն ամէնէն մօտ եղողը ըստ արժանւոյն սիրել յարգել և մեծարել չը գիտեր, ի՞նչպէս կրնայ իւր հեռաւորը սիրել։

Ինչպէս մարդիկ կան, որոց մոլեկան վարքը խորշելի և իրենց անառակութիւնը ատելութեան արժանի է, նոյնպէս կան եղբայրներ, որ արդարեւ իրենց անզգամութեամբն ու լրբութեամբն, անմարդավայել եւ անառակ վարքովը սիրոյ անարժան կը գտնուին. բայց դարձեալ բարեսիրտ և ազնուական եղբայր եղողը, միշտ անոր դարձին և ուղղութեանը կըսպասէ, և բնաւ սիրոյ կայծը իւր սրտին մէջէն չը մարեր, որով աւիթը ձեռք ձգածին

պէս՝ նորէն զայն կը գգուէ կը յարգէ ու կը խնամէ ։

Բայց ի՞նչ ըսենք այն անմիտ եղբայրներուն, որ ոչինչ պատճառներով իրարու հետ կ՚աւրուին, զիրար կը նախատեն և կը վշտացնեն ։ Ի՞նչ անարգանք, ի՞նչ նախատինք թափենք այնպիսի եղբարց ցնորած գլխուն, որ կամ մեծամտութեամբ, կամ փառասիրութեամբ, և կամ աւելի ճիշդն ըսելով, ագահութեամբ ու ընչաքաղցութեամբ իրարմէ կը բաժնուին, իրար կը զրկեն, մէկմէկու ունեցածին վրայ կը նախանձին, իրարու անկման և թշուառութեան վրայ կը զուարճանան, որուն պատճառը շատ անգամ իրենք կըլլան ։

Արդարեւ այսպիսեաց եղբայրանունը տալն ալ մեղք է, քանզի անոնք մարդ անգամ չեն ։ Բիւր նախատանաց և անարգանաց արժանի է նոցա այսպիսի անվայել գործերը ։ Նոքա չեն զգացած, և չեն կրնար զգալ եղբայրական սիրոյ և համակամ միաբանութեան քաղցրութիւնը՝ զուարճութիւնն ու անոր բազմաբեղուն արդիւնքը ։ Թէպէտ այնպիսիք միշտ կըրած են իրենց այս անզգամութեան պտուղը, թէպէտ վերջը իրարու կարօտ եղած են, բայց ո՞ւր է զգացող՝ խրատուող և օրինակ առնողը ։

Լ.

Բարեբաստիկ փոփոխութիւնը

ԵՒԴՈՔՍԻՈՍ և Ղեւոնդ՝ երկուքն եւս միջակ վիճակի մէջ ծնած էին. սակայն առաքինութեամբ և հանճարով իրենց վիճակակիցներէն խիստ գերազանց էին ։ Նոյնք իրենց ուսման ընթացքը միասին աւարտած էին, և մանկութենէ սկսեալ՝ սերտ սիրով և հարազատ բարեկամութեամբ իրարու հետ միացած էին, և մինչեւ իրենց կենաց յետին շունչը հաստատուն և անխռով տեւեց այս անկեղծ մտերմութիւնը ։ Սակայն այս հաստատուն և աստուածահաճոյ կապակցութիւնն ու սրտակից բարեկամութիւնը երբեք արգելք չեղաւ իրենց, որ իւրաքանչիւրին բնաւորութեան և յարմարութեան համաձայն տարբեր կենցաղավարութիւններ ընտրեն ։ Ուստի Եւդոքսիոս քաջայանդուգն, փոյթեռանդ և զգաստ մէկն ըլլալով, ու մեծագործութեանց համար կարեւոր ձիրքեր ունենալով, քաղաքական գործոց մէջ մտաւ, և իւր յաջողակութեամբն ու արդեամբը յառաջադիմելով, հետզհետէ մեծամեծ պաշտօններու և աստիճաններու և առաւել ճոխագոյն փարթամութեանց հասաւ ։ Իսկ Ղեւոնդ հեզահամբոյր՝ խաղաղասէր և առանձնասէր լինելով, միշտ խառնի-

խուռն զաղմունքներէ և բազմութեան շփո-
թութիւններէ հեռացած՝ իւր անձը բոլո-
վին իմաստասիրական գիտութեանց մէջ կլը-
թելու անխռով աշխատանաց նուիրեց, որոց
մէջ այնքան յառաջացաւ և օր ըստ օրէ զարգա-
ցաւ, մինչեւ որ իրեն ժամանակակից քաղ-
գիտնականաց անունն ու պատիւն իսկ ժա-
ռանգելու արժանացաւ։ Այս երկու չնաշ-
խարհիկ բարեկամք, թէպէտեւ պաշտօնով ի-
րարմէ տարբեր և աստիճանաւ անհաւասար
էին, սակայն միշտ իրարու բարեկամ և մտե-
րիմ մնացին, ու միանգամայն ամուրի ապրե-
ցան բաւական ժամանակ։ Վերջը այրական
կատարեալ հասակին մէջ՝ համախորհուրդ կա-
մեցան և որոշեցին՝ որ իրենց ազատ պարանոց-
ները ամուսնութեան և որդեծնութեան ծանր
լծոյն ծառայութեանը տակ խոնարհեցնեն. և
որովհետեւ Եւդոքսիոս արքունական ծանրա-
տաղտուկ և աղմկալից գործոց հոգերէն յոգ-
նած եւ խոնջեցած էր, իսկ Ղեւոնդ՝ քա-
ղաքի մէջ գտնուող ժողովրդեան բազմաշշուկ
խռովութենէն արդէն ձանձրացած էր, ուս-
տի խորհրդակցելով՝ որոշեցին հեռանալ այն
զաղմունքներէն և դաշտավայրաց ապահո-
վութեանը ու խաղաղութեանը դիմել, և վե-
րըստին սերտ սիրոյ և բարեկամութեան գը-
գուանաց մէջ, միշտ իրարու մօտ և անանջատ
խնդամտութեամբ վարել իրենց թանկագին

կենաց մնացած սակաւ օրերը։ Եւդոքսիոս
ըստ որում ճոխագոյն փարթամութեան տէր
էր, վասնորոյ կարողացաւ զուարճալի և
խիստ հեշտալի տեղի մը մէջ ագարակ մը գը-
նել, և անոր գնած ագարակին մօտ փոքրիկ
կալուած մ'ալ Ղեւոնդ արծաթով առաւ,
զոր ինքն քիչ քիչ իւր ջանքովը զարդարեց և ճո-
խացուց. և իւրաքանչիւրն իրենց ամուսիննե-
րով մէկտեղ խաղաղութեամբ պատսպարուե-
ցան այն տեղ։

Ժամանակէ մը յետոյ գրեթէ մի և նոյն
ատենուան մէջ, իրենց կիները ծնան։ Եւ-
դոքսիոսին կինը ծնաւ մի կայտառ արու մա-
նուկ. իսկ Ղեւոնդինը խիստ գեղեցիկ և հը-
րեշտակատեսիլ դուստր մի, որոց համար եր-
կու մտերիմ բարեկամքն չափազանց ուրախա-
նալով, իւրեանց մէջ ցնծութեան տօն կա-
տարեցին։ Բայց աւաղ, որովհետեւ նոցա
այս հրճուանքը շուտով դառն սուգի փոխ-
ւեցաւ. քանզի Ղեւոնդի համեստուհի ա-
մուսինը գեղատեսիլ մանուկը ծնանելէն քիչ
ժամանակ վերջը՝ անհնարին ցաւերով պաշա-
րուելով, իւր ծաղկափթիթ և առոյգ հասա-
կին մէջ տարաժամ մեռաւ, և իւր այրը դառն
կսկծանաց մէջ թողուց։ Այս ցաւալի կորըս-
տեան համար Ղեւոնդի փափուկ սրտին դա-
ռըն և կսկծալի սուգը, երկար ժամանակ ան-
մխիթար և անփարատելի մնաց. և եթէ Եւ-

դոքսիոսի նման հարազատ և հոգեհատոր բարեկամ մը չունենար, որ կ'աշխատէր կարեկցութք իւր մտերմին ցաւը թեթեւցնելու, և եթէ նորա սիրալիր քաջալերութիւնները, հոգերն ու ջանքերը իրեն օգնականութեան չը հասնէին, չը պիտի կրնար երկար ժամանակ այն բազմափշտ աղէտքին դիմանալ։ Վերջապէս բարեկամին սիրայորդոր խօսքերովն ու խնամքներովը մխիթարուելով՝ սկսաւ քիչ քիչ իւր սրտին մորմոքը թուլնալ ու քաղցրանալ. բայց ուրիշ ձանձրալի մտմտուք մը նորէն զինքը կը վշտացնէր, որովհետեւ իւր կողակցին մահուամբն ինքն առանձին անօգնական մնալով, չէր գիտեր՝ թէ ժամանակին ինչպէս պէտք էր հրահանգել և կրթել իւր գեղանի և նորաբողբոջ դստրիկը, որ ոչ միայն խոհեմ ու խելացի՝ այլ նաեւ բարեձեւ և բարեշնորհ օրիորդ մը ըլլալ կ'ուզէր, և իգական սեռի վայելուչ ու ազնուազգի տիկնոջ մը պէտք եղած ամեն բաներու մէջ քաջահմուտ ըլլալ կը փափագէր։

Օր մը՝ երբ իւր սովորութեան համեմատ մտերմաբար Եւդոքսիոսին հետ կը խօսակցէր, իւր սրտին այս մեծ հոգը անոր յայտնեց, և միանգամայն աղաչեց, որ իւր մատաղահաս դուստրը դեռ չը մեծցած բարեհաճի յանձնել իւր բարեպաշտուհի ամուսնոյն, որպէսզի Եւդոքսիոսին ամուսինը իւր խնամոց ներքեւ

առնելով զայն՝ մայրաբար սնուցանէ և կրթէ, քանզի գիտէր՝ որ մանկան կրթութիւնը օրօրոցէն պէտք է սկսի։ Եւդոքսիոս իսկոյն խոստացաւ կատարել սիրով իւր մտերմին խնդիրը, բայց ըսաւ. «Ասոր փոխարէն ես ալ քեզմէ բան մը կը խնդրեմ։ Իմ այս դեռաբողբոջ որդիս՝ զոր Տէրը ինձ պարգեւեց, կը բաղձամ, որ իրեն թողելու ճոխութեանցս ու փարթամութեանցս նա արժանի լինի. կը փափաքիմ, որ նա ոչ միայն ժառանգէ զանոնք, այլ նաեւ գիտնայ բարւոք վայելել, և պէտք եղած տեղը միայն գործածել։ Սակայն որովհետեւ ես մինչեւ ցարդ աշխարհական զբաղմանց և ծանրատաղտուկ հոգերու վարժած լինելովս, երբէք չեմ կրցած քաջ և խոհական հրահանգութեան ու կրթութեան պէտք եղածը մտածել, և արդէն ես միայնակ չեմ կրնար այս բանը կատարել։ Ասկէ շատ կը կասկածիմ՝ որ իմ որդիս եթէ սկսի գիտնալ և ճանաչել իւր վիճակի հարստութիւնն ու պերճութիւնը, զոր եթէ Տէրը կամի ինքը պիտի ժառանգէ, գուցէ իւր ապառնի այս յաջող վիճակին յուսովը ամբարտաւանելով, սկսի նմանիլ այն մարդկան, որոնք կը կարծեն՝ թէ պերճութեանց և փարթամութեանց գիրկը ծնողները պէտք չունին բնաւ ոչ հրահանգութեան և ոչ անձնական արժանաւորութեան. և թէ՝ ընչից և հարստութեան շատութիւնը

այն ամէն կամաւորական պակասութեանց թերին կը լեցնէ , որով չափէ դուրս կը սխալին ։ Այս պատճառաւ կուզեմ՝ որ իմ զաւակըս մինչեւ բաւական ժամանակ իւր վիճակը չը գիտնայ . և որովհետեւ հրահանգութեան մասին քեզմէ աւելի լաւագոյն դաստիարակ մը չեմ կրնար գտնել , ասոր համար կը բաղձամ՝ որ քանի որ երկուքն ալ՝ աղջիկըդ ու տղաս քաջառողջ և դեռաբողբոջ են, և իրենց վիճակին դեռ անծանօթ , տեսակ մը փոփոխութիւն ընենք մեր մէջ . դու իմս առնելով՝ քուկդ ինձ տաս , և այսպէսով երկուքն ալ սնուցանենք իբրեւ մեր հարազատ զաւակունքը ։

Ղեւոնդ այս պայմանին յօժարութեամբ հաւանեցաւ , և ամենայն սիրով ամէն փոյթ ու խնամք ձեռք առնուլ խոստացաւ Եւդոքսիոսի որդւոյն իրեն բաղձանքին համեմատ իւր ուզած կրթութիւնը տալու համար ։ «Այժմ կը մնայ միայն՝ ըսաւ . որ այս բազմօգուտ փոփոխութիւնը քու կնոջդ անհաճոյ չըլլայ , և կարող ըլլայ նա հանդուրժել և դիմանալ, տեսնելով որ առ ժամանակ մի իւր որդին իրմէ հեռացած և իրենը չեղած պիտի սեպուի » ։ «Ես ինքս՝ պատասխանեց Եւդոքսիոս , յանձն կ՚առնում այս փոյթը՝ զայն ես այս օգտաշատ գործոյս հաւանեցնելու համար » ։ Եւ որովհետեւ Եւդոքսիոսին կինն ալ շատ

հանճարեղ և կորովամիտ կին մ՚ էր , դիւրաւ խելամուտ եղաւ այս բանին , մանաւանդ որ քաջ գիտէր , թէ որու՞ կը յանձնէր , եւ որու՞ կ՚աւանդէր իւր աղնիւ մարգարիտն ու անգին գանձը՝ իւր մէկ հատիկ որդին , և մանաւանդ որ բնակութեամբ ալ իրարու մօտ ըլլալով, երբոր ուզէր դիւրաւ պիտի կարենար զբօնուլ իւր որդւոյն հետ ։ Այս ծնողավայել խելացի խորհուրդը իրենց մէջ հաստատելով, կատարումն ալ չ՚ուշացուցին , և փոփոխութիւնը կատարելով՝ իւրաքանչիւրն այնքան մեծ սէր և խնամ՛ ցցուց իւր որդեգրին , մինչ զի մէկը չէր կրնար՝ ոչ թէ գիտնալ, այլ գէթ կասկածիլ, որ երկու որդեգրեալ կամ փոխխեալ մանուկները զիրենք սնուցանողին բուն զաւակները չեն ։ Երբ հետզհետէ երկու մանուկներն ալ զարգացան հասակաւ և ուսմամբ, հաւասար սիրով և խանդաղատանօք յարեցան իրենց երկրորդական ծնողաց , և այնչափ յաջողակութեամբ յառաջացան բարի կրթութեանց մէջ, մինչեւ իւրեանց ծնողաց ցնծութեան և անպատում հրճուանաց առարկայ եղան ։

Ամենէն աւելի Փլաբիոս երիտասարդն ինքզինքը իրօք Ղեւոնդին որդին կարծելով, և իւր կարծեցեալ հօրը աղքատութիւնը նկատելով, հասկցաւ՝ որ անիկա Աստուծմէ յետոյ յոյսը իւր ջանքին և վաստակին վրայ միայն

կրնայ գնել, եւ կամելով ու փափաքելով՝ որ շուտով հասնի այն աստիճանին, որով միայն պիտի կրնար իր արդիւնքներով և շահով այնպիսի բարեբարոյ հօր մը գործակից խնամոց փոխարինել. ուստի այնքան եռանդեամբ ուշադիր եղաւ անոր սորվեցուցած ամեն բաներուն, որ մինչեւ քիչ ժամանակի մէջ գրեթէ խելահաս եղաւ ամեն տեսակ գիտութեանց, և իր հասակէն վեր հանդիսանալով ուսմանց և գիտութեանց մէջ, իբրեւ չնաշխարհիկ բան մը զարմացուց իր բոլոր ծանօթները :

Եւ որովհետեւ նա շատ անգամ Եւդոքսիոսի տունը կ'երթար, այն տեղ նորա դըստերագիր պարկեշտափայլ օրիորդը տեսնելով, որ շնորհաց գեղեցկութեան՝ ամեն խոհական և համեստ բարոյից մէջ աճելովը, որ ըստ օրէ կը վայելչանար, ուստի մեղմով և սակաւ առ սակաւ սիրտը անոր հետ սիրով կապուեցաւ: Բայց և այնպէս օրիորդն ալ իր սուրբ և անարատ սիրով պատանւոյն սիրոյն կը համապատասխանէր. համայն և այնպէս պատանին ինքզինք աղքատ համարելով, երբէք չէր յուսար՝ որ այնպիսի մեծատուն օրիորդ մը կրնայ իրեն գրաւել, որ այնչափ հարստութեանց միակ ժառանգ կը կարծէր. նոյնպէս օրիորդն ալ չը կրնալով ու երկնչելով մտածել այնպիսի բան մը, որ գուցէ իր ծնողաց անհաճոյ պի-

տի երեւէր, ուստի երկուքն ալ գաղտնի կերպով այս սուրբ սիրոյն երկու կողմէն բոցաքեալ հրովը 'ի ներքուստ կը տոչորէին, առանց իրարու իսկ յայտնել համարձակելու :

Մինչեւ սոքա այս կերպով կը տագնապէին, Եւդոքսիոս կը տեսնէր՝ որ իր սիրելի և միածին որդին հասակաւ և ուսմամբ կատարեալ եղած՝ և զգօնութեամբ ալ իր բաղձանքէն և յուսացածէն աւելի բարգաւաճած էր, փափաքեցաւ որ զայն իր քով կանչէ, և անոր ծագումը իրեն յայտնէ. ուստի Պեւանդէն շատ գոհ ըլլալով և իր շնորհակալիքը անոր մատուցանելով, խնդրեց անկէ՝ որ իր հարազատ՝ ուսումնապերճ որդին իրեն շնորհէ: Իսկ Պեւանդ՝ որ զպատանին իր հարազատ որդւոյն պէս կը սիրէր, տեսնելով որ կը պարտաւորի անկէ բաժնուիլ, և այս քաղցրագոյն մխիթարութենէն զրկուիլ, սաստիկ վշտացաւ և սիրտը մորմոքեցաւ: Այսու ամենայնիւ տեսնելով՝ որ հարկ և պատշաճ էր այս խնդրոյն զիջանիլ, պատանին առանձին մէկ կողմ՝ տարաւ, և հրամայեց ըսելով. «Եւդոքսիոսին քով գնա, որովհետեւ քեզ ըսելու կարեւոր բան մ' ունի». և սրտի մորմոքման և անդադար արտասուելուն պատճառաւ չը կրնալով ուրիշ բան ըսել, լուռ ու մունջ հեկեկալով՝ հայրական գորովալիր սիրով շատ անգամ համբուրեց զայն. եւ յետոյ անկէ գրեթէ

բռնութեամբ բաժնուելով, եւ անոր հրա-ժեշտի վերջին ողջոյնը տալով մեկնեցաւ։

Երիտասարդը այս հեծեծանքներէն, գոռալէն և միանգամայն ցաւալի տեսարանէն ազդուած, որոց պատճառը չէր կարող իմանալ, և ոչ գէթ գուշակել, շատ տեսակ տարակուսանաց մէջ ինկաւ, և հազար կերպ մտմտուքներէ յուզուելով՝ գնաց Եւդոքսիոսին դիմացը կեցաւ։ Կարօտալի ցնծութեամբ և եռանդագին սիրով լեցուած հայրը, նոյն ժամայն վազեց իւր արժանաժառանգ որդւոյն հետ գրկախառնուելու, և անպատում ուրախութեամբ ողջագուրելով գգուեց, որով քաջալերեցաւ պատանին՝ որ քիչ մը յառաջ շըփոթած և շուարած էր. բայց որովհետեւ պատանին դեռ ամենեւին չէր գիտեր և չէր կարծեր՝ որ իւր հարազատ հայրը այս է, ուստի երբ իւր բուն հօրը բերնէն լսեց իսկական եղելութիւնը, և ճանաչեց այն խոհական և բազմօգուտ փոփոխութիւնը՝ զոր իւր հայրը Ղեւոնդին հետ ըրած էր, ապշեցաւ և գըրեթէ մտքով բոլորովին վերացաւ։ Վերջապէս խելքը վրան ամփոփելով՝ Եւդոքսիոսի ոտքն ինկաւ, և սիրապատար նորա ոտքերուն փաթթուելով ըսաւ. "Այն կաթոգին սիրոյ գործքերը և խնամքները՝ զորս դու շատ անգամ ինձ ցոյց տուած ես, շատ լաւ կրնային ինձ գուշակել տալ՝, որ դու էիր իմ հայրս, զոր

իմ օգտին համար ինձմէ ծածկած էիր, և զոր կամեցար հիմա յայտնել։ Բայց պատուական և խոհեմազարդ հայր, մի՛ երբէք կրնար հաւատալ, թէ Ղեւոնդին իմ վրայ անպատում սիրով ցոյց տուած այն գորովալի խնամքները՝ հայրական գթութենէ և ծնողական քաղցր սէրէն յառաջ եկած չէին. մի՛ կը տարակուսէր, թէ ես անոր զաւակը չէի։ Մանաւանդ թէ ո՞ր հայրը երբէք իւր որդին խնամեց, այնպէս՝ ինչպէս որ Ղեւոնդը զիս։ Մեծապէս կ'ուրախանամ ուրեմն տէր իմ, զքեզ իմ հայրս ըլլալդ ճանչնալով, որուն այս կեանքս կը պարտաւորիմ, այս կեանքս՝ որ այսուհետեւ բոլորովին քուկդ պիտի լինի. այլ եթէ կարելի է, կ'աղաչեմ, որ ներես ինձ հայր պատուական, ներէ՛ ինձ, որ ես յարգեմ և մեծարեմ երկրորդական հօր պէս զայն, որուն խիստ մեծ պարտականութիւն ունիմ։ Վասնզի անոր ինձ համար յանձն առած անընդհատ աշխատունաց քրտունքը և անդուլ ճգունքը զիս կըրթելու, սնուցանելու, հրահանգելու, միով բանիւ բանական մարդ ընելու համար քաշած նեղութիւնները՝ զիս անոր երախտապարտ կը կացուցանեն մինչեւ մահկանացու կենացս յետին շունչը. և եթէ իմ վաղանցուկ կեանքըս իսկ երկրիս վրայ ամբողջ հազար տարի տեւելու լինէր, ինձ այնպէս կը թուի՝ որ չը պիտի կրնայի նորա անչափ երախտեաց ըստ ար-

ժանուցն փոխարինել։ Սակայն դու ես՝ ով պատկառելի հայր իմ, ըսաւ Փլաբիոս, կարող ես անոր փոքրագոյն տրիտուր մը տալ, որ այդ տրիտուրը զիս երջանկութեանս վերջին ծայրը պիտի հասցնէ, և բարօրութեանս պսակը պիտի լինի։ Եղիսաբէթը՝ այն համեստափայլ օրիորդը՝ զոր դու և Նազելի մայրս դաստիարակեցիք, կրթեցիք և սնուցիք մինչև ցարդ իբրև ձեր դուստրը, նա շատ ժամանակէ 'ի վեր և մինչև ցարդ իսկ իւր գեղեցկութեամբն՝ և առաւել ևս իւր շնորհօքն ու բարի բարքովն ու վարքովը իրեն գրաւած է իմ սիրտս, այնպիսի եռանդոտ և մաքրագոյն սիրով մը՝ որոյ նմանը գրեթէ բնաւ երիտասարդի մը սրտին մէջ բորբոքուած չէ. բայց ես չէի համարձակեր անոր հետ ամուսնանալու փափաքիլ, որովհետև անոր վիճակը իմինէս խիստ գերազանց կը համարէի, այս պատճառաւ՝ միայն սրտանց նորա վրայ գուրգուրալը և հոգւով զայն սիրելը բաւական համարեցայ, առանց բնաւ սրտիս խանդակաթ սէրը մէկու մը յայտնելու՝ և ոչ իսկ Եղիսաբէթին։ Արդ՝ եթէ դու, հայր իմ սիրելի, կուզես՝ որ դստեր ձեռօք հայրը վարձատրես, կը համարձակիմ աղաչել, որ հաճիս ներել ինձ՝ որ սրտիս այս ծածուկ խորհուրդը Եղիսաբէթին յայտնեմ, և զինքն ինձ գրաւելով հաղորդ լինի քու բարեացդ, որով երկուքնիս ալ քեզ և Ղե-

ւոնդին անխափան հետևելով, միշտ հարազատ և երախտագէտ որդիներ ըլլանք»։

Եւդոքսիոս այս խօսքերուն վրայ աւելի ևս ուրախանալով, իւր որդին վերստին գրկելով՝ «Ով որդեակ իմ, կըսէ, դուն՝ որ մինչև ցայսօր քաղցրագոյն յոյս եղար, և որ ներկայիս մէջ իսկ քու այդպիսի երախտագիտական ազնիւ զգացումներովդ իմ երջանկութիւնս կը պսակես, քու այդ բարեսէր խորհուրդներըդ որչափ մեծ և բարձրագոյն կը հանդիսացնեն քու առաքինութիւններդ, և որչափ կը համոզեն զիս իմ պարտաւորութեանցս մեծութեանը վրայ, և աչքիս առջև կը բերեն այն անփոխարինելի երախտիքը՝ զոր իմ մտերիմ բարեկամս Ղեւոնդ ինձ ըրաւ զքեզ այնպիսի մէկ մը յարդարեց, կազմեց, որ ատկէ աւելին անհնար էր սպասել, ինչպէս որ այժմէն իսկ կը ցուցնես քու վրայ անոր մեծ աշխատութեան պտուղը։ Որովհետև այն անզուգական մարդուն առաքինութիւնը, որ քաղցր ախորժանօք և հաճութեամբ ուրիշի միշտ աղէկութիւն ընելու կը փափաքի, եթէ այն մարդուն անհամեմատ առաքինութիւնը ուրիշ պարգեւի մը ցանկար, չը պիտի գտնուէր բան մը՝ զոր ես իրեն համար չընէի, սակայն հիմա նա կարող է իւր ուզածին պէս՝ բոլոր ունեցածներս ինձ հետ բաժնել։ Իսկ իւր շնորհալի դստեր գալով՝ որուն մինչև ցարդ

իբրեւ իմ հարազատ զաւակս նայեցայ ու խընամեցի, անոր հետ ամուսնանալ ուզելովդ ոչ այնքան անոր և իւր հօրը, որչափ որ ինծի կը պարգեւես դու աշխարհիս մէջ ինձ ամենատենչալի և խիստ փափաքելի բանը, ինչու որ ես անոր հօրմէն աւելի կը բաղձամ, որ դու անոր հետ ամուսնանաս, և այդ մեր երջանկութիւնը պիտի պսակէ։ Այդ խորհրդովդ և գործովդ, դու՝ որդեա՛կ իմ սիրելի, ոչ միայն իմ, այլ նաեւ քու նազելի մօրդ կարօտալիր բաղձանաց կատարումը փութացուցիր։ Բայց հիմայ՝ որովհետեւ քու մայրդ ալ կը փափաքի զքեզ տեսնել, զքեզ գրկել, և քեզմով իւր գորովալիր սրտի բաղձանքը լեցնել, երթա՛նք որդեա՛կ, որովհետեւ այսպիսի անզուգական ուրախութիւն մը պէտք չէ ուշացնել։

Մայրը՝ որուն ամեն մէկ վայրկեանը հազար տարի կը թուէր, երբ տեսաւ իւր սիրելի որդին, սաստիկ գորովէն և անպայման ցընծութենէն սիրտը կը թրթռար, և զգացումները զսպել չէր կրնար, զայն համբուրելէ և գգուելէ չէր դադրիր ու չէր կրնար կշտանալ։ Սակայն գորովագութ և պարկեշտ մօր ուրախութիւնըն ու խնդութիւնը եւս առաւել բազմապատկեցաւ, երբ լսեց՝ որ իւր զղջացեալ և խոհեմ որդին վերստին սատանայէն հանդերձ՝ Եղիսաբէթը չը պիտի կորսնցնէր, ու իրմէն հեռանալու դժբաղդութիւնը չը պիտի ու-

նենար, զոր կը սիրէր բուն իրմէ ծնած զաւակին պէս։

Իսկ ազնիւ օրիորդը մինչեւ այն ատեն անցած բոլոր եղածները լսելով՝ թէեւ առաջին անգամ ապշեցաւ, սակայն վերջը հանդարտելով՝ ուրախացաւ մեծաւ ուրախութեամբ. վասնզի տեսաւ՝ որ մինչեւ այն ատեն իրեն քաղցր ու պատուական եղածներէն առանց բաժնուելու, այսինքն առանց Եւդոքսիան ու մայրագիրը թողելու, զորս իւր ծնողաց պէս կը յարգէր ու կը մեծարէր, ահա վերջապէս յարգելի և մեծարոյ հայր մի և պատուական այր մի եւս կը շնորհուէր իրեն։

Վերջը Ղեւոնդ իրենց քով կոչեցին, որ լի ցնծութեամբ վազեց, իւր սիրուն դուստրը գրկեց, և հայրական գորովալիր զգացմանց զեղուն առատութեամբ գգուեց ու խանդաղատեցաւ. և հաւասար խնդութեամբ եւ հրճուանօք հարսանեաց հանդէսը կատարելով, մէկ տան մէջ 'ի միասին բնակեցան ու մէկ ընտանիք եղան. և այս սիրոյ եւ միաբանութեան մէջ, նոցա բարեկամութիւնը և իրարու վրայ ունեցած ազնուական սէրը, արեամբ և ազգակցութեամբ եղած կապէն ու միութենէն աւելի ամնելի եւ պատուական սուրբ սիրոյ կապակցութիւն մը եղաւ, որով ճշմարիտ բարեկամութեան ամենավսեմ օրինակն ընծայեցին աշխարհի։

Ահա այսչափ և առաւել եւս մեծամեծ օգուտներ իրարու կը մատակարարեն մտերիմ անշահախնդիր և սուրբ սիրով յօդեալ բարեկամք. և ատոր համար է՝ որ կըսէ Իմաստունը, թէ «Բարեկամ հաւատարիմ, աշտարակ ամուր. և որ եգիտ զնա՝ եգիտ գանձ»։

Այս հատընտիր բարեկամները ոչ թէ միայն մտերմական սիրոյ, այլ և ճշմարիտ ծնողական գորովի և պարտակատարութեան ազդու օրինակ մը կը ներկայացնեն, քանզի մանկանց կրթութիւն տալու համար իրենց նախնական վիճակէն՝ օրօրոցէն կըսկսին. գիտնալով որ բուն կրթութեան առենն՝ այն առենն է, ապա թէ ոչ՝ դժուարաւ կ՚ուղղուին մանկունք. և գալէն խորհրդով զաւակնին իրարու տեղ կը փոխանակեն։ Իսկ արդ՝ եթէ մանկանց դաստիարակութիւնը օրօրոցէն պարտի սկսիլ, ո՞վ պիտի լինի նոցա կրթիչը. ո՞վ կայ օրօրոցին մօտ, բայց եթէ նոցա մայրերը. ապա որչափ պէտք է դաստիարակել մայր ըլլալու սահմանուող մարդկութեան մասն եղող կինը, յորմէ կախումն ունի արական սեռը և բոլոր մարդկութեան վիճակը, ազգի մը յառաջադիմութիւնն ու յետադիմութիւնը, կանգնումն ու կործանումը։ Այո, եթէ ազգի մը իգական սեռը կրթուի ըստ օրինի, այն ազգը իւր հիմը վէմի վրայ հաստատած ըլլալով՝ չը սասանիր. կամ եթէ աշխարհի

մշտափոփոխ դիպուածներէն սակաւ ինչ խոնարհելու ալ ըլլայ, դարձեալ շուտով կը կանգնի. որուն օրինակները շատ են, թէ հին եւ թէ նոր ազգաց մէջ։ Իսկ իգական սեռը անկիրթ եղող կամ թերակիրթ եղող ազգաց վիճակը արդէն բազմաթիւ է, և ներկայ՝ մեր աչաց առջեւ, ուստի ատոր վրայ երկար խօսիլ պէտք չէ, մանաւանդ թէ աւելորդ է։ Աւա՜ղ, որ այժմ նոյն իսկ մեր ազգին մէջ վարժապետաց և վարժարանաց ինչ պաշտօն ունենալը լաւ չէ հասկցուած։ Ես այնպէս ուսած և համոզուած եմ, որ մանկանց մաքուր սրտին ու մտաց վրայ պէտք է գրեն ուսուցիչք աստուածսիրութիւն և մարդասիրութիւն. սակայն անոնց մաքուր ու անարատ սրտերն ու մտքերը իրենց անկիրթ և ադէտ մայրերու ձեռօք անթիւ նախապաշարմունքներով և անգոյ սրհաւրքով կը պատին, կը պաշարին և կը սեւնան. և ուսուցիչք ստիպուած են տարիներով միայն այն սեւութիւնը ճերմակցնելու աշխատիլ, և շատ անգամ ալ աշխատութիւննին պարապը կ՚ելլայ. և գիտուք թէ մանուկ մը, ինչ սեռէ ալ որ լինի, թէ որ տասը տարի դպրատան մէջ կենալով ուսմունք և կրթութիւն պիտի առնէր, հինգ տարին՝ այն դատարկ սեւութիւնը սրբելու համար կ՚անցնի, և ատոր ցաւը ժամանակի յարգը գիտցողները միայն կրնան զգալ։

Քիչ հարուստ հայրեր կան, որք ազնիւ Աւգուստոսին պէս իրենց որդւոց թողուն բազմամիլթեր ստացուածոց հետ՝ նաեւ զա-նոնք բարւոք գործածելու կարեւոր հրահան-գը, ինչպէս որ արդէն անհրաժեշտ պարտ-քերնին է. զի հարուստ լինել և հարստու-թիւնը ի՛նչ բանի համար՚ի գործ ածելը չգիտ-նալը թշուառութեանց գլխաւորն է . . . :

Այնպիսի ճշմարիտ հօր մը որդիք որչափ ալ աշխատին, չեն կարող ծնողաց տեսակ տե-սակ ճգանց և աշխատանաց գործով վարձքն փոխարինել: Մեզ օրինակ առնենք մանկունք, զՓլաբիոս խոհական պատանին, և աշխատինք մեր հարց ուրախութիւնը պատկելու և վիշտը թեթեւցնելու: Ծերութիւնը երկրորդ ման-կութիւն ըսել է. և եթէ նոքա մեր մանկու-թեան ժամանակ զմեզ պահեցին, խնամեցին և սնուցին, պահենք, սնուցանենք և խնա-մենք ուրեմն մեք ալ իրենց ծերացեալ ման-կութեան ժամանակը. վասնզի ինչ ալ ըլլայ, մեր ծնողք միշտ մեզ համար յարգելի և մեծա-րելի պիտի ըլլան, վասնզի միշտ նոքա գութ և խնամք ունեցած են մեր վրայ, և մեր կեանքը անթիւ վտանգներէ պահելով՝ մեր լաւու-թեան աշխատած են. ուրեմն չը վշտացնենք զանոնք, քանզի անոնց վիշտը մեր երջանկու-թեանն ալ կը վնասէ:

Ներկայիս մէջ ցաւօք սրտի կլսեմ, որ

այսպիսի մտերիմ և հարազատ բարեկամներ, պարտակատար և արթուն ծնողքներ, և մա-նաւանդ երախտագէտ, ծնողասէր, աստուա-ծասէր, իրենց չափը և մարդկութեան վայե-լուչը ճանչցող զաւակներ գտնելու համար, պարտի մարդ Դիոգինեան լապտերն ունենալ. և զայն ունենալէն ետքն ալ՝ կարծեմ գտնելը քիչ մը տարակուսելի պիտի ըլլայ, կամ խիստ քիչ պիտի գտնուին:

Ծնո՛ղք, եթէ կամիք երջանիկ լինել, և եթէ կամիք ձեր որդիքը երջանիկ ընել, կրթե-ցէք զնոսա նախ՝ աստուածսիրուե̃ ու մարդա-սիրութեան մէջ, և երկրորդ՝ աշխատասիրու-թեան մէջ: Իսկ եթէ ատոր հակառակը ընել, և իրենց անհոգութեամբ իրենց զաւակները անաստուած և անկիրթ ու աշխարհիս համար անտանելի բեռ թողուլ ուզողներ կան, թո՛ղ քաջ գիտնան այնպիսիք նախ՝ որ ընդհանուր մարդկութիւնը և ազգութիւն մը, նման է տան մը, որոյ անդամ կը համարուի իւրաքան-չիւր անհատ. ուստի և իւր զաւակը ան-կիրթ, անուսումն և անաստուած թողուն, հանրութեան, իւր անձին և իւր զաւակին թշնամի է, և Աստուծոյ առջեւ ալ պատաս-խանատու, և յետեւապէս ինքն կը լինի որ-դի կորստեան . . . :

Ինձ այնպէս կը թուի, թէ այս սրտաշարժ և ախորժալուր պատմութեան թարգմանու-

թիւնը յատկապէս և խորհրդաւոր կերպիւ ինձ պատահեցաւ. քանզի ինչ որ խոհեմացեալ պատանին Փլաքիոս աստուածասէր և առաքինի Ղեւոնդին համար ըսաւ, նոյնը կը համարձակիմ ըսել և ես մեծապատիւ Կարապետեան Պօղոս էֆէնտի բարերար հայրագրիս համար, մանաւանդ ես անկէ եւս առաւել գոհանալու եւ երախտագէտ ըլլալու պարտաւորութիւն ունիմ։ Քանզի Ղեւոնդ Նուդաքսիոսին բարեկամն էր, և արդէն խրատու օգնելու պատրաստական էին. իսկ իմ ազնիւ բարերարս՝ հօրս ի՞նչն էր, և մեր տեսած էր զայն կամ անունը լսա՞ծ էր արդեօք. ո՛չ երբէք —։ Այս ուրեմն, քանի որ դէպքը այնպէս բերաւ որ ես ծնողացս ծոցէն յափշտակուելով և որպէս գերի ծախուելով՝ իրեն ձեռքն հասայ, միթէ իմ հետ գերիի մը պէս վարուելու իրաւունք չունէ՞ր, սակայն նա այնպիսիներէն չէ՛. նա գիտէ իրեն ընկեր ճանչնալ ամեն մարդիկ, և նա ուսոյց ինձ իւր բերնով, որ ես ալ նոյն ճանաչողութիւնը ունենամ սրտիս մէջ։ Ես 'ի բուն ծնողաց չէի սորված և չէի ճանչցած զԱյն Աստուած, ինչու որ անոնք ալ երկնից կամարը եւ ուրիշ մասնաւոր արարածներ կը պաշտէին մինչեւ հիմա։ Բուն ծնողքս ծնան զիս միայն ըստ մարմնոյ, և միայն ապականացու մարմինս սնուցին. իսկ սա երկրորդ հայրըս ու բարերարս՝ իւր համայն բարեպաշտ

ընտանեօք հանդերձ՝ ծնաւ զիս ըստ հոգւոյ վերստին ծննդեամբ սուրբ աւազանին, և ըղձեռեալ հոգիս վերածեաց 'ի կեանս։ Ուրեմըն մահկանացու մարմինս կը պարտիմ առաջնոյ, իսկ անմահ հոգիս կը պարտիմ վերջնոյ. սակայն երկուքն ալ համայն լութեամբ եւ տիրապէս կը պարտիմ այն մարդացեալ՝ անմահ և մարդասէր Փրկչիս՝ որ ասաց. «Այլ եւս ոչխարք են իմ, որք ոչ են յայսմ գաւթէ, և պարտ է ինձ և զնոսա ածել այսր. զի եղիցին մի հօտ և մի հովիւ»։ Ես ահա իւր անսուտ բերանոյ խոստումը կատարեց նաեւ անարժանիս վրայ, և մտոյց զիս իւր անբաւ ողորմութեամբն իւր ընտրեալ հօտին փարախը։ Ողորմեցէք, կ՚աղաչեմ, մեղաւորիս համար, որպէսզի չը սայթաքիմ և իմ յոյսէս չը վրիպիմ։ Իսկ վերոյիշեալ մեծախնամ հոգեւոր հօրս մասին թէև կամէի քանի մը խօսք ալ ըսել, և իւր աստուածահաճոյ գործքերէն քանի մը հատն ալ ընթերցողաց ներկայացնել, սակայն քաջ գիտնալով որ նա այնպիսիներէն է՝ որք չեն կամիր որ իրենց աջին գործածը ձախը գիտնայ, անոր համար լաւը խոհեմութիւն կը համարիմ, թողլով որ իւր գործերը հռչակեն իւր անունը։ Ես ըսածներուս համար ալ իւր քաղցր ներողամտութիւնը կը հայցեմ, ծանուցանելով խոնարհաբար՝ որ սրտիս երախտագիտական բուռն եռանդէն առիթեալ խօսեցայ. և

այս իմ տկար գրչէս, բայց շնորհապարտ սըր-
տէս բղխած քանի մը խօսքերը կը յուսամ,
որ հաճելի կըլլայ իմ բարերար հօրս ։

ԼԱ.

Սնանկութիւնք

Երբեմն կը պատահի, որ անխորհուրդ՝ խարդաւան և խաբեբայ անձինք նենգութեամբ իրենց կարողութենէն վեր չարաճճի խառնափնդոր առուտուրներու զբաղելով, կամ թէ իրենց ունեցած ստացուածքէն աւելի ծախք ընելով, զեղխութեանց և խենէշ՝ կամ ու անկարգ զուարճանքներու աձնութեանց մէջ անկարգաբար շռայլելով, անտանելի պարտուց տակ կ'իյնան, և վերջապէս ամօթալից սնանկութեամբ անպատիւ կըլլան. և իրենց վրայ վստահացած պարտատերաց դէմ ըրած անօրէն նենգութիւններն ու խաբէութիւններն բոլորովին կը յայտնուի ։ Այսպիսեաց բնաւ պէտք չէ ողորմիլ. քանզի իրենց խարդախութեան համար գթութեան անարժան են, այլ մանաւանդ թէ ուրիշներուն խրատ և զգուշութիւն ըլլալու համար՝ պէտք է օրինաց ամէն խստութիւնը անոնց վրայ գործ դնել, զանոնք պատուհասելու համար ։ Բայց շատ անգամ ալ կը պատահի, որ խելացի՝ կորովա-

խորհուրդ և համեստ անձանց բռնած գործերնին ձախողակ վախճանի մը կը պատահի, զոր մարդկային ճարտարմտութիւնը չը կրնար որ և իցէ կերպով արգիլել կամ առաջքն առնուլ, ուստի անոնք ալ կը գլորին յանկարծահաս դէպքերու և փորձանքներու չար աղետից մէջ. և արդարև այսպիսիք ամենայն գթութեան և կարեկցութեան արժանի են ։ Այնպիսիք կը բաղձան անշուշտ, որ գտնուէին անանկ առատաձեռն և բարեսիրտ անձինք՝ որ բուն պէտք եղած ժամանակը իրենց օգնութեան հասնելով, խափանէին պատահած դժբաղդութիւնը. բայց այս կերպ գերագոյն գործոց օրինակները շատ դժուարաւ կը գտնուին ։ Սակայն և այնպէս մօտ ատեններս Անգղիան այս տեսակ բարեսիրտ՝ առատաձեռն մէկ մը ընծայեց մեզ, զոր մենք ալ մեծաւ հաճութեամբ կը փութամք պատմել. քանզի այս կերպ հազուագիւտ մարդավայել պատուական գործ մը արժանի է քարոզուելու և հռչակուելու ։

Լոնտոնի մէջ վաճառական մը կար, որ բարեխառնութեամբ եւ չափաւորութեամբ կենցաղավարելով, բարի, զգաստ, աշալուրջ և անձանձիր փութով իւր գործերը անօրինելով, նաեւ գնոց մէջ միշտ չափաւոր, պայմանաց և վաճառաշահութեանց մէջ անխարդախ և արդարամիտ ըլլալով, ամենուն քով մեծ անուն և բարի համբաւ ժառանգած, և

իր կեանքը խիստ ճոխացուցած էր։ Սա իր
առուտուրները իր դրամոց և ստացուածոց
աւելնալուն համեմատ՝ խոհեմութեամբ ըն-
դարձակելով, յաջողեցաւ մեծամեծ յարաբե-
րութիւններ և առուտուրներ ընել. ոչ միայն
Եւրոպայի զանազան կողմերու մէջ, այլ և Ա-
մերիկա և Հնդկաստանու մէջ։ Դեռ նորա
բարերջանկութեան ծաղիկը չէր ամբողջա-
ցած, և ահա յանկարծակի տեսաւ, որ ան-
ցեալ ժամանակներու մէջ տաժանելի աշխա-
տութեամբ ձեռք բերած արդիւնքները մէկ
վայրկենի մէջ պիտի կորսնցնէր, որով և իր
անձը խիստ մեծ վտանգի մէջ կը գտնուէր։ Ո-
րովհետեւ շատ ժամանակէ 'ի վեր խիստ ծանր
ու հարուստ բեռներով լեցուած իր մէկ նա-
ւուն գալստեան կ'սպասէր։ Օր մը լուր ե-
կաւ իրեն՝ թէ անհնարին ալեկոծութիւն պա-
տահելով, և նաւը այն ամենի կոհակներէն
ժայռի մը վրայ քշուելով, այն տեղ խորտա-
կուած էր, և հազիւ թէ նաւավարներէն մի
քանին կրցեր էին մահէն ազատիլ. իսկ մը-
նացած բոլոր բաները ծովուն յատակը թաղ-
ուած էին։ Պարտքերը վճարելու պայմա-
նադրեալ ժամանակը կը մօտենար, և նա իր
անձը անձեռնհաս և անկարող գտնելով, և
և չը գիտնալով՝ որ այս մեծ կորստեան մէջ
որո՞ւ դիմէ եւ որո՞ւ ապաւինի. այս աղէտ-
քէն ազատելու եւ օգնական մը գտնելու

վրայ տարակուսած և իսպառ յուսահատած՝
արդէն ինքզինքը բոլորովին կործանեալ կը
կարծէր։

Մինչդեռ նա տրտմութեան խորոց մէջ
յուսաբեկ կը վարանէր, իր պարտատէրնե-
րէն մէկուն գանձապետը իրեն քով կու գայ,
և թուղթ մը բերելով իրեն կը ներկայացնէ։
Եւ որովհետեւ նա միշտ այս սոսկալի վայր-
կենին վրայ կը մտածէր, և այսպիսի վայրկեան
մը իր իսպառսպուռ կործանման և բոլորովին
աւրուելուն սկիզբը կը սեպէր, ուստի և կը
կարծէր՝ որ այն թուղթը իր պարտքը անմիջա-
պէս վճարել պահանջող անհրաժեշտ հրաման
մի էր։ Այսպիսի կասկածներով՝ դատապար-
տեալ մէկու մը պէս ահ ու դողով գոյնը նետած
և այլակերպեալ, սիրտը թունդ ելլալով և դող-
դոջուն ձեռօք գիրը կը բանայ, և կարդալու-
ատեն կը գտնէ այս խօսքերը։

“Բարեկամ”

“Չախորդ ելքի և դժբաղդ փորձանքի պա-
տահելդ քաջ գիտեմ. բայց որովհետեւ ես
տեղեակ եմ քու բարեկամութեանդ, ժրաջա-
նութեանդ և կորովամտութեանդ վրայ, վասն
որոյ որոշեցի քեզ ձեռնտու լինել։ Քաջա-
լերուէ՛ ուրեմն ազնիւ բարեկամ, և մի՛ վհա-
տիր։ Ինձ ունեցած պարտքդ՝ երբոր կուզես
այն ատեն տուր. և որչափ կարող ըլլաս
ուրիշներուն ունեցած պարտքերդ անմիջա-

պէս հատուցանել, այս նամակս քեզ յանձնող գանձուցս վերակացուն կուտայ քեզ առայժմ՝ պատրաստ քովդ ունենալու համար հինգ հազար լիր սթերլինի գումար մը. այդ մարդը հրաման առած է, որ այդ գումարին հաւասար ուրիշ լումայագիր մ՚ ալ պիտի տայ քեզ, զոր պէտք եղած ատեն երբոր ինձ ղրկես՝ պիտի հատուցուի։ Այժմ միայն այսքանը և այն ալ աճապարանօք կրցայ ընել, երկնչելով՝ որ չըլլայ թէ քեզ ընելիք օգնութիւնս շատ ուշ հասնի եւ դու վնասուիս։ Իսկ եթէ այսքանը բաւական չը լինի, կարող ես վստահիլ իմ վրաս մինչեւ յիսուն հազար լիր սթերլին, եւ ուզած ատենդ կրնաս առնել։ Քեզ ըրած օժանդակութիւնս քու առաքինութեանդ հետ համեմատելով՝ խիստ քիչ բան մի է. և ես քեզ նման համեստ մարդ մը ապրեցնելու համար յօժարութեամբ և սրտի հաճութեամբ այսգումարը վտանգի մէջ կը դնէի»։

Ծառայ քո և բարեկամ
Գուլիէլմոս Գ.

Դեռ թուղթը մինչեւ վերջը չէր կարդացած վաճառականը, այն անակնկալ երախտիքին վրայ չափազանց ուրախութենէն յիմարած՝ խելքը գլխէն գնաց։ Եւ երբ ուշը վրան գալով սթափեցաւ, առաջին անգամ սկսաւ ցնծու-

թեան և խանդաղատանաց յորդ արտասուք թափել, և յետոյ սկսաւ իւր մեծահոգի բարերարն օրհնել և բարեբանել։

Այս ազնուասիրտ բարերարը մեծագանձ և պերճ լումայափոխ մի էր, որ շատ ժամանակէ 'ի վեր զինքը ճանաչելով, և իւր համեստ վարուց ու ժրաջանութեանը համար զայն պատուական ու հաւատարիմ մարդ ճանչնալով, ցաւեցաւ՝ որ այնպիսի խոհեմ, պարկեշտ և ժրաջան մէկը չար փորձանաց պատահելով՝ դժբաղդութեան մէջ ինկած էր. ուստի և նորա աղէտքը լսելուն պէս՝ առատաձեռնութենէ ստիպեալ, իսկոյն միտքը դըրաւ սոյն յանկարծահաս կործանման դէմ՝ այն պատուական ու առաքինի մարդուն նըպաստամատոյց՝ պատսպարան եւ յենարան լինել։

Արդարեւ գանձապետին թողուցած պատրաստ գումարը, աւելի կարեւորագոյն պարտքեր վճարելու համար պէտք եղաւ և գործադրուեցաւ, իսկ լումայագիրը անոր համբաւը և հաւատարմութիւնը հաստատ և ամբողջ պահելու համար. և այնու հետեւ անոր շատ մը դրամագլուխներ և ինչքեր ունենալուն վրայ մարդ չը տարակուսեցաւ, քանի որ Գուլիէլմոսի նման այսքան զգուշաւոր եւ շրջահայեաց լումայափոխ մը առանց կասկածի և առանց մտքէն բան մը անցնելու՝ կա-

մաւ կ'ընդունէր անկէ այնքան մեծագումար լումայագիր մը։ Սնանկացեալ վաճառականը այս կերպով իւր գործերը կարգադրելով՝ կրցաւ իւր առուտուրները խնայամտութեամբ և անխափան շարունակել, զոր եւ բարերարն Աստուած հաճեցաւ շուտ կերպով յաջողել. և քիչ տարուան ընթացքի մէջ՝ ոչ միայն մեծահոգի լումայափոխին իւր վրայ ունեցած համբաւոյ և հաւատարմութեան անթերի վերանորոգութեան հասաւ, այլ նաեւ այս մխիթարութիւնը եւս ունեցաւ, որ շատ պատահմանց մէջ անոր պիտանացու օգտակար և օգնական եղաւ խիստ շատ կերպերով, և իւր սիրալիր և հաստատուն երախտագիտութիւնը անոր յայտնելու առիթներ ալ ունեցաւ։

Ինչպէս ուրիշ տեղ ըսինք, ահա նորէն առիթ ունինք ըսելու, որ մարդկային ընկերականութեան գլխաւոր պայմանն է հաւատարմութիւնը, անախտ սէրը և կարեկցութիւնը։ Ամենամեծ պարտաւորութիւն ունին մարդիկ իրարու հետ միշտ հաւատարմութեամբ վարուիլ։ Խոստումն, դաշինք և պայման՝ նուիրական բաներ են մարդու համար. ուստի սաստիկ զգուշութիւն պէտք է ամենափոքր բաներու մէջ անգամ ճշմարտութիւնը յարգել. մինչև կատակով ստութիւն կամ խա-

բեբայութիւն ընելէ զգոյշ կենալու է, վասնզի այդպիսի մանր բաները հոգ չընելով՝ սովորութիւն կըլլայ, և երթալով մեծամեծներըն ալ ընելու մարդ չը վախնար և չ'ամաչէր։ Այսպէս է նաեւ ամէն մոլութիւն. միշտ աննշան ու թեթեւ աստիճանէն կ'սկսի, և առանց զգուշանալու վերջին ծայրը կը հասնի, ուրկէ հեռանալը ալ դժուար կըլլայ։

Մարդ եթէ իւր մարդկութեան ինչ ըլլալը կը ճանչնայ, պէտք է միշտ իւր կեանքը պատուաւոր անցնէ. իւր գործերը այնպիսի չափաւորութեամբ, իմաստուն խոհականութեամբ և հեռատես զգուշաւորութեամբ կարգադրէ, որ միշտ ինկալու վտանգներու մէջ յենարան գտնայ։ Եթէ անգամ մը գործերուն, առուտուրին կամ խօսքերուն մէջ անկարգութիւն, խարդախութիւն, շռայլութիւն, ստութիւն և խաբէութիւն տեսնուի, այնուհետեւ պատիւն ու համբաւը կը կոտրի, կ'սկսի քիչ քիչ կասկածելի ըլլալ, և ամէն խելացի մարդ կը վախնայ անոր վստահիլ. վըտանգի մէջ ինկած ատեն չեն օգներ իրեն, և այնպիսին արժանի ալ չէ օգնութեան, վասնզի շատ անգամ այն օգնութիւնը փոխանակ բարեք ըլլալու, անով իւր մոլութիւնը շարունակելու և այն չարութեանց մէջ հաստատուելու կը ծառայեցնէ. ուրիշին ընկերսիրական ձեռնտոււութիւնը իւր ուղղութեան և լաւութեան

նպաստելու տեղ՝ քաջալերութիւն կըստանայ ալ աւելի նենգութեանց եւ խաբէութեանց մէջ յառաջանալու։ Խիստ շատ սնանկացած վաճառականներ կան, որք խաբէութեամբ իրենց գործերը մեծցնելով, վարկ ու համբաւ ստացած են, և ուրիշներուն ինչքերը կողոպտելով ու խարդաւանելով մեկ կողմ ելած են. այնպիսիներն եթէ իրենց յաջողութեան վրայ կը պարծին և կ'ուրախանան, թող սոսկան արդարութեան հատուցումէն։

Իսկ ընդհակառակն առաքինի, հաւատարիմ, խոստմնապահ անձինք, որ ճշմարտութեամբ, աշխատասիրութեամբ և պարկեշտութեամբ կ'անցնեն իրենց կեանքը, փորձութեան մէջ ինկած ատեննին թող չյուսահատին. իրենց բարութիւնն ու ճշմարիտ համբաւը զիրենք կը փրկեն, վասնզի առաքինութիւնը անվարձ չը մնար։ Արդարեւ այնպիսի անակնկալ դիպուածներ կան, որոց առջեւէն փախչիլ և փրկութեան հնարք գտնալ, կամ խիստ դժուար է և կամ անկարելի. և այսպիսի վտանգաց մէջ անխտիր կրնայ իյնալ անմեղն ալ, մեղաւորն ալ, հաւատարիմն ալ խարդախն ալ քանզի աշխարհիս իրողութիւնները միշտ անհաստատ են։ Սակայն յատուկ պարտաւորութիւն կայ մեր վրայ, որ անկեալ առաքինութեան շուտով օգնութեա

հանինք, ամեն խնամք, գութ և կարեկցութիւն ցոյց տանք։ Խիստ նշանաւոր է ներկայ պատմութեանս մէջ բարեսէր լումայափոխին ըրած գործը, և օրինակ առնելու արժանաւոր մարդասիրութիւն մը է, ընկերական պարտականութեան ամենագեղեցիկ, վսեմ և հիանալի օրինակ մը ընծայած է։ Երանի թէ շատ հետեւողներ ունենար, որով բոլոր մարդիկ այն ատեն երախտագիտութեամբ, սիրով, գթութեամբ, բարերարութեամբ և կարեկցութեամբ իրարու հետ կապուած կըլլային, և այն ատեն մարդիկ բնաւ բանի մը կարօտ չէին ըլլար, և գուցէ այն ատեն չարերն ու խարդախներն ալ կը պակսէին. իսկ հիմա ընդհակառակն քաջալերութիւն գտնելով կարծես շատնալու վրայ են . . . ։

ԼԲ.

Ապերախտութիւն

ԹՈՎՄԱՍ–ԻՆՔԼԷ Լոնտրացի վաճառականի մը որդի, շահախնդրութեան բաղձանքէն շարժեալ՝ իւր քսանամեայ մատաղատունկ հասակին մէջ, երկարատեւ նաւարկութեան վտանգներէն երբէք չը վախնալով՝ միտքը դրաւ դէպ 'ի արեւմտեան Հնդկաստան նաւել. և Աքիւլէս անուն նաւը մտնալով, որ դէպ 'ի այն կողմերը երթալու կը

պատրաստուէր, իւր հօրմէն առած սակաւ ինչ դրամագլխով, Յունիս ամսոյ 16 ին՝ 1674 Թուականին Լոնտոնէն ճամբայ ելաւ ։ Երկարատեւ և տաժանելի ճանապարհորդութենէ մը յետոյ՝ վերջապէս նաւը հեռուէն Ամերիկայի ցամաքը նշմարելով, փոքրիկ խորշի մը մէջ խարիսխ նետեց ։ Որդէն ջուրերնին և ուրիշ պաշարները պակսած ըլլալով՝ նաւապետը ծովուն մէջ մակոյկ մը իջեցուց, և հրամայեց քանի մը հոգիներու՝ որ ցամաքը ելլալով՝ պէտք եղածը ճարեն ։ Թովմաս՝ երկիրը ճանչնալու հետաքրքրութենէն յուզուած, նոցա հետ ցամաք ելաւ . բայց ամենքը մէկէն դէպ 'ի երկրին ներսի կողմերը յառաջ երթալով, յանկարծ այն տեղի խումբ մը վայրենի բնակչաց ձեռքը ինկան, որք նոցա վերայ յարձակելով՝ մեծ մասը զարկին և մնացածները փախցնելով՝ ցրուեցին, մինչզի հազիւ Թէ քանի մը հոգի կարողացան մակոյկով դէպ 'ի նաւ փախչիլ և ազատիլ ։ Թովմաս երիտասարդը այն փախչելու շփոթութեան մէջ, ամէն վայրկենին իւր մահը մօտեցած համարելով՝ շատ ժամանակ անտառաց մէջ մոլորուած գնաց, մինչեւ ելաւ բարձր տեղ մը, զոր ուրիշ տեղերէն աւելի ամայի և անբնակ կը կարծէր, ուժը կտրած՝ հեւալով ու բոլորովին քրտնած հոն գետնի վրայ փռուեցաւ ։ Այն տեղ սակաւ մտածութիւններով իւր

միտքը պաշարուեցաւ, վասնզի այնպիսի վայրենի տեղերու մէջ իւր գլխուն պատահելիքները ակներեւ կը տեսնէր, որ կամ սովէն պիտի մեռնէր, կամ գազանաց կերակուր պիտի ըլլար, եւ կամ գազաններէն աւելի գիշատիչ այն վայրենաբարոյից ձեռօք խիստ չարչարանօք պիտի սպաննուէր ։ Մինչդեռ այս արհաւրանքներէն ալէկոծուած կը ծփար, եւ խղճալի կերպով կ'ողբար, յանկարծ խշշտոց մը կը լսէ, որմէ վախնալով՝ վեր կը ցատկէ ։ Եւ փախչելու աճապարած ատեն երիտասարդուհի մը կը տեսնէ, որ կամաց կամաց հոն կուգար և քաղցրաբար դէպ 'ի ինքը նայելով, նշան ըրաւ, որ կենայ ։ Երիտասարդը քիչ մը քաջալերուելով, ըռլագին նորա ոտքերը կ'իյնայ, եւ արտասուօք ու հեծութեան ձայներով կ'աղաչէ անոր՝ որ գթայ իր վրայ, և այն անհնարին աղէտներէն ազատելու հնար մը գտնայ ։ Երիտասարդուհին՝ որ Յէարիքօ կը կոչուէր, Թէպէտ և վայրենասուն էր, բայց բնութենէն գորովական ոգի ժառանգած՝ գթոտ ու կարեկից սիրտ մը ունէր, և մասամբ մը երիտասարդին վայելուչ բարեձեւութենէն յորդորուած՝ մասամբ մ'ալ նորա աղերսանքներէն խանդաղատելով, մարդասիրաբար վերցուց զայն գետնէն և իւր քարայրը տարաւ. հոն հանգստացնելով զայն՝ ինքը քիչ մը ժամանակ հեռացաւ անկէ ։ Յետոյ դարձաւ և

այն տեղերը գտնուած զանազան միրգերէն և պտուղներէն բերելով՝ երիտասարդին տուաւ, որ ուտէ և անոնցմով կազդուրի, յետոյ ծարաւը անցնելու համար մերձակայ աղբիւր մը տարաւ զայն։

Գրեթէ նոր կեանք մը առաւ Անգղիացի երիտասարդը, և շատ տեսակ նշաններով իւր մեծ շնորհակալութիւնը ցոյց տուաւ, որով ցանկասէր վայրենին աւելի եւս գրգռուելով, քաջալերեց զայն՝ որ բնաւ պատահմունքէ կամ փորձանքէ մը չը վախնայ, բոլոր երկիւղը փարատէ, և իւր ամեն հոգերը ի րեն յանձնէ։ Արդէն ժամանակին մեծ մասը անոր հետ կ'անցընէր, պէտք եղած ուտելիքները լաւեր կ'առատաձեռնէր առանց բանի մը կարօտ թողելու, և քնացած ժամանակ կը հսկէր ու կը պահպանէր. վերջապէս հարազատի մը կամ արեանառու մերձաւորի մը պէս՝ ամեն փոյթ և խնամք կը գործադրէր։

Թովմաս վայրենի աղջկան քով աղէկ պահպանուելով՝ քիչ քիչ նորա լեզուին ընտելացաւ, և սկսաւ հասկնալ ու հասկցնել պէտք եղածը, ուստի երբեմն այս՝ կամ այն բաներու վրայ զանազան հարցումներ ընելով՝ սակաւ ժամանակի մէջ յաջողեցաւ ծանօթութիւն առնալ այն սահմաններուն վրայ, և նորա բնակչաց և պատուական բերքերուն վըրայօք, որովք երկիրը կը բարգաւաճէր։ Փա-

փագելով նաև այն զանազան բերքերէն մէկ քանին տեսնել, աղաչեց երիտասարդուհւոյն՝ որ բարեհաճի անոնցմէ բերել իրեն, զոր Յէարիքօ յօժարութեամբ կը կատարէր. և որովհետեւ զայն զարմացած կը տեսնէր նոյն բաներուն վրայ, և նոր բաներ եւս առանալու սաստիկ ցանկացող, և որովհետեւ ինքն ալ կուզէր՝ որ երիտասարդին սիրտը շահի, ուստի նորա միտքը հաճեցընելու համար, ամեն օր նորատեսակ ընծաներով կուգար. երբեմն ոսկի, երբեմն արծաթի կտոր մը, երբեմն պատուական գոհարներ, և շատ անգամ այն երկրին թռչնոց չքնաղագեղ փետուրներ, ու վայրի կենդանեաց փափկագոյն մորթեր կ'ընծայէր անոր։

Այսպէսով Անգղիացի երիտասարդը քիչ ժամանակուան մէջ ձրի հարստութեանց տէր եղաւ. ուստի իւր սրտին մէջ բաղդէն շնորհակալ կըլլար, որ իւր չար դէպքը այսպիսի բարեբաղդ վախճանի փոխած էր։ Այնուհետեւ միմիայն այն տեղէն չուելու կը կարօտէր. այս ալ ուրիշ կերպով յուսալն անհնարին բան մ'էր, միայն թէ Եւրոպացի նաւու մը միջնորդութեան կը կարօտէր, որ այն ափանց վրայ պատահելով՝ զինքն առնէր տանէր։ Սակայն քաջ գիտէր՝ որ Յէարիքօ պիտի դժգոհէր իրմէն հեռանալուն համար, և դիւրին ալ չէր 'ի պատահիլ հարկին ա-

ռանձին փախչիլ և նաև մնալ առանց նորա
գիտութեան ։ Ուստի միտքը դրաւ՝ որ զայն
իրեն հետեւելու համոզէ , և այնքան չափա-
զանցութեամբ կը մեծաբանէր Եւրոպիոյ ու
անոր հոյակապ ու մեծագործ շինուածոց վրայ,
որոց մէջ փայելչապէս պիտի բնակէր նա , քան
թէ այն անարգ անձաւներու և բաց վայրե-
րու մէջ . կը խօսէր շքեղ զգեստներու վրայ,
որոնցմով փոխանակ մերկամարմին շրջելու, կա-
րող էր իւր անձը պաշտպանել եղանակաց վը-
նասներէն , որով և իւր գեղեցկութեան պայ-
ծառութիւն ու վայելչութիւնն ալ կ՚աւելնար.
կը ճառէր զանազան համադամ կերակրոց վը-
րայ, զոր հոն պիտի ճաշակէր՝ իւր խմած ջրէն
և կերած վայրենի պտուղներէն շատ աւելի
յարգի և պատուական . վերջապէս ներբողնե-
րով կը խօսէր ամենատեսակ զբօսանքներու վրայ,
որով պիտի զուարճանար. երբեմն ջուրերու վրայ
առագաստ բացած նաւով ճեմելով , երբեմն
նժոյգ երիվարներէ քաշուող կառքերու մէջ
մտնելով , երբեմն բոլոր գիշերը ուրախական
կաքաւներու և պարահանդէսներու մէջ ան-
ցնելով , կամ նուագածութեան , կամ երգոց
և կամ ուրախաւէտ խնճոյքներու մէջ . այն-
չափ ախորժանօք և բերնին ջուրերը վազելով
կը նկարագրէր այս բաները , մինչեւ որ ցան-
կանէր Ամերիկացին սաստիկ բաղձանք ցոյց
տուաւ անոր ետեւէն երթալու և այսպէս

բաներ տեսնելու ։ Արդէն առանց այս յոր-
դորանքներուն ալ Յէարիքօ այնչափ խանդա-
ղատած էր նորա վրայ և սիրահարուած , որ
աշխարհի որ կողմն ալ երթար , պատրաստ
էր նորա հետ երթալ , և ինչ և իցէ վիճակի
հանդիպիլ ։ Ուստի երկուքն եւս անհամբեր
կըսպասէին նաւու մը գալուն , և գիշեր ցե-
րեկ փոխանակաբար ծովը կը դիտէին ։ Շատ
մը ժամանակ անցնելէն յետոյ , Յէարիքօ՝ որ
խիստ սրատես էր , հեռուէն՝ ծովուն երեսին
վրայ բան մը նշմարեց , և Թոմըսին ծանու-
ցանելով՝ հասկցան որ նաւ մ՚է , որ յաջողակ
հովմով փրփրադէզ ալիքները պատառելով
կուգար ։

Ուստի սովորական նշանը տուաւ , որով
յաջողեցաւ զայն հոն մօտեցնել . և երբոր ե-
րեկոյ եղաւ , արեգակը իւր վերջին ողջոյնը
տուած ըլլալով՝ խաւարը երկրի վրայ պատե-
ցաւ . և սոքա նաւէն իրենց համար ղրկուած
մակոյկին մէջ մտնելով՝ Յէարիքօին բերած
և ընծայած մեծագանձ ստացուածքներովը
միասին նաւը ելան եւ ապահով եղան ։ Ու-
շիմ ընթերցողը քաջ կարող է մակաբերել՝
թէ ինչպէս ուրախութեամբ լեցուեցաւ
Անգղիացի երիտասարդը ։ Բայց Յէարիքօ
տխրուելով լքանել թողուլ իւր հայրենի-
քը , որ ինչպէս ալ ըլլայ՝ յոյժ քաղցր և պատ-
ուական է հոն ծնած ու մեծցած մէկու մը

համար, Թոլուլ ազգատոհմը, և սիրելիները, այլ եւս զանոնք խաղաղ չը տեսնելու մտօք, այս բաները միտքն իյնալով՝ իւր աչքները գալարեցան և սիրտը կը խշխշար, արտասուագին կուլար, և կ'ողբար հառաչելով ու հեկեկալով. և այնքան շուտ չէր կրնար մխիթարուիլ, եթէ Թոմմասին սփոփանքները և համոզական խօսքերը իրեն չ'օգնէին, որ իրեն համար թէ ընտանիքի, թէ ազգականի և թէ ամեն բանի տեղ էր: Այլ աւաղ այն թշուառացելոյն, որ չէր գիտեր՝ թէ ի՞նչպիսի նենգաւոր և ո՛րչափ ապերախտ երիտասարդի մը հետեւած և յանձնած էր իւր անձը: Երիտասարդին բարեբաղդութենէն՝ իրենց նըստած նաւը Անգղիայէն էր, և որ ճոխագոյն հարուստ բեռներով և Կուինեայի եզերքներէն գտնուած խափշիկ գերիներու բազմութեամբ բեռնաւորուած՝ Բարբադա կղզին կ'երթար, որ Անթիլեան կղզեաց մէջ յոյժ բերրի և պտղաբեր կղզի մ'է. գլխաւորապէս խիստ շատ շաքարեղէգ (շէքէր ղամըշը) կը բուսնէ, և որոց մշակութեան համար գերիները կ'աշխատցնեն: Երբ նաւը հոն հասաւ, իսկոյն անհամար խուռն բազմութիւն մը եկան և նաւահանգիստը լեցուեցան, և ինչպէս ուրիշ ստացուածոց, սոյնպէս և այն թշուառ ծառաներուն համար ալ առուտուր սահմանուեցաւ:

Ո՜վ մեծի և անմոռաց նախատանաց Եւրոպիոյ. ի՞նչ բարբարոսական և ամենազեղծ շահավաճառութիւններ կընէ, իրեն նման մարդիկ կը ծախէ, այն եղկելի անձինքը անշունչ էակներու կամ անբան կենդանիներու նման վաճառքի կը հանէ. ի՞նչ անգթութիւն, որ ուրիշ տեղեր կովերու և ոչխարներու վրայ անգամ չեն ըներ:

Անօրէն երիտասարդը այն սոսկալի վաճառուց գնողներուն բազմութիւնը տեսնելով, և զի մեծ գնով կը վաճառուէին անխտիր այր և կանայք, իւր ագահութենէն թելադրուած և գրգռուած, և ամէն բարիք մոռցած, անխղճաբար և բարբարոսական անգթութեամբ ապերջանիկ Յէարիքօն՝ իբրև իւր արծաթագին ծառան ծախու հանեց: Ինկըլին իւր յուսահատական ողբերուն ու լալուն և սըրտաբեկ ու սրտաճմլիկ հառաչանքներուն բընաւ օգուտ մը չըքաղեց. նորա ոտքերը կ'իյնար, գթութիւն ու ողորմութիւն կը հայցեր. կ'աղաչէր ու կը պաղատէր՝ որ եթէ իբրև արծաթագին ծառայ սեպել կ'ուզէր, գոնէ իբրև գերի իւր քովը պահելու հաճի: Սակայն նորա ապառաժէն աւելի կարծր սրտին բան մը չ'ազդեց. խեղճ աղջիկը իրեն ըրած բարութիւնները կը յիշեցնէր, միտքը կը ձգէր զինքը սիրով խնամելը և հսկելը, որ եթէ այն կողմի ուրիշ բնակչաց ձեռքը իյնար՝ կտոր

կտոր կընէին իւր մարմինը, իւր մեծագին սպար-
գեւներով զինքը ճոխացնելը կը ցուցնէր, և
իրեն սիրոյն համար իւր հայրենիքէն ու ազ-
գատոհմէն հեռանալը սրտաշարժ կերպով կը
յայտնէր։ Վերջապէս խիստ շատ զայրանալով
ապերախտ և ուխտադրուժ կոչեց, անթիւ ա-
նէծքներ թափեց, և երկինքը այսպիսի եղեռ-
նագործութեան մը համար վկայութեան և
վրէժխնդրութեան կանչեց։ Այս ամենը՝ որ
կատղած առիւծն անգամ կրնային քաղցրացնել
բայց նորա սրտին ամենևին ազդեցութիւն մը
չըրին, քանզի վայրենի գազաններէն աւելի խըս-
տասիրտ ու վայրագ բարբարոսը՝ նորա ամեն
արդարացի կշտամբանքները, դառնակսկիծ և
աղիողորմ գանգատները, և լալագին ու սրտա-
ճմլիկ աղերսանքները չը լսելու տուաւ և ա-
կանջի ետև ձգեց։ Մանաւանդ խիստ ու-
րախ էր՝ որ նորա օտար լեզուն և անծանօթ
բարբառը այն տեղի եղողները չէին հասկնար,
և որով չէին կրցած վերահասու լինել իւր
նենգութեանը. ուստի վաճառականի մը ծա-
խեց զայն, և սակը առնելով, հրաժարական
ողջոյն մ'անգամ չը տուած՝ հեռացաւ գնաց։

Ապերջանիկ Յեւարիքօն աւելի մեռեալ
կեցաւ քան թէ կենդանի, և զինքը գնողը որ
միւսէն աւելի բարբարոս էր, ամենևին հոգ
չըրաւ նորա արտասուացը, այլ գետնաքարշ
տուն տանելով, այն տեղ իւր սրտին սաստիկ

կսկիծէն և քաշած անտանելի աշխատանքնե-
րու ծանրութենէն ճնշուած՝ ալ չը կրցաւ
դիմանալ, և քիչ ժամանակուան մէջ հիւծուե-
լով ու մաշուելով չարաչար մահուամբ վախ-
ճանեցաւ։ Վասնզի այն տեղերը՝ և գու-
ցէ մինչև հիմայ ալ Եւրոպացիք մարդկային
բնութիւնը մոռնալով, անասուններու նման
կը չարչարէին այս խեղճերը և անքանէ աւե-
լի կ'աշխատցնէին։

Իսկ Թովմաս Յեւարիքցին գնողը և նորա
ազնուազգին սպարգեւներովը, նաև իւր հօր-
մէն ընդունած դրամներով առատագոյն ա-
ւեւտուրի պարապելով, շատ բան վաստկե-
ցաւ, և օրէ օր հարստանալով՝ իւր բաղդը,
ջանքը և հանճարեղութիւնը կը մեծցնէր.
և եթէ իւր եղեռնագործութիւնը միտքը գար,
որ շատ անգամ կը պատահէր, իւր ներկայ
բարօրութեանը վրայ կը դարձնէր միտքը, և
կը խղդէր իւր խղճի խայթը։

Բայց վրէժխնդիր և արդարադատ Բար-
ձրեալը թէպէտև կ'ուշացնէ և կ'երկարէ ա-
նօրէնութեան արժանահաս պատիժը, սա-
կայն ոչ երբէք կը մոռնայ։ Ուստի այն ան-
բաղդորդ երիտասարդը ճոխութեան ծայրը
հասնելով՝ ագահութիւնն աւելի գրգռուե-
ցաւ, ուստի բոլոր սրտով չը բաւականանա-
լով, տակաւին անկեց աւելին կը բաղձար,
և մանաւանդ իւր երկար ժամանակ Յեւարի-

քօյլին հետ կեցած տեղը յիշելով, և միտքը
բերելով այն արծաթն ու ոսկին և պատուա-
կան գոհարները, որք խիստ առատ կը գըտ-
նուէին հոն, միտքը դրաւ՝ որ ուրիշ քանի
մը հոգիներու հետ նաւ մը պատրաստելով,
դէպ'ի այն սահմանները երթան, և այն գան-
ձերը առնեն ու վայելեն։ Վերջ ամենայնի՛
իրեն նպատակին համեմատ հասաւ այն կող-
մերը, և իրեն ընկերներովը երկրին դէպ'ի
ներսի կողմերը յառաջ երթալու ատեն՝ խա-
կոյն քանի մը վայրենիք վրայ հասան, բայց
ինքը անոնցմէ ուժեղ լինելով՝ դիւրաւ յա-
ջողեցաւ զանոնք ցրուել։ Ասկէ քաջալերուե-
լով՝ աւելի ևս յառաջ գնացին, և երկու
մեծագանձ հանքեր գտնալով՝ որոց բնաւ մէ-
կը ձեռք զարկած չէր, այն ինչ հազիւ այն
պատուական նիւթերը վերցնելու վրայ էին,
ահա վայրենիք առաջի անգամէն աւելի մեծ
բանակ մը կազմած՝ զէնքերով նորա վրայ յար-
ձակեցան, և իւր ընկերներէն շատերը սպան-
նելով՝ զինքն ալ կենդանի բռնեցին։ Այն ա-
տեն անոր վրայ երկնային վրէժխնդրութիւնը
յայտնի եղաւ. և կարծես այն վայրենիները
տեղեակ էին նորա մեղապարտութեանը,
Յէարիքօն դաւաճանելուն համար, ինչու որ
անյագ վրէժխնդրութեամբ մը քամնելի և
տակալի տանջանօք կտոր կտոր ըրին նորա
մարմինը։ Ով աղէտից . . . . . երանի թէ

այս զարհուրելի տեսարանիս ներկայ գըտ-
նուէին և հանդիսական վկայ լինէին ամեն ա-
նոնք, որոց քով ուխտադրուժութիւնը միմ-
սութիւն մ'է, և ապերախտութիւնը կատակ։

Երբ անբան անասնոց մէջ անգամ երախ-
տագիտութեան զարմանալի օրինակներ կը
տեսնանք, արդարև չենք կրնար սոսկումնիս
բռնել, տեսնելով՝ որ բանական արարածը,
խորհրդով և իմացականութեամբ ճոխացող
մարդը ապերախտութեան զարհուրելի օրի-
նակներ կը ներկայացնէ։

Երախտագիտութիւնը բնական զգացում
մի է. և ով որ այս գովելի զգացումը կը խեղ-
դէ իւր սրտին մէջ, և իրեն փոքր աղէկութիւն
մը ընողին անգամ բարիքը չը ճանչնար, ու փո-
խարինելու փոյթ ու եռանդ չունենար, այն-
պիսին գազանէն ալ վատթար է։ Փոքր երախ-
տիքը ճանչնալ չուզողը, մեծն ալ չը ճանչնար.
և ով որ ուրիշէն ընդունած բարիքը կ'ուրա-
նայ, բանի տեղ չը դնէր, շնորհակալ չըլլար,
ու իւր երախտագիտութիւնը յայտնելու համար
չուզէր փոխարինութիւն մը կամ յօժարամիտ ծա-
ռայութիւն մը հատուցանել, այնպիսին երբէք
բարեաց արժանի չէ։ Հապա ի՛նչ կարող ենք
ըսել անոնց, որք իրենց ընդունած բարերա-
րութեան փոխարէն բարիք չը հատուցանելէ
զատ՝ կը համարձակին անամօթաբար և սա-

կալն լռութեամբ չարիք ալ հատուցանել, այնպիսին ճշմարիտը ըսելով՝ արեւուն լոյսն անգամ վայելելու արժանի չէ ։ Իմաստնոյն ըսածին պէս՝ այնպիսին մտնիջենաւոր չարեաց արժանի է . «Որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ, չար 'ի տանէ նորա մի պակասես-ցի» . Առակ . ԺԷ . 13 ։

Ապերախտութեան բուն իսկ անունն ան-գամ՝ զգայող սրտին սոսկումն կը պատճառէ, վասնզի նշանակութեան հետ անուան հըն-չումն ալ անարգ ու ահաւոր է ։

Այս զարհուրելի ախտը ամէն չարեաց ճանապարհ կարող է բանալ . և ով որ այս ախ-տին նշաններն ունի, փոխադրական մահա-բոյր ախտէ փախչելու պէս՝ անկէ հեռանա-լու է, վասնզի այնպիսին անարժան է ընկե-րական յարաբերութեանց, անարժան է օգ-նութեան և ձեռնտուութեան ։

Ապերախտութիւնը վնասակար է, ոչ մի-այն ընողին, այլեւ ուրիշներուն ալ . վասնզի երախտաւոր բարի սրտերը կը վհատցնէ, և այն տեղ վառուած գթութեան ու կարեկցութեան պատուական պայծառ ջահը կը մարէ . կը կա-պէ ու կը կաշկանդէ երախտաւորին ձեռքը՝ որ ալ ուրիշին օգնութեան չը հասնի, ասանկով թէ ուրիշները բարիքէ կը զրկուին, և թէ նոյն խակ բարեսէր անձը աստուածահաճոյ առա-քինութիւն ընելէ կը զրկուի ։ Միայն առա-

տապարդեւ և ամենախնամն Աստուած է, որ մեզ նման ապերախտ մարդկանց վրայ շարու-նակ իւր առատաձեռն ողորմութիւնը կը թա-փէ իւր նախախնամական գթութեամբը ։ Եթէ լաւ քննելու ըլլանք, արդարեւ միշտ ա-պերախտ պիտի գտնուինք բարերար Աստու-ծոյ առջեւ, քանզի շարունակ անխափան ա-նոր պարգեւները կը վայելենք, և դանէ զանոնք ճանչնալով շնորհակալ անգամ չենք ըլլար . ե-թէ երախտագէտ ըլլայինք, անոր կենսատու օրէնքները եւ երջանկացուցիչ պատուէրները անխափան կը կատարէինք, վասնզի առ Ա-ստուած ունեցած երախտագիտութիւննիս պիտի արգիլէր, խափանէր զմեզ ամէն տեսակ մեղքերէ . գիտնալով՝ որ մեղքը զԱստուած կը բարկացնէ, և ով որ զԱստուած բարկացը-նելէ չ'զգուշանար, ապերախտութիւն ըրած կըլլայ անոր դէմ, վասնզի անոր շնորհքները և Յիսուս Քրիստոսի պատուական արեան փըր-կարար արդիւնքն ուրացած և ապարդիւն ը-րած կըլլայ ։

Բայց գիտնալ պէտք է, որ ինչպէս ամէն մեղք կամ չարիք իւր պատիժն ունի, նոյն-պէս այս սոսկալի չարութիւնը ահաւոր ու սարսափելի պատիժներ ունի ։ Անհնար է, որ մարդ արդարութեան հատուցումէն փախ-չիլ կարողանայ, և Երկինք միշտ վրէժխնդիր է այսպիսի չարութեանց . և եթէ երբեմն ու-

ջանայ այն, պէտք է գիտնանք՝ որ մեր ուղղութեան համար է, և թէոր չ'ուղղուինք աւելի անհնարին սաստկութեամբ կը հասնի մեր վրայ, և չարաչար կը պատժէ թէ՛ կենցաղոյս և թէ յաւիտենականութեան մէջ։

Ուրեմն որչափ պարտաւոր ենք զգուշանալ ամեն տեսակ չարութիւններէ ու մեղքերէ, որ Աստուծոյ ողորմութիւնն ու բարութիւնը վայելենք։ Վա՜յ անոր, որ Աստուծոյ վրէժխնդրութեանը նշաւակ կըլլայ։

ԼԳ.

Գուլիէլմոս—Պէնն

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ Ամերիկայի այն ողորմելի տեղերը, ուր Եւրոպացիք անգթութեան և յափշտակութեան սոսկալի տեսարաններ ներկայացուցած էին, այն խեղճ և ողբալի երկրին մէջ՝ Անգղիացի մը խիստ տարբեր կերպով սկսաւ վարուիլ, որուն համբաւը անմահ մնաց և պիտի մնայ ապագային մէջ։ Գուլիէլմոս—Պէնն՝ Անգղիոյ պսակաւոր Կարոլոս երկրորդէն հիւսիսային Ամերիկայի գաւառին վրայ տիրելու իշխանութիւնն ստացաւ, որ յետոյ նոյն տեղը իր անուամբը՝ նաեւ անտառախիտ ըլլալուն համար Փէնսիլվանիա կոչուեցաւ։ Այս բարեացակամ և արթուն դե-

տը փոխանակ ուրիշներու պէս այն տեղ գտնուած Թշուառները նեղելու՝ իր ամենէն մեծ հոգը զանոնք խնամել և մխիթարելն եղաւ, և իր մարդասիրութեամբն և յաճախակի բարերարութեամբն՝ անոնց զարմանքին և սիրոյն մշտնջենաւոր առարկայ եղաւ։ Բայց իր իշխանութեան սկիզբի ժամանակները, վայրենի ժողովրդէն շատերը կասկածանօք վախնալով այս իշխանէն, մանաւանդ Եւրոպացւոց վրայ իրենց ունեցած Թշնամական ոգիէն դրդեալ՝ անոր վրայ ևս ուզեցին յարձակիլ։ Այս իշխանը իր անձը վայրենեաց կատաղի յարձակումէն պաշտպանելու համար՝ ստիպուեցաւ զրահաւորիլ և զէն դնել. և խելացութեամբ և քաջութբ պատերազմելով՝ կանգնեց յաղթութեան նշանը, և խորտակեց անոնց յանդուգն անխոհեմութիւնը, և շատերն ալ բռնեց և կապեց. այս կապուածներուն մէջ կը գտնուէր գեղատեսիլ օրիորդ մը, զոր իրեն առջեւ ներկայացուցին։ Այս օրիորդը սաստիկ կ'ողբար և կը մորմոքէր, ո՛չ միայն ազատութիւնը կորսնցնելուն համար, այլ աւելի մեծ կորստեան մը համար, որ իւր սիրտը սաստիկ կը խոցէր։ Ասիկա իրեն պէս գեղեցիկ և հասակակից երիտասարդ մը կաթոգին սիրով կը սիրէր և անկէ հաստատապէս սիրուած էր, և որուն հետ նշանուած ալ էր։ Արդէն հարսանեաց հանդիսի օրերը մօտ էին,

և ահա պատերազմի ձայն և խռովութիւններ ելլալով՝ արգելք եղան իրենց հարսանեաց։ Եւ այժմ ես շղթաներու մատնուած՝ ոչ միայն անոր հետ ամուսնանալու, այլ և զայն տեսնելու անգամ յոյս չունէր. նա մանաւանդ իւր նշանածին սրտապինդ յանդուգն և վառվռուն բնութիւնը եւ համարձակութիւնը գիտնալով, և խորհելով՝ որ պատերազմի մէջ բուն իսկ արիւն թափուած այն տաք ու կրակոտ տեղերը պիտի գտնուի, սաստիկ կը վախնար՝ որ չըլլայ թէ թշնամեաց սրոյն մատնուի։

Եւ մինչդեռ Գուլիէլմոս–Պենն անոր արցունքներէն սարսռած, իւր սովորական մարդասէր և գորովալիր վարուց համեմատ՝ կ'աշխատէր փարատել նորա տրտմութիւնը և սուգը, ահա յանկարծակի Ամերիկացի արիւնաներկ և նետով ու նիզակով զինուած երիտասարդ մը տեսաւ, որ սաստիկ արագութեամբ այն տեղ կը դիմէր. ուր հասնելուն պէս՝ սկսաւ ուղղակի կապուած օրիորդին քով վազել, որ զարմանալով՝ խնդութեան և զարհուրանաց աղաղակ բարձրացուց, և անոր գիրկը իյնալով՝ խելքը ցնորեցաւ։ Երիտասարդը զայն քաջալերելով և խրախուսելով՝ զգաստացուց, և յետոյ իւր զէնքը յաղթողին ոտքին քով ձգելով՝ ըսաւ անոր. «Այս արիւնը և այս զէնքերը պարզապէս կը ցու-

ցընեն, որ ոչ թուլութիւնը և ոչ վատասրտութիւնը, ոչ իմ զինակից ընկերներուս քովէն փախուստը և ոչ քու մարդիկներուդ կապանքը զիս այս տեղ բերին։ Ոչ մէկ բան մը չէր կրնար զիս կենդանի քու ձեռքդ մատնել, եթէ այս օրիորդը այս դժբաղդ աւուր մէջ ինձմէն չը յափշտակուէր, քանզի ես անորմէ հեռու և պատերազմի զբաղելով՝ չէի կրցած պաշտպանել զինքը։ Արդ՝ գիտցիր, որ աւելի պատուական է ինձ ասիկա, քան ազատութիւնս եւ կեանքս, և մահէն զատ երբէք բան մը չը կրնար զիս հեռացնել ասկից։ Բայց ես չեմ եկած խնդրել, որ ասիկա ինձ դարձնես, որովհետեւ մենք այսպիսի մեծ առատասրտութիւն չենք կրնար սպասել ձեզ նման խրոխտ ազգերէն, զորս Երկինք մեր վրայ բարկանալով՝ ըզմեզ պատժելու համար ծովուն կողմէն կը խրկէ. սակայն քու անողորմութիւնդ գէթ ասիկա ալ չը մերժէր, որ ես անոր կապանաց մասնակից ըլլամ, և միանգամայն քեզ ծառայ կենամ այս տեղ անոր հետ միասին»։

Գուլիէլմոս–Պենն երիտասարդին անշարժ սրտապնդութեան և մեծահոգի կամաց վրայ զարմանալով, հայրական խնամով զայն ողջագուրելով՝ ըսաւ. «Որդեակ, շատ կը սխալիս, քանի որ բոլոր Եւրոպացւոց ոգին ու բարքը այդ կերպով կը դատես, վասնզի գուցէ քու մէկ անգամ լսած կամ ոմանց վրայ տեսած

անմարդավայել գործերէն հեռացնելով ը-
րած ես այդ դատողութիւնը։ Ես չեկայ ձեր
կանայքը և ստացուածքը յափշտակելու, կամ
զձեզ ձեր սահմաններէն հալածելու, կամ
զձեզ գերի վարելու, այլ եկած եմ հաշտե-
ցընելու և բարեկամանալու ձեզ հետ։ Ձեր
թշնամութիւնն ու յանցանքը բռնադատեցին
զիս ձեր դէմ զինիլ, և ձեր կամքէն կախուած
է ձեր ազատութիւնը. հերիք է, որ դուք
խաղաղասէր ըլլաք, և միմիայն մեզ հետ հաշ-
տութիւն և դաշնաւորութիւն ընել ուզէք։
Այժմ՝ այս օրիորդը, զոր պատերազմի
յաղթութիւնը իմ ձեռքս մատնեց, յօժարու-
թեամբ քեզ կը դարձնեմ. և դուն երբ ուզես,
ազատ ես համարձակապէս դառնալ քու
հայրենիքդ։ Միւս կալեալներն եւս կը դար-
ձընեմ, երբ ձեր կողմէն եղած յարձակումնե-
րըն ու հարուածները դադրած տեսնեմ, և ազ-
գըն ալ ձեր նեղութիւններէն ազատ»։

Իշխանին այս գթասրտութեան և բարե-
սիրութեան վրայ զարմանալով՝ գոչեց Ամերի-
կացի երիտասարդը. «Ուրեմն դու Աստուած
մ՚ես, կամ ուրիշ մարմինէ և արիւնէ ես, և
այն միւս անգութներուն պէս չես, որոնք
մեր արեան աստիկ ծարաւի կ՚երեւան մեզ։
Ո՛չ, նայէ ինձ՝ որ յաղթուած և նուաճած
ոտքիդ առջեւ ընկած եմ, ոչ թէ քու զէնքերդ
այլ առատասրտութենէդ ստիպեալ։ Ահա

ես կը փութամ ցուցընել իմ ընկերներուս քու
առաքինութեան այս անյուսալի վկայութիւ-
նը, և քու կամացդ անկեղծութիւնը ու մի-
ութեան սէր ունենալդ. վստահ եղիր, որ
դարձեալ սակաւ ժամանակէն զիս այս տեղ
պիտի տեսնես հաշտութեան դաշինքով»։

Գուլիէլմոս դարձեալ ողջագուրելով զայն՝
ըսաւ. «Ահա այն պիտի ըլլայ ինձ համար քու
ամենամեծ և հաճոյական պարգեւդ. որդեակ,
գնա դու նշանածիդ հետ, և ինչպէս կը փա-
փագիմ՝ շուտով դառնաս»։

Երկու սիրահարները ուրախութեամբ նո-
րա ոտքը փաթթուելով և արցունքներով թըր-
ջելով, գնացին անկէց. և իրենց ընկերներուն
հասնելով, այնքան մեծցուցին այս հիանալի
մարդուն առատասրտութիւնը և մարդասի-
րութիւնը և անոր խաղաղասէր բարքը, մին-
չեւ ամէնքը տեղեկանալով՝ պատգամաւոր-
ներ ղրկեցին, որոց մէջն էր սոյն արիասիրտ ե-
րիտասարդն ալ, իրենց մէջ մշտակայ հաշտու-
թիւն եւ եղբայրութիւն հաստատելու. ո-
րուն համար մեծահոգի յաղթողը ուզեց՝ որ
իւր քաղաքը Փիլատելֆիայ կոչուի, որ իրա-
րու հետ եղբայրական սիրով կապուած մար-
դկանց քաղաք ըսել է։

Երանի թէ՝ պանծալի քաղաքակիցք և այս
երեւելի մարդոյն յաջորդներն եւս, քանի որ
քաջութեամբ և զինուց զօրութեամբ այլոց

գնել աշխատած լուծը հիմա բարեբաղդաբար թափած են իրենց վրայէն, նորա պանծալի օրինակը աչքի առջեւ ունենալին, որպէսզի իրենց նոր հիմնած հասարակապետութիւնը աւելի առաքինական վարքով եւ խոհական հանճարով, քան թէ քաջութեամբ միշտ երջանիկ՝ փառաւոր եւ պայծառ մնայ։

Սիրելի ընթերցող, այս փոքրիկ գրքոյկը քու համազգի եղբայրներդ քուն քու հասկցած լեզուովդ թարգմանելով, քեզ կընուիրեն. եւ ինչպէս որ բուն հեղինակին եւ առաջին թարգմանչին նպատակը եղած է իրենց ազգի զաւակաց բարուց ուղղութիւնը, նոյն է դարձեալ այս երրորդ թարգմանութեանս հրատարակուելուն պատճառն ալ։ Եթէ դու յօժարութեամբ ընդունիս, եւ սիրով կարդաս ու կարդացնել տաս, կրկին բարիքներու պատճառ կըլլաս. նախ՝ դու եթէ ուզես, շատ օգուտներ կրնաս քաղել եւ ուրիշին քաղել տալ. երկրորդ զայս թարգմանող քու եղբայրներդ, որ տակաւին ուսանող աշակերտներ են, պիտի քաջալերուին ջանալու, որ միշտ անարատ վարք ունենան, եւ պիտի աշխատին ուսմանց մէջ օր աւուր յառաջադիմելով՝ նորանոր օգտակար երկասիրութեանց ձեռք զարնել։ Եթէ ճշմարտապէս կը սիրես քու անձդ, եւ թէոր քու ազգիդ զաւակաց օգու-

տը սրտանց կուզես, կ'աղաչեմք ու խոնարհաբար կը յորդորեմք, որ միշտ կարդաս այս գիրքը, եւ ազգին մէջ տարածելու հոգ տանիս. եթէ ոչ՝ ազգին յառաջադիմութեան վրայ յուսահատելու նոր առիթ մի եւս տուած կը լինիս։ Մեն մէկ կարդալուդ ուշադրութեամբ նկատէ՛ այս պատմութեանս մէջ եղած բարոյական խրատները, սիրէ՛ առաքինութիւնները ու անձամբ գործադրելու ջանա՛, մոլութիւնները ատէ՛, եւ արդէն ունեցածներդ ալ թող. անխելքներու պէս չըսես թէ դժուար է, ինչու որ ասոնք ընողներն ալ քեզի պէս մարդիկներ են։ Որդ՝ դուն անձիդ եւ կիրքերուդ յաղթելու արիութիւնն ունեցիր, քիչ ատենէն խիստ մեծ շահեր ու օգուտներ պիտի ունենաս, որ մէկը չը պիտի կրնայ կողոպտել քեզմէ։

ՎԱԽՃԱՆՆ ՊՍԱԿԻ ԶԳՈՒԾՆ։

ՑԱՆԿ ԳԼԽՈՑ

ԳԼՈՒԽ		ԵՐԵՍ
Ա.	Հիւանդ այրին.	1
Բ.	Հոլիգարտոս—Մեգվիլ.	6
Գ.	Պատկերը կամ խաբէութիւն.	18
Դ.	Տամն և Պիւթիաս. բարեկամութիւն.	24
Ե.	Եսերլէգոս. անխոհեմութիւն.	36
Զ.	Թերեզիա—Բալդուկի.	44
Է.	Երջանկութիւն.	54
Ը.	Սիմոնէի Բիտուլփ.	75
Թ.	Ֆրետերիկոս—Լանուկի.	95
Ժ.	Փիլիպպոս և Դոմինիկոս.	111
ԺԱ.	Ուգերոս Դանիացին.	129
ԺԲ.	Անտոնիոս—Լեւանելլի.	140
ԺԳ.	Գուլիելմոս—Թէլ.	166
ԺԴ.	Երկու եղբայր.	180
ԺԵ.	Կանայք Վինսբերգայ.	188
ԺԶ.	Իպրահիմ Բգեշխը.	194
ԺԷ.	Գողցուած ակները.	202
ԺԸ.	Փոխարինուած վնասը.	216
ԺԹ.	Կոմն Օրենգայ կամ հրահանգութիւն.	225
Ի.	Օրիորդի սէրը իւր նշանածին վրայ.	246
ԻԱ.	Ընչաքաղցութիւն.	252
ԻԲ.	Քաջահնար բարերարութիւն.	261
ԻԳ.	Հրդեհը. անձնուիրութիւն.	266
ԻԴ.	Ամուսնութիւն.	272
ԻԵ.	Հայրենասիրութիւն.	284
ԻԶ.	Գիշերային երեւումները.	291
	ՅԱՒԵԼՈՒԱԾ. Նախապաշարմունք.	298
ԻԷ.	Սպարապետն Տուրէնա.	320
ԻԸ.	Ազատուած գերին.	324
ԻԹ.	Եղբայրն առատասիրտ.	337
Լ.	Բարեբաստիկ փոփոխութիւնը.	347
ԼԱ.	Սնանկութիւն.	368
ԼԲ.	Ապերախտութիւնը.	377
ԼԳ.	Գուլիելմոս—Պէնն.	392

ՎՐԻՊԱԿՔ

ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ	ԵՐԵՍ	ՏՈՂ
ուրախած	ուրախացած	57	17
կարգալ	կարդալ	68	14
դատարկեցութիւն	դատարկակեցութիւն	69	28
ծոխեն	ծախեն	80	18
աղնիւ	ազնիւ	82	20
մնափառութեան	մնափառութեան	115	27
ոձերը	ոձիրը	256	22
կնութեամբ	կնութեան	273	7
այս	այս	273	17
ար	չար	283	28
զդայարանաց	զգայարանաց	318	4
աեղ	տեղ	384	10

1698

0025890

ՀՀ Ազգային գրադարան
NL0025890